

«ՄԻՒԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՐԻՆ  
ԱՐՄՅԱՆԿՈ-ՌՈՍՍԻՅԻ ՄԵՋԴՈՒՆԱՐԾՎԱԿԱՆ ԿԱՐԱՎԱՐՈՒՄ  
“MKHITAR GOSH” ARMENIAN-RUSSIAN INTERNATIONAL UNIVERSITY

## «ՄԻՒԹԱՐ ԳՈՇ»

ԳԻՏԱՍԵԹՈՂԱԿԱՆ ԶԱՍԴԵՍ  
(իրավագիտություն, մանկավարժություն, տնտեսագիտություն)

## “ՄԽԻՏԱՐ ԳՕՇ”

НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ  
(правоведение, педагогика, экономика)

## “MKHITAR GOSH”

SCIENTIFIC-METHODICAL REVIEW  
(*jurisprudence, pedagogics, economics*)

10-12 (35)

2012

ԴՐԱՄԱՐԿՎՈՒՄ Ե «ՄԻՆԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ  
ՄԻԶԱՉԳՎՅԻՆ ՀԱՍԱԼՍՎՐԱԾԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՅՈՒ  
ԵՐԱԾԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ИЗДАЕТСЯ ПО РЕКОМЕНДАЦИИ УЧЕНОГО СОВЕТА  
АРМЯНСКО-РОССИЙСКОГО МЕЖДУНАРОДНОГО  
УНИВЕРСИТЕТА "МХИТАР ГОШ"

### **ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ**

#### **Վաչիկ ԲՐՈՒՏՅԱՆ**

Մամկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ  
«Մինիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային  
համալսարանի ռեկտոր

### **ՊԱՏԱԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ**

#### **Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ**

#### **ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՅՈՒՐԴ**

##### **Հայկ ՂԵՐՋՅԱՆ**

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

##### **Ուուղիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

##### **Դամիկ ՂԵՐՋՅԱՆ**

Մամկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

##### **Բենիամին ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

##### **Իրիմա ՇՈՎԱԿԻՄՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

##### **Սերգեյ ԱՊՐԱՎԱՅՐՅԱՆ**

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

##### **ՄԱՆՈՒԿԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Մամկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

##### **Էնճա ՆԱՍԻՒՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

##### **Հայկ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Մամկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ

##### **Գառնիկ ՍԱՖԱՐՅԱՆ**

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

##### **Մոհամեդ Արքայի**

##### **Գոռ ՍԱՐԳՍՅԱՆ**

##### **Համակարգչային ձևավորությունների ստուգային աշխատավայրի պատրիարքական համակարգի կողմից**

##### **Արմենուի ՍՊՈՒՆՅԱՆ**

Համբեսում տպագրված բոլոր հոդվածները  
գրախոսված են և երաշխավորված խմբագրական  
խորհրդի անդամների կողմից

ՀԱՍԴԵՍԸ ԳՐԱՎԱՅՐԱԾ Ե ՀՀ ԱՐԴԱՐԱՎԱՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒ  
ԳՐԱՎԱՅՐԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ 01Մ 000219

Լույս է տեսնում տպագրական 4 անգամ  
Հրատարակության 9-րդ տարի

### **ГЛАВНЫЙ РЕДАКТОР**

#### **Վաչիկ ԲՐՈՒՏՅԱՆ**

Кандидат педагогических наук, доцент  
Ректор Армянско-Российского международного  
университета "Мхитар Гош"

### **ОТВЕТСТВЕННЫЙ РЕДАКТОР**

#### **Լևон ՍԱՐԿԻՍՅԱՆ**

### **НАУЧНЫЙ РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

#### **Գայկ ДЕРЦՅԱՆ**

Доктор юридических наук, профессор

#### **Ռուդик ԳԵՎՈՐԿՅԱՆ**

Кандидат юридических наук, доцент

#### **ԱԾՄԻԿ ԴԵՐՑՅԱՆ**

Кандидат педагогических наук, доцент

#### **Բենիամին ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

Доктор экономических наук, профессор

#### **Իրինա ՕՎԱԿԻՄՅԱՆ**

Доктор экономических наук, профессор

#### **Սերգեյ ԱԳԱՋԱՆՅԱՆ**

Кандидат филологических наук, доцент

#### **Միացական ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Доктор педагогических наук, профессор

#### **Էմма ՆԱՍԻԼՅԱՆ**

Кандидат экономических наук, доцент

#### **Գայկ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Доктор педагогических наук, доцент

#### **Գարնիկ ՍԱՓԱՐՅԱՆ**

Доктор юридических наук, профессор

##### **Կորրեկտոր**

##### **Հօր ՍԱՐԿԻՍՅԱՆ**

##### **Կոմպյուտերների դիզայներ**

##### **Արմեն ՄՈՍԻՆՅԱՆ**

Все статьи, опубликованные в журнале,  
рецензированы и рекомендованы к публикации  
членом редакционного совета

ЖУРНАЛ ЗАРЕГИСТРИРОВАН  
В МИНИСТЕРСТВЕ ЮСТИЦИИ РА  
СВИДЕТЕЛЬСТВО О РЕГИСТРАЦИИ 01Մ 000219

Издается 4 раза в год  
9-ый год издания

---

### ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՍԱԿՆԵՐԻՆ

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» հանդեսի խմբագրությունը գիտական հոդվածներն ընդունում է, եթե դրանք՝  
ա) պարունակում են սպառիչ տեղեկություններ հեղինակների մասին.  
բ) ունեն 300 dpi խտությամբ էլեկտրոնային կամ 7x8 չափսի հեղինակի լուսանկար.  
գ) ունեն հայերեն և անգլերեն լեզուներով ամփոփումներ.  
դ) ունեն հղում-ձանոթագրություններ և (կամ) օգտագործված գրականության ցանկ.  
ե) կից ունեն մասնագետի գրախոսություն:

Հոդվածներն ընդունվում են պնակիսով (diskette) կամ էլ. փոստով:

### ПАМЯТКА АВТОРАМ

Редакция журнала “МХИТАР ГОШ” принимает научные статьи, если они:

- а) содержат исчерпывающие сведения об авторах;
- б) имеют фото автора в формате 300 dpi или размером 7x8 см;
- в) имеют резюме на армянском и английском языках;
- г) имеют ссылки-сноски и (или) список использованной литературы;
- д) приложена рецензия специалиста.

Статьи принимаются на дискете или по электронной почте.

ՇՏԴ 342:340

## ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ\*

### Յայկ ՂԵՐՁՅԱՆ (նկարում)

«Միսիար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի կառավարման խորհրդի նախագահ  
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

### Գոռ ՂԵՐՁՅԱՆ

«Միսիար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի պրոռեկտոր  
Իրավաբանական գիտությունների թեկնածու



Րանդես գալով որպես հասարակության քաղաքական համակարգի հիմնական կազմակերպական հիմք՝ պետական ապարատն իր գործառություններն իրականացնում է սովորաբար առաջնորդվելով որոշակի սկզբունքներով: «Պետական ապարատի կազմակերպման և գործունեության մուտքագրման մասին» գրությանը համապատասխան սկզբունքը նշակալել են, իիմնավորվել և կյանքի կոչվել պետական ապարատի գործության բազմադարյա պատմության ընթացքում: Մ. Ն. Սարչենկոն, խոսելով այդ սկզբունքի մասին, գրում է. «Դրանցից մի քանիսը, որոնք իիմնականում վերաբերում են մեծ թվով երկրների պետական ապարատների գործունեությանը, զարգացման որոշակի ծանապարհ են անցել ու ամրապնդվել: Մյուսները, որոնք ավելի շատ վերաբերում են առանձին երկրների պետական ապարատների կազմակերպման ու գործունեության գործընթացին, տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով ժամանակի ընթացքում վերացել են»<sup>1</sup>:

Իրավաբանական գրականության մեջ պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքները մեկնաբանվում են տարբեր ձևերով, չնայած որ նրանցում գերիշխում է ընդհանուր մեկ սկզբունք, ըստ որի «գաղափարը» ճանաչվում է որպես գործունեության առաջնային հիմք: Այսպես, ըստ Մ. Ի. Բայտինի՝ պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքները «օրենսդրական, ելակետային հիմունքներ են, գաղափարներ ու պահանջներ, ո-

րոնք ընկած են պետության մեխանիզմի (ապարատի) ձևավորման, կազմակերպման և գործառնական աշխատանքի հիմքում»<sup>2</sup>; Վ. Ն. Ղմիտրովը համարում է, որ «պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքները պետական մարմինների ձևավորման և գործառնական աշխատանքի նկատմամբ մոտեցումները որոշող հիմնական գաղափարներն ու ելակետային դրույթներն են»<sup>3</sup>: «Պետական ապարատի կազմակերպման և նրա գործունեության սկզբունքներ ասելով,- գրում է Մ.Ն.Սարչենկոն, պետք է հասկանալ իրը նրա կառուցման և գործառնական աշխատանքի հիմքում ընկած առաջնական գաղափարներ ու դրույթներ»<sup>4</sup>:

Յայկ է նշել, որ վերջին տարիներին լույս տեսած մի շարք գիտական աշխատություններում պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքները, ցավոք, հանգամանորեն չեն ուսումնասիրվել, չնայած որ պետական ապարատի ընդհանուր բնութագրման հետ կապված այլ խնդիրների հետազոտման ժամանակ դրանք չեն էլ անտեսվում<sup>5</sup>:

Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքներն անվիճելիորեն դասվում են նրա հիմնական մեխանիզմների շարքին: Սկզբունքը միշտ ելակետային ուղղություն տվող հիմք է<sup>6</sup>: «Պետական ապարատի խնդիրներին անդրադարձալիս պետք է անպայման նկատի ունենալ, որ նրա կազմակերպման և գործունեության բնագավառում, ինչպես և մյուս բոլոր ասպարեզներում, սկզբունքն առաջին հերթին գաղափար է: Եվ ոչ միայն գաղափար: Ինչպես պետական ապարատն ինքը չի սահմանափակվում գաղափարով, այլ ընդգրկում է նորմեր և սոցիալական հարաբերություններ, այնպես էլ նրա սկզ-

\* Ներկայացվել է 10.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

բունքները դուրս են գալիս զուտ գաղափարների շրջանակից՝ ծեռք բերելով նորմատիվ և իրավակիրառելի բովանդակություն։ Ուրեմն, ձևակերպումը դարձնենք ավելի հստակ՝ պետական ապարատի կազմակերպման և նրա գործունեության սկզբունքներն, առաջին հերթին, գաղափարներ են, սակայն, միաժամանակ, նորմեր են և հարաբերություններ։

Գոյություն ունի, ընդհանրապես, պետական ապարատի կազմակերպման և նրա գործունեության սկզբունքներին նվիրված հարուստ գրականություն, կատարվել են ընդգրկուն ու հիմնավոր մեկնաբանումներ, տեսական վերլուծություններ։ Մենագրությունների և դասագրերի մեծամասնության մեջ խիստ կարևորվում է պետական ապարատի կազմակերպման և նրա գործունեության սկզբունքների առանցքային դերն ու նշանակությունը։ Որպես կանոն, նրանց թվին են դասվում օրինականությունը, ժողովրդավարությունը, հրապարակայնությունը, կոլեգիալարությունը և միանձնյա դեկավարման համակցությունը և այլն։

Պետական ապարատի կազմակերպման և նրա գործունեության սկզբունքների ակունքը պետք է փնտել հեմց ապարատի հուրյան մեջ։ Պետական ապարատում սոցիալական մարմինների համակարգի առկայությունն ընդունելով հանդերձ (նրա միջոցով հրականացվում է հասարակության պետական կառավարումն ու նրա շահերի պաշտպանությունը)՝ պետք է ընդգծել նաև այդ պետական ապարատի սկզբունքների կիրաման գործում կառուցողական մոտեցումների անհրաժեշտությունը։ Սկզբունքների մեջ ընդգրկվում են և գաղափարները, և նորմերը, և հարաբերությունները, ինչը ենթադրում է ընդհանուր գործներացի մեջ տրամարանության, հետևողականության և հավասարակշրվածության առկայություն։ Պետական ապարատի կազմակերպման և նրա գործունեության սկզբունքների մեջ կարծես թե համաձուլվում է այդ սասպարեզում ծեռք բերված զարգացման համաշխարհային քաղաքակրության փորձը<sup>7</sup>։ Սկզբունքները, թվում է, պետական ապարատի հարուստ պատմության «չոր նստվածքն են», կմախքն ու հուրյունը՝ ազատված, տվյալ դեպքում՝ կոնկրետացումից և մասնավորեցումից։

Պետական ապարատի ձևավորման գործում սկզբունքները պարզապես կողմնորոշչների դեր են կատարում։ Յայտնի է, որ պետական ապարատի աստիճանական զարգացումը նրան գաղափարներից տանում է դեպի նորմեր, իսկ նորմերի իրագործմանը հաջորդում է անցումը հասարակական պրակտիկային։ Եվ ահա, սկսած գաղափարի ծագումից (իսկ գաղափարն, իր հերթին, շատ հաճախ ձևավորվում է սկզբունքի տեսքով), սկզբունքը, ստանձնելով վճռորոշ դեր, ընթացք

ուղղություն է տալիս պետական ապարատի զարգացմանը։ Այսպես, բռնատիրությունը հաղթահրելու ծգոտումը ծնել է իշխանությունների տարանցատման իրավական գաղափար (իրավական սկզբունքը)<sup>8</sup>։ Գաղափարն ու սկզբունքը, միաժամանակ, բավականին ամուր հիմքեր են ստեղծում, որպեսզի իշխանությունը չկենտրոնանա միայն մեկ ծեռքում։ Մնան մոտեցումները բխում են օրենքներից, առաջին հերթին՝ սահմանադրություններից, և ի վերջո, վերածվում հասարակական պրակտիկայի։ Շատ օրինակներ կարելի է բերել։ Իրավական գաղափարի ձևավորման և կիրաման հետ սկսվում է պետական ապարատի գործունեությունը։

Պետական ապարատի կազմակերպման և նրա գործունեության իրավական սկզբունքը չի սահմանափակվում իրավական գաղափարի փուլով։ Իրավական սկզբունքը՝ ծագման և ձևավորման ընթացքում, համընկնում է իրավական գաղափարի հետ։ Սակայն հետագայում, քանի որ պետական ապարատի կազմակերպման և նրա գործունեության սկզբունքը իրավական է (իսկ օրենքը, բնականաբար, չի վերջանում միայն գաղափարներով), սկզբունքը վերածվում է իրավական մատերիայի (նյութի) այլ ձևերի՝ նորմերի և հասարակական հարաբերությունների։

Պետական ապարատի կազմակերպման և նրա գործունեության դրոշ իրավական սկզբունքներ, եթե կարելի է այսպես ասել, արմատավորվում-ամրանում են նորմերում՝ դառնալով սկզբունք-նորմեր՝ առանց նորմերի մեջ ուղղակիրեն ամորագրվելու։ Այդ սկզբունքներն, անշուշտ, չի կարելի դիտել որպես կոնկրետ նորմեր, թեև նրանք տարրալուծվում են բազմաթիվ նորմերում, ձուլվում երանց մեջ։ Սկզբունքը նման դեպքում կատարում է, կարելի է ասել, բավականին ակտիվ դեր, կամք առնելով ոչ թե, առանձին վերցրած, մեկ նորմի, այլ բազմաթիվ նորմերի մեջ<sup>9</sup>։ Տվյալ դեպքում մենք գործ ունենք նորմերի մեջ չտարրալունվագա, նրանցից դուրս գտնվող սկզբունքների հետ։ Սկզբունք-նորմերը և, այսպես ասած, նորմերից դուրս գտնվող սկզբունքները պետական ապարատի կազմակերպման և գործունեության մեջ երկու հրաբուժ տարբեր տեսակներ են ներկայացնում։

Պետական ապարատը, ինչ խոսք, կառուցվում և ձևավորվում է որոշակի սկզբունքների հիման վրա, որոնք արտահայտում են նրա հուրյունն ու սոցիալական նշանակությունը<sup>10</sup>։ Սկզբունքներում արտացոլվում են պետական ապարատի գլխավոր առանձնահատկություններն ու բնորոշ կողմերը, որոնք նրան տալիս են հատուկ մարմինների համակարգի բնույթ, համակարգ, որի միջոցով էլ իրականացվում է հասարակության պետական կառավարումն ու նրա հիմնական շահերի

պաշտպանությունը:

Պետական ապարատի սկզբունքները ելակետային կարևոր դրույթներն են, որոնցով իրավաբանական ամուր հիմքերի վրա են դրվում պետական մարմինների (ներկայացուցչական, գործադիր, դատական) համակարգի գործառնական աշխատանքի օբյեկտիվ օրինաչափությունները: Սկզբունքներն իրենց մեջ ներառում են պետական ապարատի առավել բնութագրական գծերը, որոշում նրա իրավաբանական բնույթը: Դեկավարվելով նրանցով, պետական ապարատն ապահովում է հասարակության նորմալ գործունեությունը, ինչպես նաև քաղաքացիների քաղաքական և անձնական իրավունքներն ու ազատությունները, երաշխավորում իրավաբանական պարտավանությունների կատարումը:

Պետական ապարատի սկզբունքները ներքափանցում են բոլորի հասուլ մարմինների գործունեության մեջ՝ կազմելով իրավապահ համակարգի միջուկը, որը և կոչված է իրականացնելու հասարակության պետական կառավարումը և նրա հիմնական շահերի պաշտպանությունը: Այստեղից է՝ դրանց որոշիչ նշանակությունն իրավաբանական պրակտիկայում: Պետական ապարատի պահանջների խստիվ իրագործումը, միաժամանակ, նշանակում է կենսագործել նրանում ընդգրկված սկզբունքները: Այդ հսկ պատճառով կոնկրետ խնդիրներ լուծելու ընթացքում անհրաժշտ է դեկավարվել, առաջին հերթին, պետական ապարատի գործունեության սկզբունքներով: Այն հիմք է ծառայում հասարակության պետական կառավարումն ու նրա շահերի պաշտպանությունն իրականացնող հասուլ մարմինների հնարավորությունները ծիծու կիրառելու համար:

Պետական ապարատի կառուցման և նրա գործունեության սկզբունքները կարող են հասուլ կերպով ամրագրվել ընդհանուր իրավաբանական նորմերում և, առաջին հերթին, սահմանադրություններում:

Պետական ապարատի սկզբունքները պայմանավորված են հասարակության կառավարմանն ու տարրեր տեսակի ոտնձգություններից նրա շահերի պաշտպանությանն ուղղված գործունեության ընույթով: Դա նշանակում է՝ հասուլ մարմինները, որոնց միջոցով կատարվում են այդ գործառույթները, կարգավորվում-կատարելագործվում են ոչ թե ինքնուստինքան, այլ շնորհիվ այն օբյեկտիվ պահանջ-պահանջմունքների, որոնք արտացոլվում են պետական ապարատի համակարգի մեջ՝ կազմելով նրա էությունը: Պետական ապարատի կազմակերպման և նրա գործունեության սկզբունքների բնույթը չի կարելի որոշել առանձին, այսինքն՝ պետական իշխանության բովանդակության և կառուցվածքի, սոցիալ-տնտեսական պայմանների, հասարակության ամբողջ

քաղաքական համակարգի կառուցման ու գործառնական սկզբունքներից անջատ:

Պետական ապարատը նշտապես գտնվում է զարգացման և կատարելագործման մեջ: «Հասարակության կյանքում տեղի ունեցող փոփոխությունների արդյունքում, գործ է Վ. Ն. Խրովանյուկը, ծագում են նոր և վերացվում հնացած պետական մարմինների կառուցվածքները, սակայն բոլոր պատմական էտապներում պետական ապարատը հանդես է գալիս որպես հասարակության քաղաքական համակարգի հիմնական կազմակերպիչ-հիմք»<sup>11</sup>:

Հասարակության և պետական ապարատի ծևավորման ու գործունեության մեջ իրավունքն ունի միևնույն դերակատարությունը: Պետական ապարատի գործունեության ընթացքում ծևավորվող հասարակական հարաբերությունների վրա իրավունքի ներգործությունը, սակայն, ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են պետական ապարատի կառուցվածքի յուրահատկությամբ, նրա մեջ մտնող (և հիմնական մաս կազմող) սոցիալական մարմինների առջև կանգնած նպատակների ու խնդիրների հնքնատիպությամբ<sup>12</sup>:

**Առաջին՝** պետական ծառայության գծով պարտականությունների կատարման ընթացքում իրավական նորմերը պաշտոնատար անձանց առաջարություն են բարձր պահանջներ: Նման իրավիճակը բացատրվում է պետական ապարատի բազմաթիվ և, առաջին հերթին, իրավապահ մարմինների գործունեության բնույթով, Վերջիններիս կողմից հանցավորության դեմ և հասարակական կարգի պահպանման ուղղությամբ պայքարի բարդությամբ ու դիմանիկայով, որն իր հերթին նրանց անձնակազմներից պահանջում է առավելագույն կազմակերպվածություն և կարգապահույթուն:

**Երկրորդ՝** իրավունքի նորմերն ավելի մանրամասն կերպով են կանոնակարգում պետական ծառայությունների և, գլխավորապես, գինված ուժերի ծառայությունների կենսագործունեության զանազան կողմերը: Ինչպես իրավացիորեն նշում է Վ. Ն. Խրովանյուկը, «հասարակական կյանքի ոչ մի այլ լորոտում իրավական նորմերը չեն կարգավորում մարդկանց միջև փոխհարաբերություններն այնքան հանգամանորեն, որքան ռազմական կազմակերպությունները»<sup>13</sup>:

**Երրորդ՝** իրավունքը պետական ծառայությունների նկատմամբ պատասխանատվություն է սահմանում՝ ծառայության կարգը խախտելու համար: Առավել մեծ պատասխանատվություն է նախատեսվում զինծառայողների նկատմամբ՝ զինվորական ծառայության կատարման ժամանակ խախտումները բացառելու նպատակով: Այսպես, բավական է նշել, որ զինված ուժերում իրավաբա-

նական պատասխանատվության են ենթարկվում այնպիսի խախտումների համար, որոնք քաղաքացիական լյամբում հակադրավական չեն համարվում: Խոսքը, առաջին հերթին, գինվորական քաղաքավարության կանոնների խախտման մասին է: Բացի դրանց, գինծառայողների նկատմամբ կիրառվում են իրավաբանական պատասխանատվության ավելի խիստ միջոցներ, քան քաղաքացիական անձանց նկատմամբ՝ համանման օրինախախտումների համար (օրինակ՝ պաշտոնական անձին վիրավորելը, անհնազանդությունը, հրամանը չկատարելը և այլն): Վերջապես, գինծառայողներն իրավաբանական պատասխանատվություն են կրում այնպիսի արարքների համար, որոնք կարող են լինել միայն գինվորական ծառայության ընթացքում (գրուման ինքնական բողնելը, դասաւորությունը, վախկուտության հետևանքով գերի հանձնվելը և այլն)<sup>14</sup>:

Ինչպես արդեն նշեցինք, պետական ապարատի և հասարակության գործունեության վրա իրավունքը ներգործում է նոյն սկզբունքների կիրառումվ, չնայած, իհարկե, առկա են նաև որոշակի առանձնահատկություններ: Որո՞ք են դրանք:

**Առաջին՝** իրավունքը ներգործում է պետական ապարատի գործունեության մեջ ձևավորված հասարակական հարաբերությունների վրա՝ իրավական նորմերում դրանք ամրագրելու ճանապարհով: Այսպէս, սահմանադրավան նորմերի կիրառումով առավել բարձր հիմքերի վրա է դրվում դատական մարմինների գործունեությունը, հստակեցվում են պետական շինարարության բնագավառում պետական բարձրադիր մարմինների կազմակերպական հարցերը, դրանց խմբավորման կարգը, իրավական վիճակը, նյութատեխնիկական մատակարարման հետ կապված խնդիրները և այլն<sup>15</sup>:

**Երկրորդ՝** իրավունքը պետական ապարատի համակարգում պահպանում է հասարակական պատշաճ հարաբերությունների ձևավորումն ու հստակ կենսագործունեությունը: Իրավական նորմերի հիման վրա է կառուցվում իրավապահ մարմիններում ընդգրկված կադրերի առօրյա կյանքը, բարձրացվում նրանց մասնագիտական-կազմակերպական պատրաստվածության մակարդակը: Իրավական կարգագրերի համապատասխան՝ հարաբերություններ են ձևավորվում դեկավարի ու ենթակայի միջև, տրվում և կատարվում են հրամաններ: Այդ ամենը, բնականաբար, հնարավորություն է տալիս ապահովել ծառայության հստակ կատարումը, իսկ իրավապահ համակարգի ստորաբաժանումների օպերատիվ պատրաստվածության վիճակը մշտապես պահել պահանջվող մակարդակի վրա:

**Երրորդ՝** պետական ապարատի կազմակերական ու նրա գործունեության ընթացքում իրա-

վունքը նպաստում է հասարակական նոր հարաբերությունների ձևավորմանը: Այդ նոր հարաբերությունները, համահունչ լինելով պետական ապարատի զարգացման պահանջներին, անհրաժեշտ տարրեր են մտցնում պետական շինարարության մեջ: Այսպես, գինված ուժերի համակարգում գրուակոչային տարիքի անձանցից պահանջվող համակրական և տեխնիկական պատրաստականությունը թույլ է տալիս օրինաստեղծության ճանապարհ հետզինետել կրծատել գինվորական ծառայության ժամկետները<sup>16</sup>:

**Չորրորդ՝** իրավունքն ապահովում է իրավապահ մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեությունը, անձնակազմների ու աշխատակիցների ծառայության կատարման կարգի, նրանց ընտանիքների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Իրավապահ մարմիններում իրավունքի պաշտպանության ուղղությամբ ձեռնարկվող գործուն ջանքերը միտված են իրավախախտումների և դրանց առաջացման պատճառների վերացմանը: Միաժամանակ, առաջնային է համարվում իրավապահ մարմիններում կարգի և կարգապահության պահանջվող մակարդակի ապահովումը<sup>17</sup>: Իրավապահ մարմիններում պահպանական գործառություն հիմնականում իրականացվում է քրեական և կարգապահան օրենսդրության մեջ պարունակվող նորմերի միջոցով:

**Դիմերորդ՝** իրավունքը պետական ապարատի ծառայուղների վրա դաստիարակչական մեջ ներգործություն է ունենում: Մասնավորապես, այն նպաստում է աշխատողների գիտակցական կարգապահության, կազմակերպվածության, պատրաստականության բարձրացմանը, ինչպես նաև անհրաժեշտ բարյուական հատկանիշների դաստիարակմանը: Կարգավորելով պետական ծառայողների կյանքի և գործունեության զանազան կողմերը, իրավունքը նրանց դաստիարակում է օրենքը խստագոյն ձևով պահպանելու ոգով, հարգանք է պատվաստում իրավակարգի, օրինականության և ծառայության նկատմամբ:

Ինչպես տեսանք, իրավունքը կարևոր է պետական ապարատի միջոց է կարգապահության, օրինականության և կուլտուրայի ամրապնդման, պետական ապարատի աշխատողների մասնագիտական վարպետության բարձրացման, ծառայուղների և նրանց ընտանիքների օրինական իրավունքների պաշտպանության համար: Այն ապահովում է պետական ապարատի տարրեր ստորաբաժանումների և մասերի նորմալ կենսագործունեությունը, ծագած հարցերի հաջող լուծումը, նպաստում ապարատի կառուցվածքի և իրավասությունների, գործունեության ձևերի և մեթոդների կատարելագործմանը: Ի վերջո, այդ ամենը դրականորեն հասարակության

պետական կառավարման, աշխատանքի արդյունավետության բարձրացման, տարրեր ձևերի ուսնագործություններից հասարակական ու պետական շահերը պաշտպանելու գործի վրա:

<sup>1</sup> **Марченко М. Н.**, “Основные принципы организации и деятельности государственного аппарата”. В кн: “Общая теория государства и права”. Академический курс в 2-х томах. Том 1. “Теория государства”. Отв. ред. профессор М. Н. Марченко. М., “Зерцало”, 1998, с. 170.

<sup>2</sup> **Баитин М. И.** “Принципы организации и деятельности механизма государства”. “Теория государства и права”. Курс лекций. Под ред. профессоров Н. И. Матузова и А. В. Малько. М., “Юристъ”, 1997, с. 100.

<sup>3</sup> **Дмитрук В. Н.**, Теория государства и права. Учебное пособие. Минск, “Амалфея”, 1998, с. 36.

<sup>4</sup> **Марченко М. Н.**, «Основные принципы организации и деятельности государственного аппарата». В кн. “Общая теория государства и права”. Академический курс в 2-х томах. Том 1. “Теория государства”. Отв. ред. профессор М. Н. Марченко. М., “Зерцало”, 1998, с. 170.

<sup>5</sup> Այդ մասին մանրամասն տես՝ **Спиридонов Л. И.** Теория государства и права. Учебник. М., “Проспект”, 1998, с. 66-82; **Сырых В. М.**, Теория государства и права. Учебник. Отв. ред. профессор С. А. Чубиряев. М., “Былина”, 1998, с. 37-44; **Храпанюк В. Н.**, Теория государства и права (2-ое изд., дополн., исправ.). Отв. ред. профессор Смрекозов В. Г., М., “Интерстиль”, 2000, с. 137-137; **Апиян Н. А.**, Понятие и сущность современного государства; **Ավիյան Ա. Ա.**, **Սաֆարյան Գ. Ջ.**, **Քակորյան Զ. Յ.**, Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր, Ուսումնական ձեռնարկ, Երևանի համալսարանի հրատ., 2001, էջ 5-42:

<sup>6</sup> **Дмитрук В. Н.** Теория государства и права. Учебное пособие. М., “Новое Знание”, 2002, с. 41.

<sup>7</sup> Այդ մասին մանրամասն տես՝ **Мераченко М. Н.**, “Государство и право переходного периода”. В кн.:

“Проблемы теории государства и права”. Учебное пособие. М., “Проспект”, 1999, с. 106-128.

<sup>8</sup> Այդ մասին մանրամասն տես՝ **Локк Д.** Избранные философские произведения. Том 2. М., 1960, с. 16-17, 29-35, 47-53 և այլն:

<sup>9</sup> Այդ մասին մանրամասն տես՝ **Керимов Д. А.** “Методология прав (предмет, функции, проблемы философии права)”. М., “Аванта +”, 2000, с. 201-213.

<sup>10</sup> Մանրամասն տես՝ **Елисеев Б. П.** Система органов государственной власти и Российской Федерации. Автограферам дис. док. юрид. наук. М., 1998.

<sup>11</sup> **Храпанюк В. Н.** Теория государства и права (2-ое изд., дополн., исправ.). Под ред. профессора Смрекозова В. Г. М., “Интерстиль”, 2000, с. 137.

<sup>12</sup> Տես՝ **Баитин М. И.** Структура механизма государства. “Теория государства и права”. Курс лекций. Под ред. профессоров Н. И. Матузова и А. В. Малько, с. 104-106, 109-111; **Марченко М. Н.** “Структура государственного аппарата”. В кн.: “Общая теория государства и права”. Академический курс в 2-х томах. Том 1. “Теория государства”. Отв. ред. профессор М. Н. Марченко, с. 162-165, 166-169; **Жильбод М. И.** Основы политологии. М., “Влады”, 2001, с. 68-70, 75-78, 80-88.

<sup>13</sup> **Храпанюк В. Н.** Теория государства и права (2-ое изд., дополн., исправ.). Под ред. профессора Смрекозова В. Г., М., “ДТД”, 1995, с. 221.

<sup>14</sup> Տես նոյն տեղում:

<sup>15</sup> Մանրամասն տես՝ **Ղիլբանյան Ս.**, Յայաստանի Յանրապետության դատարանակազմությունը և իրավապահական մարմինները: Ուսումնական ձեռնարկ բուհերի իրավաբանական ֆակուլտետների հանք, Երևան, «Տիգրան Սեծ», 2000, էջ 110-136, 160-165, 224-239:

<sup>16</sup> Տես՝ **Храпанюк В. Н.** Теория государства и права (2-ое издание, дополненное, исправленное). Под редакцией профессора Смрекозова В. Г., М., “Интерстиль”, 2000, с. 221.

<sup>17</sup> Այդ մասին մանրամասն տես՝ **Апиян Н. А. Тօմասյան Մ. Ա.** Законность и правопорядок в правовом государстве. Ереван, “Ашмарак”, 2000, с. 147-162.

#### BASIC PRINCIPLES OF ORGANIZATION AND ACTIVITIES OF STATE MACHINE

##### HAYK DERDZYAN

Doctor of Juridical Sciences, Professor

Chairman of management CouncilManager of the chair “Rights and other social subjects”

Armenian-Russian International University “Mkhitar Gosh”

##### GOR DERDZYAN

Candidate of Juridical Sciences

Prorector of Armenian-Russian International University “Mkhitar Gosh”

##### Summary

In the article it is discussed that during the activity of state machine the impact of law has several peculiarities on developing social relations, which are conditioned with the peculiarity the state machine structure. The organization of state machine and for provision of its productive activity there are basic principles, introduction of which is presented in the content of this research.

## Գոր Դերշան

«Միմիրար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի պրոռեկտոր  
Իրավաբանական գիտությունների թեկնածու



«**Գ**ործառույթ» (ֆունկցիա) տերմինը հայենական և արտասահմանյան գիտական գրականության մեջ ունի տարբեր բնորոշումներ, որը դիտարկվում է մի քանի ձևով:  
**Առաջին՝** այն դիտվում

է որպես հարաբերությունների, համակարգի մեջ մտնող որևէ օբյեկտի յուրահատկությունների ներքին արտահայտություն, **երկրորդ՝** առանձին անձանց կամ կազմակերպությունների գործողությունների համակցություն՝ պայմանավորված դրանց բնույթով և գոյատևման անհրաժեշտությամբ, **երրորդ՝** իրեն առանձին անձի կամ անձանց խնբերի մոտ յուրատեսակ պարուավորությունների առկայություն, որոնց կատարումը նրանց է վերապահվում անմիջապես կատարելու կամ ծառայողական գործունեություն իրականացնելու ընթացքում (բժշկի, մանկավարժի, դասախոսի, ոստիկանի գործառույթները և այլն):<sup>1</sup>

Իրավաբանական գրականության մեջ հաճախ ենք հանդիպում «գործառույթ» տերմինի ամենատարբեր ու բազմապիսի մեկնաբանությունների<sup>2</sup>: Այսպես, Ա. Բ. Վենգերովի կարծիքով, գործառույթը պետության և իրավունքի տեսության մեջ նշանակում է ուղղություն, այս կամ այն քաղաքան-իրավական ինստիտուտի գործունեության առարկա և բովանդակություն, գործունեության ապահովում<sup>3</sup>: «Ենց այդ ինաստով էլ-գրում է նա, - խոսվում է պետության, կառավարության, նախարարությունների, այլ պետական մարմինների գործառույթների մասին»<sup>4</sup>:

Գործառույթի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ բոլոր դեպքերում այն ընկալվում է թե՛ որպես ծառայողական, մասնագիտական, ցանկացած այլ կարգի պահանջմունք, թե՛ որպես

իրավունքներին ու բարոյական սահմանումներին համապատասխան գործելու պարտականություն:

Չնայած նրան, որ պետության տեսությունը պետության գործուն հատկանիշների բացատրության և պարզաբանման համար օգտագործում է «անսության գործառույթ» հասկացությունը (բնութագրելով, թե ինչն ինչպես է «կատարում» պետությունը), Ա. Բ. Վենգերովը գտնում է, որ «գործառույթը», ինչպես և բազմաթիվ այլ հասարակագիտական հասկացություններ, չի հանդիսանում առանձին իրավաբանական և քաղաքական հասկացություն: Նա մասնավորապես գրում է, որ «դրանք փոխառնված են այլ գիտություններից: Այսպես, մարեմատիկայում, ֆիզիկայում «ֆունկցիա» հասկացությունն արտահայտում է կախվածություն, երբ մի նեծության փոփոխումից նյուուն մեծությունը նույնպես որոշակի ձևափոխման է ենթարկվում»<sup>5</sup>: Պետական ապարատի հետ ունեցած հարաբերակցության մեջ «գործառույթ» տերմինը ծերոք է բերում մի քիչ այլ իմաստ ու նշանակություն: Պետական ապարատի գործառույթներն ավանդաբար սահմանվում են պետական ապարատի գործունեության հիմնական վրա՝ պայմանավորված նրա եւրեամբ ու բովանդակությամբ, ինչպես նաև զարգացման այս կամ այն փուլում նրա առջև կանգնած ինդիրներով, նպատակներով, սոցիալական նշանակությամբ: Երբեմն գրականության մեջ տրվում են պետական ապարատի գործառույթի, այսպես ասած, ավելի նեղ սահմանումներ: Այսպես, քաղաքագիտության մեջ արմատավորվել է այն կարծիքը, ըստ որի պետական ապարատի գործառույթները հենց նրա գործունեության հիմնական ուղղություններն են, որոնց միջոցով լուծում է հասարակության առջև կանգնած ինդիրները<sup>6</sup>:

Դասարակական կյանքում պետական ապարատի առաջատար դերը արտահայտվում է նրա գործառույթների մեջ, որոնք կարող են դիտարկ-

\* Ներկայացվել է 17.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

Վել տարբեր հարթություններում: Քանի որ պետական ապարատն անբաժանելիորեն կապված է պետության հետ, ուստի նրա գործառույթները, մեծ մասամբ, համընկնում են պետական իշխանության գործառույթներին: Այսպես, կարելի է առանձնացնել պետական ապարատի տնտեսական, իրավական, սոցիալական, էկոլոգիական և այլ գործառույթներ, որոնք համապատասխանում են իրավական պետության գործառույթներին<sup>7</sup>:

Պետական ապարատի գործունեության բոլոր հիմնական ուղղություններն իրավանացվում են իրավական ձևերով, օրենսդրական հիմքով, որոնցով և պայմանավորում են այդ գործունեության բնույթը ու բովանդակությունը:

Պետական ապարատի գործառույթների ամենաբուռագրական գծերն ու հատկանիշները հետևյալն են՝

1. Պետական ապարատի գործառույթներն ունենում են համադրական բնույթ: Որպես պետական ապարատի գործունեության հիմնական ուղղություններ, դրանք, ընդհանուր առմանը, օտարքում են բուն գործունեությունից կամ պետության գործունեության առանձին ոլորտներից: Յուրաքանչյուր գործառույթի բովանդակություն ձևավորվում է պետական ապարատի գործունեության միահետևակ և միակարգ բազմաթիվ տարրերից: Գործառույթների հետևում միշտ կանգնած է պետական տարբեր մարմինների, ամբողջ պետական ապարատի գիտակցված, նպատակալաց գործունեությունը: Միակուսակցական համակարգի վրա կառուցված քաղաքական և պետական համակարգերում կոորդինացնող և ուղղություն տվող գործունեությունը ստվորաբար կատարում են իշխանության նույն կանգնած քաղաքական կուսակցությունները<sup>8</sup>:

2. Իրենց բնույթով, բովանդակությամբ և նշանակությամբ պետական ապարատի գործառույթները միշտ արտահայտում են կոմպետ պետության սոցիալական էությունն ու բովանդակությունը:

Կապիտալիզմի զարգացման նախնական և հետագա ժամանակաշրջաններում տնտեսության ու հասարակության աճն ապահովելու գործուն կարևորագույն դեր է կատարել բուրժուական պետական ապարատը: Այդ դերը, չնայած երբեմն արտահայտվող այլ կարծիքների, արևմտյան երկրներում՝ շուկայական հարաբերությունների կայացմանն ու կատարելագործմանը գուգընթաց, ոչ միայն չի թուլացել, այլև ընդհակառակը, անխափան ձևով բարձրացել է<sup>9</sup>: Այս դրույթը, ըստ էության, ապացույցների կարիք չունի, քանի որ բազմաթիվ պետություններում կուտակված փորձն այդ ամենի համոզիչ վկայու-

թյունն է: Տնտեսության և հասարակության զարգացման յուրաքանչյուր ժամանակահատված նշանավորվում է նոր խնդիրների առկայությամբ, հետևապես և՝ դրանք լավագույն ձևով լուծելու միջոցների հայտնությամբ:

Եվ պատահական չէ ամենին, որ պետական ապարատի դերն իր արժանի արտացոլումն է գտել կապիտալիզմի զարգացման վաղ շրջանի «գիշերային պահակի պետություն» տեսության մեջ, ուր հստակորեն երևում է տնտեսական ու հասարակական աշխատանքներում պետության ապարատի միջամտության աստիճանը՝ ինչ չափով, ինչպես<sup>10</sup>: Իսկ կապիտալիզմի ավելի ուշ էտապներում, «համընդհանուր բարօրության պետության» տեսության մեջ, խորհրդանշվում է տնտեսական և հասարակական հարցերի լուծնան գործում պետական ապարատի բավականին ակտիվ, ուղղակի բազմակիրեն մեծացած դերը<sup>11</sup>:

Նկատի առնելով անցումային ժամանակաշրջանի առանձնահատկությունները՝ կարելի է ամենային համոզվածությամբ ասել, որ, այն, այսօր տնտեսության ու հասարակության զարգացման գործում արդեն առկա են Հայաստանի Հանրապետության պետական ապարատի դերի ու նշանակության ընդլայնման ընդհանուր միտումներ:

3. Պետական ապարատի գործառույթներում նկատելի է ուղղակի կապը՝ ոչ միայն նրա սոցիալական էության և բովանդակության, այլև զարգացման այս կամ այն փուլում ծառացած հիմնական խնդիրների ու նպատակների հետ: Գործառույթների բնույթը որոշվում է ոչ միայն պետական ապարատի տնսակով, նրա սոցիալական էությամբ ու նշանակությամբ, այլև՝ առաջադրված նպատակների առանձնահատկություններով: Առաջինների հրագործման առաջնակարգությունն ու ծավալը զգալի չափով պայմանավորվում է Վերջիններիս կարևորությամբ և ընդգրկումներով: Գործառույթները՝ որպես նպատակին հասնելու միջոցներ ու պետական կարևոր խնդիրների հանգուցալուծումներ, առավելապես կախված են այդ նպատակների և խնդիրների բնույթից:

Այսպես, պատերազմի կամ վրա հասնող պատերազմական ճգնաժամի պայմաններում, երբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և նրա հանրության առջև կամգնած էին երկիրը դրսի (տվյալ դեպքում՝ Աղրբեջանի) հարձակումներից պաշտպանելու խնդիրները, առաջին պլան մղվեց պետական ապարատի պաշտպանական գործառույթը<sup>12</sup>: Այդ ժամանակահատվածում դրա առաջնակարգությունը կասկած չէր հարուցում: Իսկ տնտեսության անկան ժամանակ, երբ քննարկվում են տնտեսական աճի կայունացման

Վերելքի խնդիրները, հանգամանքների բերումով առաջնակարգ տեղ է տրվում պետական ապարատի տնտեսական գործառույթների իրականացմանը<sup>13</sup>:

Տնտեսական գործառույթը Հայաստանի Հանրապետությունում առավել վառ կերպով է դրսևորված այսօր՝ զարգացման ժամանակակից փուլում, քանի որ նրա կատարումից է գգալիորեն կախված հասարակության և պետական ապարատի առջև կանգնած նպատակների ծեռքբերումը, մյուս բոլոր պետական գործառույթների կատարումը:

Եթե պետության գործառույթները ներառում են նրա ամբողջ գործունեությունը, պետական ապարատի կամ մեխանիզմի ակտիվությունը, ապա որոշակի մարմնիների գործառույթները տարածվում են միայն մի մասի վրա, ըստ այդմ էլ սահմանափակ են նրա ընդգրկումները:

5. Պետական ապարատի գործառույթները տարբերվում են իրենց իրականացման մեթոդներով ու ձևերով, դրանից քացի, կիրառական ոլորտներով նրանք չեն միասնականացվում:

Հասարակական զարգացման այս կամ այն փուլում ի հայտ եկած խնդիրներին ու նպատակներին համապատասխան, իր գործառույթներն իրականացնելու ընթացքում, պետական ապարատը կարող է օգտագործել (և օգտագործում է) խրախուման, համոզման, անհրաժեշտության դեպքում՝ նաև հարկադրանքի մերուները: Իսկ պետական ապարատի իրավական իհմքը, միևնույն ժամանակ, կազմում է նրա օրենսդիր (ներկայացուցչական), գործադիր-կարգադրիչ և իրավապահպան գործունեությունը:

Ինչ վերաբերում է պետական ապարատի գործառույթների կիրառման ոլորտներին, ապա դրանք ոչ միշտ են համընկնում: Պետական ապարատի գործունեության նույն ոլորտում կարող են իրականացվել մի քանի գործառույթներ և, ընդհակառակը, միևնույն գործառույթը կարող է արտահայտվել հասարակական կյանքի մի քանի բնագավառներում:

Իրավաբանական գրականության մեջ, մասմք՝ պրակտիկայում, գոյւթյուն ունեն պետական ապարատի գործառույթների դասակարգման որոշակի չափորոշիչները<sup>14</sup>: Յաճախ են փորձում գործառույթները դասակարգել ըստ նրանց գոյւթյան և գործունեության տևողության (մշտական, ժամանակավոր), սոցիալական նշանակության (իշխող շերտերի և խմբերի, կամ՝ ամբողջ հասարակության շահերը ներկայացնող), կիրառման և իրականացման ոլորտների (քաղաքական, գաղափարական, սոցիալական, տնտեսական), իրագործման ձևերի՝ իրավաստեղծ-իրավապահպան, իրավակիրառ և այլն:

Պետական ապարատի գործառույթների դասակարգումը կատարվում է նաև համաձայն նրանց տարածքային ծավալի, որի սահմաններում էլ իրագործվում են:

Վերջին տարիներին փորձեր են ծեռնարկվում պետական ապարատի գործառույթները դասակարգել ըստ իշխանությունների տարանջատման սկզբունքի: Տվյալ մոտեցումներին ու չափորոշիչներին համապատասխան՝ պետական ապարատի գործառույթներն ստորաբաժանվում են հետևյալ կերպ՝ օրենսդիր (իրավաստեղծ), գործադիր (կառավարչական), դատական: Նման դասակարգման առանձնահատկությունը, որոշ գիտնականների կարծիքով, այն է, որ «արտացոլում է պետական իշխանության իրագործման մեխանիզմը»: Եվ ոչ միայն: Նշված գործառույթներից յուրաքանչյուրը, որպես կանոն, իրականացվում է ոչ թե մեկ, այլ իշխանության որոշակի ճյուղերին (օրենսդիր, գործադիր և դատական) պատկանող պետական մարմինների համագործակցությամբ<sup>15</sup>:

Պետական ապարատի գործառույթների դասակարգման գործնքացի համեմատաբար նոր մեկնաբանություն է համդիսանում դրանց տարանջատումը ոչ միայն ըստ պետության տիպի, այլև ըստ հասարակության բնույթի: Տվյալ չափորոշիչն համապատասխան, օրինակ, շահագործական տիպի պետության պետական ապարատի գործառույթները խիստ տարբերվում են ժողովրդավարական տիպի պետության պետական ապարատի գործառույթներից: Դա, ամենակած, պայմանավորված է հասարակության բնույթով: Եվ միանգամայն հասկանալի է նման դրվագը, քանի որ շահագործողական և ժողովրդավարական պետությունները բացարձակապես տարբեր հիմքերի վրա են կառուցում իրենց գործունեությունը, առավել ևս՝ նրանցից յուրաքանչյուրը բոլորովին այլ տեսանկյուններով է մոտենում հասարակության պահանջներին ու խնդիրներին:

Շահագործողական տիպի պետական ապարատի, գործառույթների բնութագրական գծեր են համարվում բնակչության շահագործող փոքրամասնության կողմից շահագործվող մեծամասնության ուղղակի ճնշման առաջնակարգությունը, արտադրության գործիքների և միջոցների պաշտպանությունը, շահագործման արտաքին պայմանների ապահովությունը և պետության սահմանափակված միջամտությունը տնտեսության գործերում<sup>16</sup>:

Ինչ վերաբերում է ժողովրդավարական տիպի պետության պետական ապարատի առավել կարևոր գործառույթներին, ապա դրանք կարելի են բանաձևել այսպես՝ բնակչության մեծամասնության կողմից իշխանությունից զրկված և շահա-

գործվող փոքրամասնության նկատմամբ իրականացվող ուղղակի ճնշման երկրորդական նշանակություն<sup>17</sup>, հասարակության մեջ գոյություն ունեցող սեփականության բոլոր ձևերի պաշտպանություն (ներառյալ՝ նաև ավտոականի), նախկինում գոյություն ունեցող շահագործողական պետությունների անհայտ «կազմակերպչական գործառույթների» առաջատար դեր և գործառույթների նպատակառողվածություն, որը ծառայում է ժողովրդավարական բնույթի խնդիրների լուծմանը:

Կամ, իհարկե, նաև այնպիսի ընդիմանական գործառույթներ, որոնք բնորոշ են ցանկացած հասարակության համար: Դրանցից են հանդիսանում պետական ապարատի գործունեության բոլոր այն իիմանական ուղղությունները, որոնք հետապնդում են հասարակական կյանքի բնական պայմաններ ապահովելու նպատակներ: Դրանք պետական ապարատի համատցիալական գործառույթներն են, որոնց բովանդակության կիմքում դրված են պետական ապարատի գործունեության կատարելագործմանն ուղղված բնական պաշտպանի կշռադատված, ռացիոնալ օգտագործումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, արտադրության մեջ նոր տեխնոլոգիաների կիրառումը, արդյունաբերական նոր հզորությունների ստեղծումը և այլն:

Ինչպիսին է պետության էությունը, ինչ իհմքերի վրա է կառուցված այն: Այս այս հարցերն են, որ զգալի դեր են խաղում պետական ապարատի գործառույթների դասակարգման խնդրում: Մինչև 20-րդ դարի 90-ական թվականները հրատարակված հայրենական գիտական հետազոտություններում և դասագրերում, պետության և պետական ապարատի գործառույթների նկատմանը նման նոտեցումներին առաջնակարգ նշանակություն էր տրվում<sup>18</sup>: Գործառույթների քննարկման համար հիմք էր ծառայում իիմանականում այն հանգամանքը, թե որ հասարակարգին են պատկանում դրանք՝ ստորևագրական, ֆեոդալական, կապիտալիստական, սոցիալիստական: Ըստ այդմ էլ որոշվում էր գործառույթների բնույթը:

Աշխատավոր զանգվածների կամքի և շահերի առումով, առաջին երեք տիպերի պետություններն ու նրանց գործառույթները համարվում էին շահագործողական և ոչ ժողովրդավարական: Իսկ չորրորդ տիպը՝ սոցիալիստականը, այդ նույն դիրքերից դիտվում էր որպես ոչ շահագործողական և ժողովրդավարական: Հանում արդարության պետք է նշել, որ ճնշման գործառույթները հատկանշական են համարվել նաև պետական ապարատի այդ տիպին: Սակայն, նախ, այն ներկայացվել է որպես ժամանակավոր գործառույթ,

որը հատկանշական է զարգացման սկզբնական շրջանում գտնվող սոցիալիստական պետական ապարատին: Երկրորդ՝ այն դիտվել է իրու հարկադրաբար կատարվող գործառույթ՝ պայմանավորված թեև տապալված, բայց դիրքերը հասարակության մեջ դեռ պահպանող և պետության անհվալ հետ «շրջելու» ընդունակ ներքին «քշնամուց» պաշտպանելու անհրաժեշտությամբ: Այն ներկայացվում էր որպես տապալված կարգերի կողմից սոցինարարության նկատմամբ ցուցաբերվող դիմադրության ճնշման, իին սպայակագի, կուլավմերի, «աշխատավլրական մասսաների», ժողովրդավարության և հեղափոխական կարգերի թշնամիների հակախորհրդային գործունեությամբ «հրահրված» գործառույթ<sup>19</sup>:

Ակնհայտ է, որ հասարակության զարգացման և դասակարգային պայքարի թուլացման չափով, համաձայն մեր և մյուս պետություններում այն ժամանակ գոյություն ունեցող և իրենց սոցիալիստական անվանող տեսությունների, նվազում է տապալված դասակարգերի դիմադրությունը ճնշելու գործառույթի անհրաժեշտությունը: Ավելին, այն հետզհետև «նեղվում է» և փոխարինվում տնտեսական-կազմակերպչական, մշակության-դաստիարակչական, աշխատանքի և պահանջարկի չափերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և նման կարգի այլ գործառույթներով<sup>20</sup>:

Այսպիսին է եղել տեսությունը, սակայն կյանքը հաճախ ցույց է տվել հակառակը: Այստեղ նկատի է առնվում ոչ միայն (և ոչ այնքան) «տապալված դասակարգերի դիմադրության» ուղղակի ֆիզիկական ճնշման պարագան, որքան հասարակության բարդ և բազմաբովանդակ կյանքը պաշտոնական քաղաքակրթության և գաղափարախոսության սահմաններում «տեղավորելու» անհրաժեշտությունը:

Ներկայում ազատ շուկայական-տնտեսական հարաբերությունների զարգացման ճանապարհին կանգնած Հայաստանում կատարվում է արժեքների վերագնահատում: Այդ գործընթացն է տեղի ունենում նաև Հայաստանի Հանրապետության պետական ապարատի գործառույթների կիրառման ոլորտում: Նոր նոտեցումներ են մշակվում պետական ապարատի ներկայի և ապագայի համար: Տվյալ խնդրի շուրջ ծավալվող վիճաբանությունների ու գործնական խնդիրների հիմքում դրված է մի գաղափար, ըստ որի պետական ապարատի գործառույթների սոցիալական գնահատման օբյեկտիվ բնույթը կայանում է նրանում, որ դրանք միաժամանակ կրում են և զուտ դասակարգային, և համասցիալական բնույթը: Խնդիրը դիտարկելով գործառույթներում առկա ժողովրդավարական ներուժի տեսանկյունից կարող ենք

ասել, որ հասարակության կամքի և շահերի արտահայտմանը վերաբերող մասով պետական ապարատի գործառույթները, անկասկած, ժողովրդավարական են<sup>21</sup>: Իսկ այնտեղ, որտեղ պետական ապարատի գործառույթները մարմնավորում են միայն իշխանություն ունեցող մասի կամքը՝ ի վճառ հասարակության մյուս դասակարգերի և շերտերի շահերի, անշուշտ, դրանք հակաժողովրդավարական բնույթ են կրում<sup>22</sup>:

Դարձ է նշել, որ Վերջ նշված չափորոշիչներից բացի գոյություն ունեն պետական ապարատի գործառույթների դասակարգման այլ իմքեր ևս: Դրանց մեջ, սակայն, առավել տարածված և լայն ճանաչում ստացածները հանդիսանում են այն չափորոշիչները, որոնցով երկրի պետական ապարատի գործառույթները բաժանվում են մի քանի տեսակների՝ ներքին և արտաքին (կախված պետական ռեալ նպատակների և խնդիրների ուղղվածությունից), ինչպես նաև՝ հիմնական և ոչ հիմնական (կախված պետական ապարատի գործունեության կարևորությունից և սոցիալական նշանակությունից կամ այլ ուղղություններից):

Պետական ապարատի ներքին գործառույթները նաև ներքին գործունեության հիմնական ուղղություններն են: Գործառույթներ, որոնց կարևորությունը պայմանավորված է առաջադրված խնդիրները լուծելու անհրաժեշտությամբ: Այդ խնդիրները որքան շատ, նույնքան էլ բազմազան են: Դրանք գործնականում առնչվում են պետական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներին՝ տնտեսական, քաղաքական, հոգևոր, ֆինանսական և այլն: Բացի դրանից, պետական ապարատը հաճախ լուծում է նեկ ոլորտի սահմաններից դուրս գտնվող խնդիրներ՝ իր մեջ ներառելով երկու կամ ավելի ոլորտներ: Այդ իսկ պատճառով պետական ապարատի ներքին գործառույթների ցանկը սահմանելիս, գիտական ուսումնական գրականության մեջ դրանք երթեմն ոչ միայն կապակցվում են հասարակության կյանքի զանազան ոլորտների հետ՝ առաջնորդվելով ոչ ճիշտ մոտեցումներով, այլև՝ լրիվությանք դրանցից օտարում են: Այդիսին է եղել, օրինակ, խորհրդային որոշ իրավագետների մոտեցումը: Նրանք պետական ապարատի գործառույթները դիտարկել են՝ ստորաբաժանելով դրանք հետևյալ կարգով՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և գաղափարական<sup>23</sup>:

Եիշտ է, այդ ամենով հանդերձ, խոսվում է նաև պետական ապարատի գործառույթների առավել մասնատված, հասարակական կյանքի տարրեր ոլորտներին ամենին չհամապատասխանող դասակարգման հնարավորության մասին: Ծրանառության մեջ էր նաև այն միտքը, թե

պետական ապարատի գործառույթների բաժանումը երկու խմբի՝ ներքին և արտաքին, սխալ է ու անթույլատրելի: «Ըստ եռթյան,- նշված է ժամանակի իրավաբանական գրականության մեջ,- արտաքին գործառույթները ոչ այլ ինչ են, եթե ոչ ներքին գործառույթների զարգացում և շարունակություն (նման այն բանին, որ պետության արտաքին քաղաքականությունը պետության ներքին քաղաքականության շարունակությունն է), և այդ առումով տնտեսական, քաղաքական, գաղափարական գործառույթները հանդիս են գալիս միաժամանակ՝ որպես պետական ապարատի և ներքին, և արտաքին գործառույթներ»<sup>24</sup>:

Ներկա ժամանակներում, օրինակ, հաճախ է թույլ տրվում պետական ապարատի գործառույթների օտարում՝ հասարակական կյանքի ոլորտներից: Սակայն դա, որպես կանոն, ոչ թե համատարած, այլ մասնավոր բնույթ է կրում: Դարցն այն է, որ պետական ապարատի ներքին գործառույթները դասակարգելու և պետական ապարատի գործառույթները հասակարգելու և պետական ապարատի գործառույթները հասարակական ուղղությունների համակարգից առանձնացնելու ընթացքում (տնտեսական, սոցիալական, քաղաքական, գործառույթների հետ մեջտեղի), քննակիրում են նաև այդ ամենի հետ բոլորպին չհամընկնող գործառույթներ: Նրանց բվում, ասենք, նշվում են՝ հասարակության մեջ կարդ ու կանոնի հաստատումը և պահպանումը, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Գործնականում տարբերակվում են մեր երկրի պետական ապարատի գործառույթների իրականացման հետևյալ ձևերը՝ իրավաստեղծ, իրավակիրառական, իրավապահական:

Իրավական ձևերում դրսեռովկում է պետական ապարատի և իրավունքի կապը, ինչպես նաև պետական ապարատի պարտավորությունը՝ գործառույթներն իրականացնել իրավունքին համապատասխան, օրենքի շրջանակներում:

Իրավական ձևերում ծեր դրսեռովկում է տվյալ գործընթացում պետական մարմինների ակտիվ մասնակցությամբ: Պետական ապարատի իրավաստեղծ գործունեության արյունքում ընդունվում և իրապարակվում են որոշակի հասարակական հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտեր:

Իրավակիրառական ծեր դրսեռովկում է պետական մարմինների կողմից իրավական նորմերի կատարման ու կիրառման, իսկ իրավապահական ծեր՝ իրավակարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը նպատակաւողված իրավակիրառական գործունեության մեջ<sup>25</sup>:

Արտասահմանյան մի շարք իրավագետներ իրենց հետազոտություններում առանձնացնում

են, իրավականներ» հետ մեկտեղ նաև պետական ապարատի գործառույթների իրականացման ոչ իրավական կամ կազմակերպչական ձևեր: Այսպես, Ա. Վ. Սալկոն իրավական ձևերից է համարում իրավատեղծը, իրավակիրառականը, իրավապահականը: Նա կազմակերպչական ձևերը ներկայացնում է այս կարգով. ա) կանոնակարգիչ-կազմակերպական, ըստ որի՝ առանձին կառույցներ նպատակալաց աշխատանք են տանում, որպեսզի ապահովեն պետական նարմինների գործունեությունը, համապատասխան փաստարքերի ու նախագծերի պատրաստումը, ընտրույթունների կազմակերպված անցկացումը և այլն, բ) կազմակերպական-տնտեսական, որը ենթադրում է հաշվապահական հաշվառման, վիճակագրության, նատակարարման և այլ խնդիրների հետ կապված գործնական-տեխնիկական և տնտեսական աշխատանքների իրագործում, գ) կազմակերպական-գաղափարական, որի հիմքը կազմում են տարրեր գործառույթների կատարման ուղղված գաղափարական, դաստիարակչական անենօրյա այն աշխատանքները, որոնք ուղղակիորեն կապված են իրապարակված նորմատիվ ակտերի պարզաբանման և հասարակական կարծիքի ձևավորման հետ<sup>26</sup>: Իսկ որոշ իրավագետներ տարբերակում են նաև պետական ապարատի գործառույթների իրականացման իրավական և ոչ իրավական ձևեր<sup>27</sup>:

Այսպիսով, կարելի է ասել, որ պետական ապարատի գործառույթների իրականացման ոչ իրավական (կազմակերպչական) ձևերն ունեն իրավակիրառական հատկանիշներ: Ցանկացած հասարակական գործունեություն, ներառյալ՝ կազմակերպչականը, տնտեսականը և գաղափարախոսականը, իիմնվորմ է համապատասխան իրավական նորմերի վրա, իրականացվում է այդ նորմերի շրջանակներում և հանդիսանում է իրավական և ոչ իրավական ձևեր<sup>28</sup>:

Պետական ապարատը, որևէ գործառույթ իրականացնելու ընթացքում, կիրառում է համապատասխան մեթոդներ: Օրինակ՝ կարգուկանոնի պաշտպանության գործառույթը իրականացնելու ժամանակ պետական ապարատը կիրառում է համոզման և հարկադրման, տնտեսական գործառույթների իրագործման ընթացքում՝ տնտեսական, մշակութային գործառույթի իրականացման դեպքում՝ դաստիարակչական մեթոդներ և այլն:

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տես **Բակոնին Մ. Ա.**, Փիլոսոֆիա. Социология. Политика. Москва, 1969; **Արօն Բ.** Этапы развития социалистической мысли. Москва, 1993; **Առայն Է. Բ.** Знак и знаковость (опыт мыслительно-экспериментальной характеристики

կա). «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, N2; Webster's New Universal Unabridged Dictionary N.Y., 1993, L. 741.

<sup>2</sup> Յարկ է նշել, որ «գործառույթ» տերմինը իրավաբանական գրականության մեջ հաճախ օգտագործվում է կամ իրավունքի, կամ էլ պետության հետ համակցությամբ: Այսպես, Վ. Ն. Խրոպանյուկի կարծիքով՝ «պետական գործառույթ» տերմինը գործածվում է «պետության գործունեության առավել կարևոր ուղղությունները որոշելու համար, որոնցում դրսորվում է դրա սոցիալական նշանակությունը» (Хրոպանյուկ Վ. Ն. Теория государства и права (2-е изд., дополненное, исправленное). Под ред. профессора Стрекозова В. Г., Москва. «Интерстиль», 2000, с. 154).

<sup>3</sup> **Վենգերօս Ա. Բ.**, Տեօրիա գումարման և պահպանի համապատասխան փաստարքերի ու նախագծերի պատրաստումը, ընտրույթունների կազմակերպված անցկացումը և այլն, բ) կազմակերպական-տնտեսական, որը ենթադրում է հաշվապահական հաշվառման, վիճակագրության, նատակարարման և այլ խնդիրների հետ կապված գործնական-տեխնիկական և տնտեսական աշխատանքների իրագործում, գ) կազմակերպական-գաղափարական, որի հիմքը կազմում են տարրեր գործառույթների կատարման ուղղված գաղափարական, դաստիարակչական անենօրյա այն աշխատանքները, որոնք ուղղակիորեն կապված են իրապարակված նորմատիվ ակտերի պարզաբանման և հասարակական կարծիքի ձևավորման հետ<sup>29</sup>: Իսկ որոշ իրավագետներ տարբերակում են նաև պետական ապարատի գործառույթների իրականացման իրավական և ոչ իրավական ձևեր<sup>30</sup>:

<sup>4</sup> Տես նոյն տեղում:

<sup>5</sup> Տես նոյն տեղում, էջ 166:

<sup>6</sup> **Ժկոլօծ Մ. Ի.**, Օсновы полимологии. Москва, «Владос», 2001, с. 73-74.

<sup>7</sup> **Խրոպանյուկ Վ. Ն.** Տեօրիա գումարման և պահպանի (2-ое изд., испр.). Под редакцией профессора Стрекозова В. Г. Москва, «Интерстиль», 2000, с. 80-81.

<sup>8</sup> Այդ մասին մանրամասն տես՝ **Պոլիտոլոգիա**. Учебное пособие. Под редакцией профессора М. А. Василина. 2-е изд. Санкт-Петербург: Издательский дом «Бизнес-Пресса», 1999, с. 205-213.

<sup>9</sup> Այդ մասին մանրամասն տես՝ **Մականվեր Բ.** Современное государство. Оксфорд, 1964; **Դարենդօրֆ Բ.** Фрагменты нового либерализма. Штутгарт, 1987.

<sup>10</sup> Այդ մասին մանրամասն տես՝ **Դենիսօվ Ա. Ի.** Теория государства и права. Москва, Юридическая издаательство Министерства юстиции СССР, 1948, с. 125-133.

<sup>11</sup> **Կոլյզենի Գ.** Общая теория государства и права. Кембридж, 1946, с. 29-30, 45-47.

<sup>12</sup> Տես «Անդրեջանը մերժում է Ղարաբաղը բանակցությունների կողմ ճանաչելու գաղափարը», «Ազատ Արցախ», 2000թ., 3 հոկտեմբերի:

<sup>13</sup> Տես «ԼՂՀ Փինանսների նախարարության պաշտոնական հաղորդագրություն՝ ԼՂՀ մարդասիրական օգնության գծով ստացված Փինանսական միջոցների մուտքագրման և ծախսան նախին»: Նման կարգի հաղորդագրություններ պետական լրատվական միջոցներում լույս են տեսնում պարբերաբար (Տես, օրինակ, «Ազատ Արցախ», 2000թ., 7 դեկտեմբերի):

Ինքնաջակցման մեթոդները, հատկապես, պատերազմից ավելի փոքր ուժի կիրառման ձևերը հղի են որոշակի վտանգներով, դրանք հեշտությամբ կարող են վերածվել զինված ընդհարումների, այդ իսկ պատճառով վերջին տարիներին ավելի մեծ ուշադրություն են դարձնում միջազգային կառույցների՝ որպես գործադիր մարմինների դերին ու նշանակությանը:

Արդիտացիայի վճռի իրազորման նպատակով բռնի ուժի կիրառումը, նոյնիսկ եթե դրանով չի խախվում դատապարտված պետության քաղաքական ինքնիշխանությունը, հակասում է ՄԱԿ-ի հոչակագիր դրույթներին:

## PAST, PRESENT AND FUTURE PERSPECTIVES OF IRAN-UNITED STATES CLAIMS TRIBUNAL (IUSCT)\*

**Mostafa YOUSOFVAND**

*Department of European and International Law, Faculty of Law, Yerevan State University*

**A**rbitrary arbitration refers to a type of arbitration in which the parties to a dispute agree to solve their dispute through "compromise". The subject of the dispute and the number of arbitrators and their capacity and also the applicable law in the arbitration are expressed in the compromise. Iran-United States Claims Tribunal is of this kind. The establishment of such a tribunal was a way out that the governments of Iran and The United States and The government of Algeria as the medium thought about and agreed upon. Iran –United States Claims Tribunal which is an international model arbitration is important from legal consideration because it was formed through the application of some parts of UNICITRAL LAWS in the principles of procedure regarding different cases through the past three decades, the enough familiarity with the structure of commercial and rules governing it and a beneficial experience for the lawyers and the international arbitrators.

### **The Definition Iran-United States Claims Tribunal**

Iran-United states Claims Tribunal is an arbitration which hears the disputes between the two governments of Iran and that of the United states of America. Its seat s in Hague and the two governments can bring action against each other to the court. Its basis is The Algeria declarations that two governments signed.

### **The Origin of Iran-United states Claims Tribunal**

After the seizure of the US Embassy in Tehran on 4 November 1979 and the taking of 52 American citizens ashastages, and after President Carter in retaliation froze Iranian assets in the United States banks, at home and overseas [1]. After a while the governments of Iran and The United States of America accepted the compromise of the dispute

with Algeria as the medium. They also accepted commitments and arrangements in the form of Algeria Treaty, one of which was the settlement of the dispute under the agreed arbitration. Therefore, the institute of Iran-United States Claims Tribunal was the compromise declaration known as Algeria Declaration dated January 1981 which was signed after the story of diplomatic and consulate employees of American Embassy was signed became binding from the very date [2]. Algeria Declaration includes three documents. The first document titled the general Declaration includes general commitments such as the release of hostages and Iranian properties and the removal of commercial sanction off Iran. The second document is known as the settlement of disputes. The third document which is known as the commitments of the governments of Iran and the United States has determined the ways regarding the practical ways to execute financial commitments [3].

In Algeria Declaration which includes one introduction, four articles, and seventeen paragraph has predicted issues including the establishment of a tribunal. Along with the general declaration, the declaration of the compromise was also issued, and it was agreed that an arbitration board of nine persons in the form of Claim Tribunal be established in Hague ( Holland) to hear the claim of the parties of the dispute regarding the claim of the citizen of one side against the other, the commercial disputes of the two parties against each other, and the disputes and challenges of the two parties originating from the interpretation and execution of Algeria Declaration and also the disputes of the two parties [4].

### **The Applicable laws in the Iran-United States Claim Tribunal**

By applicable laws we mean, the law that arbi-

\* Ներկայացվել է 17.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

trators are going to issue awards. These laws are usually predicted in the documents of institute (the agreement of Arbitral Clause, agreement of the reference to arbitration). Following these principles is compulsory for the institute of arbitration. The applicable laws in the Iran-United States Claim Tribunal are as follows: all the legal laws including commercial laws (international commerce), commercial common laws, and the contractual laws and finally all the changes predicted in the article 5 of the Algeria declaration [5].

Article 5 of the declaration presupposes that the board of arbitration will take the decision on all the issues based on the legal matters and will apply all the principles of international commercial law and will consider all the applications common law regarding commerce and the changes in the situations as well.

In the interpretation of the article 5 after reference to the fact that arbitration should be based on the legal law, three sources have been mentioned, the principles of law selection, the principles of commercial law, and the principles of international law. In the second part, the tribunal has been obliged to consider three other sources such as: the common laws of commerce, the articles of the contract, and the changes in the situation [6]

#### **The capacity of the Tribunal**

The capacity of the arbitrators should be established based on the capacity principles. These principles exist in the arbitration institute documents; and changes in the principles of capacity is also under the capacity of arbitration institute. The capacity limits of the Iran- United States Claim Tribunal have been expressed in the article 2, and paragraph 4 and6 in the settlement of disputes and paragraph 16 and 17 of the general declaration [7].

The tribunal has the capacity to hear the claims of the American citizens against Iran and Iranian citizens and also the official claims of the governments against each other originating from buy and selling contracts of goods and services [8]

#### **The nature of the Iran-United States Claim tribunal**

The Declaration of Algeria which is the origin of Iran- United States claim tribunal is an international treaty, and it has effects and laws governing international treaties and contracts under the article 1 of Vien Treaty 1969 regarding commerce. This tribunal has different aspects and dimensions including organizations which have international nature and the non permanent characteristic of the tribunal cannot harm its organization capacities. Also the tribunal has a double planned nature.

From one aspect through the settlement of the legal disputes between two governments, we can consider the tribunal a inter governmental tribunal (general nature) and from the other hand, through hearing the claims of the citizens of the countries against each other (private nature) [9].

It seems that the problem of determination of the nature of the Iran- United states tribunal originated from its special characteristics. Considering the fact that the governors of the two governments are sovereign, the organization and the structure of the tribunal is like that of inter governmental tribunals. The tribunal procedure originated from the arbitration principles which was formerly applied in the commercial arbitrations That is to say UNCITRAL rules. Moreover, it is allowed that arbitration principles get corrected based on the necessities and needs of the Declaration [11] .The principles of Iran –United States arbitration principles were prepared based on UNCITRAL rules. This tribunal is considered a semi permanent tribunal because of the long term activity [12]. Its important awards get passed in the governments of Iran- United states and have general validity [13].

#### **The nature of the claims in the tribunal**

The claims to be heard in the tribunal can be divided into three categories. The first group are the claims which are originating from contracts made between the two governments, citizens or governmental institutes. Contacts of commerce and service are of this kind.

The second type of claims are concerned with the removal of property and the effective actions regarding property rights. Such claims originated from the action of The Islamic Republic of Iran regarding nationalizing banks, insurance, industries, and oil contracts and also from confiscation of foreign property or double citizenship.

The third type of claims are related to the banks of Iran and those of the United States which following the blockage of Iranian properties after the diplomatic and consulate issue have remained unresolved. Also, disputes originating from loans that Iranian institute syndicates had taken from American banks or through membership in American banks.

#### **The performance of the tribunal**

The proceeding has begun since 1981and still continues. With the end of the one year opportunity for the presentation of the petitions, That is to say that from 1981 to 1982, the two parties have presented more that four thousand petitions of which about 900 have reached decision or procedural order in the tribunal [14].

The Algeria Declaration and the tribunal and its performance have faced different views. Some of the criticism in that regard are as follows:

Lack of prediction for the way out for the presentation of petition by the double citizen Iranians.

The how of determination of the third party arbitrators

Lack of opportunity for the challenge against the awards being issued against Iran [15]. Considering the fact that in most claims and procedures, Iran has been respondent and this has been unprecedented in international arbitration. Some other lawyers have stressed on other criticisms regarding the performance of the tribunal, including:

The long time process of the procedure

Issuing different awards in single matters

Another criticism which has been under consideration has been that these agreements have been signed only in English language and the Persian version of it has not been signed by the American representatives of the parliament, while in all agreements it is customary that all the agreements should be signed in both languages. Those who have evaluated the agreements as positive have stressed on the following reasons:

The release of the American hostages

The release of the Iranian properties and investments in America and the international aspect of American commitment in that regard

The possibility of the action in any international tribunal in case of any American rejection of action in regard with the agreements

The removal of multitude American claims in American courts and their reference to international arbitration [17].

The effects of the tribunal and its awards in the principle of international law

While there are some criticism regarding the awards and performance of the Iran-United States tribunal, it is one good example of dispute settlement and it has positive effects in international law [18].

In the procedure of the tribunal some important awards in confiscation and harm- applicable law, such matters like double citizenship and the responsibility of the government which is referred by many international references including Human Rights commission [19].

#### **The organization of the Tribunal**

The seat for the tribunal is located in Hague, in Holland. The tribunal has an office which receives claims and also a board of 9 arbitrators of whom 3 are American, 3 are Iranian and 3 are agreed thirds

party arbitrators. This board has a boss who is selected by the third party arbitrators. When the volume of work is high this board of 9 can be divided into three branches, and each branch can work with three arbitrators. It means that in each branch, one Iranian, one American, and one third party arbitrators are present who presides the sessions. The general board manager will preside the three branches as well. The general board of arbitrators is also called arbitration tribunal. The claims heard in each branch are subject to the decision of the tribunal but regarding important issues like the interpretation of declarations, the capacity of the tribunal, ....the board of 9 will take the decision [20].

#### **Conclusion**

This tribunal is the widest international reference in the history of international disputes because it has been unprecedented that thousands of legal claims have been heard. Considering that the principles of arbitration have been arranged according to UNCITRAL rules based on the needs and necessities and declaration, it caused experience for the lawyers and arbitrators of the two parties to become familiar with the structure of commercial arbitration and its principles; and be able to develop international arbitration especially organizational arbitration.

It seems that it was the result of such experience that led to the encoding international commercial arbitration or annexing to New York Convention regarding the execution of the foreign arbitration on the part of Iran. Despite the fact that the idea of establishment of tribunal and its performance have been positive, there are some ambiguities regarding some awards. Some believe that most claims have been presented by American claimants and the awards have been issued to their benefits. In the remaining 17 cases of the claims, most of which are Iranian claims against America, and will be dealt in future, are related to huge sums and Iranian legal team can use legal and political methods relating to these procedures and regarding the existence of vast number of reasons in this regard, prepare the ground to get the tribunal to issue the awards needed by Iran in these claims by the tribunal.

#### **REFERENCE**

1. Lagergren G .The Formative Years of the Iran–United States Claims Tribunal, Nordic Journal of International Law , Volume 66, Number 1, 1997, pp. 23-32.
2. Bigdelli, Mohamad Reza, General International law, Tehran ganje Danesh. 2005. Pp. 516.
3. Eftekhar Jahromi, Godarz, Iran-America Claims

- Tribunal, Tehran, Law Journal ,No 16-17, 1992-93.Pp. 19-20-27.
4. **Mohebi, Mohsen**, Algeria Declaration and Iran-America claims Tribunal. Tehran, 2008.Pp. 271.
  5. **Bigdelli, Mohamad Reza**, General Internationa law, Tehran ganje Danesh. 2005. Pp. 516
  6. **Safaei, Seid hasan**, International law and the international tribunal, Tehran, Mizan. 2008.Pp. 138.
  7. **Bigdelli, Mohamad Reza**, General Internationa law, Tehran Ganje Danesh. 2005. Pp. 516
  8. **Bigdelli, Mohamad Reza**, General Internationa law, Tehran Ganje Danesh. 2005. Pp. 516
  9. **Barbar, Mohsen**, Capacity in the international tribunals, Tehran ,Qoqnoos, 2005.
  10. **Eftekhare jahromi, Godarz**, Iran-America Claims Tribunal. Tehran, Law Journal ,No 16-17, 1992-93.Pp. 7.
  11. **Mohebi, Mohsen**, Algeria Declaration and Iran-America claims Tribunal. Tehran, 2008.Pp. 349.
  12. **Brown**. lie, international law.... , Les accords dñlger du 19 janvier 1981.
  13. **Mohebi, Mohsen**, Algeria Declaration and Iran-America claims Tribunal. Tehran, 2008.Pp. 92-133.
  14. **AhmadiVastani, Abdolghani**, A summary of Algeria Declaration, Tehran, Law journal, Vol1, 1984.
  15. **Boland Nazar, Gholamreza**, Iran-United states Tribunal, Foreign policy journal , vol4, 1990.
  16. **Maroosi, Ali**, International Settlement of Disputes and the position of Iran, Law journal ,Pars international law, Tehran, 2006.
  17. **Eftekhare jahromi, Godarz**, Iran-America Claims Tribunal, Tehran, Law Journal ,No 16-17, 1992-93. Pp. 385.
  18. **Dupuy, P.M.**, Droit international public, Paris, 1992, p. 385.
  19. **Maroosi, Ali**, International Settlement of Disputes and the position of Iran, Law journal ,Pars international law, Tehran, 2006.
  20. **AhmadiVastani, Abdolghani**, A summary of Algeria Declaration, Tehran, Law journal, Vol1, 1984. Pp. 9.

ԻՐԱՆ-ԱՄՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՅՅԱՆԻ (IUSCT) ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ ԵՎ ՀԵՇԱՆԿԱՐՆԵՐԸ

**ՍՈՒՍԱՖԱ ՅՈՒԽԵՖԱՎԱԴ**  
ԵՊՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՓԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՍՎԻՐԱՆԻ

Անփոփում

1979 թվականին Թեհրանում ԱՄՆ դեսպանատան գրավումից և նրա 52 աշխատակիցներին ու դիվանագետներին պատուն վերցնելուց հետո, Միայնակ Նախանգների նախազարդ արգելափակեց Իրանի պետության և պետական տարբեր կառույցների ունեցվածքներն ու հաշվները ԱՄՆ-ում և ամերիկյան բանկերում: Սրված իրադրության մեջ Ալժիրի կառավարությունը համեմե էկավ որպես միջնորդ, ստեղծված կմնուս խմբիների լուծման նպատակով կյանքի կոչվեց միջազգային դատական տրիբունալ (առյան): Այս առյանը նեծ նշանակություն ունի միջազգային իրավունքի և «Յունիսիտրալ» օրենքների մի շարք դրույթների գործադրման տեսակետից: Վերջին երեք տասնամյակների ընթացքում ատյանը բավականին մեծ փորձ է կուտակել ամենատարբեր հարցերի լուծման ուղղությամբ՝ որոշակի փոփոխությունների մտցնելով միջազգային իրավունքում: Առյանի գործունեությունը և դրական, և բացական գնահատականների է արժանացել:

ԴՏԴ 37.01:340

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԻՐԱՎԱՊԱՀՊԱՆ ՀԱՍՏԱՐԳՈՒՄ\*

### Վաչիկ ԲՐՈՒՏՅԱՆ

«Միսիար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ռեկտոր  
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ



**Փ**քաղաքակրթության գարգագան կարևորագույն միտումներից մեկը օրենքի վրա հիմնված հասարակությունների ստեղծումն է: Քաղաքացիական հասարակության կյանքում քաղաքացիների իրավունքները և ազատությունները, նրանց հնարավորությունների բացահայտման և կարիքների բավարարման համար անհրաժեշտ պայմաններն ապահովող իրավական պետությունը՝ քաղաքական կառուցվածքի ժամանակակից իդեալն է: Մարդու շահերը հարային շահերի կենտրոնում դնող բոլոր հումանիտար գաղափարները, ժողովրդավարության, իրավունքների և ազատությունների, պահանջնութերի լիարժեք բավարարման, ազատ զարգացման և այլ գաղափարները, եթե լիակատար հաղթանակ չեն տոնել օրենքն ու իրավանությունը, մշտակեն կմնա անհրագործելի:

Իրավական պետության ստեղծումն ու կերտումը պեսնք է իրականանա քաղաքացիական հասարակության հենքի վրա, հասարակության մեջ ապահովի իրավունքի գերակայությունն իրավաօրինականության և իրավակարգի հաստատումը, մարդու իրավունքների ու ազատությունների առավելագույն աաշտպանությունը, որի պայմաններում միայն մարդիկ կկարողանան ստեղծագործարա աշխատել ու արժանավայել ապրել:

Դա իրավափիլիստիվայական, իրավաքաղաքական վիթխարի խնդիր է, որի մասին մարդկությունը երազել է մի քանի հազարամյակ շարունակ [2]:

Այսօր, Յայաստանի պայմաններում, իրավական ոլորտի կայացման խնդիրը ձեռք է բերել գերական նշանակություն: Օրենքի վրա հիմնված արդարացի հասարակության ստեղծումը հանդես է գալիս որպես այլ հասարակության բոլոր առողջութերի ընդհանրական խնդիր և, որի լուծումը

հնարավոր է միայն առկա բոլոր հնարավորությունների լիարժեք օգտագործման պարագայում: Դրանցից մեկը, ոչ պակաս կարևորը, կապած է գիտության հարուստ հնարավորությունների լիակատար օգտագործման հետ:

Սարդկությունը փորձարկել է դժվարությունների հաղթահարման և աշխատանքի բարելավման բազմաթիվ միջոցներ: Առաջինը՝ փորձարկումների և սխալների մեթոդն է: Դրանք առանց գիտելիքների և հասկացողության, աչքաշափով, բախսի քանակության ապավիճած գործողություններ են: Փորձը ցույց է տվել այդ մեթոդի բախսախնդրությունը, առաջընթացի հասնելու փոխարեն՝ տեղում դոփը, հաճախ ծանր հետևանքներ ունեցող սխալների առատությունը: Երկրորդը՝ ուղիների դրական փորձի օգտագործումն է: Այսպիսի մեթոդը կիրառելի էր լճացման ժամանակաշրջանում: Սակայն այն բոլորովին պիտանի չէ հասարակությունն կտրուկ փոփոխությունների ժամանակ, եթե հին փորձը անբավարար է, նորը՝ քիչ, իսկ արտասահմանյանը՝ ոչ միշտ կարելի է տեղայնացնել: Առավել արդյունավետ և ժամանակակից է երրորդը՝ գիտական մոտեցումը:

Գիտությունը արտադրողական գործառույթը ունեցող հասարակական գիտակցության տեսակներից մեկն է. այն ձևավորում է պրակտիկայի համար անհրաժեշտ նոր գիտելիքներ և ստեղծում նոր պրակտիկա: Գիտության շնորհիկ ծեռքը բերված գիտելիքները՝ մարդկային մտքի նվաճումների, աշխարհներական, աշխարհում կատարվող փոփոխությունների, խոր ուսումնասիրված, սեփական գիտելիքներով ընդհանրացված և հարստացված նարկային փորձի խտացումն է: Գիտությունը առաջին երկու միջոցներից տարրերվում է բարձր բարոյականությամբ, գուրկ է որևէ կարգավորությունը, քանզի նրան հետաքրքրում է միայն կյանքի ծշմարտությունը, իսկության, համակողմանի կշռադատված հանձնարարականների, որոշումների և գործողությունների որոնումը: Գիտության տվյալների օգտագործումը չափանց կարևոր է մարդկանց կյանքի և աշխատան-

\* Ներկայացվել է 12.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

քի պայմանների արագ փոփոխությունների, ինչպես նաև նորացման ժամանակ, ավանդական մեթոդների միջոցով լուծման չենթարկվող պրոլետների հետ բախման և մանավանդ մարդկանց հետ աշխատելու ընթացքում:

Պետական մարմիններին ոչինչ չի խոչընդոտում աշխատանքի մեջ ներգրավելու գիտական կազմակերպություններին և գիտնականներին, լիարժեք օգտագործել նրանց կարողությունները դժվար լուծվող խնդիրների պատասխանները գտնելու համար, աջակցել նրանց ակտիվությանը, ապահովել իր աշխատակիցների կրթվածության և գիտական կոմպետենտության անհրաժեշտ նակարդակը, գնահատել վերջիններիս գործողությունները ըստ դրանց գիտական հիմնավորվածության աստիճանի: ՀՅ իրավապահ մարմինները և նրանց անձնակազմը լուծում են չափազանց բարդ խնդիրներ, որոնց հաջողության մեջ շահագրգության է ամբողջ երկիրը, այդ իսկ պատճառով նրանք պարտավոր են օրինակելի լինել իրենց գործունեության գիտական կոռեկտության մեջ:

Ժամանակը պահանջում է իրավապահ մարմիններից արմատական կատարելագործում և համարձակ, լավ հաշվարկված նորարարություններ: Սակայն նվազված արդյունքները չի կարելի բարելավել՝ չփոխելով Շայաստանը, չզգալով պատասխանատվություն հայրենիքի, հայ ժողովրդի և սեփական զավակների հանդեպ, չզուցաբերելով նվիրվածություն ծառայողական պարտքի և գործի նկատմամբ, չբարձրացնելով աշխատանքի որակը և պրոֆեսիոնալիզմի մակարդակը:

Արդյունքի համեմուն կարևորագույն ուղիներից է կադրերի հետ տարվող աշխատանքի գիտական մակարդակի բարձրացումը: Այդ ուղին այլ գիտություններից ավելի սերտորեն է կապված մանկավարժության հետ և հիմնվում է նրա կոմպետենտության վրա: Նրա կարևորագույն ուղղվածություններից է գիտական նոտեցումը անձնակազմի դաստիարակության հարցում: Այդ գործընթացի իրականացման մեջ վճռորոշ դեր պատկանում է մանկավարժությանը:

Մանկավարժությունն այն գիտությունն է, որն աջակցում է մարդկանց դաստիարակվածության, կրթվածության, ուսուցման և զարգացման քաղաքակրթութեն զարգացած մանկավարժական հատկություններ ձեռքբերելու հարցում: Իրավաբանական մանկավարժությունը մանկավարժության այն ոլորտն է, որը լուծում է այդ խնդիրը՝ հարմարեցնելով իրավական ոլորտի և իրավապահ մարմինների գործունեությանը: Նրա հիմնական գործը՝ այդ խնդիրի լուծումն ապահովող նոր և հավաստի գիտելիքների ստեղծումն է: Իսկ ահա այդպիսի գիտելիքների կիրառման ուղիների և միջոցների մշակումը, պրակտիկայի կարիքներին անհրաժեշտ ձևերի, մեթոդների և աշխատանքի:

Մանկավարժության համապատասխան մակարդակին դրանց հասցնելը հանդիսանում են կիրառական իրավաբանական մանկավարժության գործառույթներ: Դրա կարևորագույն բաժիններից է անձնակազմի դաստիարակության մանկավարժությունը:

Սարդկային քաղաքակրթության զարգացումն այժմ հասել է մի մակարդակի, երբ նորագույն տեխնոլոգիաների զանգվածային օգտագործումը գործառնականում որոշում է պետության հզորությունը, նրա զարգացման աստիճանը, աշխատանքի քանակական և որակական արդյունքները: Դեպի լավագույն ապագան հաջողությամբ ընթանալու, քաղաքակրթ ձևով ապրելու, ավելի արդյունավետ աշխատելու համար յուրաքանչյուր ոլորտում, այդ բվում իրավապաշտպան գործունեության պետական և հանրային մակարդակներում, յուրաքանչյուր իրավապահ մարմնի և յուրաքանչյուր այդ ոլորտի աշխատակցի աշխատանքում անհրաժեշտ է օգտագործել ժամանակակից արդյունավետ տեխնոլոգիաներ: Դա վերաբերում է նաև իրավաբանական մանկավարժության կողմից մշակվող մանկավարժական տեխնոլոգիաների օգտագործմանը:

Հասարակությունը միշտ այնպիսին է, ինչպիսին իր քաղաքացիներն են: Այն կարող է լինել ավելի լավ ու կատարելաւը միայն այն ժամանակ, եթե ավելի լավ և կատարված կերպով կձևավորվի անձնավորության լավագույն տիպը: Մանկավարժությունը անձնավորության և մարդկային հանրության նպատակառուղղական ձևավորման մասին գիտություն է, ինչը և որոշում է նրա հասարակական կարևորությունը [4; 504]: Ի սկզբանե մանկավարժությունը զբաղվում էր միայն երեխաների հետ աշխատանքով հատուկ կրթական և դաստիարակչական համակարգերում (մանկապարտեզներ, դպրոցներ, ընտանիք): Այսօր այն դարձել է գիտություն, որն աշխատում է քաղաքացիների տարբեր կատեգորիաների և խմբերի հետ, մանկավարժական հիմնախնդիրների լուծման հետ կապված ցանկացած համակարգում և պայմաններում:

Մանկավարժության կողմից ուսումնասիրվող, անձնավորության և մարդկային հանրության ձևավորման գործընթացում ներգրավված հիմնական համակարգային մանկավարժական երևույթներ են հանդիսանում դաստիարակությունը, կրթությունը, ուսուցումը և զարգացումը:

Մանկավարժության հիմնական կատեգորիաների և դրանց համապատասխանող մանկավարժական իրականության բաղադրիչների իմացությունը և հասկացողությունը հանգեցնում է կարևոր հետևողական այնտեղ, որտեղ գոյություն ունեն և հայտնաբերվում են մարդկանց դաստիարակության, կրթության, ուսուցման և զարգացման երևույթները, արդյունքները և արդյունքների

ազդեցությունը նրանց կյանքի և գործունեության վրա, առկա են մանկավարժության առարկան, նրա ձեռքբերումների հնարավորությունները և կիրառական անհրաժեշտությունը [7]: Դա վերաբերում է իրավական համակարգին, իրավապահ մարմինների գործունեությանը, աշխատակիցներին և իրավաբաններին:

Օրինականության և իրավակարգի ամրապնդումը, հանցագործությունների դեմ պայքարն ամբողջ հասարակության խնդիրն է, քանզի այն լուծելու ճանապարհին առաջացած խոչընդոտները պայմանավորված են գործնականում բոլոր ոլորտների՝ տնտեսական, մշակութային, բարոյական, պետական կառավարման և այլնի թուլությամբ: Կային ժամանակներ, երբ օրինականության և իրավակարգի ամրապնդումը համարվել է իրավունքի արտոնություն, զուտ իրավագետների խնդիր: Որքան ավելի ենք նոտենում նոր ժամանակներին, որքան մեծ է իրավական խնդիրների լուծման փորձը, այնքան ավելի է ամրապնդվում այն մտայնությունը, որ իրավունքի վրա հիմնված իրավական պետության և քաղաքացիական հասարակության ստեղծումը համալիր գիտական և գործնական իհմնախնդիր է: Օրինականության և իրավակարգի ամրապնդման խնդիրը լուծման գործընթացին մնացել են նաև այլ մասնագետներ: Ստեղծվել են գիտության սահմանային ոլորտներ՝ իրավունքի փիլիսոփայություն, իրավունքի սոցիոլոգիա, իրավապահ ոլորտի կառավարման տեսություն, իրավաբանական հոգեբանություն, դատական հոգեբուժություն և այլն [3]: Սակայն այնպիսի բազմաղործ և գործնականութեն ուղղորդված գիտություն, ինչպիսին մանկավարժությունն է, որն ունի իր հետաքրքրություններն ու մեծ հնարավորություններն իրավական ոլորտում, դեռևս քիչ է օգտագործվել և օգտագործվում ժամանակից աշխարհի մարտահրավերներին դիմակայելու համար:

Հայտնի է, որ իրավունքը հասարակական կյանքի միակ կարգավորիչը չէ: Իրենց վարքածում և հարաբերություններում բաղաքացիները դեկավարվում են նաև այլ սոցիալական նորմերով՝ գաղափարախոսական, մշակութային, բարոյական, կրոնական, կորպորատիվ, սոցիալ-հոգեբանական (ավանդույթներ, սովորույթներ, նորածություն, սնապաշտություն և այլն): Նրանք հայտնաբերում են իրենց ազդեցությունը ինչպես իրավունքով կառավարվող ոլորտում, այնպես էլ այլ ոլորտներում:

Այս կամ այն նորմերի հոգեբանական ընկալումը, սեփական վարքագիր համապատասխանեցումը տվյալ նորմերին որոշվում է ժողովրդի, նրա սոցիալական խմբերի և առանձին քաղաքացիների դաստիարակվածության, կրթվածության, կուլտուրայի, սոցիալական հասունության, բարոյականության մակարդակով: Ահա թե ինչու օրի-

նականությունը և իրավակարգն անքակտելիորեն կապված են հասարակության մանկավարժական համակարգի, նրանում իրավապաշտ վարդի նշանակությունը հասկացող կամ ժխտող և համապատասխան ձևով նրա նորմերին վերաբերվող քաղաքացիների զանգվածային և անհատական վարդի վրա ներազդող դաստիարակության, կրթության, ուսուցման և զարգացման ինստիտուտների գործելու հաջողության և արդյունավետության հետ:

Հասարակական կյանքի ժողովրդավարացման ընթացքում իրավունքի նորմերը հարգելու համար ավելի կարևոր նշանակություն պետք է ունենա ոչ թե քաղաքացիների նկատմամբ կիրավող ուժային հարկադրանքը, այլ նրանց դաստիարակվածությամբ, կրթվածությամբ, ուսուցմամբ և զարգացվածությամբ պայմանավորված օրինաչափ վարդը: Դա նշանակում է, որ հասարակության մանկավարժական համակարգի, նրանում մանկավարժական աշխատանքի մակարդակի և հաջողության դերը պատմականորեն աճում է [8]:

Անկախության հոչակումից հետո Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած փոփոխությունները թույլ են տալիս դիմել հայ ժողովրդի մշակութային հարուստ ժառանգությանը, որի մեջ կարևոր տեղ է գրավում իրավունքն իր դաստիարակչական գործառույթով, ընդ որում, վերջինիս դերը հայ հասարակությունում մշտապես աճում է:

Հայկական իրավական պետության գաղափարները կյանքի կոչելու և ամենից առաջ հանցագործության դեմ հաջող պայքարի և օրինականության ու իրավակարգի ապահովման համար մեր հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է անցնի իրավական դաստիարակության դպրոց՝ որպես իրավական պետության ձևավորման անհրաժեշտ տարր [1]:

Իրավապահ գործառույթների ուղիղ կատարումից բացի՝ իրավապահ մարմինների աշխատակիցների, պաշտոնատար անձանց, մասնագետների գործունեությունն ունի նաև մանկավարժական ասպեկտ, որը հաճախ չի գիտակցվում, անտեսվում է: Այն արտահայտվում է նրանում, որ այդ գործունեությունն ուժեղ անմիջական ազդեցություն է գործում քաղաքացիների իրավական դաստիարակվածության վրա՝ այն բանի վրա թե ինչպիսի և ինչ իրավագիտակցություն է ձևավորվում նրանց մոտ, բարձրանում է արդյոք իրավական նորմերի կարևորության գիտակցումը, հավատը դրանց պահպանման անհրաժեշտության հանդեպ, իրավաբանների նկատմամբ հարգանքը, իրավաբաններին իրավապահ մարմիններին իրավակարգի ամրապնդման հարցում օգնություն ցուցաբերելու պատրաստականությունը, հավատը օրենքի ուժի և իրենց իրա-

վական պաշտպանվածության նկատմամբ [9]:

Իրավապահ մարմինները շահագրգռված են նաև, որ զանգվածային լրատվաճիջոցներում իրենց գործունեության լուսաբանումը և իրավաբանական պրոպագանդան տարվեն մանկավարժութեն արդյունավետ ձևով, որպեսզի ստեղծվի, կատարելագործվի և պատշաճ մակարդակով գործի բնակչության տարրեր խնճերի, առաջին հերթին՝ դեռահասների և երիտասարդության իրավական պարտադիր ուսուցման և իրավական դաստիարակության համակարգը: Նրանք կոչված են նախաձեռնություններ ցուցաբերելու և անշուշտ ակտիվ ու մանկավարժութեն մտածված ձևով մասնակցելու այդ աշխատանքին:

Քազմաքիվ իրավապաշտպանական խնդիրների՝ կանխարգելման, հանցագործությունների բացահայտման և քննության, հասարակական կարգի պահպանման և ճանապարհային երթևեկության անվտանգության, անշափահասների հետ աշխատանքի և պատժի կատարման և այլնի հաջող լուծումը շատ թե քիչ կապված են իրավապահ մարմինների պատասխանատվության, ուշադրության, իրավունքների և իրենց գործունեության շրջանակներում հայտնված քաղաքացիներին ինչ-որ բան պարզաբանելու, ուսուցանելու, դաստիարակելու, լուսաբանելու, վերահամոզելու անհրաժեշտության հետ: Դա նշանակում է, որ իրավապահ մարմիններն իրենց իրավաբանական, օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքներին հասնելու համար պետք է միաժամանակ լուծեն էական մանկավարժական խնդիրներ, այդ գործունեության մեջ հմտորեն ներմուծեն մանկավարժական կառուցվածքի տարրեր, օգտվեն մանկավարժական մեթոդներից և միջոցներից, ունենան համապատասխան պրոֆեսիոնալ-մանկավարժական պատրաստվածություն [5]:

Դաշտի է, որ ցանկացած գործունեության ժամանակ վերջնական և վճռորոշ կարծիքը պատկանում է այն իրականացնող մարդկանց և համարժեք է նրանց անձի առանձնահատկություններին և պատրաստվածությանը: Այդ կարծիքի վրա, թերևս, առավել ուժեղ են անդրադառնում մանկավարժական գործուները: Պրոֆեսիանալիզմը ուղղի կերպով կախված է պրոֆեսիոնալ կրթվածությունից, ուսումից, դաստիարակվածությունից և զարգացվածությունից, այսինքն՝ աշխատակիցների մանկավարժական առանձնահատկություններից:

Քանի որ, վերը նշվածի համաձայն, տարրեր ծառայությունների և իրավապահ մարմինների ստորաբաժանումների աշխատակիցների կողմից բազմաքիվ իրավապաշտպանական խնդիրների լուծումը կախված է մանկավարժական հիմնախնդիրներից, ապա դրանք լուծելու հաջողությունը կախված է այն հանգանակներից, թե որքանով են աշխատակիցներն ընկալում խնդիրները, ունե՞ն արդյոք դրանք հաշվի առնելու ցանկություն, կա-

րո՞ղ են լուծում տալ դրանց, պատրա՞ստ են ընդունել համապատասխան որոշումներ, տիրապետո՞ւմ են անհրաժեշտ մանկավարժական արդյունքներին հասնելու հնտություններին և կարողություններին: Այլ կերպ ասած նրա արհեստավարժության մեջ առկա՞ է արդյոք այնպիսի տարր, ինչպիսին է պրոֆեսիոնալ-մանկավարժական պատրաստվածությունը:

Չանրահայտ փաստ է, որ ցանկացած կառավարչական գործունեություն ունի մանկավարժական ասպեկտ, այդ թվում՝ նաև իրավական համակարգի պետքերի, իրամանատարների, բոլոր աստիճանների դեկավարների: Նրանք ոչ միայն պարտավոր են ենթակա աշխատակիցների հետ անցկացնել պարապմունքներ և բարձրացնել վերջիններիս պրոֆեսիոնալ որակավորումը, այլև դաստիարակել, զարգացնել, հաշվի առնել սեփական օրինակի, աշխատառճի, հաղորդակցման, արարթների, որոշումների, գնահատականների մանկավարժական էֆեկտը: Նրանց կառավարչական արհեստավարժությունը և ենթականների հետ աշխատանքի կառավարման հաջողությունն անքակտելիորեն կապված է կառավարչական-մանկավարժական պատրաստվածության հետ, որն իր հերթին հանդիսանում է պրոֆեսիոնալ-մանկավարժականի տարրերակ [6]:

Իրավապահ մարմիններում գոյություն ունեն կրթության, ուսուցման, դաստիարակության, պրոֆեսիոնալ պատրաստման համակարգեր, որոնք պատասխանատու են իրավապահ մարմինների աշխատակիցների կրթվածության մակարդակի և որակի, նրանց մասնագիտական վարպետության, զարգացման և դաստիարակության համար: Այդ համակարգերը իրենց բնույթով մանկավարժական են, իսկ կրթական հաստատությունները՝ մանկավարժական «արտադրություններ» են: Պրոֆեսիոնալ կրթության և պրոֆեսիոնալ պատրաստման համակարգերի և նրանց ստեղծագործական մեխանիզմի առանցք են հանդիսանում հոգեբանա-մանկավարժական տեխնոլոգիաները, որոնց կիրառման ժամանակ ուսուցանվող աշխատակիցների մոտ ի հայտ են գալիս և կատարելագործվում են պրոֆեսիոնալ գիտելիքները, հմտությունները և կարողությունները, սովորությունները, որակները, ընդունակությունները և դրանց գուգակցությունները: Այդ տեխնոլոգիաների կատարելագործման և իրականացման եղանակները, խնդիրները, սկզբունքները, ծները և մեթոդները և մանկավարժական են:

Մանկավարժությունը մեկն է այն գիտություններից, որը հատուկ և արդյունավետ զրավում է մարդկանց կրթության, դաստիարակության, ուսուցման և զարգացման համակարգերի և գործնթացների ուսումնասիրությամբ: Այն ունի գիտականորեն հիմնավորված մեծածավալ հանձնարարականներ՝ նախատեսված դրանց օպտի-

մալացման և կատարելագործման համար: Դրա նշանակությունը դժվար է գերազնահաստել պրոֆեսիոնալ իրավաբանական կրթության համակարգի աշխատակիցների համար, որոնք պարտավոր են տիրապետել մանկավարժական կուլտուրային, իրենց աշխատանքում պատշաճ գիտամանկավարժական հիմքի վրա կառուցեն մանկավարժական համակարգը և իրականացնեն մանկավարժական գործընթացը, որպեսզի պատրաստեն իրավամբ պրոֆեսիոնալ իրավաբան-կադրեր:

Մանկավարժության հետ սերտորեն կապված է իրավապահ մարմինների կադրային ապարատի և աշխատակիցների գործունեությունը: Մեծ մասամբ այն կայանում է իրավապահ մարմինների աշխատակազմի դաստիարակության, կրթության, ուսուցման և զարգացման իրականացմանը: Համարել նրանց պրոֆեսիոնալներ, որոնք արժանավայել կերպով են զբաղեցնում իրենց պաշտոնները, կարելի է միայն այն ժամանակ, եթե նրանք իսկապես ունեն մանկավարժական արժանիքներ, ունակ են լիիրավ ձևով կազմակերպելու մանկավարժական համակարգեր, ապահովելու դրանց գործունեությունը և անձանք իրականացնելու մանկավարժական աշխատանքն իրենց պատասխանատվության և խնդիրների առանձնահատկությունների սահմաններում:

Հարադրվածը բարերի, օրինականության, իրավակարգի և իրավական գործունեության մանկավարժության հետ փոխկապակցվածության մեջնին է ամբողջական ցանկը չէ: Այն հասարակությունում, որին մենք ձգտում ենք, կտրուկ բարձրացել և շարունակում է աճել օրինականության և իրավակարգի ամրապնդման մանկավարժական պրոբլեմների լուծման նշանակությունը՝ իրավաբանական մանկավարժության՝ իրեն կիրառական գիտության, հնարավորությունների օգտագործմամբ: Իրավական պետության էռության, նրա հումանիտար և ժողովական մանկավարժական նշանակության համաձայն իրավապահ մարմինների և աշխատակիցների գործունեությունը պետք է լրջորեն կատարելագործվի: Դա, մասնավորպես, ենթադրում է աշխատանքի մանկավարժականացում, այսինքն՝ աշխատանքի հարստացում մանկավարժական եղանակներով և միջոցներով, իրավաբանական մանկավարժության տվյալների և հանձնարարականների լիարժեք

օգտագործմամբ այն պահին և այնտեղ, որտեղ դա անհրաժեշտ է և կտա լավագույն գործնական արդյունքներ: Յասարակական կյանքի հումանիգացման և ժողովրդավարացման ճիշտ ընկալվող միտումներն անթույլատրելի են դարձնում ուժային միջոցների օգտագործումը իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից: Դրանք նաև պարտավորեցնում են գործել ավելի պրոֆեսիոնալ կերպով, ավելի ակտիվ օգտագործել արդյունավետ և քաղաքակիրք միջոցներ, որոնց շարքին են դասվում նաև մանկավարժական մեթոդները, ներառել մանկավարժական մոտեցումներն աշխատանքի մեջ և իրավաբանական ուսումնասիրման առարկա դարձած կյանքի իրադարձությունների քննարկումների ժամանակ: Դա բարձրացնում է իրավաբանների պրոֆեսիոնալիզմի նկատմամբ պահանջները՝ ներառելով իրավաբանական մանկավարժության իմացությունը:

Ժամանակը թելադրում է իրավական ոլորտում մանկավարժության հնարավորությունների օգտագործման բարելավման անհրաժեշտությունը: Անհրաժեշտ է առանձին ուսումնասիրությունների ամբողջացման գիտակցումը, իրականության օրինաչափությունների ուսումնասիրմանը հատուկ առանձնահատկությունների հայտնաբերումը, համարժեք պարադիգմայի, մեթոդաբանության, տեսության մշակումը, ինչը կարող է բարձրացնել նաև մանկավարժական մշակումների նակարդակը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավիյան Ն. Ա. և ուրիշներ, Իրավունքի տեսության հիմնահարցեր, Եր., 2003:
2. Խաչատրյան Ս., Քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն, Եր., 2011:
3. Ալեքսեև Ը. Ը., Փիլոսոփիա պարագաներ, Մ., 1999.
4. Բախմեր Վ. Մ., Вопросы общественного воспитания // Атологогия педагогической мысли России второй половины XIX начала XX в. М., 1990.
5. Воспитательная работа с личным составом в системе Министерства внутренних дел Российской Федерации: Учеб. Под. ред. В. Я. Кикотя. М., 2009.
6. Педагогика в деятельности руководителя органа внутренних дел /Под. ред. И.В.Горлинского. М., 2002.
7. Родин Վ. Փ., Պադագոգիկա: Սրբ լեկցին. Մ., 1998.
8. Столяренко А. М., Юридическая педагогика: Курс лекций. М., 2000.
9. Столяренко А. М., Юридическая педагогика в МВД: вопросы методологии и теории. М., 1999.

#### LEGAL PEDAGOGY IN RA LAW ENFORCEMENT SYSTEM

##### VACHIK BRUTYAN

Rector of Armenian-Russian International University "Mkhitar Gosh"  
Candidate of Pedagogical Sciences, Docent

##### Summary

In the article it is presented the activities of applied juridical pedagogy. Especially it is important the necessity of usage improvement of pedagogical possibilities in the legal field.

### **Վաչիկ ԲՐՈՒՏՅԱՆ**

**«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ռեկտոր  
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ**

**Ր**ասարակական կյանքի բուռն ընթացքի ժամանակ անընդհատ զարգանալը, ժամանակի մարտահրավերներին հաջողությամբ պատասխանելը, ոչ թե երեկվա և նույնիսկ այսօրվա, այլ վաղվա օրվա մասնագետներ պատրաստելը, ամբողջ ուժով հասարակական գործընթացների վրա ազդեց՝ այս ուղղելով քաղաքակիրք, ժողովրդավարական, բարոյական, իրավական հունի մեջ սրանք են կրթական հանձնարարի արդի ռազմավարական խնդիրները:

Գիտակցումը, որ մասնագետների պատրաստման ընթացքում ձեռքբերումների և իրական պահանջների միջև գոյություն ունի մշտական ճեղքածք, որն սկսում է սպառնալիորեն և արագործն լայնանալ կրթական գործընթացի կատարելագործման ուղղված ուժերի լարման ցանկացած թուլացման ժամանակ, ընթանալով արագ զարգացող կյանքի պահանջներին համապատասխան տեղապով, հանդիսանում է իրենց պատասխանատվությունը սեփական ժողովրդի և նրա ապագայի առջև սուր զգացող կրթական ոլորտի աշխատակիցների մշտական անհանգստության, անբավարարվածության և ստեղծագործական որոնումների աղբյուրը:

Իրավակարգի և օրինականության ամրապնդման խնդիրների յուրահատկությունը և բարդությունը, համապատասխան որակավորում ունեցող կադրերի պահանջը պայմանավորում են երկրում իրավաբանական կրթության համակարգի գոյության և զարգացման անհրաժեշտությունը: Նրա կառուցման հիմքը՝ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների դրույթներն են:

Իրավաբանական կրթությունը Հայաստանում շատ լայն տարածում ունեցող ճյուղավորված համակարգ է, պետական և ոչ պետական մի շարք կրթական հաստատություններով, որտեղ միաժամանակ սովորում և կատարելագործվում են հա-

գարավոր իրավաբաններ:

Յուրաքանչյուր կրթական համակարգ, ինչպես սոցիալական համակարգերի մեջ մասը, տարակազմ (հետերոգեն) և յուրահատուկ է, այսինքն բազմատար է բնույթով և իր կազմի մեջ մտնող տարրերի, բաղադրիչներով, ենթահամակարգերի հատկություններով:

Մանկավարժական համակարգը կրթական համակարգում զբաղեցնում է գերիշխող դիրք և ունի կարևոր նշանակություն, որը բնորոշում է նրա երևյունը, սկզբունքային որակական տարբերությունն այլ համակարգերի համեմատ, այսինքն՝ գլխավոր հատկանիշներով և հատկություններով կրթությունն ունի մանկավարժական բնույթը:

Յուրաքանչյուր մանկավարժական համակարգ մանկավարժական գործընթացի առանձնահատկությունները, զարգացման ընթացքը և արդյունքները ծնավորող, փոխկապակցված, ներդաշնակ գործող մանկավարժական գործուների ամբողջություն է:

Մանկավարժական համակարգի կառուցվածքային յուրահատկությունն արտացոլվում է յուրահատուկ կարևորագույն ենթահամակարգերում կրթական, դաստիարակչական, ուսուցման, զարգացման: Կրթական համակարգերը մանկավարժական են, քանի որ նրանց մեջ ներկայացված են և արդյունավետ գործուն են այդ ենթահամակարգերը:

Բարձր որակավորում ունեցող իրավաբաններ պատրաստելու ընթացքում նկատվում են այդ համակարգերի որոշակի առանձնահատկություններ:

Մանկավարժական համակարգին և նրա ենթահամակարգերին բնորոշ են յուրահատուկ մանկավարժական տարրեր, որոնց թվին են պատկանում

- Նպատակը, խնդիրները, սկզբունքները
- Սուրբեկտը (դասավանդող), օբյեկտ-սուրբեկտը (ուսուցանվողներ)

\* Ներկայացվել է 12.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

- պայմանները, փոխգործողությունը (փոխներգործություն)
- բռվանդակությունը
- կազմակերպումը (կազմակերպչական ձևեր), ապահովումը
- միջոցները, եղանակները, մեթոդները
- վերահսկողությունը, արդյունքները, գնահատականը:

Կարգ ու կանոնը, ներդաշնակությունը, հավասարակշռվածությունը, համակարգի տարրերի համաձայնեցված գործունեությունը նոր արդյունավետության և կենսունակության կարևոր պայմանն են:

Ավելի քան 300 տարի առաջ այդ միտքն արտահայտել է Յ. Ա. Կոմենսկին՝ կրթությունը պետք է լինի կանոնակարգված, այսինքն «ճախորդող և հաջորդող, ստորին և վերին, մեջ և փոքր, նման և տարրեր իրերի դասավորվածությունը յուրաքանչյուր իրին համապատասխանող և հատկացվող տեղի, ժամանակի, թվի, չափի և քաշի համապատասխան ... կարգ ու կանոնը իրերի հոգին է: Չե՞ որ այս, ինչ կարգի է բերված, պահպանում է իր դիրքը և ամբողջությունը, քանի դեռ գործում է կարգը: Եթե կարգը խախտվում է, ամեն ինչ թուլանում է, տատանվում, խարխլվում, ընկնում»<sup>1</sup>:

Իրավաբանական կրթության կարգը մանկավարժական համակարգում ունի իր առանձնահատկությունները:

Սանկավարժական համակարգերն ի հայտ են գալիս կառուցվածքների և գործընթացի տեսքով: Մանկավարժական համակարգը որպես կառուցվածք՝ նորա «անատոռիան» է, որը մարոնավորում է բոլոր մանկավարժական ենթահամակարգերը և տարրերն իրենց որոշակի փոխկապակցվածության մեջ՝ ուղղված մանկավարժական կարգի և առավելագույն արդյունավետության հասնելու ապահովմանը: Մանկավարժական համակարգն իրու կառուցվածքը ենթադրում է նպատակառուղված, գիտակցված և մանկավարժորեն իրավասու հաշվարկ և կրթական համակարգերի մանկավարժական կառուցվածքի ստեղծում կրթական հաստատությունը, ֆակուլտետում, ամբիոնում:

Դիմնվելով ընդիհանուր մանկավարժության տվյալների վրա՝ իրավաբանական մանկավարժությունը և նոր ենթաքաղաքներ՝ իրավաբանական կրթության մանկավարժությունը, նշանաւում են իրավաբանական կրթության և իրավաբանների որակավորման բարձրացման մանկավարժական համակարգերի ստեղծման ու կատարելագործման ուղիներ: Այդ իիմնախնդիրների լուծման հարցում գգալի ներդրում են ունեցել Ա. Ս. Բատիշել, Ն. Ռ. Բիտյանովը, Ի. Վ. Բիոչինսկին, Ա. Վ. Բուդանովը, Ի. Վ. Գորլինսկին, Վ. Պ. Դավիդովը:

Գ. Պ. Դավիդովը, Վ. Գ. Կոյուխովը, Ն. Ս. Կրավյունը, Ա. Դ. Լազուկինը, Ի. Ա. Լատկովը, Վ. Մ. Օքուխովը, Ա. Վ. Պիշչելկոն, Վ. Ի. Պոստովը, Մ. Պ. Ստուրովան, Վ. Պ. Տրուբոչինը, Ն. Ա. Տյուգանան, Ի. Ե. Ֆարերը, Ա. Ա. Ֆեդոտովը և ուրիշներ:

Կրթական հաստատության գործունեությունը հագեցված է տարբեր մանկավարժական գործուներով: Այդ բազմազանության մեջ պետք է կողմնորոշվել, հասկանալ դրանց կանոնավորվածության իմաստը, տեսնել գլխավորը, աշխատանքում կառուցել հստակ համակարգ, որպեսզի, պահպանելով հստակ մանկավարժական կողմնորոշումները, որոշվեն իրավաբաններ պատրաստելու ժիշտ ուղիները՝ պահանջվող արդյունքներին հասնելու համար<sup>2</sup>:

Կրթական հաստատություններում գործող մանկավարժական գործուների իիմնական խմբերի համակարգային ամբողջությունը և փոխկապակցվածությունը կարելի է ներկայացնել պրոֆեսիոնալ կրթական գործընթացի բլոկ-սխեմայի տեսքով:

**ԱՌԱՋԻՆ ԲԼՈԿ:** *Մանկավարժական համակարգերի ցանկացած կառավարման, նպատակառողջված ստեղծման և գործունեության ապահովման հիմքում դրված է նպատակը:*

**ԵՐԿՐՈՐԴ ԲԼՈԿ:** *Ղեկավարության, վարչական և գիտամանկավարժական կոլեկտիվների և յուրաքանչյուր դասավանդողի կառավարման ու դասավանդման գործունեություն:*

**ԵՐՐՈՐԴ ԲԼՈԿ:** *Ուսուցանվողների ուսանողների, կուրսանտների (զիմվիրական ուսումնական հաստատությունների ուսանող), ունկնդիրների գործունեությունը, որն անվանվում է ուսուցում: Սասանագիտական կրթական գործընթացի նպատակը ոչ միայն պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի նպատակներն են, այլև առավել չափով նրանց, ովքեր նախ ընտրել են իրավաբանի մասնագիտությունը և ընդունվել իրավաբանական կրթական հաստատություն: Այդ իսկ պատճառով ուսանողների, կուրսանտների, ունկնդիրների ուսանան արդյունավետության վրա ազդող բոլոր մանկավարժական գործուները պետք է հանդիսանան լուրջ ուսումնասիրման, գնահատման և կատարելագործման առարկա:*

**ՉՈՐՐՈՐԴ ԲԼՈԿ:** *Մանկավարժական փոխագուցություն:* Ներառում է կառավարումը, դասավանդումը և ուսուցումը իրականացնող բոլոր անձանց կազմակերպված կամ տարերային, միավորող կամ բախող փոխազդեցությունների գործակցություն:

**ԴԻՎԵՐՈՐԴ ԲԼՈԿ:** *Մակրո և միկրոպայմաններ, որոնցում իրականացվում է դասավանդումը և ուսուցումը, տեղի է ունենում նպատակի վերա-*

փոխումը արդյունքների. սա այն միջավայրն է, որտեղ գործում է կրթական հաստատությունը, յուրաքանչյուր դասախոս և ուսանող:

**ՎԵՑԵՐՈՌԴ ԲԼՈԿ:** *Ամրող մասնագիտական կրթական գործընթացի արդյունքում առաջացած վերջնական արդյունք շրջանավարտների պատրաստման որակն է:* Վերջինը ոչ միայն դիվլոմի թվանշամներն են, այլև շրջանավարտ-իրավաբանների մարդկային և մասնագիտական, մասնավորապես՝ մասնագիտամանկավարժական որակները՝ նրանց իրական կրթվածությունը, ուսուցումը, դաստիարակվածությունը, զարգացվածությունը և դրանց այն բարարիչները, որոնք վերաբերում են իրավաբանի մոդելին: Վերջնական արդյունքը պետք է համապատասխանի ի սկզբան են դրված նպատակին:

Մանկավարժական համակարգը կարող է հաջողությամբ գործել, եթե կառուցված է նպատակային կառավարման և նրա իրականացման պայմանների հենքի վրա:

**Կրթական համակարգի արդյունավետության հիմնական հոգեբանամանկավարժական պայմանները**

1) Կրթական հաստատության գործունեությունը և ամբողջ կրթական գործընթացը պետք է ենթարկվեն 21-րդ դարի հասարակության զարգացման պահանջներին՝ լիազուք համապատասխանող նպատակներին՝ ժողովրդավարական, իրավական պետության ստեղծման և իրավաբանական կրթության համաշխարհային համակարգում ինտեգրման սկզբունքը:

2) Պետք է իրականացվի գիտականորեն հիմնավորված ընդհանուր նպատակ՝ շրջանավարտին ներկայացվող կոնկրետ որակավորման պահանջներին (պրոֆեսիոնալ որակ, գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, սովորույթներ, ընդունակություններ) համապատասխան դեկոմպոզիցիա, իսկ դրանցից յուրաքանչյուրը պետք է դարձնա մասնավոր մանկավարժական խնդիր, որի լուծմանը ենթարկվում են մանկավարժական համակարգի մնացած բոլոր բաղադրիչների, մանկավարժական տեխնոլոգիաների իրագործումը և կառուցումը:

3) Կրթական գործընթացի կողմնորոշումը ուսանողների՝ ապագա իրավաբանների նկատմամբ: Յուրաքանչյուր կրթական հաստատություն գործում է նրանց համար, ովքեր այնտեղ սովորում են: Կրթական հաստատություններ ստեղծող հասարակությունը կատարում է մեծ նյութական ծախսեր, որովհետև նրան պետք են մասնագետներ, անհրաժեշտ է երիտասարդ պրոֆեսիոնալ կաղրերի պատրաստման մշտական համակարգ: Իրավաբանական կրթական հաստատության գլ-

խավոր նպատակն է բարձրակարգ մասնագետ-իրավաբանների պատրաստումը, գլխավոր արդյունքը՝ մասնագետ-իրավաբանը, հաջողության գլխավոր չափանիշը՝ շրջանավարտի անհատականության ընդհանուր և պրոֆեսիոնալ ձևավորվածության մակարդակը: Մանկավարժական համակարգի յուրաքանչյուր տարրի ճշգրտության, օպտիմալության, օգտակարության գլխավոր չափանիշը այն է, ինչ նա տալիս է իրավաբան ուսանողների պատրաստման բարելավման համար՝ նպատակի, կոնկրետ որակավորման պահանջների և մասնավոր խնդիրների համապատասխան:

4) Պրոֆեսիոնալ-կրթական համակարգում մասնագետ-անձնավորության (անհատականության) ձևավորումը հանդիսանում է և նպատակ, և այդ գործընթացի անհրաժեշտ պայման: Իրավաբանը մասնագետ չէ, եթե տիրապետում է միայն պրոֆեսիոնալ գիտելիքների և հմտությունների, բայց կիրք, դաստիարակված, զարգացած չէ: Յ. Ա. Կոնճնեսին դիպուկ արտահայտել է այդ ընդհանուր մանկավարժական անհրաժեշտությունը. «*Կրթուրյունն առանց առաջինության, նույնն է, ինչ ուսկե օղակը՝ խոզի քթին*<sup>3</sup>: Առանց դաստիարակվածության, ընդհանուր կրթվածության, կուլտուրայի՝ «մասնագետը նոյնիսկ վտանգավոր է որպես պոտենցիալ անքան, ֆորմալիստ, օրինախախտ մարդ: Առանց ուսանողի անձնավորության ձևավորման, նրա դաստիարակման կարելի է պատրաստել իրավաբանորեն գրագետ իրավախախտողի: Իրավաբանի սոցիալական կոչումը, նրա գործունեության սոցիալական բնույթի երթյունը պահանջում են, որ նա լինի պրոֆեսիոնալ անձնավորություն՝ իր մեջ ներառելով իրավաբանական պատրաստվածությունը, քաղաքացու և քաղաքակիրը մասնագետի արժանիքները, որի վերջնապատակն է ստեղծել մարդասիրական, ժողովրդավարական, իրավական պետություն և հասարակություն: Իրավաբանի պրոֆեսիոնալիզմը ավելի լայն հասկացություն է, քան միայն օրենքների իմացությունը և դրանք կիրառելու ունակությունը, որքան էլ դա կարևոր է: Ա. Ֆ. Կոնճն համարում է»<sup>4</sup>:

5) Ուսանողի ուսուցման առավելագույն արդյունավետացումը: Ոչինչ չի կարող դառնալ մարդու նոտքի և հատկությունների սեփականությունը՝ առանց նրա ակտիվ գործունեության: «*Պրոֆեսիոնալիզմի բոլոր քաղադրիչները միշտ ուսանողի, պրոֆեսիոնալիստի սեփական, ընդ որում՝ համար և երկարատև ջանքերի արդյունքը է: Ինչպես ճիշտ նկատել է անվանի ռուս մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին, «Դա աշխատանք է և դժվարին աշխատանք: Կրթական գործընթացում պասիվ ուսանողը ծերություն մերժելի սովորություն՝ ժամերով*

ոչինչ չանելու և ոչ մի բանի մասին չնտածելու կամ, ինչ-որ բան անելով, ոչ մի օգուտի չհասնելու<sup>5</sup>:

6) Կրթական գործընթացի կառուցում ժամանակակից ինտենսիվ հոգեբանաճանկավարժական տեխնոլոգիաների հիմքի վրա:

7) Կրթական գործընթացի դեկավարման իրականացումը դասավանդողների միջոցով, բարձր մանկավարժական նշակույթին տիրապետող մարդկանց, որոնք գիտակցում են, որ աշխատում են հատուկ նպատակներ, արժեքներ, նորմեր, արդյունավետության չափամիջներ, աշխատանքի ոճ և մեթոդներ ունեցող մանկավարժական հաստատությունում: Դասավանդողը կրթական գործընթացի հիմնական նախագծողն է, գլխավոր ինժեները, տեխնոլոգը, կազմակերպիչը ու սևագործ բանվորը: Ամեն ինչ կմնա թղթի վրա՝ որպես բարի ցանկություն, մինչև դասավանդողը՝ կրթական գործընթացի գլխավոր գործող անձն այն կյանքի

չկոչի՝ ներդնելով իր գիտելիքները, հմտությունները, հոգին: Վերջին հաշվով՝ բոլոր մնացած պայմաններն ուղղակիորեն ձևով կախված են վերջինցից:

«Ո՞վ է ուսուցանում» հարցը մանկավարժական համակարգի կարևորագույն խնդիրներից մեկն է: Դասավանդողից, մանկավարժական կուլտուրից է գործնականում կախված կրթական հաստատությունում իրավաբանական կրթության նպաստող բոլոր դիտարկված պայմանների ստեղծումը:

<sup>1</sup> **Կոմենսկի Յ. Ա.**, Սովորություն, տառական համար, 1996, համար 312-313.

<sup>2</sup> **Օպոս Ա. Պ.**, Վարչական գործառնության առաջնային գործառնությունների մասին, 1997, համար 143.

<sup>3</sup> **Կոմենսկի Յ. Ա.**, Սովորություն, տառական համար, 1996, համար 298.

<sup>4</sup> **Կոն Ա. Փ.**, Համար 3, 1948, համար 7.

<sup>5</sup> **Սահմանադրության առաջնային գործառնությունների մասին օրենք**, 1995, համար 162.

## PEDAGOGICAL SYSTEM OF JURIDICAL EDUCATION

**VACHIK BRUTYAN**

Rector of Armenian-Russian International University "Mkhitar Gosh"  
Candidate of Pedagogical Sciences, Docent

### Summary

In the article it is presented the juridical education, the invention of pedagogical systems of increasing lawers' qualifications and the ways of improvement.

**ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ  
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ  
ԴԱՍԱԳՐՔԱՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ\***

**Իգոր Կարապետի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Անահիմ Ֆյոդորի ԱԲՐԱՅԱՄՅԱՆ**

**O**տար լեզուների ուսուցման պատմությունը ցույց է տալիս, որ օտարալեզու բառապաշարի ընտրության սկզբները ծևալվութել են տարբեր մեթոդաբանական, մեթոդական մոտեցումների շրջանակներում:

Նախնական շրջանում խորհրդային մեթոդիստները հետևում են արտասահմանյան հեղինակներին օտար լեզուների ուսուցման տարրեր սկզբունքների կիրառման առումով: Ի. Ա. Գրուզինսկայան, ուսումնասիրելով Հարոլդ Պալմերի և Մաքլ Ուեստի տեսությունները, պնդում է, որ բառապաշարի ընտրության միավորը ոչ թե գրային կամ գրաֆիկական բառն է կամ միավորը, այլ բառ-նշանակությունը: Նրա մոտեցումը չի անցնում ժամանակի քննությունը, բանի որ բացի լեզվաբանական գործոններից, բառերը մաթեմատիկական-վիճակագրական մշակման ենթարկելիս կամ նրանց կարգն ու հաճախականությունը հաշվի առնելիս, նա առաջարկում է հաշվի առնել ոչ միայն մանկավարժական, այլև քաղաքական բնույթի գործոնները («Հրազդական առաջարկական գործությունները» 1935, 43):

Մեթոդիստները փորձում են մշակել բառապաշարի ընտրության նոր սկզբունքներ և կիրառել դրանք նոր դպրոցական դասագրեր ստեղծելիս:

«1938 թվի փետրվարից սկսվում է նվազագույն բառապաշար կազմելու աշխատանքը ժողովական կից, որն ի սկզբանե հանգեցրեց ըստ դասագրերի յուրացման ենթակա բառերի ցուցաներ կազմելուն: Ա. Ա. Բախարկը այսպես է ներկայացնում այդ աշխատանքը:

- ավելի անհրաժեշտ հասկացությունների ընտրությունը, որոնք հանդիպում են բոլոր երեք լեզուներում,
- հասկացությունների ընտրություն, որոնք

հանդիպում են միայն տվյալ դասագրքում,

- բառացանկի կազմում,
- բառերի հաճախականության սահմանում, բառերի բացառում, որոնք դժվար է ամրապնել դասագրքանյութի հիման վրա և այն բառերի ներառում, որոնք անհրաժեշտ են ծրագրի թեմատիկայի վրա աշխատելու համար» («Դաշտական աշխատանքներ» 1939, 35):

Դետաքրքիրն այն է, որ հետագայում «Օտար լեզուները դպրոցում» անսագրում հայտնվեցին հոդվածներ, որոնք պարունակում էին կոնկրետ բառացանկեր: 1940 թ. նվազագույն բառապաշար կազմող երկու բրիգադ էր աշխատում. մեկը՝ Ի. Վ. Ուսիմանովի, մյուսը՝ Ա. Վ. Մոնտիգետսիի դեկանականությամբ:

Քաղաքական թեմատիկայով տեքստեր կիրառելու միտունը տարածվում է նաև բառապաշարի սկզբունքների ընտրության վրա: Դասագրքերում տեղ գտնած բաժինների մեջ մասը վերաբերում է խորհրդային իրավանությանը («Դաշտական աշխատանքներ» 1934, 57): Թվում է, թե կիրառվում է կազմ կյանքի հետ սկզբունքը: Սակայն, տեղի է ունենում հակառակ գործընթացը: Ընտրված տեքստերը և բառապաշարը չեն արտադրում երկրագիտական և հայրենագիտական իրողությունները: Աշակերտները հնարավորություն չունեին տարրական պատկերացումներ կազմել Անգլիայի կամ ԽՍՀՄ-ի մասին:

Դասագրքաստեղծման գործընթացում մեծ առաջնօրա է համարվում այն, որ խորհրդային մեթոդաբանները սկսեցին մշակել բառապաշարը՝ որպես առանձին ուսումնասիրությամ առարկա: Սակայն տեքստերի ուղղվածությունը և բովանդակությունը թույլ չեն տալիս նրանց առաջադրել հաղորդակցական ուղղվածություն ունեցող բառապաշար: Ուսական առումով շատ բառեր լինե-

\* Ներկայացվել է 17.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

լով նորաբանություն, շատ հեռու են իրական հաղորդակցական խոսքանմուշ դաշնալու:

Աստիճանաբար նոր մոտեցումներ են ձևավորվում բառապաշտի ընտրության սկզբունքները մշակելիս: 1946 թ. Ի. Վ. Ռախմանովը և Դ. Լ. Շչերբան առանձնացնում են հետևյալ սկզբունքները.

- թեմատիկ,
- հասկացական,
- իմաստային,
- բառակազմական,
- հաճախականության,
- բազմանանակության,
- բառերի սպասարկու բնույթի:

Դրա հետ մեկտեղ, վերոնշված հեղինակները ընդգծում են այն միտքը, որ «բառերն ընտրելիս անհրաժեշտ է նախապատվությունը տալ այն բառերին, որոնք ունեն սպասարկու բնույթ» (Օսновական հարաբերություններ, 1972, 49):

1960 թվականներին դպրոցը ստացավ նոր ծրագրեր: Նրանք ունեին գերազանցապես բանավոր խոսքային ուղղվածություն: Նոր ծրագիրը լույս է տեսնում «Ինօստրանի յայկու և ակու» անուանությունում: Այս այդ ծրագրի՝ փոխվում է պահանջն ընթերցանության նկատմամբ: Փոփոխությունը տարածվեց նաև քերականական նվազագույնի հետ տարվող աշխատանքի վրա: Վերլուծության և ընդհանրացման էր ենթարկվում միայն այն քերականական նյութը, որը տարածվում է մեծ բառախմբերի վրա նվազագույն բառապաշտի սահմաններում: Այդ ծրագրով առաջին պահը են նշվում խոսքային կարողությունները և հմտությունները: Նվազագույն բառապաշտի ներառում է 800 բառ, ինչներորդ դասարանում՝ 750 բառ, վեցում՝ 200, յոթում՝ 175, ութում՝ 175, այսինքն բարձր դասարաններում բառաքանակն ավելի քիչ է, քան ցածր դասարաններում: Անենապարզ տրամադրանությանը դժվար չէ ապացուցել նմանատեսակ մոտեցման սինալ լինելը: Բառապաշտի և դասաժամների աստիճանական նվազումը չի կարող նպաստել ոչ պահիվ, ոչ ակտիվ բառապաշտի յուրացմանը: Ավելին, ինչպես ցույց են տալիս ամենավերջին հոգելեզվաբանական, հանրալեզվաբանական, գործարանական, ընդհանուր մեթոդական հետազոտությունները, արդյունավետ խոսքասերման, խոսքագոյացման հիմնական պայման է ոչ միայն ինտենսիվ խոսքանմուշների կիրառմամբ, իրադրական հաղորդակցությունը, այլև մեծ քանակությամբ նոր բառերի ներմուծումուն տարբեր ենթատեքսերում նոր իմաստների բացահայտմամբ նրանց գործածումը:

Ակնհայտ է, որ այդպիսի թեմաները ձանձրալի են և անհետաքրքի: Նրանցում գործածվող բա-

ռերն ու կլիշները չեն արտահայտում անգլերենի, մասնավորապես խոսակցական լեզվի առանձնահատկությունները: Մեթոդական հիմնավորումները խթին էին և հեռու օտար լեզվի մեթոդակայի համաշխարհային զարգացումներից: Արդիական չէ այն պահանջը, ըստ որի «բանավոր խոսքի ծևակորումը պիտի տեղի ունենա ուրամյա դպրոցում ուսումնասիրած լեզվական նյութի հիման վրա» (Պրոգրամմա սրճարական անդամությունների համար, 1964, 4):

Կարելի է պնդել, որ ոչ բառապաշտի հարստացումը, ոչ խոսքանմուշների լրացուցիչ ուսումնասիրությունը չեն կարող նպաստել խոսքային գործունեությանը: Նշված ծրագրում հաշվի չեր առնվում անգլերենի և ռուսերենի, իսկ ՀՍՍՀ-ում անգլերենի և հայերենի տիպարանությունը: Անգլերենի խոսքանմուշները գրքային էին, հնաօն: չեր ին արտացոլում անգլերենի գրական և խոսակցական լեզուների վերջին զարգացումները:

Դրա հետ մեկտեղ, հետին պլան նովեցին բառապաշտի ուսուցման կաղապարի առանձնացման և ընդլայնման սկզբունքները: Կաղապարի փոխարեն, մերոդիմատները ն. Չոմսկու տեսության ազդեցությամբ առաջարկեցին փոխակերպ «տրանսֆորմ» գիտարառը, որը շատ ուսուցիչների համար մնաց անհասկանալի: Այդ ծրագրում բառապաշտի քանակն ավելանում է 1400-ից 1650, պահանջվում է քերականական երևույթները յուրացնել գիտակցարար, տիպային դարձվածների տեսքով (Ա. Ա. Միրոլիօս, 2002, 319):

Սակայն այդ ծրագրի նախագիծը չընդունվեց և 1970-ականներին, ինչպես նշում է նույն հեղինակը, օտար լեզուների նոր ծրագիրը չընդունվեց: Տվյալ ժամանակաշրջանի ծրագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ միայն գյուղական, այլև քաղաքային դպրոցների համար նախատեսված ծրագրերում խախտվում է «հարաբերակցությունը ուսուցման պայմանների դասաժամների և լեզվանյութի ծավալի, ինչպես նաև բառապաշտի և քերականության միջև» (Ա. Ա. Միրոլիօս, 2002, 322):

Ա. Պ. Ստարկովն առաջարկում է սովորեցնել ընթերցել և հասկանալ տեքստերը բառարանով՝ ի լրումն անմիջական ըմբռնումով ընթերցանությանը: Ակնհայտ է, որ բառարանից օգտվելը պարտադիր պայման է զարգացնող, բառապաշտի հարստացնող ընթերցանության համար: Սակայն այն չի կարող դառնալ ուսուցման նպատակ: Նույն հեղինակն ուղղակիրեն ցուցում է տալիս: «համապատասխան վարժությունների միջոցով ձևակորպում են անգլերեն-ռուսերեն բառարանից օգտվելու կարողություններ» (Ծմարկօս Ա. Պ., 1973, 56):

Մի կողմից, նշված հեղինակները պնդում են,

որ բանավոր խոսքը զարգանում է ընթերցանությամբ: Մյուս կողմից, նրանք մեծ տեղ չեն հատկացնում բառապաշարի նպատակային յուրացնելուն: Ա. Պ. Ստարկովը նշում է այդ կապակցությամբ. «Ուսումնական տեքստերի անծանոր բառապաշարը, որը նախատեսված է ընթերցանության ուսուցման համար, չեն ակտիվացնում: Ընթերցանության ընթացքում բառերի մի մասը կարող է յուրացվել սովորողների կողմից, բայց չի հանձնարկում պարտադիր» (Ծմարկօս Ա. Պ., 1973, 54):

Ինչպես կարելի է խոսել բանավոր խոսքի զարգացման, հմտությունների և կարողությունների մասին, եթե նոյն դասագրքին կից ուսուցչի ձեռնարկում Ա. Պ. Ստարկովը ուղղակիրորեն ցուցում է տալիս. «Ուսուցիչը չափուի հաշվի առնի սովորողների բառարանի պահիվ բառապաշարը և այն չեն ակտիվացնում հասուկ վարժությունների միջոցով» (Ծմարկօս Ա. Պ., Ճսկօն Պ. Բ., 1973, 9):

Բանավոր խոսքի զարգացման տեսանկյունից, տրամաբանորեն ճիշտ չէ հիմնավորված 10-րդ դասարանում անգլերենի ուսուցման այն խնդիրը, ըստ որի՝ «Ավարտական փուլի կարևորագույն խնդիրն է սովորեցնել աշակերտներին ինքնուրույն անգլերեն տեքստերի հետ աշխատանքը՝ բառարանի և քերականական տեղեկատուի օգտագործմանը» (Ծմարկօս Ա. Պ., 1974, 26):

Արտադրողական (պրոդուկտիվ) կարողությունների զարգացման համար պահանջվող դասաժամերի սոլության պայմաններում, թվում է, թե հեղինակը ճիշտ է վարվում, եթե շեշտը դնում է ինքնուրույն աշխատանքի ինտենսիվության բարձրացման վայր: Սակայն բառարանով կամ քերականական տեղեկատուվ աշխատանքն ակելի շատ ունի ընկալողական (ռեցեպտիվ) ուղղվածություն: Արտադրողական մակարդակ ապահովելու անհրաժեշտ պայման են համապատասխան հաղորդակցական վարժությունները և, իհարկե, նրանց կատարումն անհրաժեշտ ժամանակահատվածում:

Այս մոտեցման մեջ խզվում է ակտիվ և պասիվ բառապաշարների հարաբերակցությունը: Պասիվ բառապաշարը դեռևս չձևավորած աշակերտները չեն կարող այն ակտիվացնել: Թերագնահատելով ընթերցանության ուսուցման դերը հեղինակը չի հարցարարում «ուղիղ մեթոդի» այն սկզբունքը, որոնք վերաբերում են բառապաշարի արտադրողական ուսուցմանը:

Ակնհայտ է, որ 1980-ական թվականների դասագրերը հիմնականում գրված են գիտակցական-գործնական մեթոդի ազդեցությամբ, չնայած թե՝ բառապաշարի, թե՝ քերականության ուսուցման հարցերը տարբեր դասագրերում տարբեր են: Մի կողմից, բոլոր դասագրերի հեղինակներն

առանցքային են համարում ուսուցման բանավոր հիմքը: Բանավոր հիմքի սկզբունքով ուսուցումն ավելի շատ խոչընդոտում է բանավոր խոսքի ձևավորմանը: Պատահական չէ, որ մերոդիստներն ավելի շատ խոսում են ոչ թե խոսքանյութի, այլ լեզվանյութի յուրացման մասին:

Ա. Պ. Ստարկովը և Վ. Ա. Ալոբողյակովը «բանավոր հիմք» ասելով հասկանում են հետևյալը. «Այդ սկզբունքով որոշվում է լեզվանյութի հետևյական ներառումն ուսուցման գործընթացի մեջ՝ ունկնդրում, խոսելը, ընթերցելը և գրելը» (Ծմարկօս Ա. Պ., 1984, 4):

Ինչ վերաբերում է ՀՀ-ի հանրակրթական դպրոցի անգլերենի շրջանառվող դասագրքերին, ապա կասկած չկա, որ նրանցում բավականին լավ են մշակված բառապաշարին նվիրված վարժությունները: Սակայն ինչպես ցույց է տալիս համապատասխան վերլուծությունը, հատկապես ավագ դպրոցի անցնան պայմաններում նրանք անհրաժշտություն ունեն լուրջ բովանդակային փոփոխությունների:

Դադարդակցական մոտեցման շրջանակներում սկզբունքային են բառապաշարի ուսուցման հետևյալ սկզբունքները.

- բառերը պետք է կապված լինեն տվյալ իրադարձության կամ տեղի հետ,

- պետք է պատկանեն նոյն քերականական կարգերին կամ գործածնան նոյն ոլորտին,

- պետք է գործածվեն որոշակի նպատակի համաելու համար (J. Scrivener, 2005, 24):

Դամապատասխան վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակում ՀՀ-ում ստեղծված անգլերենի դասագրքերը հիմնականում գրված են համաձայն հաղորդակցական մոտեցման սկզբունքների: Դուք վար ապացույցն է հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի անգլերենի դասագիրքը (1999), որի համարյա բոլոր տեքստերին նախորդում կամ հաջորդում են համապատասխան բառապաշարը զարգացնող վարժությունները: Բառերի բացատրությունը հիմնականում տրվում է նկարագրական ձևով՝ անգլերենով: Դա ենթադրում է աշակերտների անգլերենի իմացություն արտադրողական կամ վերարտադրողական մակարդակում:

Փաստորեն, հեղինակները, մի կողմից, հաշվի են առել հաղորդակցական մոտեցման համապատասխան սկզբունքները, մյուս կողմից, նրանք չեն կարողացել հաշվի առնել տարբերակված ուսուցման սկզբունքներն առ այն, որ ցածր և միջին մակարդակում աշակերտները հիմնականում չեն էլ կարողում նշված բառերի բացատրություններն անգլերեն: Օրինակ՝ նշված դասագրքի 37-րդ էջում տրված է bare, to wish, to drop, to cut, good-natured բառերի բացատրությունն անգլերեն:

Դրական է այն, որ նույն բառերի բացադրությունը կարելի է գտնել դասագրքի վերջում զետեղված բառարանում: Բառապաշտի զարգացման համար հեղինակները կիրառել են հետևյալ վարժությունները՝ լրացման, օրինակ՝ “complete the statements correctly), հարց ու պատասխանի “Answer the questions”, տեղադրման “Fill in the missing words”, մտապահման “Try to remember their names”, “What do you remember about King Kong?”, անավարտ նախադասության մտքի շարունակման What happened when...?”, բազմակի ընտրությամբ Choose the word or phrase to complete the sentences”, մտագրոնի “Thinking it over”, խոսքաստեղծման “Look at the pictures. What has happened?”, փոխատեղման “Make sentences”, խոսությաստեղծ “Read the dialogues and answer the questions”, “Make up your own dialogues”, “Talk in gitover” և այլն:

Կարելի է պնդել, որ հեղինակները փորձել են բառապաշտի զարգացման հիմնական վարժությունները՝ հիմնականում հետևեքստային կիրառել սույն դասագրքում: Դասագրքի բացասական կողմերից մեկն այն է, որ արտադրողական և վերարտադրողական բնույթի վարժությունները մեծ դժվարություն են ներկայացնում մի քանի պատճառով.

1. Տվյալ դասարանում բավարար չեն անգլերենին հատկացվող ժամաքանակը:

2. Բավարար չափով զարգացած չեն աշակերտների ֆոնային գիտելիքները:

3. Տեքստերի ընտրությունը կատարելիս, հաշվի չի առնված աշակերտների հետաքրքրությունները, ուսումնառության դրդապատճանները:

4. Առաջարկվող բառապաշտի հիմնականում չի պարունակում ժամանակակից անգերենի հայորդակցական, մասնավորապես խոսակցական կազմապարներ:

5. Խոսքային կաղապարները հիմնականում գործային են, որը բնորոշ է առապուացված ուսումնական տեքստերին: Օրինակ՝ 9-րդ էջում տրված “The Sailor’s Friend” տեքստում իրադարձությունները տեղի են ունենում 1871-1912 թթ.:

Անգլերեն 8-րդ դասարանի դասագիրքը հիմնականում նոր վարժություններ չի առաջարկում<sup>1</sup>: Ինչ վերաբերում է անգլերեն լեզվի հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագրքին, ապա նրանում կարելի է հանդիպել անգլերենից հայերեն, հայերենից անգլերեն բարգնանական բնույթի վարժությունների: Ընդ որում, համարյա բոլոր տեքստերին հաջորդում են բարգնանական վարժություններ: Սույն դասագրքի մյուս առանձնահատկություններ ունեն քերականական ուղղվածություն: Օրինակ՝ 18-րդ էջում պահանջվում է “Fill in the

gaps using the word son the left with proper suffixes”: “Discussion Point” վերտառությամբ վարժությունները արտադրողական և վերարտադրողական բնույթի են և հիմնականում կառուցված են բնագրային տեքստերի հիմքի վրա: Սակայն հետևողապահ բառապաշտի հիմնականում շատ աղքատ է, հատկապես խոսակցական կաղապարների ներմուծման տեսանկյունից: Այս դասագրքում նույնպես շատ են բառերի, բառերի և բառակապակցությունների, նախադասության երկու տարրեր մասերի համապատասխանեցման վարժությունները (Ս. Բաղրամյան, Ս. Գյուղօջայանց, Ս. Արարատյան, 2004):

Եզրակացություն: Համապատասխան վերլուծությունը ցույց է տալիս, որ նախորդ դարի առաջին կեսին օտարակեզու բառապաշտի ընտրությունը իրանակացվել է ըստ քերականական բարգնանական և ուղիղ ներողների: Ընդ որում ուղիղ ներողը կիրառվել է խորհրդային մեթոդիցից հաշվի առնելով խորհրդային դպրոցի առանձնահատկությունները:

Հետագայում սկսում է գերակայել քաղաքական բեմատիկայով տեքստեր կիրառելու միտումը, որը տարածվում է նաև բառապաշտի սկրունքների ընտրության վրա: Այդ միտումի հետևանքներից մեկն այն է, որ ընտրված տեքստերը և բառապաշտի չեն արտացոլում երկրագիտական և հայրենագիտական իրողությունները:

Օտարակեզու բառապաշտի ընտրության իմաստաբանական, ոճաբանական անսահմանափակության, բազմանշանակության, բառակազմական արժենորության, կառուցղական ունակության, հաճախականության, հոմանիշների բացառնա սկզբունքները չեն կարող լինել արդյունավետ դասագրքաստեղծման գործընթացում, քանի որ դասաժամերը սուր էին, օտար լեզվուների ուսուցիչները լեզվակիր չեն, համարյա չեն շփում լեզվակիրների հետ, և դասագրքերում գերակշռում էին ընկալողական բնույթի վարժությունները:

21-րդ դարում հայ դասագրքաստեղծ հեղինակները ստեղծեցին հանրակրթական դպրոցի համար նախատեսված դասագրքեր, որոնցում գերակայում են հաղորդակցական մոտեցման սկզբունքները, սակայն այդքան կարճ ժամանակահատվածում, նրանք չեն կարող հաշվի առնել հայերենի և անգլերենի տիպաբանական առանձնահատկությունները, հատկապես անգլերենի խոսակցական լեզվակաղապարների յուրացման տեսանկյունից: Դրական միտում է այն, որ օտարակեզու բառապաշտի ուսուցումն իրականացվում է հաղորդակցական մոտեցման սկզբունքներով:

<sup>1</sup> Քովիաննիսյան Ն. և ուրիշ., Անգլերեն 8: Համրակրական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրը, Եր., «Փյունիկ Մակմիլան», 2004, 152 էջ:

#### ԳՐԱԿԱՍԽԵՅՈՒՆ

1. Անգլերեն լեզու: Դասագիրը համրակական դպրոցի 9-րդ դաս. համար / Ս. Բաղրամյան, Ս. Գյուրջյանց, Ս. Վրարատյան, Եր., «Մակմիլան-Արմենիա», 2004, 176 էջ:
2. Գասպարյան Գ. և ուրիշ., Անգլերեն 6: Համրակրական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրը. Եր., «Փյունիկ Մակմիլան», 1999, 152 էջ:
3. Քովիաննիսյան Ն. և ուրիշ., Անգլերեն 8: Համրակրական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրը, Եր., «Փյունիկ Մակմիլան», 2004, 152 էջ:
4. Բախарեվա Մ. Ա., Օ բարեւ համար անգլական առաջնային համարական լեզու / Մ. Ա. Բախարեվա, 1939, N4, էջ 34-41.
5. Բախарեվա Մ. Ա., Օ բարեւ համար անգլական առաջնային համարական լեզու / Մ. Ա. Բախարեվա, 1939, N4, էջ 34-41.
6. Բուշտուեա Է. Փ. English: Учебник английского языка для средней школы. Ч. II. Изд. 2-е. М.:Л., 1934, с. 56-62.
7. Գրունցիան Ի. Ա., Կ վօռոս օ րացոնալիզացի սլուքար սպասարկության վերաբերյալ: Տարածական առաջնային համարական լեզու / Ի. Ա. Գրունցիան, 1935, էջ 43-50.

8. Միրոլյոբօվ Ա. Ա., История отечественной методики обучения иностранным языкам. М., СТУПЕНИ, ИНФРА-М, 2002, 448 с.
9. Основные направления в методике преподавания иностранных языков в XIX-XX вв. Под ред. И. В. Рахманова М., 1972, с. 46-55.
10. Программы средней школы на 1964/65 учебный год. 413. Иностранные языки. IX-XI классы. М., 1964, с. 4-11.
11. Старков А. П., Учебник английского языка //Иностранные языки в школе. 1973, N3, с. 54-60.
12. Старков А. П., Учебник английского языка для X класса // Иностранные языки в школе. 1974, N4, с. 26-32.
13. Старков А. П., Учебник английского языка//Иностранные языки в школе. 1971, N3, с. 56-61.
14. Старков А. П., Диксон П. Р. Книга для учителя к учебнику английского языка для IX класса средней школы. М., 1973, с. 9-14.
15. Старков А. П., Книга для учителя к учебнику английского языка для 4 класса средней школы. М., 1984, 4.
16. Scrivener Jim Learning Teaching: A guidebook for English language teachers, Macmillan Publishers Limited, 2005. 431 p.

---

#### THE MAIN APPROACHES TO SELECTING VOCABULARY IN THE TARGET LANGUAGE IN THE PROCESS OF CREATING TEXTBOOKS

KARAPETYAN IGOR KARAPET

Doctor of Pedagogical Sciences, Professor

ABRAMYAN ANAHIT FEDOR

#### Summary

The article deals with vocabulary in the target language in the process of creating textbooks. It shows that at the beginning of the 20th century the main principles of grammar-translation and direct methods prevailed. It reveals the tendencies of selecting vocabulary taking into account the peculiarities of the texts of political themes. As a result the selected texts and vocabulary did not reflect the realias of country studies.

In the 21st century Armenian authors of English textbooks began to implement the main principles of communicative approach to select vocabulary. It brings about emphasizing the typological peculiarities of Armenian and English languages. In this context textbook authors have a lot to do in the sense of selecting vocabulary from the point of view of main principles of communicative approach to emphasize the importance of teaching informal speech.

UDC 802.0:372.8

## THE USE OF PODCASTING IN ENGLISH LANGUAGE TEACHING\*

**Anahit LALABEKYAN**

*Armenian State Pedagogical University after Kh. Abovyan  
Faculty of Foreign Languages, Chair of English Language Teaching, PhD*

**Tatevik ZARGARYAN**

*Armenian State Pedagogical University after Kh. Abovyan  
Faculty of Foreign Languages, Chair of English Language Teaching, Lecturer*

We live in the 21st century where both educators and students are sophisticated and digitally literate than ever before. Yet, we need teaching and learning tools that may compensate for this intellectual advancement. Podcasting is viewed to be one of e-learning tools that may have a great contribution towards this need. Therefore, the current article aims at exploring the possibilities and potential pedagogical and technological benefits and shortcomings of podcasting, and its usage in English language teaching.

The word podcasting is a blending of “iPod” and “broadcasting” a method of publishing files to the Internet, allowing users to subscribe to a feed and receive new files automatically by subscription” [6, p. 251]. According to Meng, “a podcasting is the process of capturing an audio event, song, speech, or mix of sounds and then posting that digital sound object to a Web site or “blog” in a data structure called an RSS 2.0 feed. Users can subscribe to a Web page containing RSS 2.0 tagged audio files on designated web pages and automatically download these files directly into an audio management program or on personal computers like iTunes, Windows Media Player or MusicMatch” [5, p. 1]. Panday defines podcasting as “a simple process of capturing human voice, uploading it online, and sharing it with the whole world” [6, p. 252]. Thus, podcasting is a way of creating audio/video files on a website. These audio/video contents are accompanied by a file called an “RSS feed”. It contains all information related to the podcasts on the Web. Every time a new podcast is added this file is updated. According to Meng, a

podcasting process involves the following “creating or capturing and editing the content, publishing content to a web site or blog, subscribing to the content through an “RSS News Reader”, downloading the content into content management software (CMS), playing content on download device or synchronize CMS with portable media player and playing” [5, p. 2].

Four types of podcasts have been suggested by linguists for practicing language skills: ESL podcasts, general educational podcasts, narrative podcasts and conversational podcasts [4]. The aim of the ESL podcasts is to teach English as a second language by providing online materials with specific vocabulary and/or grammar. General education podcasts are produced for university lectures and for self-study students. An example of a general educational podcast can be Grammar Girl which gives students an opportunity to learn a particular grammatical point. Narrative podcasts are different from educational ones. The latter engages the audience in a group discussion using storytelling or structured narrative discussion. Conversational podcasts are free form of discussions that include frequent use of slangs, jokes, and so forth [8].

There has been a considerable amount of research carried out to highlight the pedagogical and technological benefits of podcasting in language classes. According to Cebeci and Tekdal, the most important pedagogical characteristic of podcasting is to assist auditory learners. It is well known that listening does motivate students who prefer to take information aurally rather than by reading or taking notes. Podcasting also makes the content attractive to students by giving them an

\* Ներկայացվել է 13.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

opportunity to integrate speech backgrounds or short fragments of popular songs. This may help educators create a more interesting and collaborative learning environment for the students. Another pedagogical benefit of podcasting suggests that podcasting enables educators to use the language in real settings, which can assist to develop students' pronunciation and speaking skills [2]. Panday claims that "the process of creating podcasting can develop a myriad of skills such as speaking, listening, interviewing, scripting and communication. By using podcasting as a way to disseminate information, one can also harness the technological knowledge and skills that already exists in today's young learners" [6, p. 253]. The results of a case study carried out by Deal show that "student created podcasts can be valuable for a number of reasons, including the development of technical competence, listening (audio) and presentation (verbal) skills, and understanding of how new media affect social and professional dialogue" [3, p. 11]. It is also suggested that podcasting may provide additional resources for students who may like to attend classes but cannot due to limited time. Moreover, it is claimed that podcasting helps also those students who get distracted and miss some important parts during the class [7].

Along with pedagogical some technological aspects of podcasting have been identified that may support language learning and teaching processes. Firstly, podcasting is easier to manage than some other technologies. It is simple and can be learned quickly by non-experts. Secondly, by subscribing to RSS feed, students may automatically receive something new available. The next technological advantage of podcasting in language learning offered by Scutter, Stupans, Sawyer, and King is the portability and convenience of listening to its resources anytime and anywhere. This may give students an opportunity to learn a language outside the classroom at their own pace and on their own time. Students may download podcasts into MP3 players and listen to them in a variety of settings such as while travelling, doing everyday activities, at a library, at home [7]. Thus, podcasting is the very tool that may help language instructors develop their students' ability to view the acquired language skills as an active, vibrant form of communication rather than a medium to gather information. Podcasting is a relatively new phenomenon, so there are still few formal evolutions of its potential impact on learning outcomes at this point. Many educators do not want to use this new tech-

nology as they are speculative about its educational value [1]. The most commonly noted shortcoming of podcasting is that it fails to create an interactive environment. Many authors also claim that podcasting may result in passive learning. According to them, a deep learning occurs only if learners are entirely engaged in learning tasks. Among the objections to podcasting is that it may cause non-attendance at lectures. Many educators fear that if learners have lectures as podcasts they will no longer attend classes [7]. Deal claims that absenteeism firstly reduces the learning quality and, secondly, diminishes the opportunities to learn practical lessons such as responsibility, discipline [3]. However, the findings of the study carried out by Meng [5] report that podcasted materials do not cause absenteeism. Moreover, Panday brings a number of reasons for students to attend the classes even though they have their lectures as podcasts: "the attendance policy, class discussions, interaction between students and the educators, revisions before examinations, access to recorded lectures, etc." [6, p. 259]. The above mentioned lets us draw the conclusion that podcasting is a great tool to be integrated into language learning curriculum to practice language skills. Besides entertainment, it may be used for teaching and learning purposes, and it may have a great impact on the quality of learning experiences and learning outcomes.

The results of the present paper provide some food for thought for using podcasting in Armenian educational settings. This is the very tool with the help of which our Armenian teachers may enhance the learning environment making it more interactive and interesting. Adding videos and photos to podcasting educators can address students with different learning styles much easier. Podcasting may be used to strengthen independent learning making learners self-directed and autonomous. Podcasting is asynchronous, so it gives learners an opportunity to listen to other students' podcasts, give feedback, and watch speeches at their own time and their own place. Most importantly, podcasts can serve as a great tool for educators to interact with their students outside the classroom.

We think some educators get discouraged as they view podcasting as a replacement rather than a supplementary resource of the curriculum. But our educators should remember that podcasting is a valuable learning tool. It may help them to think of interesting ways to experience their education. Moreover, the effectiveness of the tool much depends on the educational context and the way it

is implemented. The results of questionnaire filled in by EEC (Experimental English Classes) students Department of English Programs (DEP) at the American University of Armenia (AUA) suggest that students like and enjoy developing their language skills through e-learning tools. Students mention that such e-learning tools give freedom of opinion by providing them with a learning environment that helps them develop their creativity, self expression. Moreover, such programs give the learners lots of opportunities to practice their speech until they make fluent speech free of pronunciation, grammar, word choice mistakes. Based on the results it may be suggested that the application of e-learning tools, specifically Podcasting, may offer new teaching and learning opportunities, and it may have the potential to facilitate the development of foreign language skills.

Thus, it may be concluded that podcasting is a great tool to be integrated into language learning curriculum, as it may provide students with an authentic environment that can contribute to practice language skills. Moreover, it should not be viewed as central in English language classrooms and it should be integrated into the curriculum as an invisible tool that can be used to integrate listening exercises in the classroom, like a projector, CD player. As compared to other invisible tools, podcasts have the privilege of mobility.

## BIBLIOGRAPHY

- Allén, B.** (2006). Podcasting in Education
- Cebeci, Z. and Tekdal, M.** (2006). Using Podcasts as Audio Learning Objects, Interdisciplinary Journal of Knowledge and Learning Objects, 2, 7-57
- Deal, A.** (2007). A Teaching with Technology White Paper: Podcasting. Community Contributions
- Foster, J. S. & Havemann2, S. A.** (2008). The Basics of Educational Podcasting: Enhancing the Student Learning Experience1
- Meng, P.** (2005). University of Missouri IAT Services White Paper
- Panday, P. P.** (2009). Simplifying Podcasting. International Journal of Teaching and Learning in Higher Education, 20(2), 251-261
- Scutter, Sh., Stupans I., & King, Sh.** (2010). How do students use podcasts to support learning?. Australasian Journal of Educational Technology, 26(2), 180-191
- Shiraishi, W. L.** (2008). Short story podcasting: Experiences in A language classrooms. Paper presented at The Second International wireless ready symposium, Japan.
- Tavares, S. & Skevoullis, S.** (2007). Podcasts: Changing the face of e-Learning
- Thong, K., Ling, P. & Chou, R.** (2007). English Language Podagogy1 (Podcasting + Pedagogy). Paper presented at the Redesigning pedagogy, Singapore
- William, S. & McMinn, J.** (2008). Podcasting possibilities: Increasing Time and Motivation in the language learning classroom. Poster session presented at iLearning Forum, France.

---

## ՓՈՂՔԱՍՏԻՆԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՎԳԼԵՐԵՍ ԼԵԶՎԻ ՈՒԽՈՒՑՄԱՆ ՄԵջ

### **ԱՍԱԲԻՇ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ**

ՀՊՄՀ, Անգլերեն լեզվի ուսուցման ամբիոնի վարիչ  
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

### **ՏԱԹԵԿԻԿ ԶԱՐԳԱՐՅԱՆ**

ՀՊՄՀ, Անգլերեն լեզվի ուսուցման ամբիոնի դասախոս

### Անվունում

Մենք ապրում ենք մի դարաշրջանում, որտեղ կրթության բնագավառում նորագույն միտումների քննարկումն անհնար է թվում առանց տեխնոլոգիաների առկայության և օգտագործման: Վերջինիս օրինակ կարելի է համարել վոլորաստիճանը, որը հնարավորություն է տալիս ձայնագրել, կրապարակել և տարածել առդիի/վիդի ֆայլեր համացանցում: Ըստ փորձաստիճանի հետևողների, վերջինիս օգտագործումը օգնում է ուսումնական նյութն ավելի գրավիչ և հասկանալի ներկայացնել՝ նպաստելով լեզվական հմտությունների զարգացմանը և կրթության որակի բարձրացմանը: Վերջինս փոխում է ուսուցչի դերը, ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործընթացը կազմակերպող, նրան աջակցող և գնահատող գործընկեր:

**ԿՈՒՐՍՎԵԿԻ ԴԱՍՏԻՄԱԿՉԱԿԱՆ,  
ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՀԻՄՔԵՐԸ ԲՈՒՀՈՒՄ\***

**Թամարա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ



**Փ**արձրագույն կրթուրյան ողջ պատմության մեջ չափազանց կարևորվել է կուրսեկի դերը, որի գործունեության ընթացքում միշտ էլ փոխվել են պարտականությունները, գործունեության բովանդակությունը, փոխհարթությունը և աշխատանքի ձևերն ու մեթոդները:

Կուրսեկ բարը իին ծագում ունի, այն առաջացել է լատիներեն «curator» բառից, որը նշանակում է «հովանավոր», այստեղից էլ նախնական շրջանում նրա գործունեությունն ավելի շատ կրել է հսկողի, հովանավորի դեր, հետագայում է, որ փոխվել են նրա դերը և պարտականությունները՝ կապված բարձրագույն կրթության հետագա գարզացման հետ:

Գիտական գրականության մեջ նշվում է, որ կուրսեկին նշանակում է ֆակուլտետի ղեկանը, որպեսզի նա լուծի ուսանողների կենսագործունեության խնդիրները՝ դաստիարակության, հանգստի կազմակերպման, աշխատանքի, սոցիալ-կենցաղային հարցերը: Երևանի Պետական համալսարանի կուրսեկի աշխատանքը երկար տարիների պատություն և հարուստ փորձ ունի:

1970-ական թվականներին բոլոր (I-V) կուրսերին նշանակվում էին կուրսեկներ, 1980-ական թվականներին բարձրագույն կրթության հետագա գարզացման շնորհիկ նոր մոտեցում ցուցաբերվեց կուրսեկի աշխատանքի նկատմամբ, որոց բոլոր հրաժարվեցին կուրսեկի ինստիտուտից, որոշ բուհերում էլ կուրսեկություն էր անում այդ կուրսում դասավանդող դասախոսը:

Այս փորձն էլ իր բարձր արդյունքը չտվեց, և ոչ բոլոր դասախոսներն էին աշխատում իրենց կուրսերի հետ:

Ուզում ենք ներկայացնել մեր փորձը, որ ֆա-

կուլտետում որ դասավանդել ենք, կազմակերպել ենք կոլեկտիվ դիտումներ՝ «Մեծ լրություն», (դրամատիկական թատրոն - ֆիզիկայի ֆակ.), «Ես մի ծառ եմ ծիրանի», (Սունդուկյանի անվան թատրոն - բանասիր. ֆակ.), «Կիլիկի արքա» (Ստանիսլավսկու անվան թատրոն - բանասիր., ռոմանոգերմ., մաքր. ֆակուլտետներ), եքսկուրսիաներ մատենադարան, գեղագիտական դաստիարակության կենտրոն, պատկերասրահ և այլն: Վերջին տարիներին կուրսեկների աշխատանքը դեկավորում են ամբիոնները (օր.՝ Երևանի Պետական համալսարանի մանկավարժության ամբիոնը), որտեղ ամբիոնի նիստերում տարեսկզբին հաստատվում է կուրսերի կուրսեկների աշխատանքը դեկավորում են ամբիոնները (օր.՝ Երևանի Պետական համալսարանի մանկավարժության ամբիոնը), որտեղ ամբիոնի նիստերում տարեսկզբին հաստատվում է կուրսերի կուրսեկների աշխատանքը դեկավորում պատկանի ամառանոցը, իսկ տարվա վերջում տրվում է հաշվետվություն կատարած աշխատանքի մասին:

Մեր կարծիքով՝ կուրսեկի աշխատանքը բաժանվում է մի շարք փուլերի: Առաջին փուլում նա ծանրանում է ուսանողների փաստաթղթերին, որոնք կարգավորում են նրա գործունեությունը բուհում՝ դեկավարի, ֆակուլտետի խորհրդի, ռեկտորաթի, համալսարանի ընդունած որոշումներով: Դրանք որպես տեղեկատվական աղյուրներ կարող են օգնել ուսանողներին ծանրանալու բուհի կյանքին, գործունեությանը, կնպաստեն նրանց կապերին իրենց ուսումնական հաստատությունների հետ:

Երկրորդ փուլում կուրսեկը գրույցների միջոցով ծանրանում է անձանք ուսանողների հետ, տեղեկանուն նրանց ընտանեկան, տնտեսական վիճակին, նրանց հետաքրքրություններին, ծգումներին:

Աշխատանքային պլանը կազմելիս նա հաշվի է առնում նաև ուսանողների ցանկությունները, առաջարկությունները, նախաձեռնությունները:

Կուրսեկի աշխատանքի երկրորդ փուլը ընդգրկում է ուսանողի ուսումնական առաջադիմության, դասերի հաճախման խնդիրները, որոնք չափազանց կարևոր նշանակություն ունեն կուրսի համախմբման, կոլեկտիվի ձևավորման և արդյու-

\* Ներկայացվել է 10.10.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

նավեստ գործունեության համար:

Առաջին հերթին կուրսղեկը հատուկ ուշադրություն է դարձնում հենց կուրսի ուսանողների սոցիալ-հոգեբանական հարմարման (աղապտացիայի) խնդիրներին՝ կապված սոցիալական նոր դիրքի, տեղի, բուհի, քաղաքի, եթե նրանք տարբեր շրջաններից և քաղաքներից են (2, 307): Այդ հարցերը լուծվում են բարոյական, գեղագիտական և այլ բնույթի գրույցներով, այնուհետև էքս-կուրսիաներով համալսարանի մասնաշենքեր՝ գրադարան, թանգարան, նրանց տրվում են ուղեցույցներ, սկավառակներ համալսարանի պատմության, անցած ուղղու, նշանավոր դասախոսների, ռեկտորների և սաների նամակն:

Անշուշտ, կուրսղեկների աշխատանքի կարևոր բաղադրիչն է կազմում ուսանողների ընթացիկ առաջադիմության և դասերի հաճախելիության հաշվառումը, վերահսկողությունը և վերլուծությունը, անհրաժեշտության դեպքում այն դառնում է հատուկ քննարկման առարկա: Մեր փորձից ելենով՝ կարող ենք ասել, որ ամեն շաբաթ պետք է կազմակերպվում է կուրսղեկի ժամ՝ հանդիպում բոլոր ուսանողների հետ, պահանջուրվում է այս կամ այն միջոցառումը, նախապատրաստական աշխատանք տարվում էքսկուրսիաների, կոլեկտիվ դիտումների և քննարկումների համար: Անհրաժեշտության դեպքում նաև զանգահարում ենք ծնողներին (հատկապես I և II կուրսերում) և հարցնում նրանց իրենց երեխաների պահպանի, վարքագիրի, ուսումնական առաջադիմության, կարգապահության, դասերին հաճախելու և այլ հարցերի նամակն:

Կարելի է նաև կազմակերպել հանդիպումներ, ծնողական ժողովներ անհրաժեշտության դեպքում (I և II կուրսեր) ծնողներին բացատրել բուհի պահանջները և իրենց երեխաների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև իրենց դերը բուհի հետ համագործակցության գործում:

Կարելի է նաև նրանց հաղորդել մանկավարժական, հոգեբանական բնույթի գիտելիքներ՝ իրենց երեխաների այս կամ այն խնդիրը բարեհաջող լուծելու համար:

Կուրսղեկի դերը կուրսի կյանքում կարևորվում է նաև նրանով, որ նա մեծ տեղ է տալիս իր գործունեության մեջ ուսանողական կոլեկտիվի ձևավորման խնդրին: Ակսած և կուրսից՝ կուրսղեկը փաստորեն դառնում է կոլեկտիվի կազմակերպիչը և ղեկավարը: Նա, ուսումնասիրելով յուրաքանչյուր ուսանողի անհատական առանձնահատկությունները, նրա հոգեբանական համատեղելիության խնդիրը, ստեղծում է կուրսի ակտիվը, որի վրա հենվելով կազմակերպում է ողջ աշխատանքը (3, 241): Նա զարգացնում է նաև ուսանողների հնքնուրույնությունը, որը չափազանց կարևոր և բարդ խնդիր է այսօրվա պայմաննե-

րում, երբ ոչ բոլոր ուսանողներն են ցանկանում ակտիվություն ցուցաբերել այս կամ այն գործում կամ որևէ խնդրի լուծման համար: Երբ արդեն ձևավորվում է համերաշխ կոլեկտիվ իսկ դա III և IV կուրսերում կարող է լինել (2, 242), ապա յուրաքանչյուր ուսանող կարող է ակտիվ մասնակցություն ունենա ուսանողական կոլեկտիվի կյանքի, կենսագործունեության և կառավարման գործում:


Կուրսղեկը պետք է ձգտի, որ կուրսում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ տիրի և գործնական հարաբերություններ լինեն, ինչպես նաև փոխադրձ օգնություն, բարիդրացիական հարաբերություններ, շերմ վերաբերմունք միջյանց նկատմամբ, ուշադրություն, հարգանք և սեր:

Կուրսղեկի աշխատանքի մեթոդները բազմազան են. առաջին հերթին համագործակցությունը պետք է ընկած լինի նրա գործունեության հիմքում: Ինչպես նշում է, Ռ. Ս. Պիհոնվան. «Ղեկավարման մեթոդների ընտրությունը որոշվում է համալիր պայմաններով, կոլեկտիվի զարգացման մակարդակով, գործունեության խնդիրներով, կոնկրետ իրավիճակներով, կուրսղեկի անձնավորությամբ» (3, 251):

Իր գործունեության ողջ ընթացքում կուրսղեկը ուշադրության կենտրոնում է պահում ուսանողների դաստիարակչական հարցերը. դրանք շատ լայն ընդգրկում ունեն և պահանջում են համալիր մոտեցում: Փորձառու կուրսղեկը դա անում է աննկատ ամեն րոպե, իր աշխատանքային գործունեության ողջ ընթացքում, ուսանողների հետ հաղորդակցման գործընթացում, անհատական շփումների և զրոյցների, ինչպես նաև արտառության աշխատանքների, միջոցառումների, էքսկուրսիաների ժամանակ:

Ընդհանրապես ուսանողական տարիները առաջին հերթին ուսանողի ինքնադաստիարակության, ինքնազարգացման, ինքնակրթության, ինքնակատարելագործման և ինքնակառավարման տարիներ են, երբ դրսերվում են նրանց ամուր կամքը, ձգտումներն ու հետաքրքրությունները: Կարեւոր են նաև նրանց արարքները, վարքագիրը և գործունեությունը:

Կուրսղեկի աշխատանքի մի բաղադրիչն է այն է, որ նա ուսանողներին հենց առաջին կուրսից ներգրավում է ուսանողական գիտական ընկերության ՈՒԳՁ աշխատանքներում: Նրանք I և II կուրսերում մասնակցում են այդ աշխատանքներին, իսկ III և IV կուրսերում կարող են հանդես գալ զեկուցումներով, ռեֆերատներով (5, 31): Պետք է հենց առաջին կուրսից ընդգրկվել այդ աշխատանքներում, սովորեցնել զեկուցումներ, ռեֆերատներ գրել և ներկայացնել, պատասխանել առաջացած հարցերին, մասնակցել քննարկումներին, ցուցաբերել ակտիվություն, համարձակություն, ներկայացնել իր սեփական կարծիքը այս կամ այն հարցի շուրջ: Նախկինում ԵՊՀ-ի աշ-



Խարիսխության ֆակուլտետի և կուրսում կարդում է հիմք «Ուսանողի ինքնուրույն աշխատանքի հիմնմքներ» առարկան, այնուհետև այն դասավանդվում էր նաև «Կրթության կազմակերպում» մագիստրատուրայի I-ին կուրսում, որը շատ էր օգնում ուսանողներին արագ հարմարվելու բուհին, հաղթահարելու բոլոր դժվարությունները, որոնք ծառանում են ուսանողի առջև հենց և կուրսուց: Առաջարկում ենք վերականգնել այդ առարկան և կարող բոլոր առաջին կուրսերում և «Կրթության կազմակերպում» մագիստրատուրայի բուհական բաժնում:

Մենք կազմել ենք նաև կուրսդեկի մանկավարժական նորել՝ կարեռելով նոր անհատական որակները, գիտելիքները, կարողությունները, հմտությունները, անհատական աշխատանքի ոճը, բովանդակությունը, ձևերը և մեթոդները (տես գծապատճերը):

Լավագույն կուրսդեկների փորձը երիտասարդ կուրսդեկները չեն կարող ընդունակել, այլ ինչպես նշում է Ուշինսկին, կարող են օգտագործել նիտքը, գաղափարը, որոնք բխում են նրանց այդ փորձից ստեղծագործաբար այն կատարելագործելով:

Կարող ենք նաև որոշ հանձնարարականներ տալ սկսնակ կուրսդեկներին, որպեսզի նրանք խուսափեն սխալներից ու բարձրացնեն իրենց

աշխատանքի և գործունեության արդյունավետությունը:

1. Ուսումնասիրել կուրսի բոլոր ուսանողներին, որպեսզի կարողանալ համակողմանի ներգործել նրանց վրա:

2. Ստեղծել ուսանողական առողջ կոլեկտիվ, ակտիվ պլանավորելով աշխատանքները, հաշվի առնելով իրական հնարավորությունները և պայմանները:

3. Կուրսի բոլոր ուսանողներին ներգրավել աշխատանքներում, տալ հանձնարարություններ և լինել հետևողական բոլոր հարցերում:

4. Համագործակցել կուրսում դասավանդող դասախոսների, ծնողների հետ՝ համատեղ լուծելու կուրսի առջև ծառացած խնդիրները:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Անդրեև Ա. Ա.**, *Педагогика высшей школы*, Новый курс, М., 2002.
2. Педагогика и психология высшей школы, П/Д, 2006.
3. **Пионова П. С.** *Педагогика высшей школы*, Минск, 2005.
4. Психология высшей школы, Минск 2006.
5. **Դարբիյլյան Թ. Ս.** *Ուսանողների ուսումնագիտական և գիտահետազոտական աշխատանքի դերը պրոֆեսիոնալ մասնագետների պատրաստման գործում*, «Միտքար Գոշ» ամսագիր, 2011, թիվ 7-9, էջ 29-31:
6. Основы воспитательной, научно-теоретической и организационной работы куратора в вузе.

#### THE BASES OF EDUCATION SCIENTIFIC-THEORETICAL AND ORGANIZING ACTIVITY OF THE GROUP MANAGER AT THE INSTITUTE.

**TAMARA HARUTYUNYAN**  
Candidate of Pedagogical Sciences, docent

#### Summary

Nowadays the role of the group manager and his/her participation in education system of the students is very emphasized.

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ- ՔԸՆԱՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ\*

### Գայանե Վազգենի ԱՌՈՒՋՈՒՄՅԱՆ

Մամկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ



**Ժ**ամանակակից բարձրագույն կրթության համակարգում իրականացվող բարեփոխումների շրջանակներում կարծես քննարկվում են միայն ուսուցման գործընթացի կատարելագործման, ուսուցման որակի բարձրացման խնդիրները: Ըստ էության, ուսանողների դաստիարակության խնդիրները կարծես անտեսվում են կամ մղվում են երկրորդ պլան: Ժամանակակից հասարակությունը բարձրագույն կրթության համակարգին ներկայացնում է նոր պահանջներ, որոնք ենթադրում են, որ բայց մասնագիտական գիտելիքներից, ժամանակակից բուհերի շրջանավարտները պետք է ունենան կայուն ազգային արժեհանակարգ, համոզմունքներ, դիրքորոշումներ, անձնային-մասնագիտական զարգացման պահանջմունքներ, ակտիվ մասնակցություն ունենան հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, դաշնան ազգային պետականության, ՀՀ քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային զարգացման հիմնական ներուժը: Ժամանակակից բուհի շրջանավարտի գործիքացությունների համայնքը պետք է համապատասխանի միջազգային չափանիշներին: Բուհի շրջանավարտը պետք է լինի բազմակողմանիորեն զարգացած, տեղեկացված, հասարակական կյանքում ակտիվ կենսագործող, նախաձեռնող, ինքնահաստաված, ինքնահրացված, աշխատաշուկայում մրցունակ, հաղորդակցական, ստեղծագործական զարգացած կարողություններ ունեցող, հանդուժող, իր և պետության, հասարակության առջև պատասխանատվություն կրող, կենսական տարբեր բարդ իրավիճակներում հոգեկան կայունու-

թյուն դրսելորող, հայրենասեր քաղաքացի:

Վերը թվարկված հատկանիշների համայնքի ձևավորումն ու զարգացումը ամբողջանում է բուհի շրջանավարտ մասնագետի ազգային կերպարի, նրա՝ որպես ազգային գաղափարների, ազգային շահերի կրող անհատի, եթոնկրի ձևավորմանը: Նման որակների ձևավորումը մասնագետ-շրջանավարտի մոտ հնարավոր է միայն նպատակաւորված, պլանավորված դաստիարակչական ներգործության արդյունքում: Այստեղ պետք է նշենք, որ այդ նպատակաւորված գործունեության ազդեցությունից բացի ուսանողի անձի զարգացման վիա ազդում են նաև տվյալ հասարակության մեջ ընդունված բարոյական նորմերը, ձևավորված արժեհանակարգը, պետության սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգը: Նշված գործոնները գործնականում անձի մոտ դրսելորվում են նյութական ապահովվածության, կենցաղի հարմարավեսության, բարու և չարի, գեղեցիկ և տգեղի, արդարամտության, բարոյականի և անքարոյականի, ազգային պատկանելության ընկալումներում, եսասիրական և այլասիրական, իրավահնագանդ և իրավախախտ վարքի, հայրենասիրության դրսելորումներում:

Խորհրդային կարգերի վիլուգումից անմիջապես հետո հայ հասարակության մեջ ազգային ինքնագիտակցության, ազգային ինքնության պահպանմանն ուղղված վտանգներ իրականում չկային: Դա բացատրվում է նրանով, որ այդ ժամանակաշրջանը համբնենում էր ազգային-ազատագրական պայքարի զարթոնքի, արցախյան ազատամարտի տարիների հետ: Ինչպես տարբեր կրթական հաստատություններում, այդ թվում նաև բուհերում, այնպես էլ ԶԼՄ-ներում և հասարակական հարաբերությունների բոլոր մյուս ոլորտներում գլխավոր բեման արցախյան ազատամարտն էր, անկախ ազգային պետականության ստեղծումն ու զարգացումը, իսկ օտար, ոչ ազգա-

\* Ներկայացվել է 25.10.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

յին արժեքների, գաղափարների ազդեցությունը երիտասարդ սենի վրա քիչ էր:

Սակայն այլ է իրողությունն արդի ժամանակաշրջանում: «Պատաճների, երիտասարդների, հատկապես բուի ուսանողների ազգային-քաղաքացիական դաստիարակության հիմնախնդիրը դարձել է արդիական և հրատապ: Ժամանակակից բարձրագույն կրթության համակարգը խնդիր ունի զարգացնելու, ակտիվացնելու կրթության դաստիարակող և զարգացնող գործառությունը: Բուի ուսանողների դաստիարակության արդի խնդիրներ են քաղաքացիականության, բարյականության, ազգայնականության, մարդասիրության, իրավահանգանողության, հայրենասիրության որակների ձևավորումը, որոնք իրատեսական և հնարավոր են դաշնում միայն բարձրագույն ուսումնական հաստիառակություններում ուսուցման և դաստիարակության գործընթացների նպատակառությամբ և օրգանական զուգակցման արդյունքում: «Ուսուցման և դաստիարակության գործընթացների առանձնահանգանության փորձը ձախողում է բարձրագույն մասնագիտական կրթության վերջնական նպատակի ձեռքբերման գործընթացը, այսինքն՝ նաև ազգագիտական տեսակետից գրագետ և ներդաշնակ զարգացած մասնագետների պատրաստումը» [4, էջ 62-72]: Չպետք է նույնալ, որ վերջին տասնամյակում բովանդակային լուրջ փոփոխություններ են կրել նաև սոցիալականացման մյուս հնատիտուտները՝ առաջին հերթին ընտանիքը, ինչպես նաև նախադպրոցական հիմնարկները, հանրակրթական դպրոցները: Դատկապես ազգային արժեքների դաստիարակության տեսանկյունից նշված հնատիտուտներն ունեն լուրջ խնդիրներ:

Դաստիարակության գործընթացում հաջողության հասնելու համար բուհում պետք է կազմել դաստիարակչական աշխատանքների պլան ուսումնառության բոլոր տարիների համար, հստակեցնել պատասխանատուներին, մշակել դաստիարակչական ներգրածությունների գնահատման մերողիկաներ: Ուսանողների դաստիարակության գործընթացում մեծ դեր ունեն դասախոսները: Վերջիններս, բացի ուսումնական նյութի հաղորդումից, պետք է հնարավորություն տան ուսանողներին ինքնուրույն հետազոտական, ուսումնական աշխատանքների համար, ընդգրկեն նրանց բուի մշակութային, գիտական, մարզական կյանքում, մասնակից դարձնեն ազգային տոնների տոնակատարություններին ինչպես բուհում, այնպես էլ բուի շրջանականներից դուրս: Ցուրաքանչյուր դասախոս պետք է դարնա ուսանողների համար հեղինակություն, նմանակման օբյեկտ, քանի որ մեծապես նպաստում են վերջիններիս մոտ ազգային ստերեոտիպների ձևավորմանը: Ու-

սանողների «էթնիկական սոցիալականացումը և սեփական էթնոսի հետ կապված հոգեբանական նույնացման հիմքների ստեղծումը հիմնականում ծնողների կամ նրանց փոխարինող անձանց գործն է» [1, էջ 212]:

Սեր երկրի աշխարհագրական դիրքը, պետության ռազմաքաղաքական իրավիճակը պարտադրում են մեծ ուշադրություն դարձնելու ուսանողների ազգային, հայրենասիրական դաստիարակության խնդիրներին: «Այստեղ հիմնականը ոչ այնքան օբյեկտիվորեն տնտեսական, ռազմական և մշակութային ուժ ունենալն է, որքան էթնիկական ինքնագիտակցության զարգացման բարձր աստիճանը և սեփական անցյալի ու մշակութի նսենացումը, իսկ այդ հոգեբանական գործոնների հիմնամ վրա՝ նաև համախնդրվածության բարձր աստիճանը» [1, էջ 68]: Դաստիարակության նշված քաղաքանակների հիմնական խնդիրներն են.

- ձևավորել հայրենիքի, պետության պետականության համեմատ սիրո, պատասխանատվության օգացմունքներ,

- ձևավորել ազգային ինքնագիտակցություն,

- ձևավորել պահանջնունքներ,

- ձևավորել ազգային պատկանելիության, հպարտության զգացումներ,

- նապատել ազգային հոգեկերտվածքի ձևավորմանը,

- ձևավորել ընդհանուր քաղաքացիական մշակույթ,

- բարձրացնել երիտասարդության սոցիալական հաստունության և պատասխանատվության մակարդակը:

Այս խնդիրների լուծումը հնարավոր է ինչպես ուսումնական պլաններում ներառված առանձին ուսումնական առարկաների՝ հայոց պատմություն, հայոց լեզու և գրականություն, մշակութաբանություն, այնպես էլ տարբեր լսարանային և արտալսարանային միջոցառումների միջոցով: Այստեղ կարևորվում է մեր ազգի պատմության հերոսական էջերի, անվանի ներկայացուցիչների, մշակույթի ճյուղերի, ավանդույթների, տոնների մասին տեղեկատվությունը, մեր հայրենիքի տարբեր հատվածներ, մշակույթի կրողներ այցելությունները, ազգային հերոսների, տարբեր դարչորժաններում տարբեր հերոսամարտերի մասնակցած գրականների կյանքին, հայրենանվեր գործին ծանոթացումը: Նման միջոցառումների արդյունքում ուսանողների մոտ ձևավորվում են մի շարք հատկանիշներ, սեփական ազգի պատության իմացություն և դրա վեհացում, սեփական

ազգային սիմվոլների, ավանդույթների նշանակության գիտակցում և նրանց նկատմամբ դրական հուզական վերաբերմունք, էթնոցենտրիզմի բարձր մակարդակ, զարգացած էթնիկական մենք-կոնցեպցիա, ազգային հպարտության զգացում:

Ազգային հայրենասիրական դաստիարակության խնդիրները սերտորեն կապված են ուսանողների քաղաքացիական դաստիարակության խնդիրների հետ: «Քաղաքացիական դաստիարակությունը անձի վրա ընտանիքի, պետական, կրթական և քաղաքացիական հասարակության այլ կառույցների տարերային և նպատակառուղղված ազդեցությունն է նրա նոտ քաղաքացիականության՝ որպես քաղաքացու անձնային և մասնագիտական առումնվ կարևոր արժեքների և հարաբերությունների ձևավորման նպատակով [5, էջ 351]: Այլ կերպ ասած, քաղաքացիական դաստիարակության նպատակը մեր երկրի, պետության համար գրագետ, իրավահիմազանդ, իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները գիտակցող, տնտեսական, քաղաքական, հոգեբանական պատրաստվածություն ունեցող

անհատի, հայրենիքի պաշտպանի ձևավորումն է: Արդյունքում մենք կունենանք քաղաքացիական մշակույթի կրող, բարձր իրավագիտակցություն ունեցող ազգայնական անհատներ:

Այսինքն, ժամանակակից բարձրագույն կրթության համակարգի կարևորագույն խնդիրն է պատրաստել, կրթել այնպիսի մասնագետներ, այնպիսի սերունդ, ովքեր ի վիճակի կլիմեն լուծելու ազգապահպաննան, ազգային պետության ռազմաքաղաքական, մշակութային, սոցիալ-տնտեսական և այլ ոլորտների զարգացման հիմնախնդիրները զլրավիզացվող աշխարհում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նալչայան Ա. Ա., էթնիկական հոգեբանություն, Եր., 2001.
2. Բերежнова Л. Н., Набок И. А., Щеглов В. И., Этно-педагогика. М., 2008.
3. Гачев Г., Национальные образы мира. М., 2003.
4. Сиземская И. Н., Россия в XXI веке: проблемы образования и воспитания. //Философские науки. 2002, N5.
5. Страгегия воспитания в образовательной системе России. Изд. 2-е, М., 2004.

#### THE PROBLEMS OF LEARNER'S NATIONAL-CIVIL EDUCATION IN THE SYSTEM OF MODERN HIGHER EDUCATION

**GAYANE V. AGHUSUMTSYAN**

Candidate of Pedagogical Sciences

#### Summary

The role of high educational institutions in the formulating the society, protecting national identity, nation's culture, transmission of traditions is very great. In the framework of this article we introduced the main tasks of realization of national-political upbringing. Some ways of their solution in modern high educational institutions. For national identification, stable world view, ethnic consciousness, formulation of active functioning of the citizen, specialized education is significant, simultaneously solving the problems of national-political upbringing.

## НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ИНКЛЮЗИВНОГО ОБУЧЕНИЯ ДЕТЕЙ С ОТКЛОНЕНИЯМИ В РАЗВИТИИ\*

**А. Л. ПОГОСЯН**

*Доцент кафедры теории и истории педагогики АГПУ им. Х. Абояна, кандидат педагогических наук*



**И**нтегрированное обучение и воспитание детей с различными отклонениями в развитии сегодня рассматривается в числе актуальных проблем современного образования. Анализ теоретических и нормативно-правовых

источников и документов, изучение научно-методической литературы (особенно последних десятилетий) и обобщение отечественного и зарубежного опыта работы с различными категориями этих детей показывают, что специалисты, ученые и практики все более активно изучают возможности совместного обучения этих детей в общеобразовательной школе.

В последние годы в публикациях и на практике, наряду с многими устанновившимися терминами в социальной педагогике, специальной педагогике и психологии все чаще стали использоваться термины "интегративное", "инклюзивное" (включенное) образование. Поэтому глубокое изучение, разработка и проведение политики, направленной на обеспечение этих видов образования, требует приложения значительных усилий, создания специальных условий.

Органы образования и другие компоненты образовательной системы должны опираться в своих действиях на целый ряд разработанных международных правовых актов и инструкций. Ниже приводим наиболее важные из них:

- Всеобщая декларация прав человека гарантирует право на начальное и бесплатное образование для всех детей (1948 г., статья 26).
- Конвенция ЮНЕСКО о борьбе с дискриминацией в области образования (1960 г.)
- Декларация прав ребенка гарантирует также право всех детей на получение начального образования без какой бы то ни было дис-

кринации (1989 г.).

- Всемирная декларация об образовании для всех (Джомтьен) усиливает концепцию начального образования для всех, удовлетворяя основные потребности в области образования (1990 г.).

- В Стандартных правилах ООН по обеспечению равных возможностей для инвалидов провозглашается не только равенство прав на образование для всех инвалидов-детей, молодых людей и взрослых, но также декларируется, что образование должно предоставляться "на комплексной основе" и "в рамках обычных образовательных структур" (1993 г.).

- В Саламанской декларации и рамках действий по образованию лиц с особыми потребностями предусматривается, что "школа должна принимать всех детей, независимо от их физических, умственных, эмоциональных или иных возможностей. В ней должны обучаться как дети-инвалиды, так и сверхдифференцированные дети, беспризорные и работающие дети, дети, принадлежащие к обособленным группам населения или народам, ведущим кочевой образ жизни, языковым, этническим или культурным меньшинствам, а также дети принадлежащие к другим уязвимым или маргинальным группам населения" (1994 г.).

- В рамках действий Всемирного форума по образованию (Дакар) и в целях развития тысячелетия предусматривается обеспечить к 2015 году доступ к всеобщему начальному образованию (2000 г.).

- ЮНЕСКО приступает к осуществлению Центральной программы Образование Для Всех, посвященной осуществлению права инвалидов на образование: в направлении интеграции в жизнь общества (2001 г.).

- 13 декабря, Генеральная Ассамблея Организации Объединенных Наций приняла Конвенцию о правах инвалидов (статья 24, которая специально посвящена образованию); отсутствие дискриминации; равенство возможностей; введение школьного обучения на всех уровнях; инклюзивное начальное образование;

\* Ներկայացվել է 15.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

предоставление возможностей для непрерывного образования, направленных на всестороннее развитие человеческого потенциала, обеспечение достоинства и самоуважения, соблюдение прав человека, основных свобод и человеческого разнообразия; развития личности инвалидов; их единственного участия в жизни свободного общества, а в перспективе полной интеграции и т.д. (2006 г.).

Нам представляется, что концепция "инклюзивного образования" сегодня является весьма актуальной и новой, все же требуется определенное время для того, чтобы международное сообщество получило в свое распоряжение важные правовые акты, подчеркивающие важность права Всех детей на получение образования, без какой бы то ни было дискриминации.

Согласно выступлению генерального директора ЮНЕСКО, Коичиро Мацуура, по мониторингу образования для всех, становится очевидным, что осуществление права на образование является основой для создания подлинного инклюзивного общества, где люди учатся вместе и участвуют в равной степени в его жизни. Но на сегодняшний день более 77 миллионов детей не посещают школу и более 781 миллиона взрослых являются неграмотными. Такое исключение особенно остро проявляется у лиц с различными отклонениями в развитии. Около 97% взрослых с разными формами отклонениями в развитии не имеют базовых уровней грамотности. По оценкам, число таких детей, посещающих школы в развивающихся странах колеблется в пределах от менее 1 до 5 процентов. Дети-инвалиды составляют свыше одной трети от общего числа детей, не посещающих школу. Ясно, что мы не сможем достигнуть целей образования для всех, не учитывая особые потребности примерно 650 миллионов человек - 10% населения мира - лиц с инвалидностью [2; 5; 6].

В дополнение к тем, кто лишен доступа к образованию, существует бесчисленное количество других людей, занимающих маргинальное положение в рамках школьной системы обучения. тому же, стремление получить образование по-прежнему зачастую сдерживается традиционными моделями обучения, которые не удовлетворяют потребности нашего быстро изменяющегося мира.

Обеспечение качественного образования для всех продолжает оставаться одним из важнейших проблем нашего времени. Однако, на основе единственного законодательства и эффективной политики, можно построить инклюзивный мир. Повышение информированности будет способствовать продвижению

вперед в этом направлении. В связи с чем должны быть приложены усилия как по повышению степени информированности, так и по разработке эффективной политики для создания мира социальной инклюзии, что является общей обязанностью - превратить эти мечты, концепции и приверженность идеям в ощущимую реальность.

В соответствии со своим мандатом, задача ЮНЕСКО заключается в том, чтобы поддерживать усилия государств-членов по обеспечению образования для всех граждан, но особенно для тех из них, кто не участвует в жизни общества или исключен из системы, с целью положить конец их дискриминации в отношении доступа, активного участия и успешного завершения обучения на всех уровнях образования.

Согласно определению известного индийского экономиста, лауреата Нобелевской премии Амартя Сена "Процесс инклюзии характеризуется наличием широко используемого всеми слоями населения социального опыта и активным участием в жизни общества, всеобщим равенством возможностей и шансов добиться успеха в жизни, которые предоставляются каждому человеку, а также достижением всеми гражданами базового уровня благосостояния" [4].

Далее он отмечает, что "Образование необходимо рассматривать в качестве элемента, который содействует развитию человеческой личности и функциональных способностей каждого, независимо от всякого рода препятствий-физических или иных" [4].

Таким образом, любое ограничение возможностей (физических, социальных и эмоциональных) не может быть дисквалифицирующим элементом. Инклюзия предполагает принятие широкой концепции Образования для всех, охватывающей весь диапазон потребностей учащихся. В то же время в руководящих принципах ЮНЕСКО в отношении инклюзивного образования, подчеркивается, что, если важные человеческие, экономические, социальные и политические причины оправдывают принятие политики и проведение мероприятий в области инклюзивного образования, то такое образование также является средством обеспечения развития каждого человека и установления отношений между людьми, группами и странами.

Действительно, вполне правомерно считать, что дети, которые обучаются вместе, также учатся жить вместе. Более того, с учетом своих междисциплинарных и "социальных аспектов", инклюзия также может быть только "делом всех и каждого". Инклю-

тивное общество может быть только результатом проведения государством политики во всех соответствующих областях, и вопрос инклюзии, несомненно, затрагивает в приоритетном порядке социальную политику, политику в области здравоохранения, экономики и занятости, миграции и даже политику в области градостроительства и благоустройства территории.

Инклюзивное образование (от английского слова *inclusive* - "включающий в себя") предполагает включение в образовательный процесс всех людей, которые нуждаются в получении знаний в той или иной форме. Чаще всего в этой ситуации говорят о детях-инвалидах, которые оказываются в вынужденной изоляции из-за своих физических особенностей. Но также ограничиваются в образовании, например, дети мигрантов, которые при переезде в другую страну не могут полноценно учиться из-за плохого знания языка или дискриминации.

Мы считаем, что в любом определении термина "инклюзия" необходимо подчеркивать следующее:

**Инклюзия** - это позитивное отношение к разнообразию; учет потребностей всех учащихся, а не только исключенных из процесса обучения; проявление интереса к посещающим школу детям, которые могут чувствовать себя исключенными; обеспечение равного доступа к образованию или принятие определенных мер в отношении отдельных категорий детей без их исключения из общего процесса обучения.

**Инклюзия** - это не только реагирование на разнообразие, но также улучшение качества образования для всех учащихся; возможно, дополнительная поддержка учеников в рамках обычной системы школьного обучения; удовлетворение потребностей одного ребенка за счет другого.

Учитывая, что построение той или иной

модели невозможно без научного изучения и анализа этапов становления и практики развития рассматриваемой проблемы (Азарян Р. Н. 1999, Малофеев Н. Н.) [1; 3], наши исследования будут направлены на научно-методическое обоснование основ организации интегративного и инклюзивного обучения. Эти исследования будут иметь следующие основные задачи:

- Дать анализ существующей практики интеграции, выявление положительных и негативных ее сторон;
- Дать оценку понимания идеи интегративного и инклюзивного обучения этих детей;
- Прослеживание динамики распространения этих форм обучения в регионах республики;
- Дать оценку уровня научно-учебно-методического обеспечения учебного процесса, качества коррекционных услуг, социальной направленности образовательного процесса.

Решению этих и других подобных вопросов и направленны наши дальнейшие исследования.

#### **ЛИТЕРАТУРА**

1. Азарян Р. Н., Состояние и преспективы развития интеграции лиц с нарушением зрения в обществе, // Материалы международной научной конференции. Нижний Новгород, 1999, с. 8-12.
2. Всемирный доклад 2005 года по мониторингу Образование Для Всех., L'éducation pour tous en 2015. Un objectif accessible, Резюме, Париж, ЮНЕСКО, 2004, с. 10.
3. Малофеев Н. Н., Становление и развитие интегративного образования в России //Обучение и воспитание детей с отклонениями в развитии. М., 2000, с. 34-39.
4. Amartya Sen, Development as Freedom, Oxford University Press, 2001.
5. Principes directeurs pour l'inclusion: Assurer l'accès à l'Education pour Tous, Paris, 2006, с. 2-14
6. Field S., Kuczera M., Pont B., En finir avec l'échec scolaire. Dix mesures pour une éducation équitable-Synthèse et recommandations aux pouvoirs publics, Париж, ОЭСР, 2007, с. 2.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԵՐԱԿԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՅՈՒՆԵՐԸ

#### ***Ա. Լ. Պողոսյան***

Խ.Արովյանի անվան ՀՊՄՀ-ի մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ.

Անվոքություն

Հոդվածում ներկայացված է ներառական ուսուցման հասկացությունը և բերված են միջազգային օրենքներ ու ակտերը:

#### **SOME FACETS OF THE INCLUSIVE EDUCATION OF CHILDREN WITH DEVELOPMENTAL DISORDERS**

#### **A. L. POGHOSYAN**

Docent at the Chair of Theory and History of Pedagogy, ASPU after Kh.Abovyan, Candidate of Pedagogical Sciences

Summary

The article gives the concept of Inclusive Education, here are also presented the international laws and acts.

### **Սարիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՎՊՄԻ-ի մամկավարժության ամքիոնի ասխատեմատ, մ.գ.թ. դոցենտ

### **Մարինե ԹԱՐՈՅԱՆ (Ակարում)**

ՎՊՄԻ-ի մագիստրանտ



Երեխաների ծիշտ դաս-  
տիարակություննից է  
կախված ամբողջ ժողո-  
վորի բարեկեցությունը:

**Ձ. ԼՌԿ**

**Փ**ոխվել է Ենր-  
կայիս հասա-  
րակությունը.  
Նրա կառավարման  
ձևերն ու մեթոդները  
անցում են կատարել վարչականացնելոց դե-  
պի ժողովրդավարականը: Բարաքավիդր հասա-  
րակության հենքը կրթությունն է: Ուստի հասարա-  
կության կրթության որակի կառավարումն էլ հե-  
ռու է վարչականացնելու պարտադրող ոճից:  
Դպրոցի կառավարման արդյունավետությանը,  
մեր կարծիքով, կարելի է հասնել ծնողական հա-  
մայնքի հետ անմիջական համագործակցությամբ:

Դեռևս խորհրդային տարիներին է անընդհատ  
շրջանառվել դպրոցի ու ծնողների համագործակ-  
ցության գաղափարը: Բայց մինչ օրս էլ հստակ  
ձևակերպված չէ այդ համագործակցության  
ուղղված այն միջոցների շարքը, որոնք պետք է  
հանեն գային որպես այդ համագործակցության  
կառավարման ստանդարտներ: Ներկայիս հասա-  
րակությունը հակումներ ունի բացասական եր-  
և սույների անմիջապես ընդունման: Օրինակ, դպ-  
րոցականների մեջ լայն տարածում ունի ծխախո-  
տի օգտագործումը, դասերը ետին պլան մղելը,  
սոցիալական պայմանների տարրերության պայ-  
մաններում անառողջ մրցակցությունը (հեռախոս-  
ների առժեք, հագուստ և այլն), հասարակության  
շերտավորումների շեշտադրումը՝ հարուստ, աղ-  
քատ, օլիգարխ, հասարակ քաղաքացի և այլն:  
Այս խնդիրներն ակնհայտ են, որ ընտանիքը կամ  
դպրոցը մեծ ջանքերի դեպքում անգամ չեն կա-  
րող միայնակ, առանց անխախտ համագործակ-

ցության լուծել: Կրթական բարեփոխումները հս-  
տակ չափորոշիչներ ու ստանդարտներ են սահ-  
մանում դպրոցի երեք օրակաների (տարրական,  
միջին, ավագ) համար: Ներկայիս կրթական հա-  
մակարգը դպրոցից պահանջում է տեղեկատվա-  
կան տեխնոլոգիաներին տիրապեսող շրջանա-  
վարությունը: Մինչդեռ քիչ չեն այն ընտանիքները,  
որոնք չունեն ժամանակակից տեխնոլոգիաներ  
ծեռք բերելու հնարավորություն: Իսկ դպրոցը  
առանց համագործակցելու չի կարող ճանաչել  
տվյալ ընտանիքներ: Այս ամենը վկայում են մեր  
գիտական նյութի հիմնախնդրի արդիականու-  
թյան մասին:

Գիտական աշխատության մեջ կարևոր են ենք.

1. Դպրոցի և ընտանիքի համագործակցու-  
թյունը

2. Ծնողական կրթության անհրաժեշտությու-  
նը

3. Ուսուցիչ-ծնող ժամանակակից փոխհարա-  
բերությունը:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության  
մեջ առաջնային դերը, մեր կարծիքով, դպրոցինն  
է, որովհետո հասարակության կրթական մակար-  
դակի բարձրացումը դպրոցի գործառույթն է:  
«Երեխաների դասահարակությունը միայն ծնող-  
ների գործը չէ: Երեխաները նրանց սեփականու-  
թյունը չեն: Նրանք պատկանում են հասարակու-  
թյանը»: Դպրոցն ու ընտանիքը համագործակ-  
ցության կայացման գործում պետք է խուսափեն  
մեր հասարակության մեջ կարծրացած, մինյանց  
«վերևի նայելու» սովորություննից: Փոխհարաբե-  
րությունը, մեր կարծիքով, պետք է լինի ոչ թե եր-  
կու կողմերի համակրանքի կամ հակակրանքի  
վրա հիմնված, այլ մինիայն ուսումնադաստիա-  
րական աշխատանքի արդյունավետ կայաց-  
մանը միտված հստակ ծրագրերի տեսքով: Օրի-  
նակ, եթե աշակերտի ծնողը տվյալ առարկայի  
մասնագետն է և գտնում է, որ կարող է օգտակար

\* Ներկայացվել է 19.11.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

Լինել դպրոցին իր կազմակերպած սեմինարներով, բանավեճերով, ապա պետք է առաջարկի իր օգնությունը: Համագործակցության ընթացքում այս երկու սոցիալական հնատիտուտները ոչ թե պետք է իշխեն, պարտադրեն միմյանց, այլ, ընդհանուր նպատակներ ունենալով, լրացնեն մեկմեկությունը: Այս հարցի հետ կապված Ս. Մովսիսյանը գտնում է. «Դպրոցը չի կարող ընտանիքի նկատմամբ հանդես գալ որպես կառավարող: Դպրոցը և ընտանիքը կազմում են սոցիալական միկրոմիջավայրի կառուցվածքի առանձին մասեր, որոնք գտնվում են փոխկապակցության մեջ: Երեխաների դաստիարակության բնագավառում սոցիալական այս համակարգերի հարաբերության հիմնական հատկանիշը նրանց համագործակցությունն է, որը արտահայտվում է փոխադարձ հնֆորմացիայով, համատեղ աշխատանքով և փոխօգնությամբ: Համագործակցության այդ միջոցները ոչ միայն նպաստում են ընտանեկան, այլև դպրոցական դաստիարակության գաղօգացմանը»<sup>2</sup>:

Ժամանակակից կրթական համակարգը կարևորում է համրային մասնակցությունը դպրոցի կառավարմանը: Հանրակրության մասին ՀՀ օրենքում նշված է. «Ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհրդներ, առարկայական մեթոդիավորումներ, որոնց ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ»<sup>3</sup>:

Փաստորեն, դպրոցի և ընտանիքի համագործակցության հարցում պատասխանատուն ծնողական խորհրդն է: «Ծնողական խորհրդը ստեղծվում է հաստատության գործունեության աջակցելու, ծնողների և հաստատության միջև համագործակցություն պահպելու նպատակով»<sup>4</sup>:

Ուսումնասիրություններ ենք կատարել Վանաձորի երկու հիմնական և ավագ դպրոցներում և մեկ վարժարանում: Ուսումնասիրության ընթացքում օգտագործել ենք գրույցի, հարցման, հարցապատճենի, հարցարերթիկի մեթոդները: Համաձայն դրա կազմել ենք այլուակ, որում նշված են դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերը (տես այս):

Ծնողական կրթությունը, մեր կարծիքով, ամենաարդյունավետ տարրերակն է առողջ, գործնական համագործակցության համար: Այն միաժամանակ համարվում է չափահասների շարունակական կրթության բաղադրիչ մաս: Թիս չեն այն ծնողները, որոնց համար դպրոցը էական դեր ու կարևորություն չունեն: Այսինքն ժամանակ կամ ցանկություն չունեն մասնակցելու դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

### Այլուսակ Դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերը

- Ծնողական ժողովներ
- Տնայցեր
- Անհատական հանդիպումներ
- Հեռախոսազույցներ
- Հանացանց
- Կազմակերպչական աշխատանքներ
- Միջոցառումներ
- Էքսկուրսիաներ
- Աշակերտների անձնական գործերի և նրանց առողջական վիճակի ուսումնասիրություն
- Երեխաների սոցիալական պայմանների ուսումնասիրություն
- Աշակերտների դաստիարակվածության մակարդակի ուսումնասիրություն
- Դասարանի բնութագրի հիման վրա աշակերտների հետ աշխատանքների կազմակերպման ձևերի ու մեթոդների ընտրություն
- Ծնողների համար մանկավարժա-հոգեբանական խորհրդատվության կազմակերպում

Ընտանելով, որ դրանից առողջություն իրենց երեխան է, և, հետևաբար, հասարակությունը: Ծնողական կրթության կազմակերպման մողելը, մեր կարծիքով, պետք է կազմել նրբորեն՝ այնպէս, որ դրան մասնակցելու ցանկություն ունենան բոլորը: Մինչդեռ մեզանում չի գործում այդ ինստիտուտը, որի բացակայությունն էլ առաջ է բերում.

1. Ծնողի անտարբերություն երեխայի ուսման նկատմամբ

2. Դպրոցի աշխատանքներին չմասնակցելու ցանկություն

3. Ուսումնադաստիարակչական աշխատանքներն ամբողջովին մանկավարժին թողնելը

4. Երեխայի հնարավորությունները չճանաչելը

5. Ծնուանեկան դաստիարակության ընթացքում երեխայի տարիքային, հոգեբանական, սեռական առանձնահատկությունները հաշվի չառնելը

6. մանկավարժական գիտելիքներին և հմտություններին չտիրապետելը:

Որոշակի դիտարկումներից, ուսումնասիրություններից հետո եկանք այն եղրակացության, որ ծնողական կրթությունը կարելի է կազմակերպել հետևյալ ձևերով:

• Ծնողների կրթությանը նվիրված ամսագրերի հրատարակում և դպրոցում ծնողների բաժանորդագրում,

• հեռուստատեսությամբ ցերեկային ժամերին այս բնույթի հաղորդումների ցուցադրում

- սեմինարների, դասախոսությունների անցկացում մասնագետների անմիջական մասնակցությամբ:

Ուսուցիչ-ծնող փոխհարաբերություններում այսօր առաջնային է համարվում անկաշկանդ, առողջ, օրյեկտիվ մթնոլորտի ստեղծումը: Օրինակ, կարելի է հանդիպել ծնողների կամ ուսուցիչների, ովքեր տարածայնություններ ունեն այս կամ այն ծնողի կամ ուսուցչի հետ: Այստեղ կարևոր նրանց փոխհարաբերությունների կառավարումն է: Ծնող-ուսուցիչ փոխհարաբերություններում, մեր կարծիքով, կարևոր է նաև ուսուցչի հեղինակությունը: Ուսուցիչը պետք է իր վարքով և աշխատանքով ծնողին վստահություն ներշնչի:

Կրիդի շատ դպրոցներում ծնողների հետ ակտիվ փոխհարաբերությունների մեջ է տվյալ դասարանի դասինքն, հոգեբանը և սոցիալական մանկավարժը, որոնք իրենց մասնագիտական տարաբնույթ գործունեությամբ պետք է նպաստեն դպրոցի և ծնողական համայնքի արդյունավետ համագործակցությամբ:

Այս օղակները լիովին չեն ամրապնդում ծնողական համայնքի ու դպրոցի կայունության հիմքերը: Մեր կարծիքով, այսօվա դպրոցին անհրաժեշտ է նաև հասարակայնության հետ կապերի պատասխանատու մասնագետն: Վերջինս կարող է դպրոցի և ծնողական համայնքի համագործակցությունը ամրապնել: Մելև ծնողների, հասարակության բողոքները այս կամ այն երևույթի վերաբերյալ, զբաղվել ծնողական կրթության հարցերով և այլն:

Այսպիսով՝ ներկայիս ապահովանքում խիստ անհրաժեշտություն կա դպրոցի և ընտանիքի համագործակցության, քանզի դրանք այն սոցիալական ինստիտուտներն են, առանց որոնց հնարավոր չէ իրականացնել երեխայի լիրածը դաստիարակությունը և սոցիալականացումը: Համագործակցության ձևական լինելը հանգեցնում է ուսման նկատմամբ երեխայի անտեսմանը, ճարդկային փոխհարաբերությունը անտեսմանը, ճարդկային փոխհարաբերությունների խաթարմանը: Մեր

կարծիքով, արդի դպրոցին անհրաժեշտ է հասարակայնության հետ կապերի պատասխանատուի՝ PR մասնագետ: Այս մասնագիտությամբ աշխատող անձը ամբողջությամբ կենտրոնացած կլինի դպրոց-ծնողական համայնք համագործակցությանը վերաբերող խնդիրների լուծման վրա: Արդյունքում՝ կշահի ուսումնադասատիարակչական աշխատանքը, դպրոց-ընտանիք-հասարակություն ինստիտուտների փոխշահավետ համագործակցությունը:

<sup>1</sup> Կ. Ե. Իգոսե, Գ. Մ. Մինյկովսկի, Ըեմյա, գետու, շկոլա, Մոսկվա, 1989, ս. 22.

<sup>2</sup> Ս. Ա. Մովսիսյան, Դպրոցի կառավարման հիմունքները, Երևան, 1980, էջ 170:

<sup>3</sup> Աշակերտների և ծնողների մասնակցությունը համրակայական ուսումնական հաստատության կառավարմանը, «Գործընկերություն և ուսուցում» 74, 2011, էջ 39:

<sup>4</sup> Կրթության ազգային ինստիտուտ. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ 1-ին, 2004, էջ 139:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ա. Չատիմյան, Ընտանեկան դաստիարակության հիմունքները, Երևան, 2009:
- Ա. Սակարենիկ, Գիրը ծնողների համար, Երևան, 1958:
- Վ. Գրեթենիկով, Ընտանեկան կյանքի բարոյագիտություն և հոգեբանություն, Երևան, 1985:
- Աշակերտների և ծնողների մասնակցությունը համրակայական ուսումնական հաստատության կառավարմանը. «Գործընկերություն և ուսուցում» 74, 2011:
- Կրթության ազգային ինստիտուտ. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ 1-ին, 2004:
- Ս. Ա. Մովսիսյան, Դպրոցի կառավարման հիմունքները, Երևան, 1980:
- Լևոն Կանցյան, Մեծերի համար՝ փոքրերի մասին, Երևան, 1976:
- Կ. Ե. Իգոսե, Գ. Մ. Մինյկովսկի, Ըեմյա, գետու, շկոլա, Մոսկվա, 1989.
- «Ընտանիք և դպրոց», Գիտամեթոդական ամսագիր, 1.2008:
- «Ընտանիք և դպրոց», Գիտամեթոդական ամսագիր, 1.2009:
11. «Մանկավարժական միտք», Գիտամեթոդական ամսագիր, 1-2.20:

#### THE COOPERATION NATURE OF SCHOOL AND PARENTAL COMMUNITY

S. KHACHATRYAN  
M. TATOYAN

Summary

Nowadays school-parent cooperation is on formal basis, which has become the reason for the neglect of educational process.

The precondition of normal and efficient relations is the formation of school-family cooperation, parental education and teacher-parent healthy interrelation.

**ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԵՔՍԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԵՌԱՀԱՊՈՐԴԱԿՑԱԿԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ\***

**Արմենուհի ՂԱԶԱՐՅԱՆ**

**ԴՊԾԴ-ի Վաճածողի մասնացուլի հովանականության առարկաների և մարմնակրթության ամբիոնի դասախոս  
և. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայցողը**

**Ատենախոսության թեման՝ Միջմշակութային հեռահաղորդակցական կարողությունների ձևավորումը  
անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում**  
Գիտական դեկան՝ Իգոր ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ մանկ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**O**տար լեզուների ուսուցման գործընթացում մեծ տեղ է հատկացվում ընթերցանական կարողություններն ավելի արագ են ձևավորվում, քան խոսելու, գրելու և ունկնդրելու: Մեթոդիկայից հայտնի է, որ ընթերցելիս հիմնականում կիրառում են երեք ռազմավարություն՝ ընթերցած հասկանալ ամբողջությամբ, հասկանալ հիմնական բովանդակությունը և հասկանալ տեքստի որոշ հատվածները ըստ ընտրության:

Ինչպես հայտնի է, բնագրային տեքստը մայրենի լեզվի ուսուցման գործընթացում ուսուցման հիմնական միջոց է: Սայրենի լեզվի խոսքակաղապարները երեխան սկսում է յուրացնել իր ծննդյան օրվանից կամ ավելի վաղ: Տեխնիկական բուհում ուսանողները հիմնականում ուսումնասիրում են ուսումնական մասնագիտական կողմնորոշման տեքստեր, որոնցում բառապաշտի կարևորագույն մաս են կազմում մասնագիտական տեքստները:

Ինչ վերաբերում է օտարալեզու մասնագիտական կողմնորոշման բնագրային տեքստերին, ապա դրանց ընթերցումը արդյունավետ և նպատակահարմար է ուսուցման միջին և ավարտական փուլում, քանի որ անգամ ավարտական փուլում, այսինքն՝ երկրորդ կուրսի երկրորդ կիսամյակում, ուսանողները չեն յուրացնում ոչ միայն անգլերեն, այլև հայերեն լեզվով մասնագիտական տեքստնաբառնությունը և հասկացությունը:

Անգլերենի մասնագիտական կողմնորոշման

դասընթացում օտարալեզու բնագրային տեքստերի ընթերցումը պահանջում է համապատասխան պատրաստվածություն, դրդապատճառների և նպատակադիրքորոշման ուսումնամեթոդական գրականության, տեխնիկական, հեռահաղորդակցական միջոցների առկայություն:

Սի բան է բնագրային տեքստերը կիրառել ուսումնական նպատակներով տեխնիկական բուհում, մեկ այլ բան, եթե դա արվում է հումանիտար բուհում կամ հանրակրթական դպրոցում: Ազգայիտ է, որ տեխնիկական բուհում բնագրային տեքստերը լինում են հիմնականում տեխնիկական բռնվածքի և ընդհանուր առնամբ չեն պարունակում գեղարվեստական ոճի բառապաշտը: Ինչպես նշում է Ն. Լ. Կուչերենկոն. «բնագիրը օրիգինալ տեքստ է, որը մեթոդական մշակման չի ենթարկվում: Այլ հեղինակներ ենթադրում են, որ տեքստը կարող է որոշակիորեն ենթարկվել որդակտիկական մշակման (դիդակտիկացում), այն դեպքում, եթե չի խախտվում նրա հավաստիությունը, ճշնարտացիությունը, և չի կորսվում տեքստի հանրամշակութային ֆոնը: Եթե լրագրի տեքստը համարենք բնագրային, ապա մենք գտնում ենք, որ այն կարելի է որոշ չափով մշակել՝ ծավալի կրծատմամբ, տարեթվերը, ժուրնալիստների ազգանունները, առանձին հատվածներ բաց թողելով, եթե այդ դեպքում չի հրականացվում բառապաշտի փոխարկում, չեն պարզեցվում քերականական կառույցները» (Հ. Լ. Կոչերենկո, 2009, 18-23):

Տեխնիկական բնագրերն ավելի հավաստի

\* Ներկայացվել է 02.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

Են, դրանք դժվարությամբ են մշակվում՝ ծավալի կրծատմամբ և դրանք ընթերցելու համար անհրաժեշտ են ոչ միայն ընդհանուր ֆոնային գիտելիքներ, այլև կոնկրետ մասնագիտական գիտելիքներ:

Այստեղ առաջ է գալիս ընդհանուր ֆոնային, գործարանական, հանրամշակութային և կոնկրետ մասնագիտական գիտելիքների հարաբերակցության հարցը:

Խնդիր է դրվում նաև տեխնիկական բնույթի տեքստերի ուսուցողական նպատակներով հարմարեցումը: Այդ առումով Ն. Վ. Բարիչիմիկովս առանձնացնում է բնագրային տեքստի հետևյալ տեսակները՝ դիդակտիկական կամ դիդակտիկա-նացված, կիսաբնագրային, կվազիբնագրային, բնագրային: Ըստ նրա՝ դիդակտիկանացված տեքստերը ստեղծված են մեթոդական հատուկ նպատակներով լեզվակիրների կողմից: Կիսաբնագրային տեքստերը որպես կանոն արագուացված, կրծատման կամ կոնդիլյացիայի միջոցով ուսուցողական խնդիրների լուծում հետապնդող տեքստերն են: Կվազիբնագրային տեքստերի դեպքում բոլյատրովում է կիսաբնագրային հաշվին գոյական անունների որոշակի կրծատում, եթե դրանք շատ են: Ընդհանուր առօճանք, տեքստի այն դժվարություն ներկայացնող բաժանդրամասերն են բաց բողոքում, որոնք մատչելի չեն աշակերտներին: Բնագրային են այն տեքստերը, որոնք գրված են լեզվակիրների կողմից լեզվակիրների համար (Հ. Բ. Եարահսկօ, 2003, 63):

Տեխնիկական տեքստերի պարագայում խոսքը լեզվակիր գիտնականների կողմից գրված բնագրերի մասին է: Ընդ որում գաղտնիք չէ, որ անգլերեն խոսողների համարյա 80%-ը լեզվակիրներ չեն, և անգլերենը նրանց համար *lingua franca*<sup>1</sup> է, այսինքն՝ մայրենի լեզու չէ:

Միջմշակութային հեռահաղորդակցության տեսամյունից Կ. Ե. Կորոննկովան մեծ նշանակություն է տալիս բնագրային տեքստերի ընթերցանությանը, քանի որ դրանք պարունակում են իրական հաղորդական իրադրությունների բացակայության պարագայում միջմշակութային բնույթի տեղեկատվություն: Ըստ այդմ՝ «Դաս-դասարանային համակարգի պայմաններում միջմշակութային բաղադրամաս պարունակող բնագրային տեքստերը խթանում են արորթենային իրավիճակներ ստեղծելուն անգլերենի ուսուցման բոլոր փուլերում: Այդամբ տեքստերն արդյունավետ են նաև այլ՝ բարոյական արժեքների համակարգ ունեցող մշակույթի նկատմամբ հարգալից և հանդուրժողական վերաբերմունք դաստիարակելու առօւմով: Բնագրային տեքստերը նպաստում են բազմազան խնդիրների քննարկման ժամանակ ոչ

միայն ուսումնասիրվող լեզվի և մշակույթի, այլև սեփական մշակույթի ինքնատիպությունը հասկանալուն և բացահայտելուն (Կ. Ե. Յօրոնկօվա, 2004, 37-41):

Տեխնիկական բնագրերի ընթերցումը կազմակերպելիս անհրաժեշտ է հիշել, որ տեքստերը դասակարգելիս հաշվի են առնում նախ և առաջ այն, որ տեքստերը լինում են գեղարվեստական (fiction) և ոչ գեղարվեստական (non fiction): Տեքստի սահմանումը և բնորոշումը կատարվում է նաև ըստ նրա ժամանակին հատկանիշների կամ պատկանելությամբ: Ինչպես նշում է Ե. Ս. Տրյամանկայան. «ժամերերը բաժանվում են միջուկային (ոճի յուրահատկությունը որոշող), մակերեսամերձ (պերեֆիրիկ /օճի հիմքը կազմող), սահմանային, որն էլ իր հերթին բաժանվում է միջուկային-սահմանային և մակերեսամերձ-սահմանային» (Ե. Ս. Տրյամանկայան, 1985, 189-201):

Բնագրային տեքստերի ընտրության կարևորագույն պայման է տեքստի կառուցվածքային-իմաստային բաժանումը: Ինչպես հայտնի է, տեքստի հիմնական հատկանիշներին է վերաբերում մտահացման անբողջականությունը՝ կապը և բաղադրամասերի կապակցելիությունը:

Կարևոր է տեխնիկական բնագրերի հետ համապատասխան ընթացակարգերի մշակման հիմնախնդիրը: Ինչպես հայտնի է, օտարարևոր խոսքային գործունեությունը կարող է իրականացվել տեքստի հիմնա վրա լայն իմաստով և կապված է նրա հասկանալու և սիրելու օրինաչփությունների հետ:

Ինչպես հայտնի է, ընթերցանության համար նախատեսված տեխնիկական տեքստն ընտրելուց հետո դասախոսն առաջարկում է ուսանողներին վերլուծել այն: Տեխնիկական տեքստի վերլուծությունը հետապնդում է հիմնականում բառային, մասնավորապես տերմինաբանական դժվարությունները հաղթահարելու նպատակներ: Դա է պատճառներից մեկը, որը դասագրքաստեղծ հեղինակները տեխնիկական բնագրերը պարզեցնում են և հարմարեցնում:

Իմաստաբանական մոտեցմամբ տեքստի ընթերցումն արդյունավետ է հատկապես բնագրային տեքստերի հետ աշխատելու ժամանակ: Ըստ Վ. Վ. Կուլպարևայի՝ «Տեքստի ներքին ծևի հասկանը հնարավորություն է ընձեռում:

- Ներթափանցել ուսումնասիրվող առարկայական ոլորտը,

- Կիրառել տեքստի բովանդակության հիմնանշանակային կառուցվածքը և մտահացման որպես գործողությունների կողմնորոշչի հիմք խոսքային գործունեության բոլոր տեսակները ուսուցելիս,

• բաշխել տեքստի նյութը ոչ թե ըստ այս կամ թերականական և բառային նյութի, այլ ըստ տեղեկատվության կրկնելու կամ բարդանալու,

• իրացնել ուսուցման ընթացքում գիտակցականության սկզբունքը, որը դիդակտիկայի հիմնարար սկզբունքն է,

• ակտիվացնել աշակերտի մտավոր գործունեությունը, որի հուրյունն այն է, որ «հիշողության դպրոցը» զիջում է «մտաժողության դպրոցին» (B. Բ. Կոնարեա, A. Ի. Ծմարկովա, 2007, 19-26):

Այսպիսով, տեքստի հիմնանշանակային վերլուծությունը հնարավորություն է ընձեռում դրւողական գուտ լեզվական համակարգի շրջանակներից և դիմել ընթերցանության խոսքային գործունեության գրավոր ֆիքսված առարկային՝ մտքին (A. A. Հենմահ, 1991):

Բնագրային տեքստերի ընտրությունը կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները:

• բնագրային տեքստը պիտի համապատասխանի սովորողների հաղորդակցական իրազեկությանը, նրանց հետաքրքրություններին և պահանջնունքներին,

• բովանդակային առումով բնագիրո պիտի ունենա համապատասխան կորթական, դաստիարակչական և զարգացնող ներուժ,

• այն պետք է արտացոլի անգախտու երկրների հանրաճշակութային և հանրալեզվաբանական բնույթի հրողությունները:

Կ. Ե. Վորոնկովան մեծ նշանակություն է տալիս բնագրային տեքստերի ընթերցանությանը, քանի որ դրանք պարունակում են, իրական հաղորդակցական իրադրությունների բացակայության պարագայում, միջմշակութային բնույթի տեղեկատվություն: Ըստ նրա՝ «Դաս-դասարանային համակարգի պայմաններում միջմշակութային բաղադրանա պարունակող բնագրային տեքստերը խթանում են պրոբլեմային իրավիճակներ ստեղծելուն անգերենի ուսուցման բոլոր փուլերում: Այդպիսի տեքստերն արդյունավետ են նաև այլ՝ բարոյական արժեքների համակարգով մշակույթի նկատմամբ հարգալից և հանդուրժողական վերաբերմունք դաստիարակելու առումով: Բնագրային տեքստերը նպաստում են բազմազան խնդիրների քննարկման ժամանակ ոչ միայն ուսումնասիրվող լեզվի և նշակույթի, այլև սեփական նշակույթի ինքնատիպությունը հասկանալուն և բացահատելուն» (K. E. Վորոնկովա, 2004, 37-41):

Ուսումնական նպատակներով տեխնիկական բնագրեր ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ դիդակտիկական, կիսաբնագրային, կվազիբնագրային տեքստերի հիմ-

քում ընկած են բնագրային տեքստերը, որոնց ընտրությունն իրականացվում է հաշվի առնելով այն, թե ինչքանով են դրանք համապատասխանում ուսանողների մասնագիտական և իմացական պահանջնունքներին:

Հեռահաղորդակցական բնագրեր ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների մասնագիտական կողմանորշման բառապաշարի, հեռահաղորդակցական տերմինաբանության և անգլերենի առօյք-խոսակցական բառապաշարի առանձնահատկությունները:

Վիրտուալ խոսույթների առանձնահատկությունն այն է, որ միավորում է տարբեր լեզվանական ժանրեր, տարբեր ենթալեզուներում շրջանավոր բառապաշար: Նրանց միջոցով կարելի է ստեղծել հեռահաղորդակցական կարողությունները զարգացնող և տեխնիկական-տեղեկատվական անգլերեն ենթալեզուն զարգացնող բնականին մոտ «լեզվամշակութային միջավայր»:

Տեխնիկական-տեղեկատվական տերմինների, բառային միավորների իմաստավորումն ավելի արագ և արդյունավետ է տեղի ունենում, եթե սովորողներն ունեն ընթերցման, համապատասխան տեղեկատվություն քաղելու, ընթերցածը հասկանալու և վերարտադրելու դրդապատճառ: Դնարավոր չէ հաղթահարել, վերացնել ոչ մի բառային կամ քերականական բնույթի դժվարություն, եթե չեն ձևավորվել համապատասխան մասնագիտական-իմացական դրդապատճառներ օտարալեզու տեքստերի ընթերցանության գործնքացում:

Օտարալեզու տեխնիկական-տեղեկատվական բնագրերն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել մայրենի լեզվով ձևավորված համապատասխան տեքստերի հետ աշխատանքի դրական փորձը:

<sup>1</sup> lingua franca or linguae francae 1) a language used for communication among people of different mother tongues.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Կուչերենկո Հ. Լ.**, Особенности обучения чтению публицистических текстов в старших классах общеобразовательной школы//Иностранные языки в школе. 2009, N2, с. 18-23.
2. **Барышников Н. В.**, Методика обучения второму иностранныму языку в школе. М., “Просвещение”, 2003, 63 с.
3. **Воронкова К. Е.**, Работа с аутентичными текстами, содержащими интеркультурный компонент // Иностранные языки в школе. 2004, N7, с. 37-41.
4. **Троянская Е. С.**, Особенности жанров научной литературы и отбор текстов на различных этапах

- обучения научных работников иностранному языку // Функциональные стили. Лингвометодические аспекты / Отв. ред. М. Я. Цвиллинг. М., "Наука", 1985, с. 189-201.
5. Купарева В. В., Старикова А. Ю., Использование метода двумативного анализа иноязычного текста при обучении чтению в школе //Иностранные языки в школе. 2007, N4, с. 19-26.
6. Нейман А. А., О возможном подходе к определению ориентиров в процессе чтения английских медицинских текстов// //Иностранные языки в высшей школе. Вып. 24. М., 1991.

---

THE PROBLEMS OF A CHOICE OF INITIAL TEXTS IN A COURSE OF TELECOMMUNICATION VOCATIONAL GUIDANCE OF ENGLISH

***ARMENUHI GHAZARYAN***

**Summary**

The article deals with the choice of originals of telecommunication features of lexicon of vocational guidance, telecommunication terminology, and also lexicon of daily English are considered.

## ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԴՊՐՈՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ\*

### **Հասմիկ ՀՈՎԱԵՓՅԱՆ**

Վաճառքի Գ. Զարյան անվան N24 միջն. դպրոցի տնօրեն  
«Միսիար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի հայցորդ

**Աստենախոսության թեման՝** Հանրակրթական դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման կատարելագործման մանկավարժական պայմանները  
**Գիտական դեկանը՝** Մնացական ՄԱՍՈՒԿԵՎԱՆ՝ մանկ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



«**Ղ**ասմիկ Հովայեփյանը ուսումնադաստիարակչական դպրոցում գործընթացի կառավարման մեջ առանձնահատուկ տեղ է գրաղեցնում դասարանի դեկանավարի գործունեությանը»<sup>1</sup>:

Նրա գործունեության բովանդակությունը իրականացվում է իրեն վերապահված գործառույթներով: «Մանկավարժի գործառույթը նրա կողմից իրականացվող անմիջական մասնագիտական-պաշտոնական գործողություններն են, որոնց արդյունքում ապահովվում է պաշտոնի նշանակությունը: Գործառույթները բխում են նշանակության գիտակցումից»<sup>2</sup>:

Դաստեկի գործառույթը դպրոցում երեխայի կյանքի կազմակերպումն է, այն ժամանակահատվածի կազմակերպումը, որը վերաբերում է երեխայի կենսաապահովմանը. շնչառությանը, գործողություններին, սննդին, ժերմությանը, հարմարավետությանը, այն ամենին, ինչը երեխայի հոգեֆիզիկական ապարատի գործունեության պայման է, խճի մեջ երեխաների բազմակողմանի գարգացմանն աջակցելուն (ճանաչողական, աշխատանքային, սպորտային, գեղարվեստական), կյանքն իմաստավորելու ուղղությամբ հոգևոր գործունեության կազմակերպմանը (արժեքային կողմնորոշում), խճի և նրանում յուրաքանչյուր երեխայի գարգացման սոցիալ-արժեքային բնութագիր և գնահատական կազմելուն: Վաճառքորի

գևորգ Զարյան անվան N24 միջնակարգ դպրոցում գիտափորձի անցկացման պրոցեսում մանկավարժների հետ միասին մեր կողմից որոշվել են դաստեկի գործունեության ելակետային ուղղությունները, որոնք բխում են նրա հիմնական գործառույթից, այն է՝ օգնել և աջակցել երեխային՝ նրա զարգացման և անհատական խնդիրների լուծման մեջ:

Դաստեկների գործունեության պատճա-մանկավարժական վերլուծությունը ցույց է տվել, որ ինչպես գիտնականների կողմից, այնպես էլ կրթության վերաբերյալ նորմատիվ իրավական փաստաթղթում («Հանրակրթական դպրոցի կանոնադրություն», «Հանրակրթության մասին ՀՀ օրենք») շարադրված մարդասիրական զարգահարերը դպրոցների պրակտիկայում հաճախ մնում են չիրագործված՝ իրենց պարտականությունների հանդեպ մանկավարժների ցուցաբերած ծևական վերաբերմունքի հետևանքով: Դաստեկի կողմնորոշումը հիմնականում եղել է շփում ըստ պատշաճի, առավել հաճախ այն եղել է ինքնիշխան:

Դաստիարակությունը կրթության անբաժանելի բաղադրիչն է, որն իրականացվում է ինչպես սոցիալիզացիայի արտաքին գործուների, այնպես էլ անձի ինքնազարգացման (անհատականացման) ներքին պրոցեսների ազդեցության տակ:

**Դաստիարակությունը** սերունդների համագործակցությունն է, սոցիալական գործունեության արժեքների, նորմերի, խնդիրների համատեղ նշակումը, այսինքն՝ ավագների և կրտսերների հոգեկան ստեղծագործությունը, որի արդյունքում էլ ծևակորպում է երեխայի դիրքորոշումը

\* Ներկայացվել է 12.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

կյանքի հանդեպ: «Եթե մանկավարժությունը ուղղում է մարդուն դաստիարակել բոլոր տեսակետներից, ապա նախ նա պետք է ճանաչի նրան բոլոր տեսակետներից»<sup>3</sup>:

Այս մոտեցման դեպքում դաստիարակության սկզբունքներն են:

- Բնության համապատասխանության սկզբունք. դաստիարակություն՝ բնության մեջ մարդու զարգացման օրիենտիվ օրինաչափություններին և տարիքային զարգացման օրինաչափություններին համապատասխան՝ հաշվի առնելով երեխայի զարգացման տարիքային առանձնահատկությունները:

- Մշակութային համապատասխանության սկզբունք. դաստիարակություն համամարդկային արժեքների հիմն վրա՝ հաշվի առնելով նաև նրան չխակասող կոնկրետ ազգային և էթնիկ մշակույթների արժեքները և նորմերը:

- Դաստիարակության համակարգայնացման սկզբունք. անձին օժանդակություն ցուցաբերելու, նրա ինքնորոշման, ինքնադրսևորման, ինքնակազմակերպման և ինքնավերականգնողունակության համար պայմանների ստեղծում:

- Մանկավարժական աջակցության և պահպանման սկզբունք. մի տեսանկյունից՝ երեխայի կողմից ինքնուրույնաբար չլուծվող իրավիճակներում օգնություն ցուցաբերելու, մյուս տեսանկյունից՝ դժվար իրավիճակներն ինքնուրույն հաղթահարելու համար պայմանների ստեղծում:

Այս սկզբունքների վրա է հիմնվում ժամանակակից դպրոցը, որտեղ կրթական գործընթացում յուրաքանչյուրի բազմամշակութաբառության գաղափարները, հոգերը, աջակցությունը և պաշտպանությունը առաջնահերթ են:

Ինչպես նշվում է ՀՀ հանրակրթության օրենքում, «Հանրակրթությունը նպատակատրողված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ծևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը»<sup>4</sup>:

Անցկացված ուսումնասիրության վերլուծությունը ցույց է տվել, որ ծնողների և ուսուցիչների տեսանկյունից անձի ծևավորման սոցիալական պատվերն այն է, որ աճող մարդուն ամենից առաջ անհրաժեշտ է ֆիզիկական առողջություն, քառոյական և ընդունակություններ՝ մտավոր, աշխատանքային, գեղարվեստական, հաղորդակցական, որոնք իրենց հերթին համարվում են ինքնորոշման, ինքնադրսևորման ընդունակությունների ծևավորման բազա:

Այս երեք խոշոր բլոկներով էլ կարելի է նշանակել դպրոցի, նրա մանկավարժների խնդիրնե-

րը, որոնք իրականացվում են գործունեության տարրեր տիպերի կազմակերպման միջոցով՝ ուսումնական, ազատ ժամանցի կազմակերպման, մեծերի և հասակակիցների, ինչպես նաև ինքն իր հետ հաղորդակցման միջոցով և այլն:

Որպես երեխայի կենսագործունեության հիմնական բնագավառներ՝ մենք պայմանականորեն առանձնացնում ենք.

«Ուսուցում» – ընդունակությունների զարգացում գործունեության տարրեր տեսակների միջոցով:

«Առողջություն» – ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանում և ամրապնդում:

«Դաստիարակություն» – շրջապատող աշխարհի հետ հարաբերությունների հաստատման կարողություն:

«Ազատ ժամանց» – ընդունակությունների զարգացում դասերից դուրս, լրացուցիչ կրթության բնագավառում:

«Ապրելակերպ» – երեխայի անձի անհատական որակների, նրա ինքնատիպության զարգացում:

Այս բնագավառներն են կազմում դաստիեկի գործունեության բովանդակությունը՝ կողմնորոշված մարդասիրական կրթության վրա:

Դպրոցի կանոնադրությունը դաստիեկի աշխատանքը ծևակերպում է 7 հանձնադրականներով, որոնք հեշտությամբ ներառվում են մեր կողմից վերը նշված բովանդակային բաղադրիչներում:

Առաջին նպատակային ծրագիրը, որը պարտավոր է դաստիեկը յուրացնել և իրագործել դպրոցում, «Առողջություն» ծրագիրն է: «Առողջություն»-ը առողջարարական միջոցառումների կազմակերպումն է (արշավներ, բացօթյա շարժուական խաղեր, խաղեր դասամիջոցների ընթացքն և այլն), մասնակցությունը սպորտային միջոցառումներին (համադպրոցական մրցուներ տարրեր սպորտաձևերից), մանկավարժների («Առողջ ապրելակերպի», կենսաբանության և այլ) և մասնագետների (բժիշկներ, հոգեբաններ, մերսողներ և այլն) ուժերի կողրդինացում՝ ֆիզիկական և հոգեկան առողջության զարգացման նպատակով (խորհրդատվություններ, թթեյնինգներ, դպրոցականների հիվանդությունների կանխարգելում, զրույցներ առողջ ապրելակերպի մասին):

Ծրագիրը պետք է իրականացնել դաստիեկի՝ այս բնագավառում ինքնազարգացման միջոցով՝ թաղանասային մանկաբույժի, դպրոցական բուժաշխատողի հետ միասին, ով կարող է դիսպաստիզացման տվյալների հիման վրա յուրաքանչյուր աշակերտին տալ սնվելու, ֆիզիկական վարժությունների, կոփկելու, շնչառական վարժու-

թյունների և այլնի անհատական պլան: Ծնողի հետ միասին մանկավարժը պետք է մշակի տվյալ երեխայի համար կյանքի և տնային աշխատանքի ռեժիմ, որը համապատասխանում է վերջինիս անհատական ունակություններին, առօղջական վիճակին, անհրաժեշտ քնի և հանգստի չափին:

Քաջորդ ծրագիրը, որում երեխային անհրաժեշտ է օգնություն, «Հաղորդակցություն» է: Դաստեկ-մանկավարժի կարևոր գործառույթներից է՝ մտնել երեխաների հաղորդակցման միջավայր, հասկանալ նրանցից յուրաքանչյուրին, սովորել շտկել երեխաների միջանձնային հարաբերությունները: Խոսքը այնպիսի արժեքներին մասին է, ինչպիսիք են՝ մարդկային կյանքը, մայրական սերը, հայրենի հողը, տունը, ընտանիքը, սեփական անհատականությունը, ինքնատիպությունը ու մենալու մարդու իրավունքը, մեզ շրջապատող աշխարհը, նյութական մշակույթը, տարբեր ազգերի և ժողովուրդների մշակութային ժառանգությունը:

Դաստեկների աշխատանքի վերլուծությունը ցույց է տալիս, թե երբեմն կոլեկտիվում ինչքան դժվար է լինում որոշ երեխաների համար. ոմանց չեն նկատում, ուղիղներին ծաղրում են, երրորդների վրա ծիծաղում են, չորրորդներին ընդհանուր խաղերին մասնակից չեն դարձնում և այլն: Մտնել երեխաների հաղորդակցման բնագավառ, հասկանալ յուրաքանչյուրին, օգնել շտկելու նրանց հարաբերությունները՝ յուրաքանչյուր դաստիարակի կարևոր գործառույթն է:

«Հաղորդակցություն» ծրագիրը դպրոցի պրակտիկայում օգտագործվում է համատեղ գործունեության կազմակերպմանը, ուղևորությունների, կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքների, առանձին անկենք գրույցների միջոցով, կոնֆլիկտային իրավիճակների հաղորդականությունների վերաբերյալ կանոնների և մշակույթի ուսուցմանը (երիկետի գործնական աշխատանքներ, հաղորդակցման թրենինգներ) և այլ: Դասարանի դեկանալոր պետք է պաշտպանի ոչ թե երեխային, այլ Մարդուն, յուրաքանչյուրին մոտենա «լավատեսության իհպոթեզով»:

«Ուսուցում» բնագավառում աշակերտին օգնելը ենթադրում է բացատրել դասավանդող բոլոր ուսուցիչներին դարպանականի անհատական առանձնահատությունները, ձգտել հասնել այն բանին, որ յուրաքանչյուր ուսուցիչ այնպես հասկանա և այնպես ապրում է յուրաքանչյուր աշակերտին, ինչպես դաստեկը: Այլ առարկաների դասաժամերին ներկա գտնվելով՝ վերջինս կարող է իրականացնել աշակերտների աշխատանքի ուսումնասիրությունը: Երեխաներին հետազոտելը, «փոքր մանկստորիրողի» հետ համատեղ աշխատանքը (փոխտնօրենի և մյուս մասնագետների հետ շփումը), այլ ուսուցիչների հետ համատեղ

արտադրանական միջոցառումներ կազմակերպելը, ընտանիքի հետ համատեղ ռազմավարության մշակումը, դասարանի ուսումնական աշխատանքը (ճանաչողական էքսուսիաներ, ընարկումներ, հետաքրքիր մարդկանց հետ հանդիպումներ), ճանաչողական խաղեր կազմակերպելը. սրանք են վերը նշված ուսումնասիրության համար անհրաժեշտ աշխատանքի ձևերը:

Անձի, հատկապես դեռահասի, ծևավորման վրա մեծ ազդեցություն ունի ազատ ժամանցի կազմակերպումը: «Ազատ ժամանց» հասկացությունը մեծ տարածք է ընդգրկում: Գիտնականներն այս գոտին հաճախ անվանում են ռեկրեատիվ, այսինքն՝ հանգստի գոտի, որը վերականգնում է ֆիզիկական և հոգևոր ուժերը: Նրա մեկ այլ գործառույթը ընդունակությունների և հետաքրքրությունների զարգացումն է, երրորդը՝ որոշակի կրթական նպատակների համար նշանակալի մարդկանց հետ ազատ շփումը:

Ազատ ժամանցի արժեքը դեռահասի համար պես է բարձր է ուսումնական գործունեությունից: Այս եզրակացության հանգել եմ՝ ելեկելով ինչպես մանկավարժական, դաստեկական և մանկական առողջարարական ճամբարներում ունեցած աշխատանքի սեփական փորձից, այնպես էլ հոգեբանների աշխատանքների ուսումնասիրությունից, ովքեր ուսումնասիրել են դեռահասության տարիքի երեխաների՝ դպրոց հաճախելու իրական դրդապատճառները: «Ազատ ժամանց» ծրագրի հիմնական ուղղություններն են. լրացուցիչ կրթության խմբակների ընտրության մեջ երեխային օգնության ցուցաբերում, սովորողների ճանաչողական և մշակութային մտահորիզոնի զարգացում (էքսուսիաներ, հանգստի երեկոներ, մրցույթներ, թատրոն և այլն), մասնակցություն հասարակական նշանակության գործունեության մեջ (էկոլոգիական էքսպեդիցիաներ, աշխատանք դպրոցամերձ հողատարածքներում, Մեծ հայրենականում տարած հաղթանակին նվիրված հուշարձանի (դպրոցը գտնվում է հուշարձանից մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա) մարդուն և պահպանման աշխատանքներ և այլն), ընտանեկան կապերի անրապնդում:

Վերջապես, անհրաժեշտ է դիտարկել մի բնագավառ ևս, որը դպրոցականի զարգացման վրա ունի արժատական ազդեցություն՝ «կենսակերպություն»: Բնականաբար, ընտանիքի դիրքը, կենցաղային մթնոլորտը, կյանքի կազմակերպումը ուղակիորեն ազդում են և առողջության վրա:

Դպրոցականի կենսակերպը չի սահմանափակվում ընտանեկան պայմաններով: Դասարանում պարբերաբար ծագում են նորածն սանր

վածքի, հագուստի և կոշիկի ոճի, զարդարանքների «համաճարակներ» (դեռ չենք խոսում երաժշտական, համակարգչային հրապուրանքների մասին): Դասղեկին ամերաժեշտ է ծանոթանալ ընտանիքների հետ, բարեկրորդեն շտկել այն երևույթները, որոնք հաճախ հաջող են բացասական հետևանքների: Դաճախ ամերաժեշտ է լինում բոլորին կազմակերպել՝ նրանցից մեկին այս կամ այն օգնությունը ցուցաբերելու համար: «Կենսակերպ» ծրագիրը անձի անհատական որակների զարգացումն է, նրա ինքնատիպության, երեխայի անհատական առանձնահատկությունների ախտորոշման, երաժշտության, հագուստի ոճի մեջ նրա նախասիրությունների որոշման, նրան օգնելու նպատակով ներքին աշխարհի մեջ թափանցելու, երեխաների հետ միասին դասարանում հաճելի, հարմարավետ պայմաններ ստեղծելու փորձը, ինքնասպասարկման և երթապահության կազմակերպումը, երեխաների հետ առողջ ապրելակերպի մասին, ինչպես նաև իրական և թվայալ արժեքների մասին գորույցները:

«Դասարանի հաջող կառավարումը ներառում է ոչ միայն արդյունավետ արձագանք հիմնախնդիրներ ծագելիս, այլև դրանց հաճախակի ծագման կանխումը: Դասարանի կառավարման վերաբերյալ ամենից արդյունավետ որոշումները հիմնված են այն նպատակների և արդյունքների մասին հստակ գաղափարի վրա, որոնց ցանկանում է հասնել ուսուցիչը»<sup>5</sup>:

Դասղեկի գործունեությունն սկսվում է սովորողների և աշակերտական կոլեկտիվի ախտորոշումից:

- սովորողների ֆիզիկական և հոգեկան առողջության վիճակը (բժշկական քարտեր, գրույցներ բժշկի, դպրոցի հոգեբանի, ծնողների հետ՝ ժառանգական հիվանդությունների և վաղ հասակում ունեցած առողջական պրոբլեմների մասին),

- դասարանական կոլեկտիվի վիճակը (փոխհարաբերությունների, բարոյական արժեքների համակարգի առանձնահատկությունները),

- հաղորդակցման առանձնահատկությունների վիճակը (սոցիոմետրիա),

- երեխաների անհատական առանձնահատկությունների վիճակը (խառնվածքի տիպը, բնակությունը, աշխարհի հանդեպ ունեցած վերաբերմունքը, ընտանիքում փոխհարաբերությունների բնույթը) որոշող թեստեր,

- ծանազողական հետաքրքրությունների, ուսումնական հնարավորությունների, դեռահասի մտածողության առանձնահատկությունների, հիշողության, ուշադրության վիճակը (այդ նպատակով հոգեբանի ընդգրկումը),

- ազատ ժամանցի բնագավառում երեխայի հետաքրքրությունների և պահանջմունքների վի-

ճակը (ինչպիսի՞ խմբակներ է հաճախում, համապատասխում են արդյոք այդ խմբակները երեխայի հոգեֆիզիկական, մտավոր ընդունակություններին, նրանց նախասիրությունները, ինչպիսի՞ օգնություն է նրանց անհրաժեշտ):

Ինչպես նշեցինք վերևում, իր աշխատանքը դասղեկն իրականացնում է երեխաների, ծնողների և այդ դասարանում աշխատող ուսուցիչների հետ համատեղ: Մանկավարժի գործունեությունն ուղղված է ամենից առաջ երեխայի հետ անհատական աշխատանքին: Այս խնդիրների լուծումը ենթադրում է ընդհանուր և մանկավարժական աշխատանքի բարձր կուտուրա, մարդասիրություն, մասնագիտական հմտություն, լիազորությունների իրավասություն, բազմակարծություն, դասղեկների մանկավարժական պյուֆեսիոնալիզմ՝ միտքաված դպրոցականի անձի ընդհանուր մշակույթի գարգացմանը:

Ժամանակակից դպրոցականի դաստիարակությամբ կարող է գրաղվել այն դասղեկը, ով ստեղծագործաբար զարգացնում է մանկավարժական մշակույթը, ունի երեխային օգնելու և աջակցելու դիրքորոշումը:

Պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ նախքան դասղեկը կական նշված ուղղություններով իր աշխատանքը, նա ինքը պետք է տիրապետի իր մշակութային առողջացման հմտություններին, կյանքի հանդեպ ունենալ լավատեսական հայացք, տիրապետի կուեկտիվ ստեղծագործական աշխատանք կազմակերպելու հմտությամբ, կրթության մեջ երեխային աջակցելու մերոդիկային:

Սարդարական մանկավարժության գաղափարները արտահայտված են Օ. Ս. Գազմանի՝ «Կրթության մեջ երեխային մանկավարժական աջակցություն ցույց տալու կոնցեպցիան» գրքում: Սակայն դասղեկը միշտ չէ, որ միայնակ կարող է իրականացնել այդ աշխատանքներն ամրող ծավալով: Այս կարգի աշխատանքը պահանջում է մասնագետ աշխատական, ով ազատված է ուսումնական ծանրաբեռնվածությունից և մասնագիտորեն է իրականացնում իրեն վստահված դասարանում երեխայի աճի և դաստիարակության գործառույթը (դպրոցի սոցիալական մանկավարժություն):

Առաջացած հակասությունը կարելի է փոխառութել դասղեկի մանկավարժական մշակույթի բարձրացմանը, ինչը կարող է նրան հնարավորություն տալ առավել ճշգրիտ իրականացնելու դասարանական կուեկտիվի, սովորողների պրոբլեմների ախտորոշման աշխատանքները, որոշելու իր և ընդգրկված մասնագետների հնարավորությունների չափերը, հմտորեն օգտագործելու աշակերտական հնքնավարության, ծնողական

հանրույթի ընձեռած հնարավորությունները:

Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս մեզ առանձնացնելու դասղեկի մանկավարժական մշակույթի զարգացման խնդիրները.

1. Դասղեկի կողմից կրթության ժամանակակից մշակութային պարադիզմային համապատասխան՝ տեսական դրույթների և մարդասիրական դիրքորոշման իմաստավորումը,

2. Աշակերտի անհատականության զարգացման ու ինքնազարգացման ուղղված՝ մանկավարժի և երեխայի փոխհարաբերությունների դաստիարակչական մեթոդիկային տիրապետումը,

3. Դասղեկի աշխատանքի համար պայմանների ստեղծումը, նրա մանկավարժական փորձի կատարելագործումը:

Դաստիարակության ժամանակակից մոտեցման հիմքում ընկած է մանկավարժի և երեխայի՝ անձնային-կողմնորոշիչ փոխհարաբերությունը, որը հիմնված է համաստեղծագործության և համագործակցության վրա: Հասկապես փոխհամագործակցության այդպիսի մեխանիզմի վրա է կառուցված դասղեկի գործունեության առաջարկվող բովանդակությունը, որը պետք է իրականացվի ինչպես սոցիալական պատրաստվածության համակարգով (դասախոսություններ, խճային աշխատանք, թրենինգներ, վարժընթացներ), այնպես էլ մանկավարժ-փորձարարի գործնական աշխատանքի վրա:

<sup>1</sup> Ասատրյան Լ. Թ., Կարապետյան Ա. Ս., Ասատրյան Ս. Ա., Յոլավյան Թ. Ֆ., Կրթության համակարգի կառավարման հիմունքներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ, մաս 1, Երևան, 2003, էջ 223:

<sup>2</sup> Ռյուկովա հ. Ե., Նորու Յունական համապատասխան պարագաների մասին, 2000, ս. 128:

<sup>3</sup> Քարամանկի Յու. Կ., Մանկավարժություն, մաս 2, Երևան, «Լույս», 1982, էջ 281:

<sup>4</sup> ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին»:

<sup>5</sup> Խրիմյան Ա., Յովսեփյան Ա., Սելյոնյան Մ., Էլոյան Ն., Շահրոբի Ֆ., Դպրոցի դեկանավորում և կառավարում: Զեռնարկ դպրոցի տնօրենների համար: Այօթք, Երևան, 2004, 294 էջ, էջ 208:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

<sup>1</sup> Ասատրյան Լ. Թ., Կարապետյան Ա. Ս., Ասատրյան Ս. Ա., Յոլավյան Թ. Ֆ., Կրթության համակարգի կառավարման հիմունքներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ, մաս 1, Երևան, 2003, 223 էջ:

<sup>2</sup> Քարամանկի Յու. Կ., Մանկավարժություն, մաս 2, Երևան, «Լույս», 1982, 281 էջ:

<sup>3</sup> Խրիմյան Ա., Յովսեփյան Ա., Սելյոնյան Մ., Էլոյան Ն., Շահրոբի Ֆ., Դպրոցի դեկանավորում և կառավարում: Զեռնարկ դպրոցի տնօրենների համար: Այօթք, Երևան, 2004, 208 էջ:

<sup>4</sup> Կանոնադրություն «ՀՀ Լոռու մարզի վանաձորի Գևորգ Չառլի անվան N24 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի:

<sup>5</sup> ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին»:

<sup>6</sup> Ռյուկովա հ. Ե., Նորու Յունական համապատասխան պարագաների մասին, 2000, ս. 128:

## THE ROLE AND THE PLACE OF THE FORM MASTER IN THE PROCESS OF TEACHING AND EDUCATIONAL LEADING

**HASMICK HOVSEPYAN**

Competitor of the "Mkhitar Gosh" Armenian-Russian International University

#### Summary

The role of the leader is mentioned in the article as an interschooling governing subsystem. The educational principles are mentioned, form-masters activities are desided and according to that principles the directions of the form-masters basic work. The main fields are mentioned "Education", "Health", "Communication", "Leisure", "Lifestile".

The arrangement to fulfill the purposeful plans, participants are mentioned above and activities in the process of fulfilling form-master's plans are stressed. To solve the issues mentioned above the form-master's work culture and its improvement are important.

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՈՐԵՆԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՈՃԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ\*

### Յասմիկ ՀՈՎՍԵՓՅԱՆ

**Վանաձորի Գ. Չառլի անվան N24 միջն դպրոցի տնօրեն  
«Միսիսար Գոյ» հայ-ռուսական միջազգային համայստանի հայցորդ**

Աստենախոսության թեման՝ Յանրակրթական դպրոցում ուսումնադասադրամական գործընթացի կառավարման կատարելագործման մանկավարժական պայմանները  
Գիտական դեկանար՝ Մնացական ՄԱՍՈՒԿՅԱԼ՝ նաև. գիտությունների դրկտոր, պրոֆեսոր

**Յ**անրակրթական դպրոցի տնօրենի՝ որպես ուսումնասիրվող մասնագիտության առանձնահատկությունների վերաբերյալ հոգեբանամանկավարժական գրականության վերլուծությունը թույլ է տալիս հայտնաբերել հետևյալ հակասությունները.

- Բավարար ուշադրություն չի դարձվում մասնագիտության տեխնոլոգիական կողմին. ինչպես են գործում կառավարչական կարողությունները, ի՞նչ կառուցվածքը և բովանդակությունը ունեն:

- Դպրոցի ավանդական կառավարումը կապված է մեկ անձի գերակայության հետ, ինչը միշտ չէ, որ կարող է նպաստել գործունեության հաջողությանը:

- Քիչ ուշադրություն է հատկացվում հայորդականական կարողությունների և դեկավարման ոճի փոխկապվածությանը:

Այս հակասությունների հայտնաբերման հետ կապված՝ առաջ է քաշվել վարկած այն մասին, որ հանրակրթական դպրոցների տնօրենների դեկավարման ոճը ազդում է կառավարչական հմտությունների վրա:

Վարկածի ստուգման նպատակով դրվել են հետևյալ խնդիրները.

- Որոշել կառավարչական հմտությունների այն համալիրը, որը բացահայտում է հանրակրթական դպրոցի տնօրենի աշխատանքի գործառնական կազմը:

- Փորձարարական ճանապարհով ստուգել հանրակրթական դպրոցների տնօրենների կառավարչական-մասնագիտական կարողությունների ձևավորման աստիճանը:

- Ուսումնասիրել տարբեր ոճերի տնօրենների հաղորդակցական կարողությունների բովանդա-

կությունն ու կառուցվածքը:

Սույն հոդվածի շրջանակներում բերվում է Վանաձոր քաղաքի հատուկ և հանրակրթական դպրոցներում (թվով 25) կատարված փորձարարական հետազոտության արդյունքները: Որպես իրավասու դատավորներ՝ հանդես են եկել նշված դպրոցների փոխտնօրենները, առարկայական մասնախմբի նախագահները: Կառավարչական կարողությունների գնահատման սանդղակները կազմվել են Ն. Վ. Կուզմինայի սանդղակի հիման վրա<sup>1</sup>: Օգտագործվել են Ե. Պ. Տոնկոնոգայի և Վ. Յու. Կրիչևսկու<sup>2</sup>, ինչպես նաև Տ. Ի. Շամովայի և Կ. Ն. Ախլեստինի կողմից մշակված պրոֆեսիոնալ մաները<sup>3</sup>: Յուրաքանչյուր ցուցանիշը գնահատվել է 5-բարյան համակարգով, որտեղ՝ 5-ը՝ ցուցանիշի վառ արտահայտվածությունն է, 4-ը՝ բավարար արտահայտվածությունը, 3-ը՝ միջին նակարդակը, 2-ը՝ ցածրը, 1-ը՝ չի տիրապետում տվյալ հատկանիշին:

Ուսումնասիրման ենթարկվածների բնութագիրը բաշխված է ըստ տարիքի, աշխատանքային փորձառության, սերի, ինչպես նաև ըստ դպրոցում տնօրենի գրաված դիրքի (առաջնահերթ մեծեցեր, առաջնահերթ մանկավարժ, առաջնահերթ տնտեսվար): Սոցիոլոգիական բնույթի տվյալները (ըստ Շակուրովի՝ ոճի օրիենտիվ գործուները)<sup>4</sup> ցույց են տալիս, որ Վանաձոր քաղաքում տնօրենական համակարգը բավականին համապատ է (տե՛ս այսուսակ 1): Մյուս կողմից, երիտասարդների տարիքային ցուցանիշը ցույց է տալիս, որ երիտասարդները ևս բավականին վստահություն են վայելում: Ինչպես ցույց է տալիս տարբերակային վերլուծությունը, ոչ տարիքը, ոչ ստաժը, ոչ սերը, ոչ դիրքը չեն ազդում դպրոցի տնօրենի գործու-

\* Ներկայացվել է 12.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

Ներկայան մակարդակի վրա: Շատերի մոտ աշխատանքային ստաժը թիւ չէ, ուսումնասիրված տնօրենների 45% ունեն մինչև 20 տարվա աշխատանքային ստաժ (տես՝ այլուսակ 2): Այս հանգամանքը թույլ է տալիս հանրակրթական դպրոցը համարել հուսալի, կայուն և պահպանողական: Կայունությունն ապահովվում է դեկավարության կառավարչական ցիկլի կողմից, որը կրկնվում է ամեն տարի, բայց նոր՝ սերունդների փոխարինման հիմքով: Բաշխումն ըստ սերի անսպասելի չէ՝ մանկավարժական համակարգերը բավական հաջող դեկավարում են նաև կանայք (տես՝ այլուսակ 3): Զբաղեցրած դիրքը ցույց է տալիս, որ տնօրենների մեծամասնությունը (55%) մենեջերներ են: Դա որակավորման բարձրացման դասընթացների արժանիքն է, որոնցում տնօրեննը կատարելագործվում է որպես դեկավար:

Վերլուծությունը ցույց է տվել, որ մեծամասնությունը կազմում են ավտորիտար (ինքնիշխան) (32%), ժողովրդավարական (23%) և լիբերալ (ազատ) (ոճի (31%) տնօրենները: Դեկավարման մանիպուլատիվ և անտարեր ոճի տնօրենները զգալիորեն թիւ են, բայց նրանք կան (6%), (8%): Գործունեության միջին և բարձր մակարդակի տնօրենները մեծամասնություն են: Բանի որ կրթական համակարգերում ուսուցիչներն ու աշակերտները ևս հանդիսանում են կառավարման սուբյեկտ, գործունեության միջին և ցածր մակարդակի տնօրենների դեպքում կառավարման ժանրությունը ընկնում է ուսուցիչների ուսերին, և այսպիսով՝ մանկավարժական համակարգը չի ոչնչանում:

Գնահատման սամողակները ներկայացնում են դպրոցների տնօրենների ինացական, նախագծելու, կառուցվածքային, կազմակերպչական և հաղորդակցական կառավարչական կարողությունները:

**Դեկավարման մանիպուլատիվ<sup>5</sup>** ոճի տնօրեննի համար բնութագրական է կառավարչական կարողությունների անվանացուցակի նեղացումը: Նա ունակ է դիտակորյալ փոփոխելու գործունեության իրական նպատակները և դրա հետ կապված՝ փոխակերպելու կառավարչական կարողությունները: Կառավարչական բոլոր կարողություն-


ներն արտահայտված են հետևյալ դիապազոնում՝ 3, 5-2.7 միավոր:

Կազմակերպչական և նախագծելու կարողություններն ունեն զարգացման միջին մակարդակ (միջին միավոր՝ 3,4 - 3,5): Սա էլ հանդիսանում է տնօրեն-մանիպուլատորի գործունեության ուժեղ կողմը: Այս երևույթը բացատրվում է տնօրենի ազդեցության 2 մակարդակների առկայությամբ՝ տեսանելի (այն ամենը, ինչը բողարկում է իրական մտադրությունները) և զարդնի (ինչը կազմում է դեկավարի իրական նպատակները): Այսպիսի տնօրեններին ոչ միշտ են հասկանում ուսուցիչները, հատկապես՝ որոշումների կայացման հարցում, տնօրենի որոշումները անկանխատեսելի են, նպատակները՝ անհասկանալի, մոտիվները՝ չարդարացված: Այսպիսի տնօրենները առանձնանում են գործողությունների գաղտնի պլանի կատարման ուղղաձայնաթարմաբ:

Կառավարչական ցիկլը պլանավորված է (միջին միավոր՝ 3,5), բայց նպատակներն ու խնդիրները թույլ են կառուցված, որոշակի չեն, չեն կանխատեսում կամ նախատեսում արդյունքը: Առկա է նպատակ-արդյունքների փոխարինումը նպատակ-միջոցներով, որոնց դեպքում կրթադաստի-


Աղյուսակ 2

■ մինչև 10 տարի ■ 10-20 տարի ■ 20-30 տարի




Աղյուսակ 3

■ կյանք ■ տղամասպատ



Աղյուսակ 1



արակշական գործնքացի յուրաքանչյուր նասնակից դառնում է մանկավարժական հաճակարգի գործունեության պտուտակ: Ուսուցիչների ներուժը սովորաբար չի օգտագործվում, իսկ լիազորությունների մասին խոսք լինել չի կարող:

Ինացական կարողությունները թույլ են զարգացած (միջին միավոր՝ 3,3): Սեփական գործունեության թերությունների մասին տնօրեն-մանիպուլատորը չի մտածում և չի փորձում հաղթահարել դրանք: Իշխանությունը կենտրոնացված է մեկի ձեռքում, իսկ տեղակալները սովորաբար հեռու են կառավարչական գործնքացից: Յսկողությունն իրականացվում է մշտակես, հաճախ՝ համընդիմանուր բնույթի, բայց հսկողության իրական նպատակներն անհայտ են, ոչ թափանցիկ:

Կառուցողական կարողությունները նույնպես թույլ են զարգացած (միջին միավոր՝ 3,1): Տնօրենը չի հոգում այն մասին, որ պայմաններ ստեղծի կրթադաստիհարակշական գործնքացի հաջող իրականացման համար: Խորհրդակցական կարողությունները (միջին միավոր՝ 2,8) նույնպես յուրօրինակ են. իրական մտադրությունները թողարկելու համար գործադրվում են տնօրենի բոլոր ջանքերը, այդ նպատակված օգտագործվում են ներշնչական բնույթի տարբեր միջոցները: Դրա հետևանքով կոլեկտիվում ստեղծվում է զգուշավորության, տագնապի և անհանգստության վիճակ, ինչը զգալիորեն խանգարում է մանկավարժի ամենօրյա ստեղծագործական գործունեությանը: Սովորաբար մանկավարժների կոլեկտիվը մասնատված է «սիրելիների» և «մյուսների»: Սա նույնական նվազեցնում է տնօրեն-մանհպույտությունը գործունեության ընդհանուր մակարդակը. այն մնում է միջին:

**Պեկավարման ժողովրդավարական** ոճի տնօրենի մոտ վառ են արտահայտված բոլոր կառավարչական կարողությունները (միջին միավոր՝ 4,2):

Ինացական ներուժը (միջին միավոր՝ 4,1) ներառում է բազմակողմանի գիտելիքներ, ինչպես նաև անդադար ինքնակրթության պատրաստակամություն: Նորարարական գործունեությունը տնօրենն ընդունում է որպես օբյեկտիվ իրականություն, ստացված հանգամանքներին համապատասխան՝ դրսնորում է սեփական գործունեությունը:

Ժողովրդավար տնօրենի գործունեության ուժեղ կողմը դպրոցի կառավարման ռացիոնալ և բարենպաստ կառուցվածք ստեղծելու և, ամենակարևոր, համախոհների թիմ ստեղծելու և թիմում աշխատելու կարողությունն է: Կառավարչական թիմը բնութագրվում է գործողությունների համաձայնեցվածությամբ, հստակ պլանավորվում է արդյունքը: Ժողովրդավար տնօրենին հատկանշական է կառավարվող համակարգի յու-

րաքանչյուր սուբյեկտի պատասխանատվության և իրավունքների հստակ որոշումը, լիազորությունների և պարտականությունների արդար և ռացիոնալ բաշխումը: Ենթականների և սեփական գործունեությունը վերլուծվում է փոխկապակցվածության մեջ, վերլուծվում են նաև սեփական անձի և գործունեության թերություններն ու արժանիքները, որն էլ արդյունավետության հիմքն է: Տնօրենը կարողանում է ամրող մանկավարժական կոլեկտիվի համար զնել իրական հեռանկարյան նպատակներ՝ հաշվի առնելով բոլոր տարիքի մանկավարժների մասնագիտական աճի և զարգացման խնդիրները:

Կառուցողական կարողությունները բավականաչափ զարգացած են (միջին միավոր՝ 4,0): Տնօրենը գործադրում է բոլոր ջանքերը, որպեսզի բարենպաստ պայմաններ ստեղծի կրթադաստիհարակշական գործնքացի հաջող իրականացման համար: Գործունեության մեջ հաջողությանը նպաստում է ներդրողական հսկողության համակարգը, ստուգող-գնահատող գործնքացների կատարելագործումը: Ամենակարևորը՝ հսկողությունը անց է կացվում կրթության որակը դրականորեն կամ էական փոխելու նպատակով: Յսկողությունը հիմնված է վստահության և ինքնահսկողության վրա: Ժողովրդավար տնօրենը պայմաններ է ստեղծում նախաձեռնության դրսնորման, ստեղծագործական մտքի իրականացման համար, հմտորեն փաստարկում է ենթականների աշխատանքը, խթանում է ուսուցիչների ոչ միայն մանկավարժական, այլև կազմակերպչական ունակությունների զարգացումը, խրախուսում է ինքնուրույնությունն ու հաջողությունը:

Կազմակերպչական (միջին միավոր՝ 4,3) և հաղորդակցական (միջին միավոր՝ 4,3) կարողությունները զարգացած են հավասարաչափ լավ: Տնօրենի հիմնական խնդիրն է մեծերի և երեխաների համագործակցության կազմակերպումն ու նրանց համատեղ գործունեության կարգավորումը: Գործունեության մեջ հաջողությանը նպաստում է ինքնակազմակերպման և ինքնակարգավորման բարձր մակարդակը: Ժողովրդավար տնօրենը առանձնանում է ճիշտ պահին անհրաժեշտն ու կարևոր որոշելու կարողությամբ:

Կազմակերպական կառուցվածքային շփումը՝ կանոնավոր շփվում է ենթականների հետ, տեղեկացնում է գործերի, հաղթահարելի խնդիրների մասին, խորհրդակցում ուսուցիչների հետ: Այսպիսի դեկավարի հետ հետաքրքիր է աշխատել: Մանկավարժներն իրենց պաշտպանված են զգում, քանի որ պահովված է իրենց աշխատանքի արդար գնահատումը:

Կարողանում է «վարակել» գործընկերներին նոր մտքերով, գտնել և համախմբել իր շուրջը համախոհներին, ընդհանրացնել մարդկանց էներգե-

Մեկ ռեսուրսներն ու ուղղողել դեպի կրթադաստիարակչական գործունեության բարելավում, խստապահանջությունը համադրում է հարգանքի հետ:

Ղեկավարման այս ոճի իրականացումը հնարավոր է տնօրենի շատ լավ զարգացած կառավարչական կարողությունների դեպքում: Ժողովրդավար դեկավար պետք է հեղինակավոր լինի և ինչպես մասնագետն, և ինչպես դեկավար:

**Ղեկավարման լիբերալ** ոճի տնօրենների մոտ բոլոր կառավարչական կարողությունները լավ են զարգացած (4.1; 3.9; 4.2; 4.1; 4.1), լավ են զարգացած նաև ինացական կարողությունները: Լիբերալ տնօրենը հետաքրքրվում է ամեն ինչով, իհանում է մյուսների փորձով և պատրաստ է առանց իր դպրոցի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ այն ներդնել դպրոցի կյանք, ինչը ոչ միշտ է հաջող ստացվում: Այս ամենը երենման հանգեցնում է նրան, որ կայացրած որոշումների և միջոցառումների մեծամասնությունը առկան է և չի կապվում ընթացիկ տարվա համար որոշված խնդիրների և նպատակների հետ:

Վերլուծական գործունեությունը թույլ է արտահայտված: Հի երևում տնօրենի դիրքորոշումը, աշխատանքում բացակայում են նպատակառուղղվածությունն ու համակարգվածությունը: Արդյունքում շատ փաստ է հավաքվում, բայց դրանք չեն համակարգվում և, ամենակարևորը, բացակայում են հետևողությունները: Վերլուծությունն աշքի է ընկնում երկարաբանությամբ, վերածվում է փաստի արձանագրման, իշխեցնում է աշխատանքի մասին հասարակ, թույլ կառուցված գեկուցում:

Բազմաթիվ ստուգումները չեն հանգեցնում կրթության որակի լավացմանը, քանի որ դրանք հստակ չեն, փաստերն ու երևոյթները չափելի չեն, չի կանխատեսվում արդյունքը:

Նախագծան կարողությունները թույլ են զարգացած (միշտն միավոր՝ 3.9), պահանջեր շատ կամ, դրանցից շատերը կրկնվում են կամ համաձայնեցված չեն միմյանց հետ: Տնօրենի գործունեության մեջ բացակայում են տրամաբանությունը, հաջորդականությունը, որոշակիությունը, հավաքածությունը: Սակայն լավ են զարգացած կարուցվածքային կարողությունները (միշտն միավոր՝ 4.2), քանի որ դեկավարման լիբերալ ոճի տնօրենը մեծ ուշադրություն է դարձնում կրթադաստիարակչական գործընթացի կանոնավոր իրականացման համար պայմաններ ստեղծելուն, գիտի ուսուցիչների դժվարությունները, ձգտում է օգնել նրանց:

Պարտականությունների բաշխման մեջ սխալները (ոմանց չափից շատ է վստահում, մյուսներին չի նկատում) ստեղծում են այնպիսի տպավորություն, որ դպրոցում դեկավարություն չկա, նպատակների և խնդիրների իրականացման հա-

մար ոչ ոք պատասխանատու չէ: Մեկուսացվածությունը երբեմն հանգեցնում է այն քանին, որ միևնույն գործի համար պատասխանատու են միաժամանակ մի քանիսը, բայց ոչ մեկը լուրջ չի վերաբերում դրան:

Դպրոցի գործունեության կազմակերպումը նպատակառուղյամ է, բայց թույլ կառուցված: Որոշ կարևոր հարցեր լուծվում են առանց դեկավարի մասնակցության, նրա գործառույթները կատարում են մյուսները՝ ուսուցիչները, ծնողները: Դրամայել չի կարողանում: Թնադատությունը լուսում է, համաձայնում է, բայց միջոցներ չի ծեռնարկում: Տպավորությունը է ստեղծվում, որ դեկավարը վախենում է պատասխանատու լինել իր գործողությունների համար, ցանկանում է պակասեցնել իր պատասխանատվությունը: Այս պատճառով ենթականները ոչ միայն խորհուրդ, այլև երեմն ցուցումներ են տալիս դեկավարին:

Դադրողակցական կարողությունները (միշտն միավոր՝ 4.1) լիբերալ տնօրենի գործունեության մակարդակը չեն փոխում և չեն բարձրացնում, չնայած ցույց են տալիս, որ տնօրենը հոգ է տանում լավ փոխհարաբերությունների հաստատման համար, քանի է զնահատում դրանք: Զգուելով ստեղծել հարմարավետ միկրոկլիմա՝ նա փորձում է համագործակցություն հաստատել, բայց դժվարությամբ է որոշում իր տեղը կոլեկտիվում: Ուսուցիչներին հնարավորություն է ընձեռում աշխատել ինքնուրույն՝ այսպիսով պահպանելով նրանց ստեղծագործական ներուժը:

Լիբերալ տնօրենի հետ աշխատելը հեշտ չէ: Գործի է դրվում մակավարժների ամրոց կառավարչական ներուժը, նրանց համար ստեղծվում է լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Չափից ավելի ծանրաբեռնվածությունն էլ իր հերթին արտացոլվում է կրթադաստիարակչական գործընթացի վրա:

Այսպիսով, կառավարչական կարողությունները լավ են զարգացած, բայց գործունեության մեջ հաջողությանը խոչընդոտում են լիբերալ տնօրենի անձնային հատկությունները:

**Ղեկավարման անտարրել** ոճի տնօրենների մոտ բոլոր կառավարչական կարողությունները շատ թույլ են արտահայտված (2.8-3.5 միավոր): Տնօրենը ցանկացած պահի կարող է թողնել իր պաշտոնը, ինչը ցանկալի չէ կրթադաստիարակչական դիկի իրականացման համար:

Դպրոցում ամեն ինչ կազմակերպվում է ասես ինքն իրեն, խնդիրները լուծվում են, բայց առանց տնօրենի մասնակցության: Տնօրենը չի կարողանում հրամայել և չի էլ ձգտում դրան: Այսպիսի դեկավարի համար մեկ է, թե՝ ո՞վ և ինչպե՞ս է աշխատում: Գործին մոտենում է ծևական: Տեսնում է խնդիրները, բայց միջոցներ չի ծեռնարկում: Տպավորությունը է ստեղծվում, որ դեկավարը վախենում է

իր գործողությունների համար, փորձում է փոխանցել իր պատասխանատվությունը մյուսներին: Որևէ աշխատանքի կատարման համար ստիպված է լինում համոզել ենթականներին: Ամեն ինչի հանդեպ անտարեր է՝ ուսուցիչների, աշակերտների, և ամենակարևորը՝ կառավարման գործընթացի: Տնօրենը չի կարողանում գործել ինքնուրույն, այլ սպասում է մյուսների «հուշուններին»<sup>7</sup>:

Դսկողությունը դպրոցում պատահական երևույթ է: Ուսուցիչները դժվարությամբ են աշխատում, քանի որ մատնված են ինքնահոսի, ոչ որ նրանց մասին հոգ չի տանում և չի պաշտպանում: Տնօրենը չի կարողանում ազդել կարգուկանոնի վրա: Այսպիսի դպրոցի վարկանիշը կարող է են պահել միայն այնտեղ աշխատող հեղինակավոր ուսուցիչները:

Ուսումնասիրելով գործունեության մեջ կառավարչական կարողությունների առանձնահատկությունները՝ գալիս ենք այն եզրակացության, որ գնահատականների ցույն կա բոլոր կարողություններում, բացի հաղորդակցական:

Դեկավարման տարրեր ոճերի տնօրենների կառավարչական կարողությունների ընտրության և գնահատման բնուրագրերը ենթակլվել են տարրերակային վերլուծության: Ենպիրիկ տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ ստաժը, տարիքը, սեռը և դիրքորոշումը չեն ազդում կառավարչական կարողությունների ձևավորվածության վրա, դրանց միջև փոխկապակցվածություն չկա: Իսկ գործունեության ոճն ու մակարդակը փոխկապակցված են, քանի որ դրանք որոշում են դպրոցի տնօրենի գործունեության բովանդակության շրջանակները:

Քետևաբար, փորձառու դեկավարումը, կառավարման արվեստը կախված է բոլոր կառավար-

չական կարողությունների փոխկապակցվածության առկայությունից: Չենց սա է հանրակրթական դպրոցում կրթադաստիհարակչական գործընթացի դեկավարի մասնագիտության տեխնոլոգիան:

<sup>1</sup> Տոնկոնոգայ Ե. Պ., Կրիչևսկի Յ. Յ., Օբ одном из подходов к составлению профессиограммы педагогических кадров // Советская педагогика. М., 1987.

<sup>2</sup> Նոյն սեղում:

<sup>3</sup> Շամովա Տ. Ի., Ախլետին Կ. Հ., Профессиограмма директора общеобразовательной школы. М., 1988.

<sup>4</sup> Շակուր Բ. Խ., Социально-психологические проблемы руководства педагогическим коллективом. М., 1982.

<sup>5</sup> Պոմանիկ Մ. Մ., Լազարեվ Վ. Ս., Управление развитием школы. Пособие для руководителей общеобразовательных учреждений. М., 1995, с. 171.

<sup>6</sup> Ծմանցեր Ա. Պ., Կոզուլին Ա. Վ., Բերեզովին Հ. Ա., Организация и управление школой. Минск, 1996.

<sup>7</sup> Պորտնով Մ. Լ., Труд руководителя школы. М., 1984, с. 65.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պորտնով Մ. Լ., Труд руководителя школы. М., 1984.
2. Պոմանիկ Մ. Մ., Լազարեվ Վ. Ս., Управление развитием школы. Пособие для руководителей общеобразовательных учреждений. М., 1995.
3. Ծմանցեր Ա. Պ., Կոզուլին Ա. Վ., Բերեզովին Հ. Ա., Организация и управление школой. Минск, 1996.
4. Տոնկոնոգայ Ե. Պ. Կրիչևսկի Յ. Յ., Օб одном из подходов к составлению профессиограммы педагогических кадров // Советская педагогика. М., 1987.
5. Շակուր Բ. Խ., Социально-психологические проблемы руководства педагогическим коллективом. М., 1982.
6. Շամովա Տ. Ի., Ախլետին Կ. Հ., Профессиограмма директора общеобразовательной школы. М., 1988.

#### THE INFLUENCE OF THE LEADING STYLE IN COMPREHENSIVE SCHOOL ON HIS (HER) LEADING ABILITIES

HASMİK HOVSEPYAN

Competitor of the "Mkhitar Gosh" Armenian-Russian International University

#### Summary

Here is presented the influence of the headmaster's governing style, forming on her governing abilities

Analysis of the underlined features lead to the conclusion: neither the experience nor the age, neither the gender nor the position are connected with the degree of leading ability.

Any one can prevail it. It's evident that governing of comprehensive system may be relied on the youth and even, less experienced people. Yet, the women also, as the men can carry out the headmaster's complicated and comprehensive activity.

**ԸՆՏԱՆԻՔԻ ՄՆԴԱՄՆԵՐԻ ԱՌՈՂՋ, ԱԶՆԻՎ  
ՈՒ ԱՆԿԱՇԿԱՆԴ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ\***

**Լիանա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«Միջազգային համալսարանի հայցորդ»

Աստենախոսության թեման՝ Ընտանիքում դաստիարակության նպաստավոր պայմանների ստեղծման հիմնախնդիրները արդի փուլում

Գիտական դեկան՝ Մնացական ՄԱՆՈՒԿՅԱՆ՝ մանկ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ները ծնվում, ապրում, դաստիարակվում ու մեծանում են սոցիալական մի միջավայրում, որ կոչվում է ընտանիք:

Ընտանիքը մի համակարգ է, որն ունի որոշակի կառուցվածք: Այն որոշակի կայուն ու կանոնավորված հարաբերությունների ամբողջություն է, որոնք պայմանավորված են ընտանիքի անդամների կենսագործումներյան բնույթով: Ընդ որում, պետք է նշել, որ կենսագործումներյուն ունի ինչպես սոցիալական, այնպես էլ բնույթամբ պայմանավորված բնույթ: Ինչպես նշված է սոցիոլոգիական մի բարարանում [6], ընտանիքի կառուցվածքում ներգրավված են չորս տարր՝ հարաբերություններ ընտանիքի անդամների միջև, հարաբերություններ կազմ և ամուսնու հարազատների միջև, ամուսնացած զավակների միջև, ինքնոր պահանջմունքներն ու բարոյական հարաբերություններ:

Ժամանակակից համաշխարհային սոցիոլոգիական գրականության մեջ ընտանիքի անդամների միջև հարաբերությունների առումով ընդունված է առանձնացնել ընտանիքի հետևյալ տիպե-

ր՝ միջուկային, եգալիտար, ավանդական, բազմազավակ, անզավակ (կամ քիչ երեխա ունեցող), դեմոկրատական, ավտորիտար: Դրան համանան է հայրիշխանական, մայրիշխանական, եգալիտար ընտանիքների դասակարգումը: Եգալիտար տիպը այսօր գերիշխում է զարգացած երկրներում: Յոգնոր պահանջմունքների բավարարման առումով առանձնացվում են բաց (հարաբերման ու շփման կողմնորոշում ունեցող) և փակ (տնային հաճախտին հակված), այլ կերպ ասած՝ էքստրավերտ ու ինտրավերտ ընտանիքներ: Յու. Գասպարյանը [4] նշված բազմազան դասակարգումը համալրում է այնպիսի ընտանիքներով, ինչպիսիք են՝ միջազարդային, միջկրոնական, ազգամիջյան, նաև ընտանիքներ, որոնք բնորոշվում են ունեցվածքային ու նաև ագիտական որակներով:

Սոցիալ-հոգեբանական հետազոտություններ և կյանքը ցույց են տալիս, որ ծնողների ու երեխաների համատեղ գործումներյունը նպաստում է ներընտանեկան կապերի, ընդհանուր հետաքրքրությունների ձևավորմանն ու ամրապնդմանը, փոխմբնանը, փոխվստահությանը և փոխօգնությանը (Մեծ Մ., 1988; Կօվալես Ս. Վ., 1988), ինչ վերջիններիս բացակայությունը հաճախ բերում է աղետալի հետևանքների (Կալւինա Է. Վ., Յանես Հ. Վ., 2004; Իօնչուկ Հ. Մ., Պեչնիկովա Հ. Ա., 2003): Ներընտանեկան փոխգործակցության աղքատացումը պատճառ է դարձնում ջերմության, քնքշանքի, փոխադարձ հոգացողության մթնոլորտի քայլայմանը, մինչդեռ դրանք այն կանխորշող գործոններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի բնականոն զարգացման հա-

\* Ներկայացվել է 10.10.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

մար, և որոնց բացակայությունը կարող է հաճգեցնել օնթողոքիական ճգնաժամի՝ օտարացման ու սերունդների միջև կյանքի իմաստածեավորող կապերի ընդհատման:

Պետք է ասել, որ այսօր վերոնշյալ հարցերը դեռևս բավարար չափով հետազոտված չեն, մշակված չեն համապատասխան մեթոդական համակարգեր (Ճամագույշ Հ. Վ., 2003, Վալախոսուչ Հ. Ա., 2003), ինչը այս և նման կարգի հետազոտությունները հրատապ են դարձնում:

Ծնողների ու երեխանների միջև հարաբերությունները միշտ կախված են երեխ կոնկրետ պատմական դարաշրջանից: Սանկավարժ, հոգեբան և սոցիոլոգ Լ. Ղենոզը առանձնացնում է այդ հարաբերությունների պատմական ոճերը, որոնք կապված են երեխ տիպի ռեակցիայի հետ:

- պրոյեկտիվ ռեակցիա, երբ երեխան օգտագործվում է որպես անոր սեփական անգիտակցականի բովանդակությունը պրոյեկտելու համար,

- տարիբային ռեակցիա, երբ երեխան օգտագործվում է որպես մի մեծահասակին փոխարինող մարմին, որը ինչ-որ կարևորություն է ներկայացրել նրանց սեփական մանկության տարիներին,

- մրցակցության ռեակցիա, երբ ծնողը մտահոգվում է երեխայի պահանջնունքների համար և աշխատում է բավարարել դրանք [5]:

Ուսակցիայի այդ երեք ձևերն իրենցից ներկայացնում են մշակույթի երեք մակարդակ, որոնցից յուրաքանչյուրին համապատասխանում են մի որոշակի շարք սոցիալական իրադարձություններ: Ժամանակագրական առումով վերջին մշակույթը՝ ծնողների ապրումակցումը երեխաներին, ուղենցվում է «մանկություն», «երեխանների իրավունքներ» հասկացություններով:

Ղենոզը առանձնացրեց նաև դաստիարակության ոճեր:

- Զոհաբերական ոճ, երբ երեխանները հաճախ դառնում էին բռնության գոհ:

- Ազրեսիվ ոճ, երբ երեխան մնում է ծնողների համար ազրեսիայի օբյեկտ: Նրան հաճախ ձեռքից ձեռք են տանում՝ դայակ, կուսանոց, ուրիշ ընտանիք: Նա ճնշված է սեփական տանը:

- Անքիվալենտ (երկատված, հակասական), երբ երեխան մնում է ծնողների հոլովական կյանք, սակայն չի համարվում ընտանիքի լիիրավանդամ: Նրան չեն համարում ինքնուրույն անձնավորություն, գրկում են ինքնավար կյանքի իրավունքից, հոգեկան ու ֆիզիկական անձեռնմխելիությունից: Եթե դիմադրում է, նրան դաժանաբար ծեծի են ենթարկում:

- Սևեռում ոճ, բնութագրվում է երեխայի վարքի, ներաշխարիի ու կամքի նկատմամբ սահմանված հսկողությամբ, որը բերում է կոնֆլիկտի «հոր և որդու» միջև:

- Սոցիալականացնող ոճ, համարվում է, որ մանկությունը ինքնուրույն կյանքի նախապատրաստում է, «նախակյանք»: Երեխային պետք է դաստիարակել, սովորեցնել, մարզել: Նա հանդիսանում է դաստիարակության օբյեկտ:

- Ազակցման ոճ, համարվում է, որ երեխան ավելի լավ գիտի, թե ինչ է իրեն պետք կյանքի յուրաքանչյուր պահին, զարգացման ամեն փուլում: Մանկությունը կյանքի լիարժեք փուլ է իր ուրախություններով, դառնություններով ու խնդիրներով, այլ ոչ թե միայն «հրական» հասուն կյանքի պատրաստություն: Ծնողները ծգուում են նպաստել նրա անհատական զարգացմանը և այլն:

Իհարկե, Ղենոզի դաստիարակության ոճերի տիպաբանությունը իրեալական չէ: Քննադատության է արժանի այն հաճախանքը, որ այստեղ լիովին անտեսվում են ընտանիքի ու, ընդհանրապես, հասարակության գոյության սոցիալ-տնտեսական պայմանները:

Հարաբերությունների այդպիսի բազմամակարդակությունը ընտանիքում, շնորհիվ մեր բնազրների ու պահանջմունքների, ծգուումների ու վախերի, տանջանքների ու վշտերի, պահանջում է որոշակի կարգ ու պայմաններ: Վեբերը [3] նման պայմանների շարքին, որ անհրաժեշտ են ծնողների ու երեխանների միջև բարենպաստ հարաբերությունների համար, դասում է կապվածությունը, «տալու» և «վերցնելու» միջև հավասարակշռությունը և կարգ ու կանոնը:

Ահա դրանց համառոտ բնութագրումը.

- Կապվածությունը: Դա առաջին բազային պայմանն է ընտանիքում հարաբերությունների հաստատելու համար: Նոր ծնված երեխան, առանց որևէ սահմանափակումների ու պայմանների, մտնում է իր ընտանիքը՝ ընդունելով այն այնպես, ինչպես կա: Այդ կապվածությունն ընտանիքի, խմբի հետ երեխան ընկալում է ինչպես սեր և երջանկություն:

- «Տալու» և «վերցնելու» միջև հավասարակշռությունը: Ցանկացած կենդանի համակարգ (կենսաբանական, սոցիալական, հոգեբանական) հակադրությունների հավասարակշռություն է: «Տալու» և «ստանալու» միջև հավասարակշռության պահպանումը սոցիալական համակարգերի համար այդպիսի բնական օրենքների դրսւումներից մեկն է: Այդ հավասարակշռությունը երկրորդ բազային պայմանն է հարաբերությունների հաստատման համար:

- Այդ հավասարակշռության անհրաժեշտությունը հնարավորություն է ստեղծում մարդկանց միջև հարաբերությունների համար: Փոխհարաբերությունները պահպանվում են նրանով, որ մեկը տալիս է, մյուսը ստանում է, իսկ կոնկրետ սոցիալական համակարգի (այս դեպքում ընտանիքի) ընդ-

հանուր պահանջնունքը դրանք արդարացիորեն կարգավորում է: Չենց հասնում են հավասարակշռության, հարաբերությունները համակարգի անդամների միջև կարող են ավարտվել: Բայց ընտանեկան հարաբերություններում նման ավարտը շատ հազվադեպ երևույթ է: Ամենից հաճախ ընտանիքի անդամները, հարազատից ինչ-որ քան ստանալով, ծգուում են ավելին վերադարձնել: Եվ նորից ստեղծվում է անհավասարակշռություն, ու այդ ամենը նորից շարունակվում է [3]:

- **Կարգ ու կանոնը** հանդիսանում է երրորդ հիմնավոր պայմանը հարաբերությունների հաստատման համար: Մրանք այն կանոններն են, որոնք խնդիր հանատեղ կյանքը տանում են մեկ ուղղությամբ: Բոլոր երկարաժամկետ հարաբերություններում զարգանում են ընդհանուր նորմեր, ծեսեր, համոզմունքներ ու տարօներ, որոնք դառնում են պարտադիր բոլորի համար: Դա վերաբերում է ընտանիքն, երնսին, կրոնին և այլն: Այսպես հարաբերություններից ծավորվում են համակարգը իր կարգ ու կանոնով ու կառուցվածքով, պահանջութեները, բարոյական նորմերն ու ծեսերը:

Ներշնտանեկան հարաբերությունները հաջող են զարգանում միայն այն դեպքերում, եթե այս երեք պայմանները կատարվում են միաժամանակ:

**Հարաբերությունները ծնողների ու երեխաների միջև:**

- Առաջինը, ինչը ուշագրավ է այս հարաբերություններում, այն է, որ ծնողը տալիս է, իսկ երեխան՝ վերցնում: Ծնողները երեխային տալիս են կյանք, իսկ դրա հետ մեկտեղ՝ իրենք իրենց: Ծնողները տալիս են այն, ինչ իրենք ժամանակին վերցնել են իրենց ծնողներից, նաև այն ամենի մի մասը, որ ապագա հայրն ու մայրը վերցրել են միմյանցից: Բացի այդ՝ ծնողները նաև հոգ են տանում իրենց երեխաների համար: Այդ պատճառով ընտանիքը այն միակ խումբն է, որում ձևավորվող «տալ-վերցնել» անհավասարակշռությունը երեք չի կարող լուծարվել:

- Երկրորդ կարևոր հանգամանքը ծնողների ու երեխաների հարաբերություններում (հիշաբս նաև ողջ ընտանիքի անդամների միջև) այն է, որ ընտանիքի ամեն անդամ հարգում է ինչպես պարգև, այնպես էլ պարզեատրողին:

- Երրորդ եական հանգամանքը հանդիսանում է որոշակի աստիճանակարգը, որը ծնողներին երեխաների նկատմամբ արտօնություն է տալիս: Ավագ երեխաներն ունեն «տալու» արտօնություն, կրտսերները՝ «վերցնելու»: Նա, ով տալիս է, նախկինում վերցրել է, իսկ նա, ով վերցնում է, հետաքայում ստիպված կլինի տալ և այլն:

Ծնողների միջև ևս գոյություն ունի իրենց աս-

տիճանակարգը՝ պայմանավորված նրա գործառույթներով: Անող սերնդի դաստիարակությունը ենթարկվում է որոշակի կանոնների: Չափազանց կարևոր է, որ ծնողների արժեքային համակարգերը համընկնեն և միավորեն նրանց երկուսի (հոր ու մոր) ընտանիքների արժեքները: Այդ դեպքում դա կլինի մի վերադաս համակարգ, և նրանք երկուսն էլ ստիպված կլինեն որոշակի կերպով հրաժարվել իրենց սեփականից: Եթե ծնողները համաձայնության գան, նրանք ընդհանուր մոտեցում կգունեն իրենց երեխաների նկատմամբ: Երեխաներն էլ իրենց ավելի վստահ կզգան ու հաճույքով կհետևեն այդ արժեքային համակարգին:

Սամկական տարիքից տղան գտնվում է մոր աղջեցության ոլորտում, և կանացիությունը, կանացի ակունքները նա ինանում է մորից: Ժամանակը գալիս է, ու նա դուրս է գալիս այդ կանացի ոլորտից: Բայց եթե նա մնում է այնտեղ, կանացի ոլորտում սկսում է գերակշռել, և նա դժվարությամբ է ընդունում իրը, տղանարկությունը: Որպեսզի նա դառնա տղանարդ, նա պետք է հրաժարվի իր կյանքի առաջն կնոջից և ներխուժի հայրական աղջեցության ոլորտ: Դա որդու համար մեծ հրաժարական է ու արժատական փոփոխություն: Յին ժամանակներում դա արվում էր գիտակցված ձևով ու կատարվում էր որոշակի ծիսակատարությունների օգնությամբ: Մեր օրերում այդ խնդիրը լուծվում է բանակ գորակոչման միջոցով:

Իր հերթին աղջկը ևս սկզբնապես գտնվում է կանացի մայրական ակունքների աղջեցության ոլորտում և ինտենսիվ կերպով յուրացնում է դա: Բայց ոչ տղաների պես: Նրանք էլ ծգուում են դեպի հայրը և ծանաչում տղամարդկությունը: Բայց նրանց հարկավոր է ոչ թե մնալ իր աղջեցության ոլորտում, այլ շուտ վերադառնալ կանացի ակունքներին: Լավագույն ամուսնությունն է, եթե «մանայի աղջկը» ամուսնանում է «պապայի տղայի» հետ [7]:

«Ինչ ռեժիմ էլ որ ընտրեք ձեր ընտանիքի համար, ամենակարևորը՝ այն պետք է լինի նպատակահարմար: Կյանքի ցանկացած օրենք պետք է մտցնել ձեր ընտանիքը ոչ թե նրա համար, որ մեկ ուրիշը այն կիրառում է իր մոտ կամ այդպես ավելի հեշտ է ապրել, այլ բացառապես այն բանի համար, որ դա անհրաժեշտ է ձեզ՝ հասնելու ձեր առջև դրած նպատակին: Այդ նպատակը դուք ինքներդ պետք է շատ լավ իմանաք և մեծամասամբ նաև երեխաները» [10]:

Ծնողները պետք է հնարավորինս շուտ յուրացնեն հանգիստ, հավասարակշռված, ողջունող, բայց միշտ վճռական հնչերանգը գործնական կարգադրություններում, իսկ երեխաները մանկուց պիտի սպառեն նման հնչերանգին, են-

թարկվեն ու կատարեն դրանք: Պետք է լինել քննուշ երեխայի հետ, կատարել ու խաղալ նրա հետ, սակայն անհրաժեշտության դեպքում պետք է կարգադրել կարծ, մեկ անգամ, այնպես կարգադրել ու այնպիսի տոնով, որ ոչ երեխան, ոչ դուք կասկած չընենաք ծեր կարգադրության ճիշտ լինելու, նրա կատարման անխուսափելիության մեջ:

Վերջին տարիների սոցիալ-տնտեսական վայրիվերումները երկրում իրենց հետքը քողեցին դաստիարակության վրա: Խախկին հսկողության համակարգը կառուցվածքային, քանակական ու որակական առումով ամբողջությամբ փլուզվեց:

Ժամանակակից երիտասարդ ծնողները, անկասկած, ավելի շատ գիտեն երեխայի մասին, քան նրանց նախմիները: Բայց սա, իհարկե, քավական չէ դաստիարակության առումով ճիշտ կողմնորոշվելու համար:

Օ.Գոլուբեկան [5] օգտագործում է «գիտակցված ծնողություն» տերմինը, որի տակ ենթադրվում է հետևյալը՝ ծնողական կողմնորոշումների գիտակցումը, երեխայի անհատականության ընդունումը, ընտանիքի ու երեխայի պահանջներին կողմնորոշումը, կողմնորոշումը ընտանիքի անդամների միջև ու շրջապատող աշխարհի հետ փոխհարաբերություններին, փոխազդեցությանը, ընտանիքի կենսագործունեության հանդեպ պատասխանատվության ընդունումը:

Այս դրույթներից ելնելով՝ հեղինակը խոսում է «մանկահասակ երեխա ունեցող ընտանիքի սոցիալականացման» մասին: Ժամանակակից պայմաններում անհրաժեշտություն է առաջանալ կառուցել այդ սոցիալականացման մոդելը, որը կհամապատասխանի այսօրվա իրականությանը և կնպաստի գիտակցված ծնողության «աճին»: Սա ենթադրում է ընտանիքի բոլոր անդամների համատեղ կեցության հնարավորությունը՝ ներընտանեկան փոխհարաբերությունների զարգացման համար, մի քանի ընտանիքի համատեղ ապ-

րելը՝ ընտանիքի արտաքին աշխարհի հետ փոխաներգործության զարգացման համար, ինքնարտահայտման հնարավորությունը, ժամանակի արդյունավետ օգտագործումը, ինֆորմացիոն ու մասնագիտական աշակեցությունը:

Ընտանիքում դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն երկու ծնողների առկայությամբ, այլև դաստիարակության գործնարարության նրանց համատեղ մասնակցությամբ, երկու սերունդների (ծնողներ և զավակներ) և երկու սեռերի (տղա-աղջիկ, կին-տղամարդ) համագործակցությամբ: Ծնողներից մեկի բացակայությունը կամ դաստիարակությանն անմասնակից լինելը բացասարար է անդրադառնության մեջ անձի ձևավորման վրա:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աղյոյան Ա., Սիրո և ընտանիքի էվոլյուցիան, Երևան, «Հայաստան», 1990, 648 էջ:
- Մանուկյան Մ., Սիրո փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական մեկնարանման հայկական գանձարան, Երևան, «Զանգակ-97», 2003, 320 էջ:
- Յեներ Ռ., Կրիզисы любви: системная психиатрия Берты Хеллингера, М., изд. "Институт психиатрии", 2001, 304 м.
- Гаспарян Ю., Институт семьи: проблемы обновления, развития, С. Петербург, 1997, 162 с.
- Голубева О., К вопросу о социализации детей, Материалы 2-го международного конгресса "Молодое поколение XXI века": Актуальные проблемы социально-психологического здоровья, Минск, 3-6 ноября, 2003, с. 101-102.
- Краткий словарь по социологии. М., "Политиздат", 1988, 479 с.
- Сукасын С. Г., Этное, семья, невроз: точка зрения психиатра, Ереван, "Шушан", 1996, 156 с.
- Харчев А. Г., Голод С. Н., Профессиональная работа женщин в семье, Л., "Наука", 1971, 175 с.
- Энциклопедия молодой женщины, М., "Прогресс", 1989, 496 с.
- Макаренко А. С., Общие условия семейного воспитания, М., 1984, том 4, с. 60-62.

#### THE STRENGTHENING OF PURE, FREE AND EASY INTERRELATIONS BETWEEN FAMILY MEMBERS AS AN EFFECTIVE TERM OF UPBRINGING

**LIANA HARUTYUNIAN**

Competitor of the "Mkhitar Gosh" Armenian-Russian International University

#### Summary

The article analyses the interrelation between the members of the family as a term of effective upbringing.

Not only some styles of domestic interrelation are mentioned, but also types and forms of mutual relations expressing educational influence on one's family, are discussed.

**ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎՐԱ ՍԽԱԼ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ  
ՍԽԱԼՆԵՐ\***

**Լիանա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«Միայնակ Գոշ» հայուսական միջազգային համալսարանի հայցորդ

Աստեղախոսության թեման՝ Ընտանիքում դաստիարակության նպաստավոր պայմանների ստեղծման հիմնախնդիրները արդի փուլում

Գիտական դեկան՝ Մնացական ՄԱՆՈՒԿՅԱՆ՝ մանկ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Ղ**աստիարակության համար առանձնացված բոլոր գործոնները և, որ ամենակարևորն է, ծնողների վարքը՝ նրանց անձնական դրական օրինակը, բարձր և օրյեկտիվ հեղինակությունը պետք է ուսումնասիրել ամբողջական ընտանեկան համակարգի շրջանակներում [1, 140]:

Ըստ Պ. Կ. Կերինջի՝ այս բոլոր գործոնների և ծնողների փոխհարաբերությունների աններդաշնակությունը որոշակի պայմանների բացակայության դեպքում հանգեցնում է ընտանեկան դաստիարակչական գործընթացի խարարմանը և անգամ խեղաթյուրմանը [2, 58]:

Նույն Պ. Կ. Կերինջը ծնողների կողմից երեխաների վրա ներգործությունների պատճառով առաջացած սխալները բաժնանում է հետևյալ տիպերի:

- դաստիարակության և հոլովական փոխհարաբերությունների պահանջնունը,
- դաստիարակության և արժեքային համակարգի ձևավորման պահանջնունը,
- դաստիարակության և ապագա նպատակների ձևավորման պահանջնունը,
- դաստիարակության և նրա միջոցով անձի ձևավորման պահանջնունը,
- դաստիարակության և մարդկային որակների ձևավորման պահանջնունը [2.160]:

Եվ եթե որոշենք ընտանեկան դաստիարակության արդյունավետության բարձրացմանը նպաստող կամ խանգարող տիպերը վերլուծել, կստացվի հետևյալը.

- Դաստիարակության և հոլովական փոխհարաբերությունների պահանջնունը: Փոխհարաբերությունը երկողմանի է, եթե մարդն զգում է, որ

ինքը հանդիսանում է հետաքրքրության առարկա: Իսկ երեխայի դաստիարակության նպատակը հոլովական փոխհարաբերությունների պահանջնունների բավարարությունն է: Երեխան դառնում է պահանջնունիքի կենտրոն, նրա բավարարման օբյեկտը: Նման դաստիարակության ժամանակ ծագում են բազմաթիվ խնդիրներ: Ծնողները անգիտակցաբար պայքարում են իրենց պահանջնունիքի օբյեկտի պահպանման համար՝ չքողնելով, որ հովաքերն ու երեխայի հետ մտերմությունը ընտանեկան շրջանակից դուրս գան:

- Դաստիարակության և արժեքային համակարգի ձևավորման պահանջնունը: Առանց արժեքային համակարգի ձևավորման մարդը չի կարող նորմալ ապրել, ակտիվացնել իր բոլոր կարողությունները առավելագույն աստիճանի: Նման կարողության բավարարումը կապված է սեփական կեցության հմաստի հիմնավորման հետ:

Կյանքի իմաստի կամ արժեքային համակարգի ձևավորման պահանջնունիքի բավարարունը կարող է նառնալ երեխայի ֆիզիկական վիճակի ու դաստիարակության մասին հոգալը: Ծնողները չեն ցանկանում բաց բողնել սեփական զավակին իրենց գրկից, և նրա ինքնուրույնության ցանկացած դրսերում համառորեն հետապնդվում է ծնողների կողմից: Նման ինքնազնության վճարը երեխայի համար ակնհայտ է:

- Դաստիարակության և ապագա նպատակների ձևավորման պահանջնունը: Որոշ ծնողների երեխաների դաստիարակության դրդում է, այսպէս կոչված, նվազման շարժառիթը: Դաստիարակության նպատակ է հանդիսանում այն, որ ծնողները ցանկանում են հասնել այն ամենին, ին-

\* Ներկայացվել է 10.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

չի նրանք պայմանների բացակայության պատճառով ժամանակին չեն կարողացել հասնել, կամ էլ այն, որ նրանք չեն եղել բավականաչափ ընդունակ ու համար: Նման ծնողական վարքը անգիտակարար հենց ծնողների համար ծեռք է բերում եսասիրության տարրեր: Երեխան զրկվում է անհրաժեշտ անկախությունից, աղավաղվում են իրեն բնորոշ անձնային հատկությունները: Ընդհանրապես հաշվի չեն առնվում երեխայի հնարավորությունները, ընդունակություններն ու հետաքրքրությունները, որոնք եապես տարրերվում են այն բոլորից, որ կապված են ծրագրավորված նպատակների հետ: Նա կարող է խցկել իր համար օտար ծնողական իդեալների շրջանակ, որպեսզի ստանա ծնողական սեր ու բավարարի նրանց ցանկությունները: Այդ դեպքում նա կընա կեղծ ճանապարհով, որը չի համապատասխանում իր անձին ու ընդունակություններին, և հաճախ ձախողվում է: Բայց երեխան կարող է ըմբուտանալ իր համար օտար պահանջմունքների դեմ՝ դրանվ առաջացնելով ծնողների դժգոհությունները ու հիասքափությունը, և արդյունքում նրանց միջև ծագում են սուր բախումներ: Դա հիդ է ծնողների ու երեխաների միջև փոխհարաբերությունների պարտով: Երեխայի հետ փոխհարաբերությունների դժվարությունների ետևում չկա ոչ երեխայի, ոչ ծնողի չարականություն, այստեղ, պարզապես, սովորություն է տեսնել երեխային, գնահատել նրա հնարավորությունները, վերաբերվել նրան որոշակի ձևով [2, 162]:

Երեխան ապրում է ինքն իրենով, ծնողները՝ իրենց իրենցով: Գալիս է մի պահ, որ կուտակված անընթառնողությունը դժվարություններ է առաջացնում շիման մեջ:

Ի ֆրիդմանը առանձնացնում է մի քանի ընդհանուր հանգամանքներ, որոնցով պայմանավորված են երեխաների հետ շիման դժվարությունները.

- դա երեխայի մասին որպես փոքր մեծահասակի պատկերացումն է (նրա անշափահասության իմաստով), ծնողները այլևս չեն տեսնում իրենց երեխայի մեջ որակապես այլ էակի,

- ծնողները շատ հաճախ անտեսում են յուրաքանչյուր երեխայի ուրույնությունը՝ ելնելով ընդհանուր ետալունային պատկերացումներից, ինչն արտահայտվում է նրանց կողմից հաճախ օգտագործվող «քոլոր երեխաները», «ուրիշ երեխաները» և այլ հասկացություններում,

- ծնողի համար դժվար է գիտակցել այն, թե ինչպես են երեխաների մեջ անդրադարձում իրենց սեփական գծերը, խնդիրները [3, 193]:

- **Դաստիարակության և նրա միջոցով անձի ձևավորման պահանջմունք:** Կան ընտանիքները շեղվում

են երեխայի անձի ձևավորումից և կենտրոնացվում են ոչ թե նրա վրա, այլ ծնողների կողմից ընդունելի համակարգի իրականացման վրա: Դրանք ընդհանրապես շատ իրազեկ, կրթված ծնողներ են, որոնք իրենց երեխաների մասին շատ են հոգում ու տրամադրում են շատ ժամանակ: Ծանոթանալով որոշակի դաստիարակչական համակարգի ու վստահելով դրան ծնողները քայլմանը ու նպատակասլաց անցնում են դրա հրականացմանը:

• **Դաստիարակության և մարդկային որակների ձևավորման պահանջմունք:** Նախկին փորձի հիման վրա, անձի զարգացման առանձնահատկությունների ազդեցության տակ մարդու գիտակցության մեջ կարող են ծագել, այսպես կոչված, գերարժեքավոր գաղափարներ՝ անհինն ու անարժան կերպով տեղ գրադեցնող մտքեր ու պատկերացումներ: Դրանք կարող են լինել մարդու այս կամ այն որակի մասին պատկերացումներ՝ որպես առավել արժեքավոր, անհրաժեշտ, կյանքում օգնող: Բայց այդ ամենը կարող է հանգեցնել բացասական հետևանքների երեխայի հոգեկանում հակառակ սերի գծերի ձևավորում, ենթագիտական համոզմունք նրանում, որ այսիս երեխա, ինչպիսին ինքն է, պետք չէ: Եվ դաստիարակությունը կարգավորող ծնողների մղումները սահմանափակում են երեխային հատուկ անձնային գծերի զարգացման ազատությունը, բարդացնում զարգացումը՝ խախտելով նրա ներդաշնակությունը, իսկ երբեմն նաև աղավաղելով նրա ընթացքը:

Ակնհայտ է, որ երեխայի լիարժեք դաստիարակության ու զարգացման համար անհրաժեշտ է ներդաշնակ ընտանեկան մքնոլորտ: Ցավոք սրտի, ոչ բոլոր երեխաներն են դաստիարակվում ընտանիքներում, այն էլ ներդաշնակ: Եվ դա է պատճառը, որ նաևն ընտանիքները հանդիսանում են կոնֆլիկտածին ընտանիքներ:

Այս կոնֆլիկտները առաջանում են երեխայի վարքի, ուսման, ընկերների ընտրության, հետաքրքրությունների նկատմամբ ծնողական խիստ հսկողության հետևանքով: Ավտորիտար ծնողները երեխաներից պահանջում են ենթարկվել իրենց առանց որևէ բացատրության: Նրանք խստորեն վերահսկում են նրա կենսագործունեության բոլոր ոլորտները՝ ընդ որում հաճախ ոչ ճիշտ կերպով: Իրավիճակը բարդանում է, եթե խիստ պահանջուտությունը և հսկողությունը համադրվում են երեխայի նկատմամբ սառը, մերժողական վերաբերմունքի հետ: Անտարբեր ծնողական վերաբերմունքի համարդումը հսկողության բացակայության թերիմանատարության հետ ընտանեկան հարաբերությունների և մի անհաջող տարբերակ է: Դեռահասներին թույլատրվում

անել այն ամենը, ինչ նրանց մտքով կանցնի, նրանց արարքներով ոչ ոք չի հետաքրքրվում: Նրանց վարքը դասում է անվերահսկելի: Իսկ դեռահասները, որքան էլ նրանք ընթառանան, զգում են ծնողների կարիք՝ որպես հենարանի, նրանք պետք է տեսնեն ծնողի մեջ պատասխանատու վարքի օրինակ:

Ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակ է ծնում ծնողների կողմից երեխաների Ըկատամար չափից ավելի հոգատարությունը և գերհսկողությունը նրա ողջ կյանքի ընթացքում, անգամ առանց տարիքի հաշվառման: Սա բերում է պահվության, անհնարությունության և հասակակիցների հետ շփման դժվարություններ է առաջացնում: Դժվարություններ առաջանում են նույնիսկ ծնողների մեծ սպասումների դեպքում, որոնք երեխան չի կարող արդարացնել: Ծնողների հետ, որոնք ունեն ոչ աղեկված սպասումներ, դեռահասության տարիքում հոգևոր մտերմությունը սպառվում է: Դեռահասը ինքն է ուզում որոշել, թե ինչ է իրեն անհրաժեշտ և ընթառանում է մերժելով իրեն համար օտար պահանջները: Կոնֆլիկտները ծագում են, երբ դեռահասին վերաբերում են փոքրի պես և անհետևողական պահանջների առաջարրման ժամանակ, երբ նրանից պահանջում են մեկ մանկական հնազանդություն, մեկ էլ մեծահասակի ինքնուրույնություն:

Ընտանեկան կոնֆլիկտներն առաջանում են ու շարունակվում ոչ միայն կոնկրետ միջանձնային լարվածությունների պատճառով, ծնողների մեծամասնության ոչ ֆորմալ միավորումների նկատմար ստերեոտիպային հայացքների պատճառով, այլ նաև արտաքին, ընտանիքի պատմությանը չպայմանավորված գործոնների, ավելի ստույգ, դեռահասության տարիքի նորմերի պատճառով: Երիտասարդական սուբկուլտուրան իր ստեղծած առասպելներով, ավանդույթներով ներխուժում է ընտանեկան հարաբերություններ, և, որպես արդյունք, ծնողները տեսնում են իրենց համար անբացատրելի, ոչնչով չիրակված կոնֆլիկտայնություն իրենց երեխաների մոտ:

Կոնֆլիկտները նման ընտանիքներում լինում են բազմազան՝

- կոնֆլիկտ՝ որպես արտաքին պահանջմունքների բավարարման միջոց,
- կոնֆլիկտ՝ որպես ինքնափոխման միջոց,

• կոնֆլիկտ՝ որպես թաքնված լարված ներնտանեկան փոխհարաբերությունների արտացոլում:

Ընտանեկան կոնֆլիկտների պատճառներից մեկն էլ ծնողական հրահանգներն են:

«Ծնողական հրահանգ» հասկացությունը, որ հոգեբանության մեջ էլ ներմուծել Ս. Գուլդինգերը,

նշանակում է թաքցված հրաման՝ ոչ ակնհայտ կերպով ձևակերպված ծնողների խոսքերով ու արարքներով, որի չկատարման համար երեխան կպատժի ոչ թե ուղղակիորեն, այլ մեղքի զգացունով ծնողի հանդեպ: Մեղքի իրական պատճառները երեխան ինքնուրույն չի կարող հասկանալ, այստեղ նա կարիք կունենա կողմնակի օգնության: Յենց հրահանգներն են պատասխանատու արդեն մեծահասակների մեջ ապրող ծնողներից մեկից կախվածության համար, որոնք ոչ ակնհայտորեն սովորեցրել են երեխային դրսկորել սիսալ, ոչ արդյունավետ նկրոտիկ վարք: Գուշինգները դասակարգել է մի շարք ծնողական հրահանգներ, որոնցից հիմնականներն են:

• «Մի ապրիր», որը մոտավորաբես հնչում է այսպես: «Ինձ պես չեմ այդախի վատ տղա/ադիկ», «Քանզի ես իմ ողջ ուժերն ու առողջությունս գոիել եմ, որ դաստիարակեմ քեզ, բայց ինձ այդպես էլ դա չխացողվեց»:

• «Մի մեծացիր»: Դա երեխաների մոտ ունենում է այսպիսի նրբերանգներ. «Դու դեռ փոքր ես, որ շպարզես», «Մայրիկը քեզ երբեք չի լրի», «Մի շտապիր մեծանալ»: Սա ամենից հաճախ ասվում է միակ կամ կրտսեր երեխաներին:

Այսպիսի հրահանգներ են տալիս այն ծնողները, որ վախենում են իրենց երեխայի մեծանալուց ու նրա տնից հեռանալու և նրանց նորից միայնակ երկուսով թողնելու պահից:

• «Մի մտածիր»: Սա դրսկություն է չմտածելու, «չփիլիսոփիայելու» պահանջներում: Օրինակ՝ ծնողը, փորձելով երեխային զերծ պահել վտանգավոր իրավիճակից, այսպես է պատասխանում նրա հարցերին. «Մի մտածիր այդ մասին, մոռացիր»:

Սրանով նա գրկում է երեխային իր առջև ծառացած խնդիրները ռացիոնալ միջոցներով լուծելու հնարավորությունից:

• «Մի զգա»: Սա էլ հնչում է մոտավորաբես այսպես. «Ինչպես ես համարձակվում ջղայնանալ ուսուցչուհու վրա, նա քո մոր տարիքն ունի», «Շաքար չես, չես հալվի»:

Երբ երեխան ստանում է նման հրահանգ, որն իրեն արգելում է ագեստիվություն դրսկորել ուսուցչուհու նկատմամբ, նա կարող է իր բացասական լիցքերը բաց թողնել իրենից թույլ ու փոքր երեխաների և ծնողների վրա:

• «Բարձումքների մի հասիր»: Սա ուսի հետևյալ հարցադրումն. «Ես ինքս չեմ կարողացել ինստիտուտ ավարտել, սակայն ինձ ամեն ինչից գրկում եմ, որ դու կարողանաս կրթություն ստանալ»:

Նման հրահանգների իիմքում ընկած է ծնողների անգիտակցական նախանձը երեխայի հաջողության նկատմամբ:

• «Մի եղիր առաջնորդ»: Այն հնչում է այսպես. «Եղիր ինչպես բոլորը», «Ինչո՞ւ՝ կր թեզ ցույց տալիս, թեզ համար ավելի վաս ստացվեց»:

Ծնողները, որ երեխային տալիս են ննան հրահանք լավագույն ցանկություններով, կարող են անհանգստացած լինել նախանձի զգացումով, որ նրանք առաջացնում են, իրենց խորը համոգմամբ, այլ մարդկանց մոտ:

• «Մի պատկանիք»: Այս հրահանգը տալիս են այն ծնողները, որոնք ունեն շփման դժվարություններ և իրենց երեխայի մեջ տեսնում են «միակ ընկերոջը»:

Երեխայի հետ շփման ընթացքում ննան ծնողները կարող են անցնիհատ ընդգծել նրա բացառիկությունը, անննանությունը (դրական իմաստով):

• «Մի մտերմացիք»: Ծնողական այս հրահանգը իր իմաստով մոտ է նախորդին, սակայն եթե այն դրսևորվում էր խմբի ներսում, ապա սա միայն մեկ մտերիմ նարդու հետ հրարթերություններում: Ծնողներն այս կերպ ներշնչում են երեխային, որ չի կարելի ոչ որի (բացի իրենցից) վստահել: Սրա վնասն այն անգիտակցական համոզմունքն է, որ «ցանկացած մտերմություն կտանգավոր է»:

• «Մի արա»: Այսինքն՝ մի արա միայնակ, ես կանեմ դա քո տեղը: Ծնողներն այս հրահանգը տալիս են՝ ասելով. «Մենակ չանես, ինձ կսպասես»: Մեծանալով՝ այս երեխաները կսկսեն հետաձգել իրենց գործողությունների սկիզբը, ընկերել ցայտնոտի մեջ՝ չգիտակցելով, որ գործում են ըստ ծնողական հրահանգի իներցիայի:

• «Մի մնա այնպիսին, ինչպիսին կաս», «Զգտիր իդեալին»: Սա դրսևորվում է այնպիսի արտահայտություններում, ինչպիսիք են «Ինչո՞ւ նա կարող է, իսկ դու՝ ոչ»: Լինում է այնպես, որ ծնողներն ուզում էին աղջիկ, սակայն ունեցան տղա:

Այս հրահանգի թաքնված իմաստն է անբավարարվածություն առաջացնել սեփական ներկա իրավիճակից: Լինելով մշտական անբավարարված ու նախանձով դրդվող՝ մարդը փախնում է ինքն իրենից:

Երեխաների վրա ծնողների բացասական ազդեցությունները, որոնք հանգեցնում են դաստիարակչական սխալների, կարելի է հավաքել մի պայմանական համակարգի մեջ և կոչել՝ «Ծնողների կողմից երեխաների վրա միայն ներգործություններ»: Ահա այդ սխալ ներգործությունների մոտավոր, բայց տարածում գտած տեսակները.

• ծնողները երեխայի նկատմամբ սերը դարձնում են նպատակ, փոխանակ այն համարեն նրա անձը ձևավորելու և մարդ կերտելու միջոց: Եվ երեխան, չտեսնելով նպատակը, գգում է իր կախվածությունը ծնողներից, առանց նրանց թույլ, ան-

օգնական լինելը, ուրիշներից կախվածությունը:

• Ծնողները երազում են իրենց երեխաներին տեսնել թշկի, ուսուցչի, ինժեների, պետական ու քաղաքական գործչի, որևէ դեկավար պաշտոնյայի կարգավիճակով, քան մարդու և քաղաքացու սոցիալական դերում:

• Ծնողները երեխայի նկատմամբ հետապնդումը դարձնում են երեխայի նկատմամբ կեղծությունը բայց այն, շարժուծկին, հագուկապին, հանգստի միջոցներին ու ծերին, տանից բացակայելու ժամերին: Ենտապնդելու միջոցով նրան գրկում են ազատությունից, ազատ մտածելու, ազատ տեղաշարժելու հնարավորությունից՝ չիմանալով, որ ազատությունը միայն կարող է հնարավոր դարձնել նրա ճիշտ կողմնորոշումը ինչպես տանը, այնպես էլ սոցիալական միջավարում:

• Ծնողները, «տարված» երեխայով, մոռանում են իրենց սեփական վարքը: Նրանք մոռանում են, որ.

– Երեխան դաստիարակվում է նաև այն ժամանակ, երբ ծնողին չի տեսնում,

– դաստիարակվում է ամեն րոպե,

– ծնողը չի գգում, բայց երեխան անսխալ գգում է նրա տոնը, տրամադրությունը, միտքը,

– պետք է նախ իրենք պահանջկոտ լինեն իրենց նկատմամբ, հարգեն իրենք իրենց, հետևեն իրենց արարաների ծշությանը,

– նրանք չպետք է երեխաների առաջ պարձենան իրենց խելքով: Չէ՝ որ երեխաներին ծնողների մոտ գրավում են ավելի շատ մարդկայնությունը, բարությունը, անկեղծ սերը իրենց անձի նկատմամբ, խիճն ու արժանապատվությունը,

– կարելի է սխալի համար կարմրել և առանց քաշվելու ընդունել այն, քան սխալ դուրս չգալու համար պատժել երեխային:

• Երեխաներին բացասական ազդեցություններից հեռու պահելը և նրանց միջավայրի հետ շփումից ետ կանգնեցնելը: Ծնողը չի հասկանում կամ չի ուզում հասկանալ, որ անկախ իր ցանկություններից երեխան շփվելու է միջավայրի հետ՝ նրա դրական թե բացասական դրսւորումներով, և իր արգելքները ոչ միայն անօգուտ, այլև անհիմն են:

• Երեխայի մոտ իրենց հեղինակությունը կորցնելը: Դա հետևանք է այն բանի, որ.

– ծնողը ցանկանում է երեխայի վրա ազդել՝ ճնշելով նրան իր ցանկություններից երեխան շփվելու է միջավայրի հետ՝ նրա դրական թե բացասական դրսւորումներով, և իր արգելքները ոչ միայն անօգուտ, այլև անհիմն են:

– ծնողը ցանկանում է երեխային հեռու պահել

իրենից տարածություն ստեղծելով իր և երեխայի միջև հանուն հեղինակության: Դա կարելի է կոչել «տարածական հեղինակություն»,

– ծնողը ցանկանում է, որ երեխան տեսնի և զգա իր՝ ծնողի կարևոր անձ լինելը, ինչպես դրսում, այնպես էլ տանը: Եվ երեխաները դաստիարակվում են ծնողի օրինակով, մեծամիտ ու ինքնահավան, մարդկային այդ բացասական որակները տարածելով իրենց շրջապատում. ծնողական վերաբերմունքի այդ տեսակը կարելի է կոչել «դեմագոգի հեղինակություն» կամ «քաղքենու հեղինակություն»,

– ծնողը ցանկանում է տանը երեխայի դաստիարակությունը կազմակերպել բարոյագիտության կանոններով և կարգապահության խիստ կիրառման պայմաններում: Երեխայի ամեն մի քայլը պետք է անրագրված լինի բաղաքավարության կանոններով: Դա կոչվում է «բյուրոկրատական հեղինակություն»,

– ծնողը ցանկանում է պլանավորել իր երեխայի պազարան, վաղվա օրը կառուցել այսօր՝ հաշվի շնուտելով երեխայի ոչ միայն ցանկությունների, այլև նախասիրությունների, բնավորության գծերի, խառնվածքի հետ: Դաստիարակության կամ հեղինակության այս ձևը կարելի է կոչել «կառանկարի հեղինակություն»,

– ծնողները ցանկանում են ամեն գնով հեղինակություն ձեռք բերեն և երեխաներին իրենց լսել տալ: Դա անուն են նաև համոզելու և այն էլ նվիրատվությամբ ու կաշառքի միջոցով իրենց խոսքը լսելի դարձնելու միջոցով: Նրանք հասնուն են իրենց ժամանակավոր նպատակն, բայց դաստիարակության են պազար կաշառակերներ: Դա է պատճառը, որ այս երևույթը կոչում ենք «կաշառքի հեղինակություն»,

– ծնողները ցանկանում են հեղինակություն ձեռք բերել երեխաներին սիրելու միջոցով: Եվ անկերծ սերն այնքան են չափազանցնում, որ երեխաները, չարաշելով այն, գնում են իրենց ուզած ճանապարհով: Դա կոչում ենք «սխալ սիրո հեղինակություն»,

– ծնողները ցանկանում են երեխաներին դաստիարակել ոչ միայն բարությամբ, այլև ընտանիքում հաստատված բարեկամությամբ: Բայց բարությունն ու գորովանքը, մեղմությունն ու իրար նկատմամբ բնրուշ վերաբերմունքն այնքան են չարաշահում, որ մղում են երեխային չարաշահելու այդ բարությունը և «նստելու ծնողի գլխին», ստիպելով կատարել բոլոր ցանկություններն ու պահանջները: Իսկ «բարեկամություն» և «հավասարություն» հասկացությունների չարաշահումը կարող է հասցնել «ծնող-զավակ» փոխհարաբերությունների խախտման և ծնողի՝ որպես ավագի ու դաստիարակի, հեղինակության կորստի:

կարող ենք կոչել «քարության ու բարեկամության խեղայուրված հեղինակություն»:

• Ծնողները ցանկանում են լավ մարդ դաստիարակելու նպատակով երեխային չդարձնել կամակըր, ինքնահավան կամ եսասեր և նրան մերժում են անեն ինչում, նրան բոլոր պահանջներում: Ծնողը չի գիտակցում կամ հանուն դաստիարակության շահերի չի ուզում գիտակցել, որ մերժումը երեխային մեծ ցավ է պատճառում և կարող է ազդել նրա հավասարակշիռ վարքի վրա: Ծնողները պետք է կարողանան.

– երեխային ստվերեցնել մերժումը հիվանդագին ընդունելու գաղտնիքը,

– իրենց մեջ մշակել «ոչ» ասելու կարողություն,

– երեխային պետք է հորդորել, որ նրա ցանկություններն այդքան էլ առաջնային, արժեքավոր ու կարևոր չեն կյանքի ընդհանուր պահանջների համեմատությամբ,

– երեխաների մեջ դաստիարակել պարտականությունների անվերապահ կատարում, ընտանեկան ստվերեցներին հետևելու, հավասարակշիռ հոգեվիճակով ապրելու, շրջապատի մկատմամբ վստահություն սերմանելու կարողություն,

– երեխաների մեջ ներարկել ոչ միայն աշխատելու, այլև ստեղծագործելու ցանկություն, ոչ միայն պարտքի զգացում, այլև այն կատարելու կամք, ոչ միայն բարեհոգություն, այլև կենսասիրություն:

• Ծնողները ցանկանում են երեխային դաստիարակել այնպես, որ նա կամակըր ու եսասեր չլինի, ուստի անընդհատ իրաժարվում են այս կամ այն ցանկությունը կատարել. Ծնողները չեն մտածում, որ.

– երեխային կարելի է համոզել, որ նա ուժեղ է, որ նա կարող է ինչ-որ բան անել ինքնուրույն, առանց կամքը լարելու և ոտքերը գետնին խփելու [4, 79], որ.

– ինչ-որ բանի մերժելով՝ չեն հասնելու, և կատարելով՝ չեն վնասելու իրենց հեղինակությունը [4, 75],

– չպետք է համառել և դա թույլ չտալ նաև երեխային: Չլ՝ որ համառությունը կամակղորության մայրն է [4, 194]:

• Ծնողները ցանկանում են, որ իրենց երեխաների հետ ամեն ինչ լավ լինի, բայց չեն հետևում ժողովրդական հմաստությանը՝ «Լույսի շող մանկավարժական մշուշում» տեսքով:

• Ծնողները ցանկանում են, որ երեխաները անվերապահ ենթարկվեն իրենց կամքին, բայց մոռանում են, որ կենսաբանական իմաստով միայն ծնող լինելը շատ քիչ է. հարկավոր է նաև լինել հայրեր և մայրեր, ասել է թե դաստիարակներ [4, 196]:

Այս ամենն ունի մի գլխավոր բացասական կողմ. Երեխաների բոլոր բացասական արարքները ծնողները անտարբերության են մատնում մի սխալ պատճառաբանությամբ՝ «Երեխա են, կմեծանան կմոռանան և այլս նման բան չեն ան»։

Երեխաները մեծանում են, բացասական որակները կրկնապատկում և դաշնում են չարիք ընտանիքի և հասարակության համար։

Վ. Լուսկան ու Ա. Լուսկովը ծնողներին տալիս են հետևյալ խորհրդակներ՝

- տալ երեխային հնարավորություն հասկանալու, որ դուք իմբռներ, որպես ծնող, ազատվում եք հրահանգներից,

- երեխային վերապահել իրավունք, որ ինքը արժատախիլ անի այդ հրահանգներն առավել մեծ հանրության շրջանակներում [5, 152]։

Որպեսզի առավելագույնի հասցնել ամենայն դրականն ու նվազագույնի հասցնել ամենայն բացասականը երեխայի դաստիարակության տարրեր կոնկրետ հաճակարգերում և հաղթահարել ընտանեկան դաստիարակության բնորոշ սխալները, նույն հեղինակները խորհուրդ են տալիս հաշվի առնել հետևյալ ներջանակնեկան հոգեբանական գործոնները, որոնք ունեն դաստիարակչական նշանակություն և ինչ-որ ձևով ծառայում են նաև որպես ընտանեկան դաստիարակության արդյունավետության պայման։

- ակտիվ մասնակցություն ունենալ ընտանիքի կյանքում,

- միշտ ժամանակ գտնել երեխայի հետ խոսելու համար,

- հետաքրքրվել երեխայի խնդիրներով, սատարել նրան բոլոր տիպի դժվարություններում ու օգնել զարգացնելու սեփական տաղանդն ու կարողությունները,

- ճնշում չգործադրել երեխայի վրա՝ դրանով իսկ օգնելով նրան ինքնուրույն որոշումներ կայացնել,

- պատկերացում ունենալ երեխայի կյանքի տարրեր փուլերի մասին,

- հազգել սեփական կարծիք ունենալու երեխայի իրավունքը,

- կարողանալ զսպել երեխային որպես սեփականություն նայելու բնագրները և վերաբերվել նրան որպես իրավահավասար գործընկերոջ, որը պարզապես դեռ չունի կյանքի փորձ,

- հազգանքով մոտենալ ընտանիքի մյուս անդամների՝ կարիքարա ստեղծելու և ինքնակատարելագործվելու ձգտմանը։

Այսպիսով կստեղծվեն իրական պայմաններ, որոնք կնպաստեն ընտանեկան դաստիարակության արդյունավետության բարձրացման պայմանների ստեղծմանը։

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանուկյան Ա. Ս., Մանուկյան Ս. Ս., Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա (կիրառական մանկավարժություն և մոդելներ), Երևան, «Զանգակ-97», 2000, 158 էջ։
2. Կերինց Պ. Կ., Սемейный контракт: удовлетворенность в супружеством: родительский стиль в речевое поведения с детьми. М., «Вопросы психологии», 1990, N1, с. 158-164.
3. Փրւման Ի. Կ., О контракте родителю с детьми, М., «Вопросы психологии», 1990, N1, с. 93-99.
4. Мудрость воспитание. Книга для родителей, М., «Педагогика», 1988, 288 с.
5. Լօսեա Բ. Կ., Լունյկօ Ա. Ի., Փսիխոսեքսуальное развитие ребенка, М., изд. АПО, 1995, 152 с.

IN THE ARTICLE IT IS DISCUSSED THE DEFAULTS, WHICH APPEARED IN THE RESULT OF CHOSEN EFFECTS ON CHILDREN BY PARENTS

**LIANA HARUTYUNYAN**

Competitor of the "Mkhitar Gosh" Armenian-Russian International University

#### Summary

In the article it is discussed the issues which abate the effective process of family education, observing the defaults, which appear in the result of chosen effects on children and indicate the ways and means of their overcoming.

## ՕԾԱՐ ԼԵԶՎԻ ՎԱՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ԵՍԱԿԵՆՏՐՈՆ ԽՈՍՔԻ ՀԱՂԹԱՀԱՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ\*

### **Մարինե ՍԱՐԳՍՅԱՆ**

*Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ-ի հայցորդ*

**Աստենախոսության թեման՝** Ազգերեն բանավոր խոսքի համակարգված ձևավորման և զարգացման կազմակերպումը նախադպուղական կրթօջախում  
Կարեն ՀԱՅՐՅԱՆ՝ մանկ. գիտությունների թեկնածու, պրոֆեսոր  
Գիտական դեկան



**Հ**ստ ժան Պիածենի ուսումնասիթեաների մտածելակերպն ու արարքները մինչև 6-7 տարեկան հասակը ավելի եսակենտրոն են, քան մեծերինը: Ավելի հաճախ խոսելով իրենց կատարած արարքների, քան մտորումների մասին՝ նրանք ներկայացնում են իրենց, սկզբովում իրենց ես-ի վրա:

Ժ. Պիածեն իր փորձերի հիմնան վրա համոզվել է, որ «Երեխայի միտքը տատանվում է առատիստական և համայնացված (սոցիալականացված) մտքերի միջև: Երեխայի միտքը մենք եսակենտրոն անվանեցինք, որպեսզի պարզաբանենք, որ մանկական միտքն առատիստական է իր կառուցվածքով, բայց նրա հետաքրքրություններն ուղղված չեն միայն օրգանական պահանջնունքի կամ խաղալու ցանկության բավարարմանը, ինչպես տեղի է ունենում առատիզմի ժամանակ, այլ վերաբերում են նաև մտավոր հարմարումներությանը, ինչպես որ կատարվում է հասուն մարդու մոտ»<sup>1</sup>:

Սանկական մտքի եսակենտրոն բնույթը հաստատվել է երեք գիտական նպատակաւորված ուսումնասիրությունների միջոցով, որոնց կրկին անդրադարձական անհնաստ է:

Ուսումնասիրությունները կատարվել են ժնևի Ժ-Ժ. Ուստոյի անվան ինստիտուտին կից դպրոցի՝ մանկատնային երեխաների հետ<sup>2</sup>:

Միամսյա գիտափորձերն ապացուցեցին, որ 5-7 տարեկանների խոսքի 44-47%-ը մնում է եսակենտրոն շնայած նրան, որ այդ երեխաները կարող են աշխատել, խաղալ և հաղորդակցել ըստ իրենց մտավոր զարգացման: Երեքից մինչև հինգ

տարեկանների խոսքի եսակենտրոնացումը հասնում է 54-60%: Այդ եսակենտրոն խոսքը հիմնականում բաղկացած է մենախոսություններից, անհասկանալի զրուցներից կամ «կուեկտիվ» մենախոսությունից: Նրանցից յուրաքանչյուրը խոսում էր իր համար՝ առանց ուշադրություն դարձնելու ուրիշների վրա:

Երկրորդ ուսումնասիրությամբ Պիածեն հանգեց այն եզրակացության, որ նույնիսկ մտքերի ճիշտ փոխանակում կատարելով՝ մանկական լեզվի համայնացման շրջանում խոսակցությունն անցնում է մի քանի տարրական փուլ<sup>3</sup>:

Երրորդ ուսումնասիրությունը դարձել է ստուգման տարբերակ և թույլ է տվել ճշտելու խոսքի եսակենտրոնացման պատճառները<sup>4</sup>: Այդ հասակի երեխաները ոչ միայն կարծում են, որ իրենք խոսում են իրար հետ և լսում մինյանց, այլև մտածում են, որ իրենց մտքերը առանձնահատուկ չեն, այդպես մտածում են նաև մյուսները, ուստի հաղորդված այդ մտքերը պարզ են բոլորին՝ առանց բացատրության: Պետք է նաև նշել, որ այդ տարիքային խմբերի երեխաներն ունակ չեն հարմարվելու գործակցին, աղապատացվելու նրան: Նրանք չեն լսում զրուցակցին, քանի որ իրենց եսակենտրոն դիրքորոշումից դրդված՝ կարծում են, թե զրուցակցի խոսքը լիովին իրենց հասկանալի է, պարզ է:

Նշված երեք փաստերն ապացուցում են, որ երեխայի միտքը ավելի եսակենտրոն է, քան մեծերինը, և այդ փիճակը տատանվում է «առատիզմի և համայնացված մտքի միջև»<sup>5</sup>:

Պիածենի աշխատանքային գործունեության վաղ շրջանի աշխատությունները քննելիս Վիգուսուին նշել է, որ նրա ուսումնասիրություններն ընդգրկել են երեխայի խոսքի և մտածողության, տրամաբանության ու աշխարհայացքի զարգացման մի ողջ շրջան, որն ունի պատմական նշանակություն:

\* Ներկայացվել է 20.11.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

**Կուրյուն:** Այդպիսով՝ Վիգոտսկին ընդգծում է, որ Պիհաժեն՝ որպես գիտնական, առաջինն է առաջ քաշել մանկական խոսքի զարգացման խնդիրը՝ որպես որակական խնդիր, և ցոյց է տվել, թե որն է երեխայի մտածողության առանձնահատկությունը՝ հասուն մարդու մտածողության համեմատությամբ։ Կարելի է անկենդորեն հիմանալ նրանվ, որ «նոր փաստերի ծովը, որը բացահայտում է նորը և լրացնում նախկին հայտնին, նկատվել է Պիհաժեն՝ մանկական հոգեբանության տեսության մեջ»<sup>6</sup>։ Դա կիհնիկական մեթոդի բարձր գնահատականն է, որն ուսումնասիրվել է Պիհաժեն կողմից բնութագրելու մանկական մտածողությունը։

Ըստ Վիգոտսկու՝ Եսակենտրոն խոսքը ներքին խոսքի զարգացման սկզբնական ծևն է։ Սակայն Վիգոտսկին նկատի չի ունեցել նախադպոցականի Եսակենտրոն դիրքորոշումը արտաքին աշխարհի և իր հարաբերակցությամբ, որի վրա Պիհաժեն կենտրոնացրել է իր ուշադրությունը գործունեության սկզբնական ընթացքում։ Եսակենտրոնացման հայտնագրությունը ներկայում դիտվում է որպես Պիհաժեն առաջին մեջ նվաճումը մանկական հոգեբանության ուսումնասիրության բնագավառում։ Հենց այդ հայտնագրությունն էլ գիտնականին հասցեց համաշխարհային ճանաչման։

Սակայն «Եսակենտրոնացում» եզրույթը հանգեցրեց մի շարք թյուրիմացությունների։ Պատճառն այն է, որ այդ եզրույթը բազմիմասսորեն է օգտագործվել, հետևաբար Պիհաժեն ձգուում է բացատրել իր մոտեցումը։ Ըստ Պիհաժեն՝ Եսակենտրոնացումը համակարգված և չփառակցված պատրամքի հմացության տարատեսակ է և մտածողության կենտրոնացման սկզբնական ծևն՝ բանական հարաբերակցության (թերապևտիզմ) և փոխադրության (թերապրոկհոսմ) բացակայության ժամանակ։

Եսակենտրոնացումը խելային դիրքորոշում է, որն իր հիմքում բնութագրում է հոգեկան ակտիվությունը։ Այդ երևույթը ամբողջ կյանքում պահպանվում է այնպիսի մարդկանց մեջ, որոնք մնում են հոգեկան զարգացման ցածր մակարդակի վրա։ Եսակենտրոնացումը ցոյց է տալիս, որ արտաքին աշխարհը չի ազդում սուբյեկտի մտքի վրա։ Մեր գիտելիքները աշխարհի մասին միայն իրադարձությունների արտաքին հետևանք չեն։ Սուբյեկտի մտքերը փոխվում են և կարող են փոխվել՝ ըստ խելային դիրքորոշման։

Երեխայի Եսակենտրոն խոսքը բաժանվում է երեք տեսակի՝ 1) կրկնողություն, 2) մենախոսություն, 3) երկու հոգու միջև կամ խմբային մենախոսություն։

Սոցիալականացված խոսքն ընդգրկում է այնպիսի դրույթներ, ինչպիսիք են տեղեկությունը, քննադատությունը, հրամանները, խնդրանքն ու սպառնալիքը, հարցերն ու պատասխանները<sup>7</sup>։

Անդրանադառնանք Եսակենտրոն խոսքի ա-

ռաջին տեսակին։ Կրկնողությունը կարող է տեղի ունենալ անգիտակցաբար կամ գիտակցաբար։ Օրինակ՝ մայրիկը երկուսուիկես տարեկան Արբուրիկին բակից տուն է կանչում։ Տղան վերադառնում է մի փոքր ուշացումով։ Մայրիկը զայրացած հարցում է. «Ի՞նչ էր անում այդ անկարգների հետ»։ Լոելուց մի քանի րոպե հետո տղան կրնում է. «Ի՞նչ էր անում...։ Ի՞նչ էր անում այդ անկարգների հետ»։

Տվյալ դեպքում Արբուրիկն անգիտակցաբար կրնում է իր մայրիկի հարցը։ Նա հաստատ չգիտի, թե ինչ է նշանակում «անկարգ» բառը։

## 2. ԽԱԿ Ի ԻՆՉ Է ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԾՅՑ

Ամենայն հավանականությամբ բոլորը նկատած կինեն, թե ինչպես փոքրիկները խաղալով խոսում են իրենք իրենց հետ։ Նրանք նման վարքագիծ են ցուցաբերում քնելուց առաջ և օրվա տարբեր ժամերին։ Ժողովրդի մեջ ընդունված է ասել, որ երեխան «ինըն իրեն բլբում է»։ Դա մենախոսության օրինակ է։

## 3. ԱՐԱՎԵԼ Ի ԽԵՏԱՋՐԵՐԻ Է ԵՍԱԿԵՆՄԱՐՈՒ ԽՈՍՔԻ ԵՐՐՈՐԴ ԵՐԵՄԱԿԸՐ

Եթե մենք խաղալիքներ դնենք երկուսուիկեսից չորս տարեկան երկվորյակների կամ մի խումբ երեխաների մոտ և հեռվից ուսումնասիրենք նրանց վարքագիծը, ապա կիամոզվենք, որ այդ երեխաները խստելով են խաղում, բայց բոլորի խոսքը մենախոսություն է, քանի որ նրանցից յուրաքանչյուրը խոսում է իր համար, առանց հաղորդակցելու մյուսի հետ։

Այդ երևույթը առաջին անգամ ուսումնասիրել և ճշտել է ժամ Պիհաժեն իր գործընկերոց հետ միասին՝ իր փորձարարական գործունեության սկզբնական փուլում<sup>8</sup>։ Եթե մեզնից յուրաքանչյուրը ուշադիր հետևի մեր կամ մեկ ուրիշ երեխայի խոսքի զարգացման ընթացքին, անշուշտ կիիջ այդ մեջ հոգեբանի գիտափորձի նկարագրությունը։

Պիհաժեն ստեղծագործական ուղղու վաղ շրջանի հոգեբանական հայացքների համակարգի մեկ ուրիշ կարևորագույն հասկացությունը համայնացման հասկացությունն է։

Ըստ Պիհաժեն՝ կա երկու հասկացություն՝ սոցիալական (հանրային) և սոցիալականացված (համայնացված)։ Մեծերը երեխաների դաստիարակներն են, որովհետև մեծերը նրանց փոխանցում են հասարակական մշակույթը։ Անտարկույս, երեխան հասարակական էակ է։ Սակայն հանրային լինելով հանդերձ երեխան աստիճանաբար է համայնացվում։ Համայնացումը հանրությանը հարմարվելու գործընթաց է, որի եռթյունն այն է, որ զարգացման որոշ մակարդակի հասնելով երեխան կարողանում է համագործակցել մարդկանց հետ։ Դա տեղի է ունենում իր տեսակետի և ուրիշների տեսակենտրոների համակարգման միջոցով։ Համայնացումը պայմանավորում է երեխայի հոգեկան զարգացման որոշակի կամ

րևոր շրջադարձը՝ եսակենտրոն դիրքորոշումից դեպի առարկայականը:

Համբային կյանքը, ըստ Պիհաժեի, ավելի ուշ է սկսում ազդել երեխայի խելային զարգացման վրա: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ ձևավորվում են համագործակցական փոխհարաբերություններ, բանավեճեր ու քննարկումներ հասակակիցների միջև: Պիհաժեն միայն այսպիսի հարաբերությունների հաստատման հետ է կապում երեխայի մտածողության զարգացումը և վարքի նորմաների տիրապեսումը: Նշված բեկումը տեղի է ունենում երեխայի կյանքի 7-8-րդ տարիների ընթացքում:

Ավելի վաղ տարիքում երեխայի զարգացման մեջ առաջնորդող դեր են խաղում նրա փոխհարաբերությունները մեծերի հետ, որոնք առավելապես հենվում են միակողմանի հարգանքի և երեխայի կողմից՝ մեծի հեղինակության ստանձնան վրա<sup>9</sup>:

Սայրենի լեզվով խոսքը երեխաների կողմից յուրացվում է բնական ճանապարհով: Սակայն խոսքի եսակենտրոն դրսարումը տեղի է ունենում այն պատճառով, որ մինչև 3.5 տարեկան հասակը երեխաների ուղեղը դեռ այնքան հասունացած չէ, որ նրանք գիտակցեն լեզվի հաղորդակցական հասարակական գործառությունը: Կրկնողության և մենախոսությունների միջոցով նրանք մայրենի լեզվով աստիճանաբար խոսել են սովորում: Պեսը է նաև նշել, որ այդ տարիքի երեխաների խոսքը տարբերվում է մեծերի խոսքից: Նրանց լեզվի հնչյունական համակարգը դեռ բավականաչափ զարգացած չէ՝ բառերը հստակ արտասանելու համար:

Երեխայի խոսքը զարգանում է մտածողության զարգացմանը համընթաց: Մտածողությունն ուսումնասիրում են շատ գիտություններ՝ տրամաբանությունը, հոգեբանությունը, մանկավարժությունը, մաքենատիկան, լեզվաբանությունը և այլն:

Է. Կալապարեղը՝ Պիհաժեի ուսուցիչը, բանականության գործառույթը բնուրագորում էր որպես հոգեբանական հարմարողականություն նոր պայմաններին: Նրա կարծիքով՝ բանականությունը նոր պայմաններին հարմարեցում է: Այդ իսկ պատճառով՝ բանականությունը արտացոլվում է տարրական փորձերի և սխալների մեջ, քանի որ վարկածները հիմնավորվում են փորձերի ընթացքում: Վ. Կյոլերը և Կ. Բրյուլերը բանականությունը համարում էին այնպիսի դրսարում, որի դեպքում բացառում են փորձերն ու սխալները: Պիհաժեի կարծիքով՝ կալապարեղի չափանիշը շատ լայն է, իսկ Կյոլերինը և Բրյուլերինը՝ շատ նեղ:

Պիհաժեն նշում է, որ բանականության հայտնվելու պահը դժվար է ճշտել: Դրա համար էլ հետևելով՝ ժառանգականության մերուին՝ Պիհաժեն նշում էր երեխաների զարգացման փուլերի հաջորդականությունը: Այդ դեպքում յուրաքան-

յուր հաջորդ փուլն ուղիղ առաջընթաց է նախորդի համեմատությամբ: Այս առաջադեմ շարժման ներքո գալիս է նի պահ, երբ երեխայի վարքը դառնում է տրամաբանորեն պատճառաբանված<sup>10</sup>:

«Նոր խնդիրները երեխային մղում են գործունեության նոր ձևերի՝ մասնավորապես գիտական հասկացությունների և տրամաբանական գործողությունների: Դա կախված է ուսուցման կազմակերպումից, որը վաղ բն ուշ հասցնում է մտածողության կառուցվածքի փոփոխմանը»<sup>11</sup>: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է նախադպրոցական տարիքում օտար լեզվի ուսուցման ազդեցությանը երեխաների մտածողության զարգացման վրա: Ակնհայտ այն է, որ եսակենտրոնացման դրսարումը տեղի չի ունենում միայն օտար լեզվի բնագավառում: Պատճառն այն է, որ եսակենտրոն խոսքը անցումային տարիքի երևույթ է, որը հաղթահարվում է աստիճանաբար՝ շրջապատի հետ շփման օգնությամբ:

Օտար լեզուն, ի տարբերություն մայրենի լեզվի, ձեռք է բերվում ուսուցման միջոցով, քանի որ բացակայում է բնական միջավայրը: Բացի այդ՝ օտար լեզվի ուսուցման մեթոդները տարբերվում են մայրենի լեզվի ուսուցման մեթոդներից նրանվ, որ մայրենի լեզվի միջոցով հարատանում է երեխաների մտահորիզոնը, իսկ օտար լեզվով երեխաները հաղորդակցվել են սովորում: Եվ վերջապես, նախնական բառապաշարի բացակայությունը երեխային բռյալ չի տալիս հնքնուրույն խոսել: Օտար լեզվի ուսուցումը միանգամից կրում է համայնացված բնույթը, որը դրական ազդեցություն է բողոքում մայրենի լեզվի եսակենտրոն խոսքի հաղթահարման վրա: Ըստ Էլզոնիմի՝ խաղը մեծ դեր ունի «հմացական եսակենտրոնացման» վերացման խնդրում<sup>12</sup>: Ուստի խաղերի կիրառումը նոյնպես մեծ կարևորություն ունի օտար լեզվի ուսուցման գործընթացով:

Այսպիսով, օտար լեզվի վաղ ուսուցումը կարելի է համարել եսակենտրոն խոսքի հաղթահարման ձևերից մեկը, քանի որ օտարալեզու պարագաներների ընթացքում մենք հաղորդակցվում ենք երեխաների հետ՝ ծանոթացնելով նրանց մեկ ուրիշ լեզվական համակարգի և շեղելով իրենց մայրենի լեզվի եսակենտրոն մտքից: Մենք կիրառում ենք ուսուցման ճանաչողական մեթոդ, որը երեխաների մտածողությունը հեռացնում է ինքնուրույն մեխանիկական արտահայտման ձևերից, և ուղղորդում ենք նրա միտքն ու խոսքը դեպի թեմատիկ և իմաստալից հաղորդակցում:

Երեխաների կանոնավոր հոգեկան զարգացումն ապահովելու համար պետք է օրն այնպես կազմակերպել, որ նրանք կարողանան շփմել և մեծերի, և հասակակիցների հետ:

Սիամգամայն ճիշտ է նախադպրոցականներին դպրոցի նախապատրաստման գաղափարը: Սակայն այդ գաղափարը պետք է իրագործել արդյունավետ ծրագրով: Ծրագիրը կրի աստի-

ճանական և համակարգված բնույթ:

Քանի որ պարապմունքները համագործակցած միջոցներն են, ապա պարապմունքների միջոցով մենք երեխաներին շեղում ենք եսակենտրոնացումից, և այս գործնթացը տեղի է ունենալ գիտելիքների հաղորդման հետ միաժամանակ:

Օսար լեզվով հաղորդակցվելու ընթացքում երեխաները սովորում են լսել ուսուցչի և իրենց հասակակիցների հարցերը: Նրանց ուշադրությունը կենտրոնանում է գրուցակցի վրա: Դամառու պատասխաններից սկսած՝ նրանք աստիճանաբար սովորում են ընդարձակել իրենց պատասխանները և հարցեր տալ խոսակցության թեմայի շուրջ:

Այսպիսով, երեխաները գիտակցում են, թե ում հետ են խոսում իրենք, ինչի մասին են խոսում, ինչպես պետք է պատասխաննեն և ինչ հարցեր կարող են առաջարկել: Այդ երևույթը տեղի է ունենալ ուսուցչի ստեղծած խոսքային իրադրությունների միջոցով: Նման իրավիճակներով գործնթացը երեխաներին մղում է հաղորդակցվելու և միաժամանակ հետզիտեն գերծ է պահում ինացական և հաղորդակցական եսակենտրոնացումից:

Մենախոսության ժամանակ երեխաներն անդրադարձում են հաղորդակցման պատմողական ձևին, այն է՝ տեղեկատվություն, նկարագրություն և թեմատիկ մենախոսություն: Դաղորդակցման այդ ձևի ժամանակ երեխաները գիտակցում են իրենց խոսքը. ասենք՝ նրանք նախաճաշից առաջ տեղեկացնում են դայակին, որ քաղցած են: Ուզում են ուտել հաց, կարագ և ջեմ, խմել մի բաժակ կաթ:

Երեխաները նկարագրում են նաև ժամոր միջավայրը, նկարագրում են որոշ դեպքեր, բնութագրում ընկերներին, կարծիք հայտնում թօչուների, կենդանիների վարդի մասին, ուսուցչին պատմում են իրենց ընտանիքի մասին, ներկայացնում ընտանիքի անդամներին:

Օսար լեզվով պարապմունքների ժամանակ որոշակի բառեր սովորելու հետ մեկտեղ երեխաները հետզիտեն սովորում են արտահայտվել՝ գիտակցելով, որ իրենք ոչ թե խոսում են իրենց այնպես, իրենց համար, այլ խոսում են կամ ուսուցչի, կամ ընկերոջ, կամ տվյալ լեզուն ինացող որևէ մեկի հետ:

Եթե շեշտադրենք օտար լեզվի ուսուցման կարևորությունը նախադպրոցական տարիքից, ապա կարող ենք եզրակացնել, որ 3,5 տարեկան հասակից օտար լեզվի ուսուցումն սկսելը նպատակատղված է և երեխային դպրոց հաճախելուն նախապատրաստելուն, և եսակենտրոն խոսքի հետզիտեն վերացումն ապահովելուն:

Երեխայի եսակենտրոնացումը հնարավոր չէ կամիսել միայն նրան դիտողություն անելու միջոցով: Դա հնարավոր է երեխայի բազմաբնույթ գրավածությունն ապահովելով այնպիսի միջոցներով, ինչպիսիք են խաղը, ուսումնական առարկաները՝ ներառյալ ներկրորդ և երրորդ լեզուները, իրենց տարիքին համապատասխան միջոցառումները և այլն:

Դարձ չկա կրկնելու, որ օտար լեզուների ուսուցումը պարտադիր կերպով պետք է ընդգրկվի ուսումնական ծրագրերի մեջ՝ երեխաների հանացած խոսքի անցմանն օժանդակելու նպատակով:

<sup>1</sup> **Ж. Пиаже.**, Теория, эксперименты, дискуссии. М., “Гардарики”, 2001, с. 49. (Все ссылки взяты из этого издания.)

<sup>2</sup> Глава I, с. 32-41.

<sup>3</sup> Глава II, с. 41-105.

<sup>4</sup> Глава IV, с. 278-406.

<sup>5</sup> **Ж. Пиаже.** Главные черты логики ребенка. С. 51.

<sup>6</sup> Предисловие. С. 19.

<sup>7</sup> Классификация функций детского речи. С. 43.

<sup>8</sup> **Ж. Пиаже.** Эгоцентрическая речь. С. 42.

<sup>9</sup> Предисловие. С. 9.

<sup>10</sup> Предисловие. С. 13.

<sup>11</sup> **Гальперин, Эльконин.** К анализу теории Ж. Пиаже. С. 322-324.

<sup>12</sup> **Эльконин.** Игра и преодоление познавательного эгоцентризма. С. 423-428.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

<sup>1</sup> **Ж. Пиаже.** Теория, эксперименты, дискуссии. М., “Гардарики”, 2001.

<sup>2</sup> **Д. Б. Эльконин.** Игра и преодоление познавательного эгоцентризма. М., “Педагогика”, 1978.

<sup>3</sup> **П. Я. Гальперин, Д. Б. Эльконин.** Анализу теории Ж. Пиаже о развитии детского мышления, 1967.

<sup>4</sup> **Л. С. Выготский.** О природе эгоцентрической речи. 1934.

#### THE ROLE OF TEACHING FOREIGN LANGUAGE IN THE PROCESS OF FACILITATING AND OVERCOMING EGOCENTRIC SPEECH

MARINE SARGSYAN

Competitor of the YSPU named after Kh. Abovyan

Summary

The author of the article mentions the great discovery of Jean Piaget about the display of egocentric speech in early childhood. She also proves that some conditions appear while teaching a foreign language, which are favorable for overcoming the egocentric speech. They are: the new atmosphere for communicating and the application of various games.

**ՈՐՈՇ ՄԵԹՈՂԱԶԵՎԵՐԻ ԵՎ ՀՆԱՐՔՆԵՐԻ  
ԿԻՐԱԾ-ՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՐՄԱՆ  
ԳՈՐԾԲՆԹԱՑՈՒՄ ՀԻՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ  
7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ\***

**Արմինե Մուրադյան**

ԴՊՄԴ կենսաբանության և մրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

Ալենախոսության թեման՝ կենսաբանության դասավանդման առանձնահատկությունները հիմնական դպրոցում

Գիտական դեկան՝ Զարուհի ՎԱՐԴԱՍՅԱՆ՝ կենսաբանական գիտությունների դոկտոր



Խիստ կարևորում է կենսաբանության դասավանդման մեթոդիկայի դերը, որը որոշում է կենսաբանական գիտական գիտելիքների աշակերտներին փոխանցման եղանակներն ու միջոցները:

Այսօրվա հիմնական դպրոցում կարծես հակասություն է առաջացել սովորողների կողմից կենսաբանական գիտելիքներ ծեռք բերելու ձգտման և գոյություն ունեցող ավանդական մեթոդների դիրքակտիկական հնարավորությունների և կենսաբանության ուսուցչի կողմից ուսումնական նյութի նորովի մատուցման ձգտման ու առկա ավանդական մեթոդական համակարգի հնարավորությունների միջև:

Ուստի, ուսումնական նյութի մատուցման նորարարական մեթոդական համակարգի ներդրումը ուսումնական գործընթացի մեջ անհրաժեշտ ու հրասանական է: Անշահի կարևորվում է կենսաբանության ուսուցման գործընթացի զարգացման ներկա ժամանակաշրջանում դասագործընթացի կառուցվածքի որոշ փոփոխությունների կատարումը՝ կապված ավանդական և ժամանակակից մեթոդների զուգակցված կիրառման հետ [1]:

Մեր ուսումնասիրությունների խնդիրն է եղել

կենսաբանական ուսումնական նյութի մատուցման միջոցների ու հնարաների այն համակարգի ստեղծումն ու ներդրումը, որի հիման վրա նշակած դասաձևերը կապահովեն աշակերտների կենսաբանական կրթության բարձր արդյունավետությունը:

Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր կազմում են երկու խումբ՝ ավանդական և նոր կամ ժամանակակից:

Ավանդական են հաճարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության պարզ փոխանցումը սովորողին և նրա պարզ վերարտադրությունը:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռք բերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ նաևնակցությունը: Ժամանակակից մեթոդներից են՝ խճանկար, պիզզա, ծնագնի, փոխգործուն նշանների համակարգ, Վենի դիագրամ, խմբավորում, մտագրոհ կամ մտքերի տարափ, ապագայի անիվ, գաղափարների (հասկացությունների) քարտեզագրում, T-աձև աղյուսակ, քառարաժան, խորանարդում [4]:

Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են.

- Աշակերտները նյութը սովորում են ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի:

- Աշակերտներն ապավիճում են ոչ այնքան հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործությունը:

\* Ներկայացվել է 04.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

ժական, քննադատական մտածողությանը:

- Աշակերտների համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար:

- Աշակերտները ձեռք են բերում համագործակցային սոցիալական փոխազդեցության, հաղորդակցական կարողություններ:

- Նյութի յուրացման ընթացքում աշակերտները հնարավորություն են ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել ու կիրառել սովորածը:

- Ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Առաջարկվող տեխնոլոգիայի էռլույն այն է, որ առաջին անգամ մենք բնութագործում ենք աշակերտների ուսումնական աշխատանքի ձևերն ու գործունեության միջոցները: Դա տալիս է երկու հնարավորություն:

- Աշակերտների անհատական առանձնահատկությունները գուգորդել այնպիսի առաջադրանքների հետ, որոնք կհամապատասխանեն նրանց խառնվածքին:

- Ուսուցման գործնթացը հաջողությամբ իրականացնելու, նպատակային կերպով պրոբեմային ուսուցման իրավիճակներ ստեղծելու համար:

Այստեղ ներկայացված յուրաքանչյուր մեթոդ կարելի է կիրառել դասապրոցեսի ցանկացած փուլում:

Ուսումնական գործնթացին ներկայացված ձևերի ու տեսակների մեջ շատ են նաև այնպիսիները, որոնք պահանջում են արտադասարանական աշխատանքներ, որոնցից մի քանիսը տեքստի հետ աշխատելու եղանակներ են, որոնք բացատրում են հասկացությունների ու տերմինների նշանակությունը: Ներկայացված մեթոդների օգնությամբ կարելի է զարգացնել և ստուգել աշակերտների ուսումնական հաջողությունները:

Կենսաբանության դասավանդման պրոցեսում ավանդական մեթոդներին գուգահետ ստվորողների ակտիվությունը բարձրացնող փոխմերգործուն մեթոդների և ուսումնառության ռազմավարությունների կիրառումը աշակերտների կողմից կենսաբանական գիտելիքների ձեռք բերման կարևորագույն պայմանն է [7]:

Սեր կողմից ուսումնասիրություններ կատարվել են Արագածոտնի մարզի Ավշենի հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտների մոտ, որտեղ աշակերտները ծանոթացել են կենդանի օրգանիզմների բազմազանությանը, կառուցվածքի և կենսագործունեության առանձնահատկություններին, նրանց կենսամիջավայրի պայմաններին, կարգաբանական տարրեր խմբերի պատկանող օրգանիզմներին, պատկերացում է ձևավորվել ուսումնասիրվող կարգաբանական խմբերի տեսակային բազմազանության, տարածման և էկոլոգիայի վերաբերյալ:

«Յոդվածուամիների տիպ» թեմայի ամփոփման դասի ընթացքում աշակերտներին ցուցադրվում է կարծ տեսաֆիլմ միջատների վերաբերյալ: Նախապես աշակերտներին զգուշացվում է, որ տեսաֆիլմը դիտելուց հետո գրելու են թվանշային թելադրություն:

Գրավոր թվանշային թելադրություն, տեսաֆիլմից հատվածը դիտելուց հետո: (Այո-1, ոչ-0)

1. Միջատների մեջ չկան ջրային կենդանիներ (0):

2. Բոլոր միջատներն ունակ են թռչելու (0):

3. Բոլոր միջատներն ունեն երեք զույգ վերջույթներ (0):

4. Գոյություն ունեն արդյոյք բուսակեր միջատների տեսակներ (1):

5. Միջատների մեջ առանձնացնում են երկու սեռ (1):

6. ճապուռները պատկանում են ուղղաթևավորների կարգին (0):

7. Կան թիթեռներ, որոնք կծում են (0):

8. Մեղուներն իրար ինֆորմացիա են հաղորդում թելիկների միջոցով (0):

Կարծ թվանշային թելադրության միջոցով ստուգվում է տեսական դասընթացից աշակերտների ստացած գիտելիքները և միաժամանակ նրանց տեսողական հիշողությունը, տեսական գիտելիքը գործնականում կիրառելու ունակության մակարդակը:

Կենսաբանական վիկտորինաների, բանավեճերի ընթացքում աշակերտների տրամաբանությունը բացահայտելու նպատակով մենք առաջարկում ենք կատակ-վարժություններ, որոնք հնարավորություն կտան ստուգելու նաև աշակերտի կողմից կենսաբազմազանության ճանաչողության մակարդակը: Նմանատիպ կատակ-վարժություններ կարենի է անցկացնել նաև դասաժամի վերջին: Այս պարագայում հնարավորություն է ստեղծվում աշխատացնել դասարանը, աշակերտների մեջ արթնացնել հետաքրքրասիրություն տվյալ թեմայի նկատմամբ: Որպես տարիքային առանձնահատկություն՝ աշակերտները փորձում են մտնել մրցակցության մեջ՝ «Ո՞վ կարող է առաջին և ճիշտ պատասխաննել»:

Թարթչավոր հողաբափ - հողաբափիկ ինֆուզորիա

Դիմար երկարականջ - էջ

Դանդաղուշ ու մեղրասեր - արջ


Դիմար թռչուն - հավ

Սարեր շալակած կենդանի - ուղտ


Աշակերտների՝ համեմատություն կատարելու ունակությունը ստուգելու նպատակով հարմար է կատարել կարգաբանական տարրեր խմբերի համեմատություն Վենի դիմարամի կամ T-ածն մեթոդի կիրառման միջոցով:

**ՎԵՆԻ ԴԻԱԳՐԱՄԱՅԻ ԿԻՐԱՉՈՒՄ**

**ա) Թոշունների և կաթնասունների դասերի համեմատություն**



**բ) Սողունների և թոշունների դասերի համեմատություն**



Վենի դիագրամը կառուցվում է երկու շրջանագծերով, որոնք կենտրոնում ունեն հատման մակերես: Այդ դիագրամը կարելի է օգտագործել զաղավարմերը միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ հիմնական դպրոցի 7-րդ դասարանի կենսաբանության դասավանդման ընթացքում, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, կարելի է կիրառել որոշ մեթոդաներ՝ կատակ-վարժություն, թվանշային թելադրություն, որոնք կօգնեն աշակերտների մեջ արթնացնել սեր և հետաքրքրություն կենսաբանության նկատմամբ:

Տեսաֆիլմերի հատվածների դիտումը նպաստում է աշակերտների ճանաչողության խորացմանը, բնություն-աշակերտ կապի հաստատմանն ու ամրապնդմանը, ինքնուրույնության ակտիվացմանը, տրամաբանական մտածողության,

անալիզ և սինթեզ կատարելու ունակության զարգացմանը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Бондаренко С. М.** Учите детеё сравнивать, М., 1981.
2. **Винокурова Н. К.**, Подумаем вместе, М., 1998.
3. **Крупенин А. Л., Крохина И. М.**, Эффективный учитель, Ростов-на-Дону, 1995.
4. **Сиромюк А. Л.**, Коррекция обучения и развития школьников, М., 2001.
5. **Спрингер С., Дейч Г.**, Левый мозг, правый мозг, 1983.
6. **Чернявская А. П.**, Индивидуальный подход к трудным подросткам, М., 1995.
7. **Галеева Н. А.** Сто приемов для учебного успеха ученика на уроках биологии, М., 2006.
8. **Տանգամյան, Ս. Յ. Սիսակյան**, 7-րդ դասարանի կենսաբանության դասագիրք, Երևան, «Տիգրան Մեծ», 2007:

---

#### THE USE OF SEVERAL TYPES OF METHODS AND TRICKS IN BIOLOGYTEACHING PROCESS IN THE 7TH GRADE OF PRIMARY SCHOOL

**ARMINE N. MURADYAN**

#### Summary

It is effective when some methods, like joke- exercise, digital dictation, etc. are used during the teaching process of biology in the 7th grade of primary school.

### **Նոնա Վանյայի ՊողոսՅան**

**Խ. Արովյանի անվան ԿՊՄՀ մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության  
ամբիոնի հայցորդ**

**Ատենախոսության թեման՝ Սոցիալականացման խնդրի լուծումը տարրական դպրոցում  
Գիտական դեկան՝ Իզարելա ԲԱԲԱՅԱՆ՝ մանկ. գիտությունների թեկնածու, դոցենտ**



**Ղ**արոց հաճախելը կարևոր իրադարձություն է ցանկացած երեխայի կյանքում: Սակայն ոտք դնելով դպրոց՝ երեխան հանդիպում է որոշակի դժվարությունների, ունենում է հարմարման խնդիրներ: Այդ խնդիրներն ավելի սուսուզ հասկանալու և լուծելու համար նախ պետք է պարզել դրանց հիմքում ընկած պատճառները: Եթեադրելով, թե դժվարությունների և հարմարման խնդիրների ծագումը կարող է պայմանավորված լինել նրանով, որ դպրոցահասակ երեխայի մոտ բացակայում է դպրոց գնալու ցանկությունը՝ հարցում իրականացրինք և 5-6 տարեկան մի քանի երեխաների ուղղեցինք հետևալ հարցերը.

- Ցանկան՝ եմ ես գնալ դպրոց: Խսկ ինչո՞ւ:
  - Ցնցեցին պատասխաններ.
  - Այս: Որ լավ սովորեն: (Չահանե)
  - Այս: Ես քնել չեմ սիրում, ուզում եմ գնալ դպրոց, որ չընեմ: (Լիանա)
  - Այս: Որ սովորեն: (Լիլի)
  - Այս: Որ շատ բաներ սովորեն ու դառնամ հայտնի նկարչութի: (Գայանե)
  - Ոչ: Ժամանակ չունեմ դպրոց գնալու, միանգամից համալսարան եմ ընդունվելու: (Գուրգեն)
  - Այս: Որ սովորեն ու բժշկուի դառնամ: (Միլենա)
  - Ոչ: Ուզում եմ տանը մնալ, տանը լավ է: (Դավիթ)
  - Այս: Դպրոցում հետաքրքիր է, այնտեղ շատ բաներ են սովորում: (Արեն)
- Պարզվում է, գոեթե բոլոր երեխաներն են ցանկանում են դառնալ դպրոցական: Գուցե դրդա-

պատճառները տարբեր են, երբեմն նաև չգիտակցված, բայց կարևոր այն է, որ կա ցանկություն, ձգտում: Դա ավելի ակնհայտ է դաշնում, եթե խաները «դպրոց-դպրոց» են խաղում՝ ստանձնելով թե՝ ուսուցչի, թե՝ աշակերտի դերեր: Նետաքրքիր է դիտելը, թե ինչ ոգևորությամբ են նրանք դասավիրում արողները, սեղանները, ինչպես են վերցնում թղթեր ու գրիչներ, ցուցափայտը ձեռքին ուսուցչի կերպարի մեջ մտնում կամ հնագանդ աշակերտի դեր ստանձնում: Այս ամենը վկայում է այն նաև, որ նախադպրոցականը ուզում է դպրոց գնալ, դառնալ դպրոցական: Հաճախ ծնողները մտածում են, թե եթե իրենց երեխան ցանկանում է դպրոց գնալ, ուրեմն նա ոչ մի դժվարության չի հանդիպի, նա արդեն պատրաստ է դպրոցին: Մասնավորապես հանգիստ են լինում այն երեխաների ծնողները, ովքեր հաճախում են նախադպրոցական հաստատություններ: Մեր երկրում նախադպրոցական կրթությունը պարտադիր բնույթ չի կորում, այդ իսկ պատճառով երեխաների մի մասը հաճախում է նախադպրոցական հաստատություն, իսկ մի մասը՝ ոչ: Նախադպրոցական կրթության հիմնական խնդիրներից մեկը երեխային դպրոցական ուսուցմանը նախապատրաստելն է: Այստեղ երեխան ստանում է բազմաթիվ գիտելիքներ և ձեռք է բերում անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ: Բնականարար, այն երեխաները, ովքեր չեն հաճախել նախադպրոցական հաստատություններ, դպրոցում հարմարման խնդիրներից բացի կունենան նաև դժվարություններ շիման և սովորելու մեջ: Սակայն չի կարելի նաև միանալակորեն պնդել, որ նախադպրոցական հաստատություններ հաճախած երեխաները չեն հանդիպում դժվարություններից: Նրանք ևս ունենում են հարմարման խնդիրներ, չե՞ն որ դպրոցը շատ է տարրերվում նախադպրոցական հաստատությունից:

Առաջին դասարանցիների շրջանում ուսում-

\* Ներկայացվել է 12.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

նասիրություններ են կատարվել. պարզվել է, որ նրանց մեջ կան այնպիսի երեխաներ, ովքեր մինչ դպրոց ընդունվելն ունեցել են գիտելիքների և ունակությունների մեջ պաշար, բայց դպրոցում վատ են սովորում: Պատճառն այն է, որ եթե պարագնումքներն անմիջական հետաքրքրություն են առաջացնում, նրանք արագ ըմբռնում են նյութը, իեշտ են լուծում առաջարկված խնդիրները, իսկ երբ դասի մեջ առկա չեն հետաքրքրության տարրեր, և երեխան ստիպված է սովորել պարտքի ու պատասխանատվության զգացումներից դոդված, սկսում է շեղվել. քիչ է ձգուում արժանանալ ուսուցչի գովեստին: Իսկ սա նշանակում է, որ երեխան բավականաշափ պատրաստ չէ դպրոցին, չի կարող դարոցական պարտականություններին ճիշտ վերաբերվել [7, 217]:

Դժվարությունները կարող են կայանավորված լինել նաև երեխայի համար դպրոցական անսովոր ռեժիմով. պետք է ժամանակին արժանալ, չի կարենի ուշանալ, բացակայել դասերից, բոլոր դասերին պետք է նստել հաճախատ, տնային հանձնարարությունները պետք է ժամանակին կատարել և այլն [5, 90]:

Դժվարությունները կարող են կապված լինել նաև ուսուցչի, դասընկերների և ընտանիքի անդամների հետ ուսուցած փոխհարաբերությունների բնույթի հետ: Որքան էլ ուսուցչը բարյացական վերաբերմունքը ունենա առաջին դասարանցիների նկատմամբ, այնուամենայնիվ աշակերտը չի կարող որոշ չափով երկշոտություն չգգալ: Ուսուցչը խիստ է, հեղինակավոր, նրա պահանջները պետք է կատարել, իսկ կամոններին՝ ենթարկվել: Սրա հետևանքով որոշ երեխաներ դառնում են կաշկանդված ու աճաչկու: Իսկ ոճանք էլ մի ժամանակ կարող են երես առնել: Դնուտ մանկավարժը պետք է հավասար պահանջներ ներկայացնի բոլորին, բայց հաշվի առնի նրանց անհատական առանձնահատկությունները:

Այս տարիքի երեխաները գուսաք են, կաշկանդված իրենց շփման մեջ, քանի որ չփառեն, թե ինչպես դրսարդը իրենց նոր հարաբերություններում: Առաջին դասարանցին համադասարանցիներին ընդունում է ուսուցչի միջոցով, արժենորում է այն համադասարանցիներին, ում գնահատում է ուսուցչը: Այդ պատճառով ուսուցչը՝ որպես հեղինակություն, կարող է ուղղողութել երեխայի հասարակական շփումները: Հետզհետեւ մեծանում է հասակակիցների հետ շփվելու պահանջը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կամոնները, միջանձնային շփման նրբությունները [8, 496]:

Այս տարիքում երեխան հաճախ է փոխում իր ընկերներին, նրանք հիմնականում խաղընկերներ են: Պատահում է, որ նոր շղապատում երեխան իրեն շփոթված է գգում և չի կարողանում ընկեր-

ներ գտնել: Այս դեպքում ևս մեծ է ուսուցչի դերը: Միայն ուսուցչը կարող է այնպիս անել, որ դասարանում սովորողների փոխհարաբերությունները նորմալ լինեն, երեխաները միջանց վերաբերվեն հարազատի պես, չփիճեն ու չթշնամանան, դասարանում չլինեն անտեսված երեխաներ: Նա պետք է խորախուսի թույլերին աշխատասիրության և նկատողություն անի ուժեղներին ավելորդ ինքնավատահարթական համար:

Դպրոց ընդունվելու հետ միասին փոխվում է նաև երեխայի դիրքն ընտանիքում: Նա ստանում է նոր իրավունքներ և պարտականությունները: Ըստանիքների մեջ մասուն երեխայի իրավունքները հարգվում և լրիվ կերպով բավարարվում են: Հաճախ զգալով մեծերի բարի վերաբերմունքն ու իր կարիքները անմիջապես բավարարելու պատրաստականությունը՝ որոշ երեխաներ սկսում են չարաշահել իրենց դիրքը: Եսասիրության առաջացման վտանգից խուսափելու համար պետք է ցույց տալ, որ ընտանիքի մյուս անդամները ևս պակաս կարող հիգաներ ու հետաքրքրություններ չունեն: Երեխան պետք է հաշվի նստի դրանց հետ և իր դպրոցական գործերը չափից ավելի կարևոր չհամարի ընտանեկան այլ գործերից [1, 49], [5, 76]:

Մի շաբթ հոգեբաններ Գ. Աբրամովա, Վ. Դավիդով և այլք գտնում են, որ այս տարիքում երեխան ճգնաժամ է ապրում, և առաջին ու գլխավոր պատճառը հենց այդ է, որ անցումը նախադպրոցական տարիքից կրտսեր դպրոցական տարիք այնքան էլ սահուն ու հեշտ չի ընթանում: ճգնաժամի մասին են վկայում այն բոլոր բացասական երևույթները, որ տեղի են ունենում այս շրջանում: Դրանցից են:

1. Դադար: Հաճախ երեխան կարծես չի լսում, չի արձագանքում մեծահասակի ասածներին. Կամ չի կատարում խնդրանքը, կամ որքան հնարավոր է հետաձգում է այն:

2. Վեճ: Երեխան սկսում է վիճել ամեն չնչին բանի համար, հաստատել իր կարծիքը, ցույց տալ իր նշանակալիությունը:

3. Խորածանկելություն: Սովորական գործողություններ կատարելիս երեխան անում է այն, ինչից շահ է կանխատեսում: Սա հաճախ խաղային բնույթ է կրում:

4. «Հասունություն»: Երեխան իր վարքում և դասողություններում սկսում է կրկնօրինակել մեծերին:

5. Ուշադրություն արտաքինի հանդեպ: Երեխան կարող է երկար փնտել, թե ինչ հագնի, պնդել իր կարծիքը:

6. Կամակարդություն: Վկայում է հասուն լինելու մեջ ցանկության մասին. Երեխան կամակոր է ոչ այն պատճառով, որ ուզում է հստակ մի բան, այլ այն պատճառով, որ ցանկում է ցույց տալ իր

կարծիքը:

7. Պահանջկոտություն:

8. Ինքնուրույնություն:

Սակայն այս բացասական երևույթների կողքին կա նաև դրականը. երեխան իրեն «մեծահասակ» զգալու, հասուն լինելու, «մեծական» վարքածեր դրսնորելու, ինքնուրույն որոշումներ ընդունելու, կարծիք հայտնելու և այլն սուր ձգուում ու պահանջմունք է ունենալու: Դպրոց հաճախելը երեխայի համար սոցիալական միջավայրի և դիրքի փոփոխություն է, սեփական սոցիալական դիրքի ծերթերում, ինչն էլ արդեն մեծանալու նշան է: Ինչպես նշում են հայտնի հոգեբաններ L. Բոժովիչը և Գ. Աբրամովան, 6-7 տարեկանի ճգնաժամը երեխայի սոցիալական ես-ի ծնվելու շրջանն է [7, 240], [6, 476]:

Դպրոց ընդունվելու ու ուսումնական առաջին շրջանը ակտիվ վերակառուցումներ են առաջանալու երեխայի ողջ կենսակերպում և գործունեության մեջ: Երեխայի կյանքում տեղի են ունենալ բազմաթիվ հակասական և իրարամերժ գործընթացներ, որոնք կապված են երեխայի օրգանիզմում տեղի ունեցող հոգեկան և կազմարանախոսական փոփոխությունների հետ: Խաղային գործունեության փոխարեն առաջատար է դառնում ուսումնականը, սակայն խաղը շարունակում է կարևոր տեղ ունենալ երեխայի կյանքում, խաղայու պահանջմունքը չի փոխվում [5, 87]: Ահա և առաջին կարևոր հակասությունը. երեխան ուզում է խաղալ, բայց պետք է սովորի: Երեխայի ֆիզիկական ակտիվությունը կրծատվում է մոտ երկու անգամ, մինչքեզ շարժվելու պահանջմունքը մնում է նույնը: Ամենօրյա պարապունքների ընթացքում երեխայից պահանջվում է լարվածություն, ուշադրության կենտրոնացում, մարմնի հարաբերականորեն ոչ շարժում դիրք: Սա էլ երկրորդ հակասությունը: Բացի այդ՝ երեխան, հայտնվելով նոր սոցիալական իրավիճակում, մտնում է նոր հարաբերությունների մեջ թե՛ ուսուցիչ, թե՛ դասընկերների հետ, ինչն էլ իր հերթին գերծանրաբեռնում է նրան: Այս բոլոր հակասություններ ու դժվարություններն էլ ավելի են սրում ճգնաժամը: Ստեղծված պայմաններում երեխան ակտիվորեն փորձում է հարմարվել:

Անձնային, ֆիզիկական, սոցիալական գործններից և առանձնահասկություններից ելնելով՝ տարբեր աշակերտներ տարբեր կերպ են հաղթահարում հարմարումը: Յարմարման մակարդակները կարող են տարբեր լինել. ոմանք հեշտ են հարմարվում, ոմանք՝ մի փոքր ուշ, մի փոքր դժվար, իսկ ոմանց մոտ էլ կարող են ի հայտ գալ բացասական երևույթներ: Գոյություն ունեն հարմարման երեք մակարդակներ:

• Բարձր մակարդակ, երբ առաջին դասարանցին դրական է վերաբերվում դպրոցին, ներկա-

յացվող պահանջների հանդեպ ունի նորմալ վերաբերմունք, հեշտ է յուրացնում դպրոցական նյութը, խորքային և լիարժեք ընկալում այն, կարողանում է լուծել բարդ խնդիրներ, պատասխանատու է, կատարում է համձնարարությունները, հետաքրքրություն է ցուցաբերում, հաճույքով է հաճախում դպրոց:

• Միջին մակարդակ, երբ առաջին դասարանցին հաճույքով է հաճախում դպրոց, հասկանում է ուսուցչի հրահանգները, հեշտ է յուրացնում ուսումնական նյութը, եթե ուսուցչի բացատրությունները հստակ են և ակնառու, կենտրոնացնում է, երբ նյութը հետաքրքրում է իրեն, կարողանում է լուծել տիպական խնդիրները, սակայն մեծահասակի վերահսկման դեպքում, ընկերություն է անում դասարանցիների հետ, պարտաճանաչ է:

• Ցածր մակարդակ: Երեխան բացասական կամ անտարբեր վերաբերմունք ունի դպրոցի հանդեպ, հաճախ սկսում է հիվանդանալ, գերակայում է ճնշված տրամադրությունը, բացատրված նյութը յուրացնում է ոչ լիարժեք և ամբողջովին, դասագրքով ինքնուրույն աշխատելիս դժվարանում է, անհրաժեշտ է մշտական վերահսկողություն, բացակայում է մնաժիվացիան, հետաքրքրությունը, ձգուում է երկարատև հանգստի ու դադարների և այլն:

Հարմարման դժվարություններ ունեցող երեխաները կարող են դրսնորել տարարմույթ վարքածեր և ունենալ բազմաթիվ խնդիրներ: Ոնանք դառնում են անուշաղիք, կենտրոնացնան դժվարություններ ունեցող, կանոններին չենթարկվող: Ոնանք կարող են դրսնորել դիմադրություն, ակտիվ բողոք, լինել գերզգայուն, ոյուրագրգիռ, նեգատիվիզմով լի, ազրեսիվ: Ընդ որում՝ այսպիսի դեպքերում որևէ պատճամիջոց չի ազդում: Որոշ երեխաների մոտ սկսում է գերակայել տագնապակիությունը, տրամադրության անկումը, նրանք հաճախ հուզվում են, լաց լինում: Դժվար հարմարվող երեխաների մոտ կարող են առաջանալ հնասակար սովորություններ՝ եղունգների կրծում, մաստի ծծում և այլն:

Հարմարմանը նպաստում է հանգիստ, հարգալից և համբեսատար վերաբերմունքը թե՛ ուսուցիչ, թե՛ ծնողի կողմից: Պետք չէ նրան շտապեցնել, լարվածություն առաջացնել, ծանրաբեռնել շատ առաջարանքներով: Երեխան չպետք է իրեն ճնշված կամ վախեցած զգա: Օգտակար չեն նաև ծաղրը, բացասական վերաբերմունքն ու պատիմները [7, 208]:

Հնուտ ուսուցիչները անհատական մոտեցում են ցուցաբերում, հաշվի են առնում անձնային որակները, տարիքային և անհատական առանձնահատկությունները: Անհրաժեշտության դեպքում վեր են հանում առկա խնդիրները և փորձում լուծումներ գտնել: Որպեսզի երեխայի հարմարու-

մը անցնի առավել արդյունավետ, մանկավարժը մասնավորապես 6 տարեկան աշակերտների հետ պետք է ուսումնական գործընթացն իրականացնի ակտիվ գործունեության, խաղերի ձևով կամ դասի ընթացքում հաճախակի խաղեր կազմակերպի [3, 81]: Ուսուցիչը պետք է այնպես ամի, որ երեխայի մոտ ձևավորվի դրական տրամադրվածություն ուսումնական գործունեության նկատմամբ: Առաջին կիսամյակում պետք է երեխային վերաբերվի որպես նախադպորականի, հասկանա, որ նա դեռ ունի խաղալու, շարժվելու պահանջնունք, ուշադրությունը կայուն չէ և այլն: Եթու աստիճանաբար նրբանկատորեն ձևավորի նրա մեջ նոր որակներ, միջանձնային շփման համար անհրաժեշտ հմտություններ և այլն:

Հաճախ առաջին դասարանցիները իրենց հետ խաղալիքներ են բերում, ինչը կապող օրակ է տան և դպրոցի, մանկության և հասուն կյանքի միջև, ուստի հմուտ ուսուցիչը չի պատժում այս արարքը, այլ ընդունում և հասկանում է երեխայի պահանջնունքները: Հատկապես սա կարևոր է տագնապային, ամաչկոտ երեխաների համար, որոնք խաղալիքի օգնությամբ իրենց ապահով են գործ:

Հիմնականում դպրոցի հարմարման խնդիրների տևողությունը մեկ կիսամյակ է, որի ընթացքում հմուտ մանկավարժների և ուշադրի ծնողների օգնությամբ երեխաները կարողանում են հարթակութել ծագած դժվարությունները, այլապես խնդիրները առավել խորանում են՝ կրելով կայուն բնույթ:

Դարդացական հարմարման դժվարությունների հարթակարման համար շատ կարևոր է, որ երեխան և ֆիզիկապես, և հոգեախտ պատրաստ լինի դպրոցին: Ֆիզիկապես ասելով՝ պետք է հասկանալ այն կազմաբանախոսական փոփոխությունները, որ տեղի են ունենում կրստեր դպրոցական տարիքում (ողնաշարային, գլխուղեղային, մատների ֆալանգների և այլն): Հոգեբանական պատրաստվածություն ասելով՝ չպետք է հասկանալ

միայն երեխայի դպրոց գնալու ցանկությունն ու դրդապատճառները, թեպես դա էլ պակաս կարևոր գործոն չէ: Դրանցից բացի՝ երեխաները պետք է իմանան, թե ինչ է դպրոցը, ինչով է ինքն այնտեղ գրադարձնելու: Այդ գործում կարևոր է ծնողների դերը. նրանք պետք է կարողանան երեխային դրականորեն տրամադրել դպրոցի և ուսման նկատմամբ, հաճախակի գրուցել նրա հետ այն փոփոխությունների մասին, որ տեղի են ունենալու նրա կյանքում, նոր ռեժիմի առկայության, նոր պարտականությունների և նոր դիրքի մասին, պետք է նրանց նախապատրաստել, որպեսզի նոր իրադարձությունները նրանց համկարծակի չըերեն, իսկ հարմարումը հնարավորինս հեշտ ընթանա [3, 74-75]:

Այս բոլոր նրբությունների գիտակցումը բավականաչափ օգտակար կլինի մանկավարժին արդյունավետ հարմարում ապահովելու և հետագա ուսումնական գործունեությունը կառավարելու համար:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Էկոնիմ Դ. Բ.**, Կրստեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, «Լույս», 1975, 104 էջ:
- Էլյան Տ. Ս. Ս.**, Ուսուցիչը և նրա գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, Երևան, «Լույս», 1980, 124 էջ:
- Կրուտեցիկ Վ. Ա.**, Մանկավարժական հոգեբանության հիմններ, Երևան, «Լույս», 1976, 443 էջ:
- Պետրովսկի Ա. Վ.**, Երեխաները և ընտանեկան դաստիարակության տակտիկան, Երևան, «Լույս», 1983, 121 էջ:
- Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա. Վ. Պետրովսկու խմբ., Երևան, «Լույս», 1977, 398 էջ:
- Աբրամով Ռ.**, Վզрасտման ուսուցչության համար առաջարկներ, Երևան, «Վայ», 1990, 160 էջ:
- Բոխովիչ Լ.** Լավացություն և այլ գործություններ, Երևան, «Վայ», 1990, 160 էջ:
- Պողոսյան Ն.** Առաջնամասն դժվարությունների հարմարման համար շատ կարևոր է, որ երեխան և ֆիզիկապես, և հոգեախտ պատրաստ լինի դպրոցին: Ֆիզիկապես ասելով՝ պետք է հասկանալ այն կազմաբանախոսական փոփոխությունները, որ տեղի են ունենում կրստեր դպրոցական տարիքում (ողնաշարային, գլխուղեղային, մատների ֆալանգների և այլն): Հոգեբանական պատրաստվածություն ասելով՝ չպետք է հասկանալ

#### THE FISRT-FORMERS' ADAPTATION DIFFICULTIES AND THEIR OVERCOMING

**NONA POGHOSYAN**

Competitor of the Chair of Professional Education and Applied Pedagogy of ASPU after Kh. Abovyan

#### Summary

The article describes all the difficulties and problems of adaptation, that has every child when entering school for the first time. At the same time , the reasons and the psychological origins of those problems are revealed and skills, ways, methods of pedagogical influence are suggested to overcome them.

**ԸՆԴՀԱՆՐԱՑԽՈՂ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՐՈՇ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ\***

**Գարեգին Գագիկի ՔԱՐԴԱՆՅԱՆ**

Վաճառքորի Դ. Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոցի տնօրեն, ֆիզիկայի ուսուցիչ  
Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի  
մամկավարժության ամբիոնի հայցորդ

Ալենախոսության թեման՝ Կրկնությունների կազմակերպման մեթոդական համակարգը ավագ դպրոցում (ֆիզիկայի օրինակով)

Գիտական դեկան՝ Սպարտակ Սոյոզյան՝ մանկավարժական գիտությունների դոկտոր



**Ժ**ամանակակից կրթության գլխավոր նպատակներից մեկը սովորողների աճնային որակների զարգացումն է: Այդ հնդրի հետ կապված այսօր փոփոխվում են ուսուցման մանկավարժահոգեբանական տեխնոլոգիաները և մեթոդները, որոնք թույլ են տալիս սովորողներին ակտիվորեն ներգրավել գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման գործընթացին: Դայաստանում 12-ամյա կրթական համակարգի անցումը նոր հնարավլորություններ է ստեղծում ուսուցանությունների բաշխման, կառուցվածքային փոփոխությունների կատարման, միջառարկայական և ներառարկայական կապերի վերանայման համար: Ըստ գործող ծրագրերի՝ 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակն ամբողջությամբ տրամադրվում է կրկնություններին, խորհրդակցություններին և անհատական պարապմունքներին ավարտական քննական առարկաներից: Պետք է ասել, որ այս մոտեցումը անհայտեակ է կրթական գործընթացներում և առաջ է բերում մի շարք խնդիրներ, որոնք ենթակա են լուծման:

Դա նշանակում է, որ մանկավարժության մեջ անհրաժեշտություն է առաջացել ստեղծել կրկնությունների կազմակերպման ուսումնա-մեթոդական համակարգ, այլապես մեծ վտանգ գոյություն ունի կրկնությանը հատկացված ժամաքանակի փոշիացման և այն ոչ արդյունավետ օգտա-

գործման առումով: Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել հետևյալ ավանդական հարցերի պատասխանները. «ինչո՞ւ կրկնել», «ի՞նչ կրկնել» և «ինչպե՞ս կրկնել»:


Սամկավարժական գիտության զարգացման տարրեր փուլերում ուսուցման գործընթացում կրկնության կազմակերպման հետ կապված խնդիրները միշտ եղել են հետազոտողների ուշադրության կենտրոնում:

19-րդ դարի կեսերին Կ. Դ. Ուշինսկին հիմնավորեց կրկնության տեղը և դերը ուսուցման գործընթացում, ինչպես նաև վերանայեց կրկնության կազմակերպման մեթոդիկային վերաբերող հարցերը [1]: Ուշինսկու կարծիքով՝ կրկնությունը պետք է իրականացվի այնպես, որ նպաստի նոր նյութի ընկալմանը և թույլ տա աշակերտին գիտակցարք կիրառելու նախկինում ստացած գիտելիքները՝ հարստացնելով դրանք նորերով: Անընդհատ պետք է կրկնել հին նյութը՝ ամեն անգամ ավելացնելով նորը, այնպես, որ նորը կառուցվի նիփ վրա:

Կրկնության հարցերը հետազոտողների շրջանում լայն տարածում գտան նաև 20-րդ դարի երկրորդ կեսին: Այդ ժամանակ կարևոր նշանակություն ձեռք բերեցին կրկնության ընթացքում նտավոր գործունեության հետ կապված խնդիրները: Կատարվեցին հետազոտություններ միջնակարգ դպրոցներում կրկնության կազմակերպման համակարգի և մեթոդիկայի հարցերի լուծման վերաբերյալ:

Սինչ այժմ ուսումնական ծրագրերում յուրաքանչյուր թեմայի ավարտից հետո առկա է այդ գործիկ (հպանցիկ) կրկնություններ, սակայն հատ-

\* Ներկայացվել է 03.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:



Նկ. 1

կացված ժամաքանակները չեն բավարարում ամբողջությամբ ընդհանրացնելու տեսական նյութը, առավել ևս այն կիրառելու գործնական խնդիրներ լուծելու համար: Ներկայումս ավարտական ամփոփիչ կրկնություններին զգալի ժամաքանակ է հատկացված, որոնց արդյունավետ կազմակերպումը նախօրոք մշակված և հիմնավորված մոտեցումներով հնարավորություն կտա բարձրացնել սովորողների գիտելիքների որակը և նրանց մրցունակությունը բուհական քննություններում: Կոնկրետ առարկայի կրկնության կազմակերպման ժամանակ առաջ է գալիս կրկնելու ենթակա նյութի ընտրության հարցը: Այդ խնդիրը պետք է մանկավարժության մեջ ունենալ ընդհանրական լուծում: Եթե ուսուցման գործընթացի բազմաթիվ բաղադրիչներից առանձնացնենք երեք՝ կազմակերպչական, բովանդակային և կիրառական, ապա կարելի է սխեմայի (նկ. 1) միջոցով մեկնարաննել դրանց տրամարանական կապը, որն ի վերջո որոշում է կրկնության իրականացման նշանակությունը և նրա ընդհանրացնող բնույթը:

Ինչպես երևում է, կրկնության հիմքում պետք է դնել նրա ընդհանրացնող բնույթը, մյուս կողմից՝ այն պետք է ծառայի տեսական նյութի կոնկրետ կիրառական խնդրին:

Այժմ պարզենք, թե այս կամ այն առարկայի կրկնության ժամանակ ինչ նյութ է անհրաժեշտ ընտրել: Ընդհանրապես, ուսուցման նպատակահարմարությունից ելնելով՝ ցանկացած գիտություն պայմանականորեն բաժանում են բաժինների: Օրինակ, ֆիզիկան բաժանվում է մեխանիկայի, քերմոդինամիկայի, էլեկտրականության, մագնիսականության, օպտիկայի և այլն, քիմիան՝ անօրգանական, օրգանական, անալիտիկ և այլն, մաթեմատիկան՝ հանրահաշիվ, երկրաչափություն և այլն: Այդ բաժիններից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է այլ ենթաբաժինների և այդպիս շարունակ: Սակայն յուրաքանչյուր գիտության հիմքում ընկած են հիմնարար գաղափարներ, հասկացություններ, օրենքներ, սկզբունքներ: Եթե ըստ ուսումնական ծրագրերի ուսուցումը կազմակերպվում է ըստ բաժինների ուսումնասիրման հերթականության, ապա կրկնության ժամանակ և ժամանակային, և բովանդակային առումով նպատակահարմար չէ անցած նյութը կրկնել ըստ բաժինների և թեմաների, այլ անհրաժեշտ է կրկնել ըստ առանցքային գաղափարների, որոնք տարբեր գիտությունների համար կարող են լինել տարբեր:

Մյուս կողմից՝ կրկնությունների ժամանակ առանձնապես կարևորվում են տեսական նյութի

կիրառման հնարավոր ձևերը՝ խնդիրների, վարժությունների, թեստերի լուծումը:

Կրկնության կազմակերպման նպատակով դասընթացի այդպիսի մողելավորումը թույլ է տալիս կրկնությունը դիտել որպես ուսուցման ընդհանրացնող մոդել։ Այդ դեպքում հնարավոր է լինում.

1. համակարգել աշակերտների գիտելիքները,
2. վեր հանել առանցքային գաղափարներ,
3. կարծ ժամանակում ընդհանրացնել մեծածավալ նյութը,
4. նախադրյալներ ստեղծել աշակերտների գործնական հմտությունները զարգացնելու համար,

5. կրկնության պրոցեսին տալ մեթոդաբանական ուղղվածություն,

6. բարձրացնել աշակերտների մրցունակությունը,

7. նախադրյալներ ստեղծել շարունակական կրթության իրականացման համար։

Վերոհիշյալ մոդելը կարելի է կիրառել կրկնությունների նպատակով տարբեր առարկաներից ուսումնա-մեթոդական ձեռնարկներ, դասագրքեր, խնդրագրքեր ստեղծելու համար՝ դրանով իսկ ապահովելով կրկնությունների կազմակերպման միասնական մոտեցում և խուսափել անպտուղ

ինքնազդունեությունից և ժամանակի վատնումից։

Այսպիսի փորձ այժմ գոյություն ունի միայն ֆիզիկայի դպրոցական դասընթացի համար [2, 3]:

Այսպիսով, կրկնությունը հանդիսանում է ուսուցման պրոցեսի կարևոր բաղկացուցիչ մաս, և նպատակահարմար է այն ընդգրկել ուսումնական ծրագրերում։

Նրա արդյունավետությունը կլինի առավել բարձր, եթե դիտարկվի որպես ուսուցանվող նյութի ընդհանրացնող մոդել և ունենա գործնական ուղղվածություն։

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սահմանական Կ. Ճ., Խմբական առաջնային տարրերի մեթոդաբանական ուղղվածություն, 1974, 584 ս.
2. Ծառության Ա. Մ., Ֆիզիկա-12: Ֆիզիկայի դպրոցական դասընթացի կրկնության կազմակերպման ուսումնամեթոդական ձեռնարկ։ Ավագ դպրոցի 12-րդ դասարանի ընդհանուր և բնագիտանարենատիկական հուսերի համար, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2012, 194 էջ։
3. Վամուրյան Ա. Մ. Պատրուհես կուրսա ֆիզիկա ուսումնական մեթոդական մեթոդական ձեռնարկներ, դասագրքեր, խնդրագրքեր ստեղծելու համար՝ դրանով իսկ ապահովելով կրկնությունների կազմակերպման միասնական մոտեցում և խուսափել անպտուղ

#### SOME PEDAGOGICAL- METHODOLOGICAL ISSUES CONCERNING THE ORGANIZATION OF GENERALIZING REVISIONS

**GAREGIN KARHANYAN**

#### Summary

A generalizing function of material revision in the process of teaching is analyzed. It is shown that revision may be regarded as a generalizing model of teaching.

**Կարինե ՄԱՅԻԼՅԱՆ**

Վաճածորի N20 հիմնական դպրոցի ուսուցչուհի



Միալված աշակերտի  
վրա մի բարկանա, չէ  
ո՞ր հիվանդ է իր կամ-  
քով չի հիվանդանու։

**Ե. ԿՈՂԲԱՅԻ**

**Կ**երջին տասնամ-  
յակում համբա-  
րական համակարգում  
զգալի փոփոխություն-  
ներ են կատարվել. նորովի են մեկնաբանվում կր-  
թության բովանդակության երթյունը, նրա բաղ-  
կացուցիչ տարրերը, կրթությունը և համբակրթու-  
թյունը կարգավորող օրենտդրական դաշտը, պե-  
տական կրթական չափորոշիչների վրա հիմնվող  
կրթական համակարգը (ծրագիր, դասագիր, ու-  
սուցման մեթոդներ, այլ) և հատկապես ուսուցչի  
դերի մեծացումը աշակերտի հետ հարաբերու-  
թյուններում։ Կրթության բովանդակության հիմ-  
նական հարցը շարունակում է մնալ ի՞նչ և ինչ-  
պէ՞ս սովորեցնելը, որը կրթության նկատմամբ  
հասարակական պահանջի աճի և տեղեկատվա-  
կան հոսքի մեծացման պայմաններում չի դադա-  
րում մնալ առանցքային։ Միանգամայն պարզ է, որ «ի՞նչ սովորեցնել» հարցը ապահովում է միայն  
գիտելիքներ և հասարակական հարմարվողակա-  
նություն, բնականաբար պետական չափորոշիչ-  
ների համապատասխան նակարդակային պա-  
հանց կամ «պետության կողմից ներկայացված  
պատվեր» հասկացությունը մնում է որից կախ-  
ված, երկրորդական գաղափար այսիքն չափո-  
րոշչահեն գիտելիքը, որի մասին մենք այնքան  
շատ ենք հիշատակում, չի նպաստում ուսման  
արդյունավետության բարձրացմանը, որովհետև  
գործող չափորոշչային համակարգը շարունա-  
կում է մնալ գիտելիքների փոխանցման և ոչ թե  
դրանց կիրառման, վերլուծության, համադրման  
կամ ստեղծագործական մակարդակի վրա։ Հաս-  
կանալի է, որ կրթական գործընթացի նաևնակցի՝  
մասնավորապես ուսուցչի խնդիրը դառնում է  
բազմաբնույթ և բազմաբովանդակ, հատկապես

որ աշակերտը պարտավոր է իր կազմաքանախո-  
սական երթյանը, առարկայական չափորոշչին և  
ծրագրին համապատասխան ստանալ ոչ միայն  
գիտելիքներ, այլև այդ գիտելիքներն ու կարողու-  
թյունները կիրառել նոր իրավիճակում և դրանք  
ստեղծագործաբար զարգացնել։ Համաձայն  
«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի. «Հան-  
րակրթությունը նպատակառողված է սովորողի  
մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական  
զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղա-  
քացու ծևավորմանը, ինքնուրույն կյանքի, մաս-  
նագիտական կողմնորոշմանը և մասնագիտա-  
կան կրթության նախապատրաստմանը»<sup>1</sup>։ Բնա-  
կանաբար ուսուցչի՝ որպես կրթական հարաբե-  
րությունների մեջ առանցքային դերակատարու-  
թյուն ունեցող անձի արժեքաբանական կողմն  
այն է, որ նա է որոշակի իմաստով պատասխա-  
նատվություն կրում ապագա հասարակության  
կյացածման գործում և այդ հասարակության մեջ  
կազմակերպած կրթություն և նոր կրթական մշա-  
կույթ ծևավորելու հարցում։ Պարզ ասած՝ հասա-  
րակության ցանկացած մասնագիտության տեր  
անձի կրթության և դաստիարակության ակուն-  
քում կանգնած է ուսուցիչը, դպրոցն ընդհանրա-  
պես։ Եվ եթե այս կամ այն դպրոցի շրջանավարտը  
կյանքում հասնում է տպավորիչ հաջողությունների,  
ապա այդ դպրոցը նրանով հպարտանում է, ոգևորվում,  
հակառակ պարագայում՝ կրում «որո-  
շակի բարոյական պատասխանատվություն»։

21-որ դար մտած ուսուցչի համար կրթական  
աշխարհը նոր պահանջներ է առաջադրում։ Մի  
կողմից՝ պետությունն է սահմանում իր ակնկալիք-  
ները հանրակրթությունում, մյուս կողմից՝ հասա-  
րակությունը։ Եվ այս ամենի առանցքում կանգ-  
նած ուսուցչն ուղղակի պարտավոր է հավասա-  
րապես քայել կրթական համակարգում տեղի  
ունեցող գործընթացմերի հետ և նույնիսկ իր գոր-  
ծողությունները պլանավորելու ժամանակ հաշվի  
առնելի ապագայի միտումները։ Դեռ ավելին՝ ու-  
սուցչը պարտավոր է հասկանալ կրթության քա-  
ղաքականության ողջ գործընթացը, լինել այդ քա-  
ղաքականության կրողը և իրականացնողը, կա-

\* Ներկայացվել է 12.11.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.։

րողանա մշակել կրթության բովանդակության համապատասխան մակարդակները, ունենալ մասնագիտական անհրաժեշտ պարտաստվածություն, բարոյական որակներ, նշտապես կատարելագործել իր մասնագիտական հմտությունները, զբաղվել ինքնակրթությամբ և այլն: Ըստ «Հաճարակրթության մասին» ՀՀ օրենքի՝ ուսուցիչը որպես մանկավարժական աշխատող պարտավոր է «նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հաճարակրթական (իմանական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործնքացին, ինչպես նաև ուսուցման մերողների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրավանացնել հաճարական ծրագրերը»: Վերը նշված խնդիրները իրականացնելու նպատակով ուսուցիչը ուսումնառության ընթացքում պետք է տիրապետի իր աշխատանքը ծրագրելու կարողությանը, այդ թվում՝

ա. ուսումնական գործնքացման արդյունավետ ծրագրելու, առանձին դասընթացների, թեմատիկ միավորների և դասերի պլաններ մշակելու.

բ. ինքնուրույն կամ գործնկերների հետ միասին ուսումնական նյութեր ստեղծելու.

գ. խմբային և անհատականացված ուսուցում իրականացնելու.

դ. աշակերտի տարիքային, հոգեբանական և կազմաքանխոսական առանձնահատկությունները, անհատական և խմբային գործունեության շարժափերներն ու վարդագիծը հաշվի առնելու.

ե. ուսուցման ժամանակակից մերողներ և հնարներ ներդնելու.

զ. ուսուցման համար բարենպաստ սոցիալ-հոգեբանական միջավայր ստեղծելու.

է. սովորողի առաջադիմության գնահատումը՝ դիտարկելով գնահատումը որպես աշակերտի շարունակական զարգացումն ապահովող միջոց և այլն:

Մանկավարժական, մասնագիտական գրականության մեջ հասարակության մեջ կրթական գործնթաց իրականացնելու, մարդակիրական արժեքներ կրելու և դրանք սովորողներին փոխանցելու իմաստով, հաճախ է շեշտվում ուսուցչի մասնագիտական, մանկավարժական, անձնային որակների կարողությունը ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում: Այս իմաստով մանկավարժական գրականության մեջ կարելի է առանձնացնել ուսուցչ-սովորող հարաբերություններում ուսուցչի գործունեության մի քանի առանձնահատուկ կողմեր, որոնք փոխկապակցած են և լրացնում են միմյանց:

1. Ուսուցումը բազմաբնույթ և ակտիվ գործնթաց է, որն իրականանում է սովորողի ներսում:

Այն, ինչ ներկայացնում է ուսուցիչը դասապրոցեսում, դեռևս սովորեցնել չէ: Կատարել ուսուցանողի գործառույթ՝ չի նշանակում աշակերտներին փոխանցել դասավանդվոր նյութի բովանդակությունը՝ առաջնորդվելով ուսումնական ծրագրով և նախորդ օրն աչքի անցկացնելով դասագիրքը: Սովորեցնողը պարտավոր է հասկանալ, որ աշակերտը ոչ այնքան գիտելիքի և տեղեկատվության կարիք ունի, որքան մտածողության, տեղեկությունների մշակման և սոցիալական հմտությունների, ինչն անհրաժեշտ է սովորողին կրթություն ստանալուց հետո կողմնորոշվելու համար արագ փոփոխվող աշխարհում: Ահա թե ինչու ուսուցիչը միայն կարող է օգնել և աջակցել աշակերտին և ապահովել լավ ուսուցման հանար անհրաժեշտ համապատասխան ուսումնական-գործնական միջավայր, նյութեր, սարքավորումներ, միջոցներ, դասի կազմակերպման մեթոդներ ու հնարներ, որոշել դասի նպատակը, պլանավորել դասի նպատակներին և գործառույթներին համապատասխան անհրաժեշտ ժամանակահատվածը: Այլ կերպ ասած՝ դասավանդման պրոցեսում ուսուցչի կարևոր գործառույթներից մեկը նպատակային ուսուցման կազմակերպումն է:

2. Ուսուցչի մյուս կարևոր գործառույթներից է ուսուցման գործնթացի դեկավարումը, այսինքն՝ դասի ընթացքում սովորողների ուսումնառության ուղղողությամբ, ինչն ապահովում է նյութի ընկալումը: Եյութի ընկալումն իրականացնելիս ուսուցիչը կատարում է մի շաբաթ գործողություններ՝ ծևակերպում, սահմանում, նկարագրում, պարզաբանում, ընդհանրացնում, դասակարգում, համեմատում, տարբերակում, ամփոփում և կիրառում է առաջադրությունը՝ օգտագործելով թեմայից բխող մեթոդներ, հնարներ և աջակից այլ միջոցներ: Ուսուցման գործնթացի դեկավարումը ուսուցչի կողմից որպես նպատակադրման գործնթացի կառավարում մեր կարծիքով մանկավարժական գործունեության հիմքն է, որն ուղղված է նպատակից արդյունք գործողությունների համակարգմանը: Ուսուցման գործնթացի դեկավարումն առաջին հերթին հիմնվում է աշակերտների մասին ուսուցչի տեղեկացածության վրա: Առանց իմանալու աշակերտների մտավոր, հոգեբանական, ֆիզիկական զարգացման առանձնահատկություններն ու մակարդակը՝ ուսուցիչը չի կարող ճիշտ իրականացնել ուսուցման գործնթացի դեկավարումը:

3. Ուսուցչի հաջորդ կարևոր գործառույթներից է սովորողի ճանաչողական ներուժի բացահայտումը. այսինքն ուսուցիչը:

ա. բացահայտում է սովորողների գիտելիքների մակարդակը, ճանաչողական ներուժությունները, հմտություններն ու կարողությունները, նրանց սովորելու պատրաստականության

աստիճանը,

բ. դիտարկում, վերահսկում է սովորողների առաջադիմության և վարքային փոփոխությունները,

գ. ծանոթանում է սովորողների տարիքային առանձնահատկություններով՝ պայմանավորված բնութագրերին:

4. Ուսուցիչը լուծում է աշակերտների հետաքրքրության, ծգոտումների զարգացման, խրախուսման և պահպանման խնդիրները: Այդ նպատակների իրականացման համար ուսուցիչը՝

ա. ուսուցումը դարձնում է առավել հետաքրքրի, այսինքն՝ աշակերտներին ոչ թե պարզապես գիտելիքներ են փոխանցվում, այլ գիտելիքներն ու հմտությունները գործողության մեջ են դրվում, և որոշակի արդյունքով ի ցույց դրվում դրանց յուրացումը: Այս պարագայում ուսուցումը դառնում է գիտելիքների կիրառման և որոշակի արժեքների ստեղծման գործընթաց.

բ. խրանում է ուսուցման նկատմամբ սովորողի ներքին շարժափները, տալիս է հարցեր և արձագանքում իրեն ուղղված հարցերին՝ աշակերտների մոտ ապահովելով պատճենակերպ, իմքնուրույն որոշումներ կայացնելու հմտություններ և պատասխանատվություն բարձր առաջադիմության համար.

գ. ներգրավում է աշակերտին «գիտելիքի կառուցման գործընթացին, ինչի արդյունքում սովորողը դառնում է ուսուցման ակտիվ մասնակից»<sup>3</sup>:

5. Դասարանը փոքր, բայց խայտարդես սոցիալական միջավայր է, որը ներկայացնում է հասարակության տարրեր խավերի երեխաների: Այս իմաստով ուսուցումը սոցիալական բովանդակություն է ստանում, և ուսուցիչը հանդես է գալիս որպես սոցիալական հարաբերությունների համակարգոր: Ուսուցիչ գործումներությամ խնդիրները այս մակարդակում կրում են ոչ այնքան ուսումնական, որքան դաստիարակչական բնույթ, որոնք են՝

- դասարանի կարգապահական հարցերը,
- սովորողների գիտելիքների և վարքի անաշառ զնահատումը,
- մրցակցային կամ համագործակցային դրական միջավայրի ձևավորումը,
- սովորողների սոցիալական վիճակի իմացությունը,
- աշակերտների միջև տարրեր բնույթի վեճե-

րի և տարածայնությունների կանխումը,

• ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում առաջացած դժվարությունների և միջադեպերի շտկումը,

• սովորողների հոգեբանական և տարիքային առանձնահատկություններն ու կարիքները բացահայտելը,

• սոցիալական աշխատողի, հոգեբանի, մյուս մանկավարժական աշխատողների հետ համագործակցելը և այլն:

Սակայն, աշակերտի ճանաչողական-իմացական կարողությունները կախված են նաև միջավայրի հետ նրա ակտիվ փոխներգործություններից: Եթևևարար, աշակերտին աջակցելու հանար ուսուցիչը պետք է կատարի օգնականի, գործընկերոց դեր, որպեսի աշակերտը կարողանա ոչ միայն իմքնուրույն սովորել, այլև ճիշտ ընկալել իր և հասակակիցների միջև առկա հարաբերությունները:

6. Ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում կարևոր նշանակություն ունեն նաև ուսուցիչ անձնային որակները, նրա մանկավարժական տակտը, հաղորդակցման հմտությունը, աշխարհայացքային կողմնորոշումը, հոգևոր բարձր արժեքները և այլն: ճշմարիտ է Ե. Կողբացին՝ «Մարդիկ ավելի շատ օրինակների են հետևում, քան ճշմարտությանը»<sup>4</sup>:

7. Ուսուցման գործընթացում կարևոր նշանակություն ունի նաև ուսուցչի կողմից սովորողի գիտելիքների գնահատումը՝ ինքը ընդունելով այն որպես ուսուցման գործընթացի բաղկացուցիչ և ակտիվ մաս՝ նրա կողմից գնահատման բոլոր տեսակների և գնահատման սկզբունքների նպատակային գործածությամբ:

Այսպիսով, ուսուցիչ-սովորող հարաբերությունները պետք է կառուցվեն այնպիսի հիմքների վրա, որ ուսուցումն աշակերտների համար դառնա գիտելիքների կիրառման և որոշակի արդյունքների ստեղծման նպատակասլաց գործընթաց:

<sup>1</sup> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, կետ 1:

<sup>2</sup> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 14-3:

<sup>3</sup> «Մարդ և հասարակություն», 2012, N2, էջ 15:

<sup>4</sup> Ա. Ս. Մանուկյան և Ս. Մ. Մանուկյան, Դաստիարակչական մտքերի հայկական գանձարան, Եր., 2011, էջ 66:

## ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ\*

### Թամարա ՄԵԼԻՔԵՍԵՅԱՆ

Վանաձորի N 23 դպրոցի ուսուցչուհի



Վարվիր այնպես,  
որ մարդը թեզ համար  
լինի նպատակ,  
այլ ոչ թե միջոց:

**Ե. ԿԱՆՏ**

**Ր**անրակրության պետական չափորոշչի բովանդակությունը սահմանում է գիտելիքների,

հնտությունների և կարողությունների, արժեքային համակարգի չափելի մակարդակները կամ պետական, հասարակական պահանջները: Այսինքն՝ կրթական գործի մասնակիցներից յուրաքանչյուրը և առավելապես ուսուցիչը հստակ պետք է իր գործողություններում առանձնացնի կրթության բովանդակությանը վերաբերող մի քանի հարցեր՝ ի՞նչ սովորեցնել, ինչպես սովորեցնել և ինչո՞ւ սովորեցնել: Ընդհանրապես կրթության բովանդակությունը փորձում է պատասխանել այս երեք հարցերին միաժամանակ, որը կրթության նկատմամբ հասարակության պահանջի մեծացման և հսկայածավալ տեղեկատվական հոսքի պայմաններում մնում է կարևոր հարց: Ժամանակի ընթացքում կատարելագործվել են կրթության բովանդակությանը ներկայացվող պահանջները, որոնք ամփոփվում են հետևյալ բնութագրությունով:

- ճշտել ուսումնաասիրվող առարկաների նյութի ցանկն ու ծավալը, վերացնել ուսումնական ծրագրերի դասագրքերի գերբեռնվածությունը՝ դրամբ ազատելով չափից ավելի բարդացված, երկրորդական նյութից, սակայն այսօր էլ նյութի մասուցման ծավալը շարունակում է մնալ հագեցած և դժվարանարս, ինչն ավելի է բարդացնում սովորեցնողի աշխատանքը,

- ծավալի խնդիրը խանգարում է ուսումնական նյութի յուրացմանը, և սովորեցնողների մեջ

մասը չի խորանում բովանդակության մեջ, ու նյութը դարձնում է անհասկանալի, թյուրընթանելի, աղոյու և անհասանելի:

Դասկանալի է, որ բովանդակության այս մակարդակում «ինչպես սովորեցնել» հարցը ապահովում է հիմնարար գիտելիքներ և հասարակական հարմարվողականություն, բայց պարզ է, որ տվյալ մոտեցմամբ դժվար է ապահովել աշակերտակենտրոն կրթություն, զարգացնել քննադատական, ստեղծագործական նուածողություն, ձևավորել կյանքի նկատմամբ ակտիվ վերաբերմունք ունեցող քաղաքացի: Եվ այս պահանջմունքների կենտրոնում կանգնած ուսուցիչը ուղական ապարտավոր է հավասարապես քայլել կրթական համակարգում տեղի ունեցող գործնքացների հետ և իր գործողությունները պահանջուրելու ժամանակ հաշվի առնել ոչ միայն մասուցվող գիտելիքները, այլև թե ինչպես այդ գիտելիքները հասանելի դարձնել աշակերտներին: Դեռ պետք է ուսուցիչը, ըստ «Դանրակրթության մասին» ՀՀ օրենքի, որպես մանկավարժական աշխատող պարտավոր է «նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշչների ապահովման գործնքացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել համրակական ծրագրերը»<sup>1</sup>:

Փորձենք բացատրել մանկավարժական գրականության մեջ օգտագործվող «մանկավարժական տեխնոլոգիա» և «ուսուցման մեթոդ» հասկացությունները, ինչն ուղղակիորեն հանդիսանում է ուսուցչի մեթոդական գործառությի հիմնաքարը, առանց որի նա չի կարող իրականացնել առարկայական պետական չափորոշչի և ծրագրային պահանջները:

Տեխնոլոգիան հունարեն բառ է, որը նշանա-

\* Ներկայացվել է 15.11.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

կում է նպատակ<sup>2</sup>: Մանկավարժական գրականության մեջ այն ընկալվում է որպես գիտություն արվեստի, վարպետության մասին: Երկար ժամանակ տեխնոլոգիա տերմինը մանկավարժության ոլորտից դուրս էր մնում, այն կիրառվում էր միայն տեխնիկական գիտությունների բնագավառում: Սկզբնական շրջանում մանկավարժները տարբերություն չին դնում մանկավարժական տեխնոլոգիա և ուսուցման մեթոդ հասկացությունների միջև: Մանկավարժական տեխնոլոգիա տերմինը կիրառվում էր միայն ուսուցման բնագավարի համար, իսկ տեխնոլոգիա ասելով՝ հասկանում էր միայն ուսուցման տեխնիկական միջոցների կիրառությամբ իրականացվող ուսուցման գործընթացը: Այսօր արդեն մանկավարժական տեխնոլոգիան ուսուցչի հերթական գործողությունների հաջորդական համակարգն է, որը ենթադրում է մանկավարժական այս կամ այն խնդրի լուծում կամ էլ որպես գործնականում նախօրոք պլանավորված, համակարգված, որոշակի հաջորդականություն ունեցող մանկավարժական գործընթացի վերարտադրություն և իրականացում: Մանկավարժական տեխնոլոգիան գիտականորեն ծրագրված և որոշակի նպատակներով պայմանավորված գործողություններ են: Կերպարվես, մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունը նշանակում է ուսուցման և դաստիարակության ոլորտում կիրառվող աշխատանքի ձևերի բազմազանություն: Մանկավարժական տեխնոլոգիաները փոխապակցված են մանկավարժական վարպետության հետ: Հենց մանկավարժական տեխնոլոգիաների կատարելապես տիրապետումն էլ մանկավարժական վարպետությունն է, ինչն անհրաժշտ է այսօրվա ուսուցչին:

Ինչ վերաբերում է մեթոդ հասկացությանը, ապա այն հունարեն քառ է, որը նշանակում է ինչոր տեղ տանող ճանապարհ, ուղի<sup>3</sup>: Ուսուցման մեթոդը ուսուցչի և սովորողի միասնական աշխատանքն է, որն ուղղված է կրթության խնդիրների իրականացմանը: Կան ուսուցման մեթոդի այլ բնութագրումներ ևս: Ըստ Մ. Ա. Դանիլովի, «Ուսուցման մեթոդը ուսուցչի և սովորողի համատեղ գործունեությունն է, որի արդյունքում սովորողը ձեռք բերում որոշակի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, ինչպես նաև ձևավորվում են նրա աշխարհայացքը և ճանաչողությունը»<sup>4</sup>: Իսկ Յու. Կ. Բարանսկու կարծիքով «Ուսուցման մեթոդը մանկավարժի և սովորողի փոխկապակցված գործունեությունն է, որը կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրների իրականացման նպատակ ունի»<sup>5</sup>: Ժամանակակից մանկավարժական գործողություններում ուսուցման բազմաթիվ մեթոդներ են օգտագործվում, ինչը որոշակի դժվարությունների է հանգեց-

նում ուսուցչի գործունեության ընթացքում: Դրա համար անհրաժեշտություն է առաջանում դասակարգել մեթոդները, չնայած որ մեթոդների միասնական դասակարգում գոյություն չունի: Թվարկենք առավել տարածում գտած մի քանի դասակարգումներ:

**Ըստ սովորողների ակտիվության աստիճանի դասակարգում:** Այս դասակարգման համաձայն ուսուցման մեթոդները լինում են ակտիվ և պահիվ: Պահիվ են այն մեթոդները, որոնց կիրառման ընթացքում աշակերտները միայն նայում կամ լսում են (դասախոսություն, բացադրություն, ցուցադրում, էքսկուրսիա և այլն). ակտիվ են սովորողների հնքնություն աշխատանքը կազմակերպող և խթանող մեթոդները (լաբորատոր, գորովաշխատամբ և այլ):

**Ըստ գիտելիքների ձեռք բերման աղբյուրի:** Գիտելիքների ձեռք բերման երեք աղբյուր գոյություն ունի՝ խոսք, գննականություն, պրակտիկական գործնական աշխատանքը: Հետևաբար առանձնանում են խոսքային մեթոդներ, գննական մեթոդներ, պրակտիկ մեթոդներ:

**Ըստ դիդակտիկ նպատակադրման:** Այս դասակարգման մեջ առանձնանում են հետևյալ խումբ մեթոդները՝

- նոր գիտելիքների ձեռք բերման մեթոդներ
- կարողությունների և հմտությունների ձևավորման մեթոդներ
- գիտելիքը, կարողությունը և հմտությունն ամրապնդող ու ստուգող մեթոդներ:

**Ըստ սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման՝ առանձնանում են հետևյալ խումբ մեթոդները՝**

- բացատրական-ցուցադրության (իյուստրատիվ)

- վերաբերողական
- պրոբլեմային շարադրանք
- մասնակի-որոնողական (էվրիստիկ)
- հետազոտական

Կամ նաև այլ դասակարգումներ, որոնք վկայում են ուսուցման մեթոդների իրական բազմազանության մասին: Այժմ դիտարկենք տարբեր դասակարգումների մեջ առավել շրջանառվող մի քանի մեթոդներից վարժություններ մեթոդը: Հայտնի են բանավոր, գրավոր, գծագրական, ուսումնաաշխատամբային վարժություններ: Բանավոր վարժություններն օժանդակում են աշակերտների խոսքի կուլտուրայի, տրամարանական մտածողության, հիշողության, ճանաչողական հնարավորությունների զարգացմանը: Գրավոր վարժությունների հիմնական նշանակությունը գիտելիքների ամրապնդում և դրանց կիրառման համար անհրաժեշտ կարողությունների ու հմտություննե-

ոի մշակումն է: Գրավոր վարժություններին սերտորեն առնչվում են գծագրական կամ գրաֆիկական վարժությունները: Նրանց կիրառությունը հնարավորություն է տալս ավելի լավ ընկալելու, յուրացնելու, գիտակցաբար նտապահելու ուսուցանվող նյութը, դրանք օժանդակում են տարածական երևակայության զարգացմանը: Գծագրական վարժությունների թվին են պատկանում գծագրերի, գծանկարների տեխնոլոգիական քարտերի պատրաստումը և այլն:

Ուսուցչի աշխատանքում կարևոր մոտեցումներից մեկը պիտի լինի դասի բուն բովանդակությունը և ամենից առաջ նրա համապատասխանությունը պետական առարկայական չափորոշիչներին և ուսումնական ժողովրդին: Ընդ որում, այստեղ կարևոր է մի կողմից պապիկել ծրագրերի համապատասխան ամբողջական արտացոլումը, իսկ մյուս կողմից՝ գերը մնալ նույն այդ ծրագրային պահանջներում և չափորոշիչներում տեղ գտած անցանկալի բարդացումներից, ինչը հանգեցնում է սովորողների ծանրաթե՛ռնվագծության և բնականաբար ուսումնական նյութը դարձնում դժվարամար: Այս հաճամանքը ենթադրում է, որ ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի դասի բովանդակության մեջ առավել կարևոր, հիմնական գաղափարներին, գլխավոր մտքերը առանձնացնելու, սովորողների ուշադրությունը առանցքային գաղափարների, օրենքների, հասկացությունների, կանոնների, փաստերի, երևույթի արժեքաբանական առանձնահատկությունների վրա կենտրոնացնելու մեթոդական դասակարգումներին: Անչափ կաևոր է մեթոդական ամբողջական դասակարգումից անցում կատարել դեպի կոնկրետ մեթոդների ընտրությանը՝ հաշվի առնելով դասի թեմատիկ խնդիրների լուծումը: Ուսուցման մեթոդների ընտրության ժամանակ կարևորագույն պահանջ է սովորողների հնարավորությունները հաշվի առնելը՝ որոնողական գործունեություն, նյութի յուրացում, գործնական ինքնուրույն աշխատանք, ուսման նկատմամբ վերաբերմունք, ուսման մեջ ինքնավերահսկողության զարգացման աստիճան, պատրաստվածություն և այլն: Կրոլության նոր բովանդակությանն անցնան պայմաններում վերջին տարիներին ավելի շատ է կարևորվում յուրաքանչյուր դասի ուսումնական նյութի զարգացնող ազդեցության հնարավորությունը սովորողների տեսական, ճանաչողական հետաքրքրությունների, կարողությունների և հմտությունների, հասարակության մեջ նրանց հարմարվողականության վրա: Ան թե ինչու այնքան կարևոր է դասնում ուսուցչի կողմից դասի բովանդակության ներկայացման ընթացքում ուսուցչի մեթոդական, մանկավարժական վարպետությունը, ինչպիսի ուշադրություն է նա դարձ-

նում թեմայի հիմնական բաժինների ուսումնասիրնան մեթոդներին, որոնք են դասի մեջ սովորողներին ներգրավելու եղանակները, միջոցները, պորբեմային իրավիճակների ստեղծումն ու սովորողների ներգրավումը դրանց լուծման մեջ, գործնական աշխատանքների կատարման ընթացքում նրանց ինքնուրույն աշխատանքի, ինքնավերահսկողության և փոխադարձ վերահսկողության միջոցների օգտագործումը, ստեղծագործական աշխատանքների կատարումը, յուրացրած նյութերի հիմնան վրա խնդիրների կազմումը և այլն: Ուսուցիչը լուծում է աշակերտների հետաքրքրության, զգացումների զարգացման, խափառության և պահպաննան խնդիրները: Այդ խնդիրների իրականացման համար ուսուցիչը՝ ուսուցումը դարձնում է առավել հետաքրքի՝ այսինքն՝ աշակերտներին ոչ թե պարզապես գիտելիքներ են փոխանցվում, այլ գիտելիքներն ու հմտությունները գործողության մեջ են դրվում, և որոշակի արդյունքով ի ցուց դրվում դրանց յուրացման եղանակները: Այս պարագայում ուսուցումը դասնում է գիտելիքների կիրառման և որոշակի արժեքների ստեղծման գործընթաց: Այս գործընթացում ուսուցչի մեթոդական վարպետությունը նրան մղում է մի շարք գործողությունների որոնք են.

ա. սովորողի ճանաչողական ներուժի բացահայտումը, այսինքն՝ ուսուցիչը բացահայտում է սովորողների գիտելիքների մակարդակը, նախասիրությունները, ընդունակությունները, հմտություններն ու կարողությունները, նրանց սովորելու պատրաստականության աստիճանը,

բ. դիտարկում, վերահսկում է սովորողների առաջադիմության և վարքային փոփոխությունները,

գ. ծանոթանում է սովորողների տարիքային առանձնահատկություններով՝ պայմանավորված բնութագրերին,

դ. խանում է ուսուցման նկատմամբ սովորողի ներքին շարժափերները, տալս է հարցեր և արձագանքում իրեն ուղղված հարցերին՝ աշակերտների մոտ առավելություն պատճենակերպ, հնքնուրույն որոշումներ կայացնելու հմտություններ և պատասխանատվություն բարձր առաջադիմության համար,

ե. ուսուցիչը ներգրավում է աշակերտին «գիտելիքի կառուցման գործընթացին, ինչի արյունքում սովորող դասնում է ուսուցման ակտիվ մասնակից»<sup>6</sup>: Սովորողը ուսումնառության ընթացքում սովորաբար ընտրում է իրեն հատուկ արագ և հեշտ ճանապարհը: Սա վկայում է, թե որքան կարևոր է տվյալ դասի խնդիրների լուծմանը միտված ուսուցման մեթոդների և միջոցների ընթրությունը, ինչը նպաստում է ուսուցչի կողմից

սովորողներին դասի ակտիվ մասնակից դարձնելուն: Վերը նշված խնդիրները իրականացնելու նպատակով ուսուցիչը ուսումնառության ընթացքում պետք է տիրապետի իր աշխատանքը ծրագրելու կարողությանը, այդ բվում՝

ա) ուսումնական գործընթացն արդյունավետ ծրագրելու, առանձին դասընթացների, թեմատիկ միավորների և դասերի պլաններ մշակելու.

բ) ինքնուրույն կամ գործընկերների հետ միասին ուսումնական նյութեր ստեղծելու.

գ) խմբային և անհատականացված ուսուցում իրականացնելու.

դ) աշակերտի տարիքային, հոգեբանական և կազմարնախոսական առանձնահատկությունները, անհատական և խմբային գործունեության շարժափակերն ու վարքագիծը հաշվի առնելու.

ե) ուսուցման ժամանակակից մեթոդներ և հնարներ ներդնելու.

զ) ուսուցման համար բարենպաստ սոցիալ-հոգեբանական միջավայր ստեղծելու.

տ) սովորողի առաջադիմության գնահատումը՝ դիտարկելով գնահատումը որպես աշակերտի շարունակական զարգացումն ապահովող միջոց և այլն:

Այսպիսով, մանկավարժական տեխնոլոգիաների և ուսուցման մեթոդների ընտրության հար-

ցում ուսուցիչը ազատ է, սակայն այն չի կարող կրել կամայական բնույթ: Մանկավարժական տեխնոլոգիաների, ուսուցման մեթոդների և հնարների կիրառումը չի կարող ինքնանպատակ լինել, այսինքն պետք է հասնել դասի նախապես ծրագրված նպատակին կամ նախանշված ուսումնառության արդյունքին:

<sup>1</sup> «Դամրակրության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, 14/3:

<sup>2</sup> Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975, էջ 413:

<sup>3</sup> Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975, էջ 283:

<sup>4</sup> **Մ. Ա. Ճանլով**, Օ ուսումնական սոցիալ-հոգեբանության մասին հայոց առաջական գործունեության աշխատակից մեթոդների մասին օրենք, հոդված 27, 14/3:

<sup>5</sup> **Յոլ. Կ. Բարանսկի**, Դասի կատարելագործման պրոբլեմները, Երևան, 1981, էջ 82:

<sup>6</sup> «Մարդ և հասարակություն», 2012, N2, էջ 15:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Դամրակրության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, 14/3:

2. Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975:

3. **Մ. Ա. Ճանլով**, Օ ուսումնական սոցիալ-հոգեբանության մասին հայոց առաջական գործունեության աշխատակից մեթոդների մասին օրենք, հոդված 27, 14/3:

4. **Յոլ. Կ. Բարանսկի**, Դասի կատարելագործման պրոբլեմները, Երևան, 1981:

5. «Մարդ և հասարակություն», 2012, N2:

#### THE USAGE OF TEACHING THE PEDAGOGICAL TECHNOLOGIES AND METHODS BY TEACHER

**TAMARA MELIKSETYAN**

#### Summary

The article represents the problems of the content of education, the issues of specification of interpretation and explanation by the teacher.

Here is given the easier specification of varieties which are used on the basis of the principle of student-centered teaching, and teacher's methodical based functions for constructing knowledge.

## **Մարինե ՄՈՐԻԿՅԱՆ**

*Արագածոտնի մարզ, Ուժանի միջնակարգ դպրոց*



**Մ**եքիաթը ժողովրդական բանահյուսության հետաքրքիր և սիրված ստեղծագործություններից է:

Երեխան սիրում է հեքիաթ, և հեքիաթի միջոցով կարելի է լավագույնս կրթել ու դաստիարակել նրան:

Ուրախալի է, որ 5-րդ դասարանի «Մայրենի» դասագրքում բավական մեծ տեղ են զբաղեցնում հեքիաթները:

Երեխանները տեղափոխվում են հեքիաթների աշխարհը, աշխուժանում, կարծիքներ հայտնում, հակառում չարը բարուն, հեքիաթի այլ ավարտ մատնանշում, տարվում հերոսներով:

«Հեքիաթ» թեման ամփոփելիս օգտագործում ենք ուսուցման տարրեր մեթոդներ: Առաջարկում ենք բարեր և բառակապակցություններ, որոնք տեղ են գտնել այս կամ այն հեքիաթում:

1. Սովորելի անտառ, փայտահատ, սարե մանյակ:

2. Ծոլյլ մարդ, պանդուստ, համբերություն, երդիկ:

3. Ծով, սար, նկարիչ, ողորկ:

Այս աշակերտը, որն առաջինն է գլխի ընկնում, որ 1-ին բառաշարքը վերաբերում է «Աստղամանուկը» հեքիաթին, ստանում է մրցանակի փուչիկ: Նա փոխանցում է փուչիկը 2-րդ բառաշարքին ճիշտ պատասխանողին, վերջինս էլ երրորդին, և այսպես շարունակ: Երեխաններին առաջարկում է նաև գտնել հերոսին:

1. Ոսկիները զոհաբերողը

2. Կայսրի սիրոտ փափկեցնողը

3. Աստօն հյուլը

4. Չար եղբայրը

Փուչիկի փոխարեն կարելի է օգտագործել ծափերը: Այնուհետև աշակերտները իրենք են առաջարկում գտնել իրենց նկարագրած հերոսին:

Կարելի է նաև այսպիսի հարցեր տալ. ում են բգիկ-բգիկ անում գազանները՝ մեծ կտորը ականջը թողնելով, հիշենք այն երիտասարդին, որը եկել է ոսվից՝ կաղ մոծակը թամբած: Աշակերտները ոգևորությամբ շարունակում են «Գուշակիր հերոսին» խաղը՝ կազմելով նմանատիպ հարցեր և առաջարկելով ընկերներին:

«Հեքիաթ» թեման ամփոփելիս հանձնարարում ենք նկարագարդել որևէ հեքիաթ՝ առանց վերնագիրը նշելու: Նկարները փակցվում են, օգտագործում ենք «Զբոսանք պատկերասրահում» մերորդը. Երեխանները շրջում են նախապես բաժանված խմբերով, փորձում գտնել, թե որը որ հեքիաթից է, գնահատում ընկերների աշխատանքները, առանձնացնում իրենց դուր եկած նկարը: Կարելի է դիմել նաև հաճակարգչի օգնությամբ: «Այգեպանն ու Մոսկվին» հեքիաթն ամփոփելիս համակարգային գրաֆիկայի միջոցով անապատի պատկերի վրա աշակերտները ավելացնում են ծառեր, ծաղիկներ, այն ամենը, ինչ իրենք կանեին անապատը այգեստան դարձնելու հանար: Սովորողները այգեպանի հեքիաթային կերպարից անցում են մերօրյա հողագործին, տալիս անուններ, հպարտությամբ նշում իրենց հայրերին ու պապերին, որոնք բարիք են արարում: Թեման ավարտելիս երեխաններից յուրաքանչյուրը հորինում է իր հեքիաթը: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր ընտրած հեքիաթի նկարագարդումը, հիմնավորում: Ստեղծում ենք պատի թերթ, որտեղ տեղ են գտնում լավագույն հեքիաթը, լավագույն նկարագրումը, աշակերտների հորինած համելուկները, տված խորհուրդները, շարադրությունները հեքիաթների թեմաներով՝ «Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը», «Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն», «Իսկ եթե ես կախարդական արդուկ ուժենայի» և այլն:

Աշակերտներին հանձնարարվում է նաև փոքրիկ գրքույկներ կազմել, որտեղ ի մի են բերվելու հեքիաթներում տեղ գտած առածներն ու ասացվածքները: Այս գրքույկները նրանք նկարագրում են, ցանկացողները տեքստը կարող են

\* Ներկայացվել է 05.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

համակարգով հավաքել: Աշակերտներից կազմված ժյուրիի միջոցով անցկացնում ենք «Լավագույն ձեռագիր գրքույկ», «Լավագույն տպագիր գրքույկ» մրցանակաբաշխությունը: Մրցանակը նյութական չէ. այն կարող է լինել մի լավ երգ կամ ասմունք, որը կատարվում է ընկերների կողմից: Գրեթե յուրաքանչյուր հերիար ունի դրական և բացասական հերոսներ՝ մեծ և փոքր եղբայրները («Փոս փորող հճքը կը մնի մնջը»), Մոսին և թագավորը («Այգեպան Սոսին»), Եղեգնուհին և խափշիկը («Եղեգնուհին») և այլն: Այստեղ մենք դիմում ենք Տ-ածև այցուսակին: Աշակերտները լրացնում են այցուսակը՝ նշելով դրական և բացասական հերոսների բնորոշ գծերը: Այս աշխատանքը նպաստում է նաև հականիշների ուսուցմանը:

Հերիարներում իրենց տեղում ունեն ժողովդրախոսական լեզվին բնորոշ բառեր ու արտահայտություններ, դարձվածքներ: Ուրախալի է, որ սովորող մեր լեզվի այդ հարուստ շերտի հետ է առնչվում, ինչն տեքստի վկա փորձն է գտնել, թե տվյալ բառը կամ դարձվածքն ինչ է նշանակում: Աշակերտը ոչ թե պետք է մեխանիկորեն սերտի իրեն անծանոթ բառը, այլ փորձի տրամաբանել, տեքստի միջոցով գլխի ընկնել, թե ինչ է դա նշանակում: Այսպես ուսուցիչը ոչ թե պատրաստի բացատրությունն է աշակերտին մատուցում, այլ վերջինս ինքն է հետազոտում, գտնում հարցի պատասխանը: Դիտարկենք մի օրինակ: «Սոխակը» հերիարում, եթե անգամ աշակերտը չի տեսել և չգիտի, թե ինչ է երգեհոնը, տեքստի հասկանում է, որ այն երաժշտական գործիք է, ինչպես, օրինակ, դաշնամուրը և այլն: Երբեմն նոր բառը աշակերտի բառապաշար կարելի է ներմուծել՝ դիմելով բառակազմությանը: Օրինակ՝ «արքունիք» բառը բացատրելիս աշակերտները աննիջապես նկատում են իրենց ծանոթ արքա բառը, բարկում նրա հոմանիշները, և ուսուցին մնում է միայն ավելացնել, որ արքունիքը արքայի պայտան է՝ իր ընտանիքով և պալատական պատույաներով:

Հերիարներն ուսումնասիրենիս շատ կարևոր է նաև տեքստային աշխատանքի կատարումը: Կարելի է իրենց անծանոթ որևէ հերիարի սկիզբն ընթերցել, ապա ընդհատել և աշակերտներին առաջարկել ավարտել հերիարը: Բնականաբար, նրանց կարծիքը կարող է և շամընկնել հերիարի գրքային ավարտի հետ: Աշակերտները պետք է մեկնաբանեն, թե ինչու են իրենք այդպես կարծում: Միշտ պետք է հիշել, որ դասավանդման կենտրոնական դեմքը սովորողն է, հետևաբար պետք է խրախուսվի սովորողի ինքնադրսակրման յուրաքանչյուր ցանկություն:

Անվոփելով թեման՝ աշակերտները նկատում են, որ հերիարները սովորաբար սկսվում են այս-

պես՝ կար-չկար, լինում է, չի լինում և այլն, որն էլ փաստում է հերիարի երևակայական լինելը, սակայն հերիարների մեջ մեծ խորհուրդ կա, նրանց հերոսները գրականություն են մտել իրական կյանքից իրենց լավ ու վատ կողմերով:

Երեխաները պետք է հանդես գան հերոսների անուններից՝ ասելով, թե իրենք ինչպես կվարվեին, եթե, օրինակ, կախարդական արդուկ ունենային կամ սոխակի նման ձայն, ինչ կանեին, եթե հարուստ լինեին, եթե թագավոր լինեին և այլն:

Ուրախալի է, որ դասագրքի հեղինակները աշակերտների դրախան են ներկայացնում նաև մի այլ՝ «Ընթերցանության գիրք» անունը կրող առակների և հերիարների ժողովածուն: Գրքում տեղ են գտել ոչ միայն հայկական, այլև այլ ժողովուրինի հերիարների նմուշներ: Կիտադասարանական ընթերցանությանը հատկացված ժամերին այլան կարիք չի լինում դես ու դեն ընկնել, գրքեր ճարել, որոնք հաճախ չեն համապատասխանում երեխաների ճաշակին և տարիքին: «Ընթերցանության գիրքը» հրաշալիորեն ծառայում է այդ նպատակին:

Աշակերտները հաճույքով ծանոթանում են գրեթե բոլոր հերիարներին և թեման ամփոփելիս նյուրի մեջ իմացություն են ցուցաբերում: Այդ ժամանակ կարելի է իսկական հերիարի տոն կազմակերպել: Աշակերտները տոնին ներկայանում են իրենց սիրելի հերոսների կերպարներին համապատասխան հագուստներով, դիմակներով: Նրանք կարող են իրենց սրտամուտ հերիարը ցուցադրել իրենց հիմ կողմից նախապես կազմած սցենարով և ներարարականությունով: Իսկ ստեղծագործելով ջիղ ունեցող աշակերտները իրենց հորինած հերիարները կարող են ներկայացնել ընկերների դատին: Ի դեպ, հերիար հորինելու նասին: Այս աշխատանքը ցանկալի է կատարել ոչ թե տանը, այլ դասարանում, քանի որ տանը նրանք դիմում են մեծերի օգնությանը կամ էլ վերարտադրում իրենց ծանր որևէ հերիար: Աշխատանքը կատարում ենք խմբերով: 1-ին խմբին տրվում է նկարների շարք, որի շուրջը խմբի անդամները հերիար են հորինում: 2-րդ խմբին տրվում է հերիարի սկիզբը, որը պետք է շարունակեն: Ահա մի օրինակ:

Կար-չկար մի կլոր ու դեղին դդում կար: Նա աճում էր Սերոբի պապիկի այգում: Մի օր դդումը որոշեց ձգվել պատի վրայով, անցնել հարևանի այգին, որ տեսնի՝ ինչ կա, ինչ չկա:

3-րդ շարքին տրվում են բառեր ու բառակապակցություններ, որոնցով կազմում են հերիար: Օրինակ կաղին, անտարի քաղցրասեր, շատակերության վնասները, բժիշկ արագիլ, սկյուռ, հաղորդագրություն ուղարկել և այլն:

4-րդին տրվում է պլան, ըստ որի կազմվելու է

հեքիաթը: Ստորև ներկայացնում ենք հեքիաթի պլանի մի նմուշ:

1. Միայնակ գորշ նապաստակը
2. Ընկեր գտնելու որոնումները
3. Գայլը փորձում է գայրակղեցնել նրան:
4. Որսորդի կրակոցը
5. Ջրաշը է կատարվում:

Անցնելով շերտավորված ուսուցման՝ պետք է աշխատել բոլոր աշակերտներին ներգրավել դասի մեջ: Դրա համար կարելի է ընտրել ավելի հեշտ առաջադրանքներ: Օրինակ՝ համապատասխանեցնել հեքիաթը հեղինակի հետ:

- «Եղեգնուհին» Լեռնարդի դասինչ  
 «Նուկին քաղաքի խելորները»՝ Շ. Թումանյան  
 «Աստղամանուկը»՝ Ավ. Խսահակյան  
 «Խոսող ծոլկը»՝ Ղ. Աղայան  
 «Կարապը»՝ Օ. Ուսայլդ

5-րդ դասարանի սովորողն արդեն իսկ պետք է կարողանա տարբերակել հեքիաթների տեսակները: Իրենց կարդացած հեքիաթների մեջ պետք է գտնեն, թե որոնք են կենդանական հեքիաթները, որոնք՝ իրապատում, ինչու են դրանք կոչվում իրապատում, ինչով են դրանք տարբեր իրաշապատում հեքիաթներից, ինչով են նման և այլն:

Հեքիաթներն անփոփելիս ավելորդ չեն մեկ անգամ ևս անդրադարձակ մեծն թումանյանի խոսքերին. «Հեքիաթները գրական մարդիկ չեն հորինում, այլ առնում են ժողովրդականը ու պատմում: Եվ շնորհը հենց այդ պատմելու մեջ է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզվով, ինչ ոճով ու ինչպես պատմեն, որ և գեղեցիկ դուրս գա, և ժողովրդականի համն ու հոտը չկորցնի» (4, էջ 95): Այս խոսքերը պետք է գրել պաստարի վրա և փակցնել տեսանելի տեղում:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Ղավիթ Գյուլքինյան, Թամար Ալեքսանյան, Աշոտ Գալստյան, Մայրենի: Դասագիրք հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի համար, Երևան, 2012:
2. Ղավիթ Գյուլքինյան, Թամար Ալեքսանյան, Աշոտ Գալստյան, Ընթերցանության գիրք, Երևան, 2010:
3. Ղավիթ Գյուլքինյան, Թամար Ալեքսանյան, Աշոտ Գալստյան, Մայրենի, Ուսուցչի ձեռնարկ, 5-6
4. Նայոց լեզու, գրականություն: Նամրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր: Երևան, 2006
5. Յովի. Թումանյան, Ոչ գրական ոչնչությունները քննադատ, Երևան, Երկեր, հ. 4, 1952:

#### **SUMMARIZING OF “FAIRY TALE” THEME IN 5<sup>th</sup> FORM**

##### **MARINE MORIKYAN**

Aragatsotni region, Secondary school of Udjyan

##### **Summary**

Brand new methods, interesting games, promoting theme study are suggested in the article.

The demands of differentiation study have been taken into account. Almost all tales of the series have been studied, their educational and academic character is reviewed.

**Մ. ՄԱՍԻՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ  
ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ\***

**Արեգնազան Սահակի ՍԱՐԳՍՅԱՆ**

Աստենախոսության թեման՝ Մատքեռս Մամուրյանը մանկավարժ

Գիտական դեկան՝ Ե. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ



**19**-րդ դարի արևածագության մեջ մանկավարժական միտքը զգալի վերելք ապրեց, որում իր ավանդն ունեցավ լեզվաբանասիրական-քաղաքագիտական իմնարար գիտելիքներով գիտ-

ված և մի շարք օտար լեզուների տիրապետող Մ. Մամուրյանը՝ մի գործիչ, որն արևածագության մանկավարժական մտքի զարգացման, դպրոցի բարեկարգման գործում նորարար էր, հատկապես ուսուցման և դաստիարակության թե՛ բովանդակության, թե՛ մեթոդների, թե՛ սկզբունքների հիմնավորումներով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ դեռևս 19-րդ դարի 70-ական թվականներին Մամուրյանը լուրջ փաստարկումներով առաջին պլան էր մղում դպրոցական առողջապահության հարցերը, որոնց լուծման համար ցուցումներ էր տալիս՝ դպրոցական շենքը հարմարավետ դարձնել, մաքրությունը, ջերմությունը ապահովել, կարգավորել աշակերտի հաճախտի ու աշխատանքի ռեժիմը և այլն: Մամուրյանը բարձրացնում է նաև սովորողների ֆիզիկական դաստիարակության հարցը. «Քաջառողջ վիճակը պիտանի է, որպեսզի ոչ միայն մարմինը ուժ առնէ և գործ» այլ և միտքն ալ գորանա և լավ գործե»<sup>1</sup>:

Ֆիզիկական դաստիարակության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանք պահանջում են ամեն կերպ նպաստել երեխայի օրգանիզմի զարգացմանն ու ամրապնդմանը, կանխել երեխայի հիվանդությունները, պահպանել առողջությունը: Ֆիզիկական դաստիարակության ա-

ռաջնային խնդիրը համարվում է առողջության ամրապնդումը, այնուհետև երեխաների շարժողական որակների զարգացումը, շարժողական կարողությունների և հնտությունների զարգացումը: Այս խնդիրների լուծման համար լավագույն միջոցներ են համարվում մարմնամարզությունը, շարժողական խաղերը, տուրիզմը և այլն:

Այս ամենը իմանալով հանդերձ ժամանակակից դպրոցներում և ընտանիքներում խիստ վտանգված է ֆիզիկական դաստիարակության հարցը:

Այդ հարցը 19-րդ դարի երկրորդ կեսում ևս վտանգված էր հայկական դպրոցներում, որից էլ ընկնում էր ուսման մակարդակը. «Գունատ դեմքեր, մասին վատ սննդառութենք, մեծ մասամբ կենսապահիկ օրինաց զանցառութենք կը տվայտին: «Առողջ մարմին, առողջ միտք» այս առաջին վրա կ'կայանայ ընտիր կրթութեան գաղտնիքը»<sup>2</sup>:

Յուրաքանչյուր ոք, ով առնչվում է երեխայի դաստիարակությանը, պետք է իմանա, որ երեխային որքան ջուր ու հաց է հարկավոր, նույնքան էլ մաքրու օդ, արև և շարժում, որպեսզի աճի մտավորապես ու ֆիզիկապես: Մամուրյանը հայկական նախակրթարանները համեմատում է Լոգամի նախակրթարանների հետ և ցավով նշում. «Որչափ առողջ կազմուածքներ քայթայուած որչափ սուր մտքեր բրացած են այդ անպիտան տեղերը (Զեյթունիայի ծաղկոցները)»<sup>3</sup>:

Դայ իրականությունն իր անկարողության պատճառով ի վիճակի չէր հասկանալու, որ ֆիզիկական դաստիարակության պակասը անդամալոյն է դարձնում հայ մատար սերմնին: «Ղժվար է հասկանալ առողջաբանական տեղեկություններէ գուրք մարդուց թե ինչ մահացուցիչ ազդեցություն ունի մատար հասակի վրայ ապականած օդը, անհարմար նստարաններն ու գրասեղանները, երկարատև և անզբաղ անշարժությունն ու ձանձրու-

\* Ներկայացվել է 03.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

թյունը»<sup>4</sup>: Մամուրյանը մեծ դեր էր կը Վերապահում ֆիզիկական դաստիարակությանը, քանզի գտնում էր, որ մարդու մարմնը մերենա է, որի կառուցվածքն ավելի փափուկ է, քան թե ժամացույցինը, ավելի բարդ ու զարնանալի է, քան ամենագորավոր շղգեշաղդ գործիքինը<sup>5</sup>:

Նա նշում է նաև ֆիզիկական դաստիարակությունն իրագործելու հիմնական պայմանները՝ «սնունդ, մաքրություն, օգեստ, որ ու լուս, կրթություն և հաճգիտություն»: Քննարկվում են այս պայմաններից յուրաքանչյուրը՝ ընդգծելով դրանց առավելությունները և կիրառման արդյունավետությունը: Սնունդն անհրաժեշտ է «մարմինը շինելու համար»<sup>6</sup>: Մամուրյանը մարդու մարմինը համարում է կրակարան, իսկ սնունդն էլ կրակարանը վառ պահող նյութ, և որքան այդ նյութը լի է լինում քարերով և երկարի կորոներով, այնքան կրակը կարծ է վառվում: Այսպիսին է նաև սնունդը. որքան անսնունդ լինի օրգանիզմը, այնքան մարմինը շուտ կրուլանա: Միայն մնվելը բավարար չէ ճիշտ ֆիզիկական դաստիարակության համար. անհրաժեշտ է նաև ճիշտ սնվել: Մամուրյանը խորհուրդ է տալիս ավելի շատ սնվել բույսերով, երբեմն էլ մսով՝ հատկապես կովի ու ոչչարի: Նա խորհուրդ է տալիս սնվել ռեժիմով՝ օրը 3 անգամ: Ֆիզիկական դաստիարակության մյուս կարևոր պայմանը մաքրությունն է: Այս հարցում Մամուրյանը դրսնորում է իր անատոմիական գիտելիքները՝ նշելով մարդու մարմնում եղած խողովակների (արյունատար, ավշատար անորոների) թիվը, դրանց ֆունկցիաները, նշանակությունը: Այս պայմանը շատ օգտակար է նաև կրթությունն ավելի արդյունավետ դարձնելու համար, հատկապես բացօթյա բաղնիքը. «Ծովու բաղնիքն ամենէ առողջարար լուսացմն է, քանի որ ուրիշ օգուտներու հետ՝ թարմ օր ծծելու և կրթություն ընելու գրգիռ կըլլայ»<sup>7</sup>:

Մարմինը մաքրու պահելը դեռևս բավարար չէ. անհրաժեշտ է, որ օգեստը ևս մաքրու լինի և եղանակին համապատասխան, այսինքն՝ այնպիսին, որ պահպանվի մարմնի նորմալ ջերմաստիճանը, որն էլ նապաստում է ներքին օրգանների ճիշտ աշխատանքին՝ ոչ արագ աշխատեն և ոչ էլ սառեն ու դանդաղ կատարեն իրենց ֆունկցիաները:

Անցնելով երրորդ պայմանին՝ Մամուրյանը նշում է, որ օդը նույնպես շատ կարևոր սնունդ է, և նույնիսկ ամենակարևորը, քանզի «մեր նյութական սնունդն անօգուտ պիտի ըլլար առանց օդի»: Թարմ օդը նպաստում է ուղեղի ակտիվ գործունեությանը, իսկ տաքացած օդը «թունավոր է», քանզի այն թուլացնում է մարդու դիմադրողականությունը, և «տղայք դպրոցի մեջ անմտադիր կըլլան»<sup>8</sup>: Դրա համար անհրաժեշտ է դպրոցի դասա-

սենյակներում մշտապես ապահովել օդափոխությունը և թարմ օդի առկայությունը ներսում: Առողջ մարմին ունենալու համար Մամուրյանն օգտակար է համարում կանոնավոր մարմնամարդությանը գրաղվելը՝ քայլել, վագել, լողալ, ծիավարել և այլ օգտակար խաղերով գրաղվել, մարմնին ուժ ու կրով տվող խաղ էր հանարվում նաև «պատերազմական կրթությունները»<sup>9</sup>: Սակայն մարմինը մարզվելուց զատ ունի նաև հանգստի կարիք, որի առաջին գրավականը քունն է: Յուրաքանչյուր մարդ պետք է քնի օրական ուժ ժամ, քանզի շատ քնելը կրծատում է մարդու կյանքը: «Ծատ քունը մեզ ծույլ կընէ», իսկ քիչ քնելը՝ տկար:

Սարդու հաճգիստն ու մարզանքը պետք է լինեն չափավոր և ճշշտ հաջորդեն իրար՝ և քիչ քնել, շատ աշխատելն է վնաս, և քիչ աշխատելն ու շատ քնելը: «Պետք է միշտ չափ մը պահել թե կրթության և թե հաճգստի ժամերու մեջ»<sup>10</sup>: Այստեղ գագավում է ոչ նիայն մանևավարժի մտածելակերպը, այլև բնագետի, բժշկի: Այս պայմաններն արդիական են նաև այսօր, քիչ թե շատ կիրավում են:

Ֆիզիկական ճիշտ դաստիարակությունն ապահովելու համար Մամուրյանն առաջին նախադրյալը համարում է ծնողներին և հատկապես ուսուցիչներին իրազեկ դարձնելը երեխայի ֆիզիկական առանձնահատկություններին:

Այս ամենը չիմանալով՝ ծնողներն իրենց փոքրիկներին մեծ վնաս են պատճառում. ժամանակից շուտ դպրոց կուղարկեն, դպրոցից հետո մասնավոր դասերի կտանեն, «առտու շատ կանուխ կ'արթըցընեն, և գիշեր պարկելու ուշ կղրկեն. Երկար ժամանակ նույն դիրքին մեջ կ'թողուն, նստած. անոնց բավական գրասանք և շարժում չեն տար կ'թողուն որ ուսնան սրահներուն մեջ պաղ կամ ապականած օդը լեզվի, անոնց անբավական, շատ քիչ սննդարար կերպուր կ'հայթայթեն, անիրական տեղը կ'պատժին, շատ նեղ հագուստներ կ'հազվեցընեն»<sup>11</sup>: Որքան առօրեական են այս հարցերը, այնքան էլ անհրաժեշտ է, որ ընտանիքը և դպրոցը ուշադիր լինեն այս ամենի ճիշտ կիրառման առումով:

Չի կարելի է երեխային ժամանակից շուտ ծանրաթեօնել, հատկապես ուղեղը, որը դեռևս աճման մեջ է: Իսկ ծանրաթեօնվածության դեպքում կարող է առաջանալ սակավարյունություն. «Արեան աղքատությունն ստեպ կ'երկի աշակերտաց վրայ, ասոր պատճառ այն է անշուշտ, որ շատ կանուխ դպրոց դրկուած են»:

Ֆիզիկական դաստիարակության իրագործման մյուս նախադրյալը մաներմնամարզությունն է, սակայն այստեղ նույնպես զգուշություն է պետք. «Իրօք մարմնամարզությունն այն ատեն

միայն գօրացուցիչ է և թերևաշարժություն ու ճարպկություն կ'սորվեցնե, երբոր մարմինն աստիճանավոր և զանազան մարզանաց կ'ենթարկուի...»<sup>12</sup>:

Թնարկելով Փիզիկական դաստիարակությունը՝ մենք առանձնացրինք նրա նպատակները, անհրաժեշտ պայմաններն ու իրազործման նախադրյալները, հետևաբար կարող ենք ասել, որ այն յուրօրինակ գիտություն է, ըստ որում կարևոր գիտություն։ «առողջությունը պահպանելու նպատակ ունեցող գիտությունը գեր ի վեր է ամեն գիտությունների»<sup>13</sup>:

<sup>1</sup> Մամուրյան Մ., Գիտելիք և պարտիք տղոց, էջ 233:

<sup>2</sup> «Արևելյան մամուլ», 1877, հուլիս, էջ 247:

<sup>3</sup> «Արևելյան մամուլ», 1876, հունվար, էջ 12:

<sup>4</sup> «Արևելյան մամուլ», 1876, հունվար, էջ 12:

<sup>5</sup> Մամուրյան Մ., Գիտելիք և պարտիք տղոց, էջ 233:

<sup>6</sup> Նույն տեղը, էջ 234 և 235:

<sup>7</sup> Մամուրյան Մ., Գիտելիք և պարտիք տղոց, էջ 239:

<sup>8</sup> Նույն տեղը, էջ 241, 242:

<sup>9</sup> «Պատերազմական կրթություն» ասելով պետք է հասկանալ՝ ռազմա-ֆիզիկական պատրաստվածությունը:

<sup>10</sup> Մամուրյան Մ., Գիտելիք և պարտիք տղոց, էջ 244:

<sup>11</sup> «Արևելյան մամուլ», 1876, օգոստոս, էջ 228:

<sup>12</sup> «Արևելյան մամուլ», 1876, օգոստոս, էջ 227:

<sup>13</sup> «Արևելյան մամուլ», 1879, ապրիլ, էջ 485:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, 2004:
2. Մամուրյան Մ., Երկեր, Երևան, 1966, 648 էջ:
3. Մամուրյան Մ., Գիտելիք և պարտիք տղոց, Զմյուռնիա, 1879, 248 էջ:

4. Մամուրյան Մ., Նոր ընթերցարան, Զմյուռնիա, 1878, 140 էջ:
5. Մամուրյան Մ., Դամառուտ ընդհանուր պատմություն դպրոցաց համար, մասն Ա, Զմյուռնիա, 1875, 203 էջ:
6. Մամուրյան Մ., Բանալի հայերեն շարադրութեան, Զմյուռնիա, 1878, 64 էջ:
7. Սովիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, 527 էջ:
8. Տաղիկյան Գ., Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Երևան, 1969, 383 էջ:
9. Նալշայջան Ա., Սկրտչյան Ա., Եթնիկական մանկավարժություն, Երևան, 2003, 312 էջ:
10. Շավարշյան Ա., Դայ մանկավարժներ Երևան, I գիրք, 1958, 622 էջ:
11. Շավարշյան Ա., Դայ մանկավարժներ Երևան, II գիրք, 1961, 781 էջ:
12. Ուկանյան Ը., Ուրվագծեր արևմտահայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1999, 431 էջ:
13. Սիմոնյան Յ., Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմությունից, Երևան, 1971, 264 էջ:
14. Սիմոնյան Յ., Դայ մանկավարժության պատմություն, Երևան, I հատոր, 1998, 324 էջ
15. Սիմոնյան Յ., Դայ մանկավարժության պատմության Երևան, II հատոր, 2000, 304 էջ:
16. Սիմոնյան Յ., Դայ մանկավարժության պատմության ուսումնասիրությունը, 1984, 52 էջ:
17. Սիմոնյան Յ., Դայ մանկավարժության պատմություն, Երևան, 1966, 96 էջ:
18. <http://team-aow.discuforum.info/t2570-17-10-1830-2-1901-am.htm>
19. <http://catalog.hathitrust.org/Record/002981524>
20. [http://100dic.ru/filosofskaya\\_entsiklopediya/page/mamuryan.4915/](http://100dic.ru/filosofskaya_entsiklopediya/page/mamuryan.4915/)
21. «Արևելյան մամուլ», Զմյուռնիա, 1876, 1877, 1879, խմբ. Ս. Մամուրյան:

MODERN EVALUATION OF M. MAMURYAN'S PHYSICAL UPBRINGING SYSTEM

AREGNAZAN SARGSYAN

Summary

In the article it is discussed that in the second part of the 19<sup>th</sup> century in the western Armenian reality the prominent publicist and knowledgeable pedagogue M. Mamuryan considered his aim as comprehensive and harmonic development of the connection through teaching process with upbringing, and the latter with life.

As it is in nowadays, so it was at risk the question of physical upbringing in the school of the 19<sup>th</sup> century. Mamuryan thoroughly represents the aim of physical upbringing, necessary requirements, and prerequisites of implementation. In his issue the important things are food, tidiness, clothes, air and light, education and relaxation. Mamuryan considers the physical upbringing unique science and emphasizes that the science, which keeps the aim of health, is above all of sciences.

**«ԲՆԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՈՎ ԱՍՏԻճԱՆ:  
ՄԻԱՆԴԱՄՆԵՐ» ԹԵՍԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ\***

**Նախարարության բարսեղան**



**Ո**ստիմնական գործունեավետությունն առավելապես կախված է սովորողների ակտիվ մասնակցությունից, ինչի համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասավանդման ընթացքում ապահով անհրաժեշտ պայմաններ, որոնք աշակերտներին կմղեն ուսումնական գործունեության:

Բազմամակարդակ սովորողներից բաղկացած դասարաններում դասավանդման կազմակերպման արդյունավետ եղանակներից է համագործակցային ուսուցումը, որի շնորհիվ աշակերտներն ավելի հեշտ են հաղթահարում դժվարությունները: Խնդրով աշխատելիս անվտանգ աշխատավորությունը աշխատավորություն է աշխատելի հրեն ավելի ազատ է զգում, քան ինքնուրույն աշխատելու դեպքում: Բացի այդ, ինքի առավել ակտիվ անդամը՝ որևէ նյութ ընկերոջը բացատրելիս, ինքն ավելի լավ է սովորում:

Չին չինական իմաստությունն ասում է. «Ես լսում եմ – ես մոռանում եմ, ես տեսնում եմ – ես հիշում եմ, ես կատարում եմ – ես հասկանում եմ». Դասի արդյունավետության համար հետևենք չինական իմաստունների խորհրդին «Ես լսում եմ – ես տեսնում եմ – ես կատարում եմ»:

Համակարգչների օգտագործումն էլ ավելի տեսանելի և հետաքրքրացարժ է դարձնում թեմայի ուսուցումը:

Ստորև ներկայացնում ենք էլեկտրոնային ամփոփիչ դաս հանրահաշվի դասընթացում առավել կիրառվող «Աստիճաններ» թեմայի վերաբերյալ:

«Թող որևէ նեկը փորձի ջնջել մաթեմատիկայից աստիճանները և կտեսնի, որ առանց դրանց հեռու չի գնա»: (Մ. Վ. Լոնոնոսով):

**Դասի նպատակն ու խնդիրները**

- Համակարգել և ընդհանրացնել «Բնական ցուցիչով աստիճանը և նրա հատկությունները: Միանդաններ» թեմայի վերաբերյալ նյութերը:

- Զևակորել թեմայի վերաբերյալ ստացած ընդհանուր տեղեկություններից գլխավորն առանձնացնելու կարողություն:

• Նախատել սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը, կարողությունների դրսևներմանը և օպտիմալ որոշումների կայացմանը:

**Դասի պլան**

ԴԱՍԻ ԹԵՄԱԸՆ	ԲՆԱԿԱՆ ՑՈՒցԻՉՈՎ ԱՍՏԻՃԱՆ
ԴԱՍԻ ԽՆԴՐԻՄՆԵՐԸ	Համակարգել հանրահաշվական գործողությունների վերաբերյալ ստացած գիտելիքները և դրանք խորացնել բնական ցուցիչով աստիճանների օրինակներով
ԴԱՍԻՑ ՀԵՏԾՈ ԱՇԱԿԵՐՏ- ՆԵՐԸ ԿԻՄԱՍԱԸՆ	Բնական ցուցիչով աստիճանի սահմանում և հիմնական հատկությունները, աստիճանային աճը կրճատ բազմապատկման, աստիճանային աճի, բարդ տոկոսի բանաձևերը
ԴԱՍԻՑ ՀԵՏԾՈ ԱՇԱԿԵՐՏ- ՆԵՐԸ ԿԿԱՐՈՂԱԸՆ	Օգտվել բնական ցուցիչով աստիճանի հատկություններից, դրանք կիրառել արտահայտությունների ձևափոխման, հավասարումների և անհավասարումների լուծման ընթացքում: Պարզագույն իրավիճակներում օգտվել աստիճանային աճի և բարդ տոկոսի բանաձևերից

**1. ԽԹԱՆՈՒՄ**

Նախատակահարմար է դասի սկզբնական խթանման փուլում կիրառել ուսուցման «Պրիզմա» մեթոդը<sup>1</sup>: Նախապես ձևավորված խնդրերը վերիիշում են ներկայացվող թեմայի վերաբերյալ ունեցած գիտելիքները, որից հետո խնդի մեկական անդամ պատասխանում է էկրանին առաջդրված հարցերին:

- Զևակորել բնական ցուցիչով աստիճանի սահմանումը:

- Զևակորել նույն հիմքով աստիճանների բազմապատկման կանոնը:

- Զևակորել նույն հիմքով աստիճանների բաժանման կանոնը:

\* Ներկայացվել է 11.11.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

- Զևսկերպել աստիճանն աստիճան բարձրացնելու կանոնը:
- Զևսկերպել կոտորակը աստիճան բարձրացնելու հատկությունը:
- Զևսկերպել արտադրյալն աստիճան բարձրացնելու հատկությունը:
- Սահմանել միանդամը:
- Զևսկերպել միանդամների բազմապատկման կանոնը:

Դամակարգչի էկրանին գրված են հավասարություններ: Աշակերտները պետք է գտնեն սխալը, բացատրեն, տան ճիշտ պատասխաններ:

Այստեղ կիրառելի է «Ծրջագայություն պատ-

$$\begin{aligned} 1. \quad & yyyy = \cancel{y} \cdot y^4 \\ 2. \quad & (-2) \cdot (-2) \cdot (-2) = (-2)^3 \\ 3. \quad & \left(\frac{2}{3}\right) \cdot \left(\frac{2}{3}\right) = \left(\frac{2}{3}\right)^2 \\ 4. \quad & 5^3 = \cancel{1} \cdot 5 \cdot 125 \\ 5. \quad & 0^{101} = \cancel{1} \cdot 0 \\ 6. \quad & 1^5 = \cancel{5} \cdot 1 \\ 7. \quad & (-1)^4 = \cancel{1} \cdot 1 \end{aligned}$$

Կերպարահում» ներողը<sup>2</sup>: Խմբերի ներսում կատարվում է առաջադրանքը, որից հետո յուրաքանչյուր խմբի մեջկամ անդամ ներկայացնում է իր տեսակետը:

Դասի ընթացքն ակտիվացնելու նպատակով աշակերտները պետք է արագ պատասխաննեն էկրանին հայտնված 10 հարցերին.

1. Հաշվել:  $a^n \cdot a^m =$
  2. Ո՞րն է ճիշտ՝ ա)  $(a^n)^m = a^{n+m}$ , բ)  $(a^n)^m = a^{nm}$
  3. Գտնել արտահայտության աստիճանը:  $a^n \cdot a^m =$
  4. Ավարտել: Նույն հիմքով աստիճանները բաժանելիս ....
  5. Գրվածներից ո՞րը միանդամ չէ:  
2;  $56a$ ;  $2x+3y$ ,  $-0.25c$
  6. Տրված է  $10x^3$  և  $2x^3$ : Գտնել նրանց գումարը:
  7. Գտնել տարրերությունը:
  8. Գտնել արտադրյալը:
  9. Գտնել քանորդը:
  10. Գտնել առաջին անդամի քառակուսին:
- Այստեղ կիրառվում է ուսուցման «Պոպ-կորոն» մեթոդ<sup>3</sup>, որը ենթադրում է ուշադրության կենտրոնացում և արագ կողմնորոշում:
- Դաշորդ առաջադրանքի պահանջն է Տ-աձև այլասկի միջոցով տրված միանդամներից առանձնացնել սահմանադր տեսքի միանդամները, որոշել գործակիցը և աստիճանը, իսկ ոչ ստանդարտները ներկայացնել ստանդարտ տեսքով:

$$-5a^8c^3, \quad a, \quad 3y^3b^5b^4y$$

$$\frac{5}{9}x^3y^2x, \quad -7b, \quad \left(-2a^2c\right) \frac{1}{8}c^5,$$

Տրվում է ինքնուրույն աշխատանք 15 րոպե տևողությամբ

1 տարրերակ 2 տարրերակ

1. Արտահայտությունը ներկայացնել միանդամի տեսքով:

$$\text{ա) } 10^2 \cdot 10^5, \text{ բ) } 7^6 \cdot 7^2, \text{ գ) } (n^5)^3, \text{ դ) } 2^8 \cdot 3^8$$

$$\text{ա) } 5^2 \cdot 5^3, \text{ բ) } 8^8 : 8^3, \text{ գ) } (b^4)^5, \text{ դ) } 3^7 \cdot 4^7$$

2. Պարզեցնել:

$$\frac{(b^3)^2 b^3 b}{(b^2)^4} - b^2 \cdot \frac{(b^2)^2 b^3}{(b^2)^3} + b$$

3. Բազմապատկել, որոշել միանդամի գործակիցը և աստիճանը

$$\text{ա) } (-0, 5b^2y^3z^5) \cdot (-4xy^2z^2) \text{ ա) } (-2a^2b^3c) \cdot (-3, 5a^3bc^5)$$

$$\text{բ) } (6mn^2)^2 \cdot (\frac{5}{6} m^2n)^2 \text{ բ) } (\frac{7}{7} mn)^3 \cdot (-7mn)^3$$

Աշխատանքն ստուգվում է էկրանին հայտնված ճիշտ պատասխանների միջոցով, որի արդյունքում էլ աշակերտները գնահատվում են.

#### ՃԵՇՏ ՊԱՏԱԿԱՆ ՄԵՐԸ

Սարեմատիկական թեկադրություն

$$1. = a^{n+m} \quad 2. \text{ բ) } (a^n)^m = a^{nm} \quad 3. n - k$$

4. Հիմքը թողում ներ նույնը, ցուցիչները՝ հանում

$$5. 2x + 3y \quad 6. 12x^3 \quad 7. 8x^3 \quad 8. 20x^6 \quad 9. 5 \quad 10. 100x^6$$

Ինքնուրույն աշխատանք

$$1. \text{ տարրերակ } \quad 2. \text{ տարրերակ } \quad 1. \text{ ան } = 5^5, \quad \text{ բ) } = 8^5$$

$$1. \text{ ան } = 10^7, \text{ բ) } = 7^4 \quad \text{ գ) } = b^{20}, \quad \text{ դ) } = 12^7$$

$$c^{15}, \quad \text{ է } = 0^6 \quad \text{ 2. } = 2b$$

$$3. \text{ ան } = 2x^3y^5z^7, \text{ բ) } 2, \text{ ա. } 15 \quad 3. \text{ ան } = 7a^5b^4c^6, \text{ գ) } 7, \text{ ա. } 15$$

$$\text{բ) } = 25m^6n^6, \text{ ք. } 25, \text{ ա. } 12 \quad \text{ բ) } = -27m^{12}n^9, \text{ ք. } -27, \text{ ա. } 15$$

Տնային աշխատանքի հանձնարարում:

<sup>1</sup> Այս մեթոդի մասին առավել մանրամասն տես ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, Ա. Դալլայիան, Ս. Սարովիսանյան, Ն. Դիշաղյան, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, Վարժակումներ, Վանաձոր, 2008:

<sup>2</sup> Տես նոյն տեղում:

<sup>3</sup> Տես նոյն տեղում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Ա. Նիկոլսկի, Ա. Կ. Պոտապով, Դանրահաշիվ 7, 8, Երևան, 2011:

2. Գ. Գևորգյան, Ա. Սահակյան, Դանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր 10, Երևան, 2009:

## ՕՐԳԱՆԻՉՈՒԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՓՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՋՎ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻՆ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆ\*

### ԼԵԽԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**Ա**ռողջ ապրելակերպը ռացիոնալ սննդակարգն է, սպրոտով զբավելը և վաստվորություններից հրաժարվելը: Սարդու առողջության պահպանման մեջ մեծ դեր է խաղում օրգանիզմի կոփումը:

Կոփումը բնության բնական գործոնների գիտականորեն իմանավորված սիստեմատիկ օգտագործումն է օրգանիզմի դիմադրողականության բարձրացման նպատակով՝ միջավայրի անբարենպաստ պայմաններից պաշտպանվելու համար:

Դեռ վաղ ժամանակներից մարդիկ կոփել են իրենց մարմինը: Ավիցեննան իր աշխատություններում լուսաբանում էր օրգանիզմի կոփումը սառը ջրում լողանալով, այդ բվում նորածինների ու նախադպրոցական տարիքի երեխաների: Կոփման ընթացքում պետք է պահպանել նիշ շարք կանոններ:

- Կոփման պրոցեդուրանները սիստեմատիկորեն ընդունել տարվա բոլոր եղանակներին, առանց ընդմիջնան:

- Կոփման պրոցեդուրանների աստիճանական մեծացում:

- Ցուրաքանչյուր տարիքային խմբին հաճապատճախան մնութեցում կոփման պրոցեդուրանունին:

- Կոփման պրոցեդուրանները պետք է անցկացվեն դրական էնողիաների ֆոնի վրա:

Կոփումը լինում է հատուկ և ընդհանուր: Ընդհանուրն իր մեջ ընդգրկում է օրվա ճիշտ ռեժիմ, ռացիոնալ սնունդ և ֆիզկուլտուրա: Հատուկ կոփման պրոցեդուրանների ավանդական ներուներն են՝ օդային, արևային և ջրային:

#### Զրային կոփումներ

Օրգանիզմի վրա առավել հզոր ներգործություն են բողոքում ջրային կոփումները: Դա կախված է նրանից, որ ջրի ջերմատվությունը 30 անգամ մեծ է, քան օդինը:

Սառը ջրում կոփելիս տարբերում ենք օրգանիզմի ռեակցիայի երեք փուլ:

Առաջին փուլը՝ մաշկի անորների սպազմի բարձրանում է, ավելի սառեցման դեպքում՝ ներ-

մաշկային ճարպային բջիջները՝ սառչում:

Երկրորդ փուլը՝ ցածր ջերմաստիճանին աղապտացվելու հետ կապված՝ մաշկը կարմրում է, իշնում է զարկերակային ճնշումը, ակտիվացնում են ենթամաշկային բջիջները՝ լեյկոցիտները, որոնք արտադրում են կենսաբանորեն ակտիվ նյութեր (ինտերֆերանի նման), կարգավորվում է ինքնազգացողությունը:

Երրորդ փուլը՝ օրգանիզմի հարմարվողական հնարավորությունները կորչում են, ի հայտ է գալիս անոթային սպազմ, մաշկը դառնում է կապտավուն, դժգույն [3]:

Սիստեմատիկ ջրային կոփումների ժամանակ առաջին փուլի տևողությունն իշնում է, արագ վրա է հասնում երկրորդ փուլը: Խստ կարևոր է, որ վրա չհասնի երրորդ փուլը:

Զուրու կոփման ամենաառաջին ծևն է: Զրային կոփման առավելությունն այն է, որ ջրային պրոցեդուրանները հեշտ է չափավորել, հեշտ է նաև աստիճանականության սկզբունքը կիրառել: Տվյալ դեպքում ինչքան պետք է, այնքան կարելի է աստիճանաբար իջեցնել ջրի ջերմաստիճանը: Հատկապես պետք է զգույշ լինել նախադպրոցական տարիքի երեխաների հետ պարապելիս: Մինչև սառը ջրին մոտենալը երեխաները պետք է գտնվեն տաք սենյակում, երկար չսպասեն իրենց հերթին:

Պետք է հետևել, որ երեխաների մոտ ճիշտ ժամանակին մաշկը կարմրի. եթե այդ ռեակցիան ուշանում է, ապա պետք է սրբիչով շփել մաշկը, մինչև այն կարմրի: Ինչքան սառն է ջուրը, այնքան շփումը նրա հետ պետք է կարծ լինի:

Գոյություն ունի ջրային կոփման նիշ քանի նիշոց:

Զրային շփումները. ամենանուրբն է ջրային պրոցեդուրաններից, այն կարելի է ընդունել բոլոր տարիքային խմբերում: Թրջած շորը պետք է փափուկ չլինի, պետք է լավ ներծծված լինի ջրով, բարց չպետք է կարի վրայից:

Զրային շփումներից հետո պետք է մարմինը չորացնել չոր սրբիչով: Զրային շփումները պետք է սկսել ծայրամասերից դեպի կենտրոն (ձեռքերը՝

\* Ներկայացվել է 14.11.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

դաստակներց, ոտքերը՝ թաթերից): 2-3 օրից կարելի է շերմաստիճանը իջեցնել 1 աստիճանով:

Լվացումները լինում են տեղային և ընդհանուր: Ցածր տարիքային խմբերում տեղային լվացման սկզբանական շերմաստիճանը +30 աստիճան է, հետո իջեցնում են մինչև +18 աստիճան:

Ընդհանուր լվացումը պետք է սկսել բարձր շերմաստիճանից (Երեխաների համար), իսկ աշում-ձմեռ շրջանում այնպես պետք է անել, որ լվացումն ընդգրկի մարմնի ավելի մեծ մակերես, որից հետո չորացնել սրբիչով, ջրային շիրի տակ մնալ 20-40 վայրկյան: Ջրային ցնցուղն առաջացնում է մասսաժի էֆեկտ:

Լողը լավագույն կոփման միջոցներից է: Երեխաներին շատ փոքր տարիքից սովորեցնում են լողալ +24 աստիճան օդի և +22 աստիճան ջրի պայմաններում: Լողալուց հետո պետք է մշտապես շարժումներ կատարել:

Լողալը հակացուցված է միայն սիրտ-անորային հիվանդություններով Երեխաներին, Երիկամային, պլրիտով, բռքարորդով հիվանդ Երեխաներին:

#### Օդային կոփումներ

Օդը մարդուն անմիջապես շրջապատող միջավայրն է: Մանկապարտեզներում օդային կոփման հրաշալի ձևն է քունը բաց օդում, ցուրտ ժամանակ՝ նաև օդային վաննաներ:

Նորածինների համար առաջին կոփման պրոցեդուրաներից են օդային վաննաները: Ծնողները պետք է իմանան, որ Երեխայի սենյակում շերմաստիճանը պետք է լինի +25 աստիճան, 1-3 ամսականների համար՝ +21 աստիճան, 3,5 ամսականից 1 տարեկան Երեխաների համար՝ +20 աստիճան: Նորածիններն առաջին օդային վաննաները ստանում են ծննդատանը. Երբ բացում են բարուրները, կարծ ժամանակով նրանք մնում են առանց հագուստի: Կատարվում է թթվածին դիֆուզիա՝ մաշկի միջոցով արյան մեջ, որովհետև մաշկի անցանելիությունն այդ հասակում մեծ է: Երեխային ձմռանը պետք է բաճբակե վերմակը փաթաթել այնպես, որ դեմքը բաց լինի: Զնորանը ոչ քամոտ եղանակներին Երեխաների հետ կարելի է զրոսնել 1-3 ամսականների համար՝ -10 աստիճանում, 3 ամսականներից բարձր՝ -12 աստիճանում, 6 ամսականից բարձր՝ -15 աստիճանում: Իսկ 1.5 տարեկան Երեխաները պետք է զրոսնեն 2 ամսամ 2-3 ժամ տևողությամբ [3]: Մեծ Երեխաներին կարելի է սայլակով տանել զրոսնելու: Ամռանը պետք է սենյակի պատուհանի օդանցքը մշտապես բաց թողնել: Օդափոխությունն օդանցքի օգնությամբ կատարում են Երեխայի ներկայությամբ: Օդի շերմությունն իջնում է 1-2 աստիճանով, որը կոփում է Երեխային: Ամռանը նորածնին պետք է զրոսանքի

դուրս բերել հենց ծնվելուց հետո, սկզբում 20-40 րոպե, հետո արագ ավելացնելով ժամանակը մինչև 6-8 ժամ օրվա ընթացքում: Օդային վաննաները լավ օդափոխված սենյակում նորածինների համար պետք է ընդունել +20-22 աստիճան շերմաստիճանի պայմաններում: Այդ վաննաները պետք է գուգակցվեն մարմնանարգական վարժությունների հետ: 1.5 տարեկան Երեխաները օդային վաննաները ընդունում են կիսավարտիքներով, մայկաներով, գուլպաներով, հողաթափերով: Իսկ հիվանդ Երեխաներին թույլ է տրվում միայն մի քանի րոպե, այն էլ շորերով:

#### Արևային կոփում

Արևը հանդիսանում է կոփման ուժեղ ներգործող միջոց: Արևի ճառագյրներն օրգանիզմի վրա թողնում են բարերար ազդեցություն, արագացնում են նյութափոխանակությունը, լավացնում քունը, ինքնազգացողությունը: Բայց այն ունի նաև բացասական ազդեցություն: Դրա համար պետք է զգուշորեն վերաբերվել դրան: Ուլտրամանուշակագույն ճառագյրներն ակտիվորեն են ազդում իմունային համակարգի վրա: Մինչև 1 տարեկան Երեխաներին հակացուցված են արևային վաննաները, մինչև 3 տարեկաններին՝ շատ զգուշորեն, 3 տարեկանից բարձր արդեն կարևոր են դրանք համատեղել շարժական խաղեր հետ, որից հետո պետք է սրբիչով չորացնել մարմինը եթե նույնիսկ օդի շերմաստիճանը շատ է բարձր, որովհետև մաշկի խոնավ վիճակում կատարվում է մանկան օդանիզմի սառեցում: Արևային վաննաներն ավելացվում են աստիճանաբար: Դրանցից հետո խորհրդուր է տրվում Երեխաներին ջրային պրոցեդուրաներ ընդունել:

Արիեստական ուլտրամանուշակագույն ճառագյրները, որը մի քանի տարի առաջ լայնորեն օգտագործում էին օախիտի կանխարգելման նպատակով, այժմ շատ հեղինակներ նախադպրոցական տարիքի Երեխաների բուժման համար կամ խորհրդուր չեն տալիս ընդհանրապես, կամ էլ օգտագործել անսահման գգույշ:

#### Ոչ ավանդական և կոնտրաստային կոփում

Կոփման արդյունավետ մեթոդներից են այն մեթոդները, որոնց դեպքում առաջանում է թեկուզ կարծ կոնտակտ մարդու մերկ մարմնի և ծյան, սառցե շրի կամ բացասական շերմությամբ օդի հետ:

Կոնտրաստային կոփումն անցումային աստիճան է ավանդական և ոչ ավանդական կոփումների միջև: Դրանք կոնտրաստային շփումներն են, կոնտրաստային ցնցուղը, սառւնան, ոռւսական բաղմիքը և այլն: Երեխաների համար ընդունված են ոտքերի կոնտրաստային լվացումները: Պետք է պահպանել որոշակի կանոններ. սառը ոտքերը չպետք է լվանալ սառը ջրով, ոտքերը նորից

պետք է տաքացնել: Վաննայի մեջ աետք է դնել երկու տաշտ, մեկում ջրի ջերմաստիճանը միշտ 38-40 աստիճան է, մյուսում՝ 3-4 աստիճան ցածր: Երեխան սկզբից ոտքերը մտցնում է տաք ջրի մեջ 1-2 րոպե, հետո մցնում է ավելի սառը ջրի մեջ՝ փոխելով ոտքերը մի տաշտից մյուսը 3-6 անգամ: Առողջ երեխաների մոտ այդ պրոցեդուրան ավարտվում է սառը ջրով, իսկ թույլերի մոտ՝ տաքով: Կարելի է ջրի մեջ օգտագործել բուժիչ բույսեր: Ավելի մեծ երեխաների համար կարելի է այդպիսի վաննան փոխարինել կոնտրաստային ցնցուղով (տաք ջրով պետք է լինի 40-50 աստիճան տաք, 1 րոպե տևողությամբ), հետո կատարում են լվացում սառը ջրով, անենացածր ջերմաստիճան՝ 10-15 աստիճան: Այս վաննաները հերթագայում են 5-10 անգամ:

Սառնայում (չոր օդային բաղնիք) օգտագործում են օդի բարձր ջերմաստիճան գոլորշու ձևով, ցածր խոնավությամբ և սառեցում ջրավազանում՝ 3-20 աստիճանում: Ծնողների համաձայնությամբ՝ երեխան, եթե հիվանդ չէ, կարող է հաճախել սառնա 3-4 տարեկանից, շաբաթը 1 անգամ, սկզբում՝ 1 անգամ 5-7 րոպե, հետո կարելի է 3 անգամյա հաճախում՝ 10 րոպեով: Լայն կիրառում է գտել ռուսական բաղնիքի կոփման էֆեկտը: Նրա հիմքը կազմում է կոնտրաստային ցիկլի խիստ պահպանում՝ տաքացում, սառեցում, հանգիստ: Դուսական բաղնիքում օգտագործում են ավել-

ներ՝ տարբեր ծառերի ճյուղերից, որոնք տալիս են տարբեր սպեցիֆիկ էֆեկտներ, օրինակ՝ կեչու ավելը թողոնում է ցավազրկող, հանգստացնող, բրոնխները մաքրող էֆեկտ, կաղնունը՝ հանգստացնող, հակաբրորեցնող և այլն:

Կոնտրաստային կոփումը էֆեկտիվ է միայն սառը կոփումով [4]:

Այս կոփման ժամանակ օգտվում են լվացումից (դրույլից 3-4 աստիճան տաքության ջրով), լող սառցե ջրում՝ 1-4 րոպեի ընթացքում, տնային վաննայում և, որպես կոփման բարձր տեսակ՝ ծմեռային լող: Զմեռային լողով հաճախ սկսում են զրազվել այն մարդիկ, որոնք ունեն տարբեր խրոնիկական հիվանդություններ, չեն բուժվել ավանդական դեղորայքի միջոցով: Այդ պատճառով այդ խմբի մեջ մեծ է այն մարդկանց տոկոսը, որոնք ունեն սրտի իշեմիկ հիվանդություններ, հիպերտոնիա, շնչառական օրգանների, մարսողության հետ կապված հիվանդություններ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Иванченко В. Г., Тайны русского заказа. М., 1991.
2. Воронцова И. М., Болеющий А. А., Закаливание детей с применением интенсивных методов. Метод. рекомендации. СПГ., 1990.
3. Ираздников В. П., Закаливание детей дошкольного возраста. М., 1988.
4. Традиционные и нетрадиционные методы оздоровления детей. Материалы конф. Дубна, 1992, с. 115.

#### PHYSICAL INUREMENT OF ORGANISM AS A RESULTING FACTOR OF HEALTHY LIFESTYLE

*L. HOVHANNISYAN*

##### Summary

Thus, summing up the original idea of the article, it can be said that annealing the body with all the methods has a great health significance. It is aimed to imporve the body's immune system, which is a primary condition for having healthy generation.

## ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻՄԱԿՈՒԹՅԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԲՆԹԱՅՑԸ\*

### **Ա. Վ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

*Արցախի պետական համալսարան*

**Ա**զգային զարթոնքի արդի պայմաններում մանկավարժական գործընթացի ազգայնացումը և հայեցի դաստիարակությանը է ազգային ազգային վարքագիծը: Ազգագիտակցությունը որպես անձի գիտակցության բարձրագույն մակարդակ հենվում է սովորողների բարոյագիտակցության ու իրավագիտակցության վրա: Անհրաժեշտ է ապահովել ուսումնական նյութերի գաղափարագիտական բովանդակությունը, նպաստել սովորողների ինքնուրույնության ու ակտիվության զարգացման՝ իհմք ընդունելով վերլուծական-հումանիստական գործունեությունը: Պետք է տարբերել համոզնումը ու գիտելիք հասկացությունները: Գիտելիքն աշակերտությունների հանրագումարն է, իսկ համոզնումը խոր ու իիմնավորված կայուն հայացք է: Համոզնումը սովորողի գիտելիքը դարձած կարծիքն է, որը ծևակորվում է մտավոր գործունեության ընթացքում:

Որպես հայեցի դաստիարակության ելակետային դրույթ պետք է ընդունել բարոյականի ու գեղագիտականի ներդաշնակությունը: Հիմք ընդունելով դրանց միասնությունը՝ սովորողների հայեցի դաստիարակության հիմնահարցը պետք է կապել համակողմանի զարգացման զաղափարի հետ ուշադրություն դարձնելով հոգեկան խիզախության, խոսքի մշակույթի, հայրենասիրության, բարբառախոս միջավայրում լեզվի անադարտության, համակարգապահության, դժվարությունների հաղթահարելու, փոխադարձ օգնության հիմնահարցեր լուծելու անհրաժեշտությունը: Բարոյական բարձր ու գեղագիտական արժեքների շտեմարան պետք է համարել «Սասունցի Դավիթ» էպոսը, որը մի վիթսարի թռիչքը է ժողովրդական պոեզիայի, մշակույթի բնագավառներում:

Ազգային-ազատագրական թեմաներով գրված ստեղծագործություններն ունեն հայեցի դաստիարակության լայն հնարավորություններ:

Հայեցի դաստիարակության առումով չի կարելի անտեսել վեհի գաղափարը: Ըստ Ռ. Կանտի՝ վեհը մարդու բարձրացումն է մինչև աստվածային մեծություն, որը նրան պարզեցն է անմահություն: Վեհը մարդու հպարտությունն է: Սարդն ընկալելով վեհը ճաշակում է անսահման հրճվանք և մտերմանում է հավերժությանը: Վեհն այն հերոսների արարքներն են, որոնք հեռանալով մեզանց, ավելի են մտերմանում մեզ:

Հայեցի դաստիարակության ելակետային դրույթ պետք է համարել առարկայական կապերը: Այդ կապակցությանը Ա. Կատերվարը գրել է. «Ճիշտ է, ամենաբազմազան առարկաները որոշ տեսանկյունով համընկնում են և գիտելիքների միասնության տեսակետից իրար լրացնում: Սակայն տարբեր առարկաներ պետք է առանձին-առանձին ուսումնասիրել, պետք է միայն պարզ ու որոշակի սահմանել և ցույց տալ նրանց փոխադարձ կապը»: Նման կարծիք է հայտնել նաև Յ. Դ. Ուշինսկին. անհրաժեշտ է մի փաստը լուսաբանելով մյուսով, բոլորից կազմել ոյուրագննելի մի համակարգ, որն առանց մեծ դժվարությունների կկարողանա յուրացնել յուրաքանչյուրը, խուսափելով այն միակողմանիությունից, որոնք ոչ մի տեղ այնքան վճռորոշ չեն, որքան դաստիարակության գործում: Չի կարելի անտեսել Մ. Կորոտովի կարծիքը. «Եթե ամեն մի գիտություն, ուսումնասիրելով երևույթների որոշակի շրջան, մեզ տալիս է նյութական աշխարհի մի կողմի արտացոլումը, ապա բոլոր գիտությունները միասին տալիս են համեմատաբար լրիվ և համակողմանի արտացոլում» [2, 101]:

Բարբառախոս միջավայրում ինչը կարող է օգնել սովորողների հայեցի դաստիարակությանը, եթե ոչ արվեստն ու գրականությունը: Չի կարելի անտեսել ողբերգականի կատեգորիան, որը

\* Ներկայացվել է 14.11.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

նույնանական անհրաժեշտ է հայեցի դաստիարակության համար: Կարեկցանքը միաժամանակ օգնում է հաղթահարել զգալի դժվարություններ: Բոլոր դեպքերում առաջին պահում պետք է մղել ազգային գաղափարախոսությունը, ժողովրդի հերոսականության մեջ դասերը, որոնք հայենասիրության դաստիարակաման անգնահատելի գործններ են: Որբերգականը սեղունդների դաստիարակության գործընթացում առաջացնում է ոչ միայն համակրանք ու կարեկցանք, այլև հպարտություն և խորը համոզնունք արդարության մկատմամբ:

Հայեցի դաստիարակության հիմնարար դրույթներից պետք է համարել բարոյական պահանջները, եթե անհատը հանցանքները չեն գործում վախից, այլ գիտակցելով դրանց հանրային վտանգավորությունը: Օրենքից վախենալով հանցագործությունը չկատարողը նույնանական է: Եթե օրենքը չինանար կամ չվախենար, նա հանցագործություն կկատարեր:

Անհատի ակտիվության դրսևորման հիմքում ընկած են պահանջնունքները, որդապատճառներն ու հետաքրքրությունները: Դրապատճառները դեպի գործունեություն նորող ուժերն են:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ուսուցման դժվարությունների հիմքում հաճած ընկած են բարբառախոս միջավայրի ազբեցությունները: Տեղին է մանկավարժ Յ. Մախսանյանի տեսակետը, ըստ որի՝ «... ուսուցչի համար օրախնդիր է դառնում առողջ և բանական սերնդի դաստիարակությունը, սերունդ, որը շարունակելու է իր ազգային լավագույն ավանդույթները, պահպանելու ազգային հպարտության զգացումը, հայ ընտանիքի պատիվը, հայ մշակույթի հարստությունը, ցույց տալու աշխարհին իր հոգևոր ու բարոյական մեջ արժանիքները, հաջողություններն ու անհաջողությունները, պատմական հաղթանակներն ու պարտությունները, մեր պատմության հերոսական էջերը» [3, 64]:

Դաստիարակչական աշխատանքների ելակետային դրույթներն իրենց արտացոլումն են գտնում հայեցի դաստիարակության բովանդակության, ձևերի, մեթոդների և միջոցների մեջ: Դրանք լրացնում են իրար և կազմում են համակարգ: Դրանցից յուրաքանչյուրն իր ինքնատիպ արտացոլումն է գտնում նաև արտադրողական աշխատանքներում: Նշենք հայեցի դաստիարակությանը նպաստող, հետաքրքրությունը ներկայացնող, ինքնատիպ, առաջավոր դպրոցների փորձով հիմնավորված ելակետային դրույթները: Դրանցից չի կարելի չառանձնացնել ինքնագործունեությունը և ինքնակառավարումը, որոնք նաև հասարակական ակտիվության հիմքերն են: Այդ առթիվ Վ. Ա.

Սուխոնմլինսկին գրել է. «Կազմակերպական իմաստով երեխաներին պետք է տրվի ինքնուրույնություն, առանց որի երեխաների մեջ աշխատանքի մկատմամբ ոչ մի պատասխանատվություն չի առաջանա» [4, 318]:

Այս ամենը չի նվազեցնում ուսուցչի դերը, նրանցից յուրաքանչյուրից պահանջվում է ավելի գործուն ու հմուտ դեկավարություն:

Աշակերտական ինքնավարություն ստեղծելու ու զարգացնելու հիմքը պետք է համարել այն, որ աշակերտներն իրենք պետք է զգան դրա անհրաժեշտությունը:

Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ունենա իր անելիքները: Ինքնավարության արդյունավետությունն ուղղակիորեն է կախված նրա պլանավորումից ու ծավալից:

Ավագ դպրոցներում աշխատող մանկավարժները, որոնք չեն ճանաչում իրենց սաների ներաշխարհը, չեն կարող նրանց օգնել: Դավասարապես վնասակար է չափից ավելի միջամտությունը, ավագ դպրոցականին երեխա համարելը: Աշակերտական ինքնավարության տեսակետից զգալի ու օգտակար փորձ է կուտակել Ստեփանակերտի թիվ 3 դպրոցում կազմակերպված «Մարտական գործերի շտաբը»: Աշակերտների ակտիվ գործունեության շնորհիվ է «շտաբ» ձևավորվել Մարտակերտի շրջկենտրոնի դպրոցում: Այժմ շտաբում ընդգրկված են 480 ավագ դպրոցականներ և դպրոցի շրջանավարտներ: Շուշիի թիվ 1 դպրոցում գործում է աշակերտական ընկերություն, որն ունի 120 անդամ: Դրական պետք է համարել, եթե դպրոցներում ձևավորված ընկերությունները դեկավարում են հենց իրենք՝ աշակերտները: Անհրաժեշտ է ընդգրել, որ ընկերությունների աշխատանքները ներ մանկավարժական խնդիրներ լուծելիս դառնում են սոցիալական երևույթ, և աշակերտների մոտ ձանձրույթ առաջանալու փոխարեն զարգանում է նրանց ինքնուրույնությունը: Արցախյան պատերազմի ժամանակ մարտական շտաբի գործունեությունն ուղղվել է նաև դպրոցներում գիշերները հերթապահություն կատարելուն, որը տվել է դրական արդյունքներ:

Բոլոր դեպքերում ու պայմաններում պետք է ցուցաբերել լավատեսություն ու մարդասիրություն: Շատ կարևոր է, որ ուսուցիչը կարողանա դեկավարել իր զգացմունքները: Միշտ պետք է իշխի չափից զգացումը: Ուսուցչի դաստիարակության ուժը զգալի չափով պայմանավորված է երեխայի մկատմամբ ունեցած հարգանքով ու հոգատարությամբ: Պետք է ներազել այն չափով, որ աշակերտի մեջ ներշնչվի հավատ ու կստահություն սեփական ուժերի մկատմամբ:

Դպրոցական կոլեկտիվի համախմբնան կանոր միջոց է դպրոցականի ազատ ժամանակի ճիշտ կազմակերպումը: Անհրաժեշտ է պայքարել ընկերներին վերևու նայելու մտայնության դեմ: Ճիշտ է ընդգծված իրագործել «կոլեկտիվի միջոցով, կոլեկտիվի համար» գաղափարը: Պետք է աշխատանքներին հաղորդել հեռանկարային բնույթ: Հեռանկարի բացակայությունը բացասար է անդրադառնում ամբողջ կոլեկտիվի գործունեության վրա: Դասարանական կոլեկտիվի գործունեությունը պետք է համապատասխանի դպրոցի ընդհանուր խնդիրներին:

Եթե չկա ընդհանուր ծրագիր, միասնական նույնում, չի կարող լինել դաստիարակություն: Շատ կարևոր է, որ միջոցառումը դիտվի որպես

մեկ ամբողջություն և դառնա դաստիարակության իսկական դպրոց:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Դիստերվեգ Ա.**, Մանկավարժական ընտիր երկեր, Եր., 1963:
2. **Կորուսով Վ. Ա.**, Ուսումնադաստիարակչական պրոցեսի ընդհանուր մեթոդիկա, 1986:
3. **Մախչանյան Գ. Ա.**, Ազգային գաղափարախոսության և դաստիարակության հարցեր, «Մանկավարժական միտք», 2006, 3:
4. **Իսահակյան Գ.**, Ղայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972:
5. **Քարամյան Գ. Գ.**, Մանկավարժության առարկան, զարգացման աղբյուրները և մեթոդները, Եր., 1966:

---

#### THE INITIAL TENETS OF THE PRO ARMENIAN EDUCATION AND THE PROCESS OF EDUCATION

**A. TOVMASYAN**

#### Summary

The article is dedicated to utilization of the initial tenets in the process of education.

## ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ\*

### **Ժիրայր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Դայաստամի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկական ամբիոնի դոցենտ, տնտեսական գիտությունների թեկնածու)

### **Էդգար ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Ցեղական Արմենիա ՍՊԸ իրացման գործակալ, տնտեսական գիտությունների թեկնածու

**Ո**իսկը կապված է ցանկացած գործունեությունում հենարավոր անբարենպաստ իրադրությունների ի հայտ գալու հետ և համայնամում է կայացված ցանկացած տնտեսական որոշման անհյուսափելի տարրը: Տնտեսվարման արդի պայմաններում իրավիճակի անորոշությունը հանգեցնում է ռիսկից խուսափելու անկարելիությամբ: Ընդունված որոշումների պատասխանատվությունն ամբողջովին ընկնում է այն ընդունողի՝ տնտեսվարման սուբյեկտի վրա, անդրադառնում է նրանց գործունեության փինանսական արդյունքների վրա: Ըստ Պ. Գրոբովյոյի՝ «Ոիսկը ձեռնարկության կողմից վճաներ կրելու, եկամուտների թերստացման կամ լրացուցիչ ծախսերի առաջացման հավանականությունն է, որը կարող է դրսարկվել որոշակի արտադրական կամ ֆինանսական գործունեության իրականացման արդյունքում»<sup>1</sup>:

Ելելով գործունեության այս կամ այն տեսակի իրականացման համար որոշակի պայմաններ ապահովող տարրեր հանգանանքների և պայմանների համակցությունների, համախմբերի տարրերականացման առանձնահատկություններից տարրերակում են ռիսկերի տեսակներ, որոնց շրջանակներում առավել ուշադրության են արժանի շուկայական ռիսկը, առևտրային ռիսկը, ներդրումային ռիսկը, գործառնական ռիսկը, ճյուղային ռիսկը, բանկային ռիսկը, քաղաքական ռիսկը, ապահովագրական ռիսկը և ֆինանսական ռիսկը:

Ոիսկերի որոշման գործընթացում հատուկ նշանակություն ունի «ներդրումային ռիսկի» հասկացությունը: Սա պայմանավորված է այս կամ այն երկրի տնտեսության մեջ կապիտալի ներդրման անորոշությամբ և այլընտրանքությամբ<sup>2</sup>: Այս տիպի ռիսկերի առաջացումն ամբողջությամբ

կախված է կառավարության տնտեսական քաղաքականությունից: Կարևորագույն գործոն է պետական մարմինների ընդհանուր մոտեցումը ներդրումային գործունեությանը, սա էլ պայմանավորված է հարկային բեռի ծանրությամբ, անհատ ձեռնարկատիրող և հայրենական ու օտարերկրյա ներդրողների իրավունքների պաշտպանվածությամբ և մի շարք այլ գործոններով: Ներդրումների հեռանկարների և ներդրումային ռիսկի չափերի վրա էականորեն ազդում են հաշվարկային դրույքափերի տատանման և գնաճի ու գնանկման տեմպերը: Ներդրումային որոշումների ընդունման գործընթացում նկատելի է քաղաքական ռիսկերի գնահատումը<sup>3</sup>:

Ներդրումային ռիսկերը կարևորվում են ձեռնարկատիրական գործունեության համակարգում:

Ձեռնարկատիրական գործունեությունում ռիսկի առաջացման գլխավոր պատճառը անորոշությունն է, որն առաջանում է՝

1. Դժվար կանխատեսվող տնտեսական գործընթացների մշտական անկայուն վիճակում: Դա տեխնիկական առաջնորդացն է, բնության երևույթները, պահանջարկի և սպառողի նախընտրության զարգացումը, և այլն:

2. Սահմանափակ և ոչ լրիվ ինֆորմացիան տնտեսական երևույթների մասին, որոնք ձևավորվում են ձեռնարկատիրական գործունեությամբ գրադրությունների մեջ կողմից սահմանափակ ուղարկությունների դեպքում որոշակի որոշումների կայացմամբ:

3. «Կազմակերպված» անորոշության ի հայտ գալը, որը պայմանավորված է օբյեկտիվ ինֆորմացիայի թաքցման հետ՝ տնտեսական, քաղաքական և այլ պատճառներով:

4. Ձեռնարկատիրական գործունեության գնա-

\* Ներկայացվել է 01.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

հատման չափանիշների և հստակ ծևավորված նպատակների բացակայություն:

Այսպիսով, «Շիսկերի» տակ հասկացվում է կազմակերպության ռեսուլսների կորստի վտանգ, եկամուտների ոչ լրիվ ստացում կամ էլ լրացուցիչ ծախքների առաջացում: Լայն առումով ձեռնարկատիրական ռիսկը ելքի անորոշությունն է և կազմակերպության գործունեության հետևանքները՝ ինչպես ամբողջությամբ, այնպես էլ նրա առանձին գործարքների: Այլ կերպ ասած՝ դա պլանավորվող կամ անցկացվող գործարքների արդյունավետությամբ:

Դամաշխարհային պրակտիկայում առևտրային գործարքների 40%-ը անհաջողության է մատնվում ռիսկերի ոչ բավարար չափով հայտնաբերման, գնահատման և կառավարման պատճառով:

Ժամանակակից շուկայական տնտեսավարման պայմաններում լինել հարուստ՝ նշանակում է կարողանալ ռիսկերը ճիշտ վերլուծել, հաշվարկել և կառավարել:

Ռիսկերի կառավարումը, ինչպես այլ կառավարչական գործունեություն, ունի տրամաբանական ասպեկտ (որոշման ընթրունում) և իր գործընթացը: Ռիսկերի կառավարումը համապատասխանաբար կարելի է բնորոշել որպես որոշումների մշակման և իրականացման գործընթաց, որը նվազագույնի է հասցնում պատահական կամ ծրագրավորված իրադրությունների ազդեցության լայն սպեկտրը, որոնք վերջին հաշվով նշանակալից նյութական վնասներ են հասցնում ֆիրմային:

Այսօր անվտանգության ապահովման գործառույթի նշանակությունն ավելի է աճում, իսկ ինքը՝ գործառույթը, փոխակերպվում է ոչ այնքան անվտանգության կառավարման գործառույթի, որքան վտանգի և իրավիճակների ոչ ցանկալի ուղղությամբ զարգացման հնարավորության:

Նյութական և սոցիալական միջավայրի բարդացման չափով, որտեղ մարդը ստիպված է զբաղվելու ձեռներեցությամբ, աճում է ներ հավանականությամբ կորուստներ կրելու գգացողությունը, իսկ գործարար ակտիվության համար վնասակար են ինչպես ռիսկերի ոչ ցանկալի ուղղությունը: Եթե կորուստների հնարավորությունն անտեսվում է, ապա դա կարող է հասցնել սնանկության, աշխատատեղեր չեն ստեղծում, բաց են թողում պոտենցիալ եկամուտ ստանալու հնարավորությունը: Եթե կորուստների հնարավորությունն անտեսվում է, ապա դա կարող է հասցնել սնանկության, գործարար ակտիվության նվազման, զբաղվածության կրծատման: Այլ կերպ

ասած՝ հարաբերությունը տարբեր է, հետևանքները նույնն են: Կառավարման տեսանկյունից այն հիմք է տալիս նշելու ռիսկի նմանատիպության մասին: Ռիսկի կառավարումը թույլ է տալիս ոչ միայն նվազեցնելու կորուստները, եթե դրանք լինեն, այլ նաև ավելի արդյունավետ գրաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Ազատված լինելով ավելորդ կասկածներից՝ ֆիրման կարող է ավելի ագրեսիվ և արյունավետ իրականացնել աշխատանքը: Բացի դրանից, կառավարչական որոշումների որակը, օրինակ՝ նոր ներդրումների, նոր արտադրանքի յուրացման, եթզ շուկայի նոր հատված և այլն, կարող է բարձրանալ, եթե այդ որոշումների ռիսկային վիճակը և դրանց այլընտրանքը գնահատվեն նախօրոք: Այդ կերպ, ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում ռիսկերի կառավարումը շոշափում է ցանկացած տնտեսապես ակտիվ ամբողջական միավորի կենսականորեն կարևոր ասպեկտները:

Հետևաբար, ռիսկի գործոնը սահմանափակիչ գործոնից լրացուցիչ եկամտաբերության ապահովման խթանի վերածելու համար անհրաժեշտ է սովորել կանխատեսել ռիսկը, գնահատել նրա չափերը, նրա հետ կապված օգուտ ստանալու իրադրությունը, պահանջորդել ռիսկի բացասական հետևանքների կանխմանն ուղղված միջոցառումները և չանցնել թույլատրելի սահմանը:

Ռիսկի հաշվի առնելը տնտեսական գործառնությունների իրականացման ժամանակ անբարենպաստ հագամանքների ի հայտ գալու և նախատեսված ռազմավարությունից շեղումների պարագայում ռեսուլսների հնարավոր կորուստների, ինչպես նաև բաց թողնված օգուտի կանխատեսումային գնահատումն է: Ընդ որում անհրաժեշտ է քանակական գնահատել կորուստների կանխատեսումային մեծությունները:

Ռիսկի համակողմանի գնահատման համար անհրաժեշտ է համարվում բացահայտել հնարավոր կորուստների մեծությունների յուրաքանչյուր բացահանք և հարաբերական արժեքի ի հայտ գալու հավանականությունը, գտնել նրաց կանխման և հջեցման արդյունավետ միջոցներ:

Ռիսկի թույլատրելի լինելու և նպատակահարմարության մասին ծրագրային որոշումների կայացման ընթացքում այնքան կարևոր չէ որոշակի մակարդակի կորստի հավանականության պատկերացումը, որքան կորուստների մի որոշ մակարդակ չգերազանցելու հավանականության հստակեցումը: Ըստ էության հենց այդ է ռիսկի հիմնական ցուցանիշը: Սահմանային արժեքային ցուցանիշների մեծությունները պետք է սահմանի և հանձնարարականներ մշակի ձեռնարկատիրական ռիսկի կիրառական տեսությունը: Կարելի է

կողմնորոշվել ռիսկի ցուցանիշների սահմանային արժեքներով:

Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ցածր քաղաքականությունը բացատրվում է գործընթացի հիմնական մասնակիցների մոտ մի քանի տարվա կտրվածքով գիտակցված ռազմավարության բացակայությամբ: Երկարատև հեռանկարում կազմակերպությունների առավել խոշոր կորուստներ կրում են ներդրումների ներգրավման հստակ ռազմավարության և դրա իրականացման մեխանիզմի բացակայության պատճենով:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման արդի իրականությունում ծագած այդօրինակ խնդիրների լուծման բանալին գունդում է նաև կառավարչական որոշումների կայացման պահին անհրաժեշտ տեղեկատվության անթերիության, ֆինանսատնտեսական ցուցանիշների պլանային արժեքներին զգտմանն ուղղված կանխատեսումների կատարելիության ապահովման մեջ: Այլապես կառավարիչների համար կզործի անորոշության միջավայր: Հայաստանի Հանրապետության տնտեսության բարեփոխումների կառավարման կարևորագույն գոր-

ծիբների թվին է դասվում հավանական ռիսկայնության և անորոշությունների պայմաններում ներդրումային իրական նախագծերի իրագործման մեջմեջները:

<sup>1</sup> Грабово́й П. Г., Петро́ва С. Н., Полта́вцев С. И. и др., Риски в современном бизнесе. М., "АЛАНС", 1994, с. 58-115.

<sup>2</sup> Гранату́ров В. М., Экономический риск: сущность, методы измерения, пути снижения: Учебное пособие. М., "Дело и Сервис", с. 16.

<sup>3</sup> Финансовый менеджмент: теория и практика: Учебник /Под ред. Е. С. Стояновой. 5-е изд., перераб. и доп. М., "Перспектива", 2001, с. 440.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

<sup>1</sup> Грабово́й П. Г., Петро́ва С. Н., Полта́вцев С. И. и др., Риски в современном бизнесе. М., "АЛАНС", 1994, 200 с.

<sup>2</sup> Гранату́ров В. М., Экономический риск: сущность, методы измерения, пути снижения: Учебное пособие. М., "Дело и Сервис". 160 с.

<sup>3</sup> Финансовый менеджмент: теория и практика: Учебник /Под ред. Е. С. Стояновой. 5-е изд., перераб. и доп. М., "Перспектива", 2001, 597 с.

#### PROBLEMS OF INVESTMENT RISK MANAGEMENT

**JIRAYR HARUTYUNYAN**

Candidate of Economics Sciences, docent

**EDGAR HARUTYUNYAN**

Candidate of Economics Sciences

#### Summary

Investment risks and its assessment approaches in the entrepreneurial system are examined. Hampering constituents of investment activation in Armenia are given. Preconditions of development of entrepreneurship and involvement of investments in Republic of Armenia are found out.

**ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԻ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ\***

**Սերյոժա Արշակի ՍԱՐՈՒԻԱՆՅԱՆ**

Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ

**S**նտեսության արդյունավետ զարգացման բնորոշ գործոնները՝ արդյունավետությունը և որակը, մշտապես եղել և մնում են յուրաքանչյուր երկրի տնտեսական քաղաքականության կենտրոնում:

Տնտեսական քաղաքականության իրականացման համար կարևոր գործիք են համարվում արդյունաբերական քաղաքականության ռազմավարական ծրագրերը, որոնց մշակման հիմքում դրվում են տնտեսության, գիտության և տեխնիկայի ձեռքբերումները. կառավարչական հմտություններն ու ազգային առանձնահատկություններ:

Հայաստանի կառավարության կողմից 2012 թ. մշակված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության մեջ ընդգծվում է, որ պետությունը պատասխանառու է լինելու ոչ միայն բարենպաստ բիզնես միջավայրի համար, այլև տնտեսության մասնավոր հատվածը ուղղակիրեն ներգրավելու է ջյուլային արդյունաբերական քաղաքականության մեջ [2, էջ 3]: Այս կերպ կառավարությունը նպատակ ունի արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող գործընթացներին համահունչ բովանդակություն հաղորդել Հայաստանի տնտեսության զարգացմանը:

Սակայն նշված ռազմավարությունը, մեր կարծիքով, առավել արդյունավետ կլիներ, եթե շեշտադրություն նաև աշխատանքի և արտադրանքի որակի բարձրացման առանցքային հիմնահարցերը, քանի որ տնտեսական կայուն աճի պահովված մասն, քաղաքացիների բարեկեցության բարձրացման հիմնախնդիրների լուծմանը նեճապես նպաստում է նաև աշխատանքի, բողարկվող արտադրանքի և ծառայությունների որակի բարձրացումը [1, էջ 25]: Հանրահայտ ծննդարտություն է, որ որակի բարձրացումը նաև քանակի ավելացում է նշանակում [1, էջ 8]:

Դրա համար էլ ինչպես պետության, այնպես էլ հանրապետության բիզնես միջավայրի արտադրական քաղաքականությունը պետք է ուղղված լինի տնտեսության հաստատում առաջընթացը զարգացնելու հիման վրա գիտատեխնիկական և

արտադրական պոտենցիալի առավել ռացիոնալ օգտագործման, ռեսուրսներն ըստ ամենայնի խնայելու, աշխատանքի որակը ամենուրեք բարձրացնելու կարևորագույն և բարդ կուրսի հրացման գործիք:

Աշխատանքի և հատկապես թողարկվող արտադրանքի որակի բարձրացումը պայմանավորված է ոչ միայն գիտատեխնիկական առաջադիմության և արտադրության աճի արագացման ապահովման մակարդակով, այլև կազմակերպական, կառավարչական ու սոցիալական գործոններով [4, էջ 46]:

Ուսումնաասիրությունները ցույց են տալիս, որ աշխատանքի որակի և արտադրողականության աճի շուրջ 40-50%-ն է բաժին ընկնում տեխնիկական առաջադիմությանը, որը բավականին ծախսատար է: Մնացած 50-60%-ը կարող է ծերպ բերվել կազմակերպական, կառավարչական և սոցիալական գործոնների ծիշտ օգտագործման միջոցով, որի համար գորեք ծախսեր չեն պահանջվում:

Ուստի, արտադրության արդյունավետության ապահովման և թողարկվող արտադրանքի կամ մասուցված ծառայությունների որակի բարձրացման մովող պայքարի միջոցների գիմանոցում անհամեմատ աճում է արտադրության կառավարման հատկապես աշխատանքի որակի կառավարման դերը արդի փուլում:

Որակի բարեկավման խնդրի լուծումը, որը բաղկացած է մի շարք բարդ և բազմաբնույթ, օրյեկտիվ և սուրյեկտիվ գործոններից, պահանջում է կատարելագործել որակի կառավարման համակարգերը, գտնել նոր լուծումներ, նոր ձևեր և մերոդներ՝ ինչպես ուղղահայց, այնպես էլ հորիզոնական մակարդակներով:

Այդ բնագավառում լավագույն արդյունքի հասած հայրենական և արտասահմանյան ծեռնարկությունների փորձի լուսումնասիրությունները հաստատում են, որ որակի բարձրացումը հնարավոր չէ լուծել իրականացվող միայն մասնակի միջոցառումներով, այսինքն միայն ծեռնարկություններում և կազմակերպություններում իրականաց-

\* Ներկայացվել է 22.11.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

Վոլ միջոցառումներով:

Մասնակի միջոցառումները կարող են լուծել որպի բարձրացնան այս կամ այն խնդիրը, որը չի կարող բավարար լինել նրա վերջնական հարցի լուծման համար:

Ուստի, որակը պահանջված մակարդակին հասնելու համար անհրաժեշտ են համալիր և համակարգված միջոցառումներ: Այսինքն՝ ձեռնարկություններում և կազմակերպություններում իրականացվող միջոցառումներին պետք է գոլգակցել նաև մարդերի և համայնքների կառույցների կողմից իրականացվող միջոցառումները, որոնք պետք է ընդգրկեն արտադրության բոլոր փուլերը արտադրություն, բաշխում, փոխանակում, իրացում կամ սպառում հաշվի առնելով տարածքային առանձնահատկությունները [5, էջ 145]:

Համալիր միջոցառումներում, ընդգրկելով ձեռնարկությունների, կազմակերպությունների, արտադրական ճյուղերի, համայնքների և մարդերի մակարդակներում իրականացվող գործընթացները, կարող են իմաստության մարդիսանալ արտադրականի որակի կառավարման հանրապետության, մարզային համալիր համակարգերի (ԱՈԿՄՀ) ձևավորման և ստեղծման համար, ընդ որում, այն ուղղված պետք է լինի աշխատանքի, թողարկվող արտադրանքի ու ծառայությունների որակի համակողմանի բարձրացնանք՝ համայնքներում իրականացվող համալիր ծրագրերի մշակման ու ներդրման միջոցով:

Մարզային տարածներում են գտնվում և գործում արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, կայի, առևտուրի, կենցաղի սպասարկման ձեռնարկությունները և կազմակերպությունները, պետական մարմինների ենթակառուցվածքները: Յետևապես որակի մարզային կամ տարածքային կառավարման համալիր համակարգերը պետք է ընդգրկեն, առաջին հերթին, հանայնքային ու մարզային կառույցների ձեռնարկությունների կառավարման կազմակերպական միջոցառումները, այնուհետև՝ հանրապետության ենթակայունության տակ գործող ձեռնարկությունների գործունեության փոխազդեցության գնահատման միջոցառումները [1, էջ 44]:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ արտադրանքի որակի կառավարման տարածքային կամ մարզային համակարգը ընդգրկում է ինչպես ճյուղային (ուղահայաց), այնպես էլ տարածքային (հորիզոնական) մարմինների ողջ գործունեության խտացված արդյունքը, որը կարող է ձեռք բերվել միայն արտադրանքի որակի վրա ազդող տնտեսական, կազմակերպական, տեխնիկական, սոցիալական և այլ գործուների գիտականորեն հիմնավորված փոխազդեցությունների ապահովման դեպքում:

Դա կարելի է իրականացնել միայն ԱՈԿՄՀ-ի ստեղծման և կիրառման դեպքում, որին պետք է լիազորել նաև որակի կանխատեսման, խթանման, հաշվառման, վերահսկման և վերլուծման

հիմնական գործառույթները: Այն միաժամանակ կարող է հանդիսանալ նաև հանրապետական արդյունաբերական քաղաքականության ռազմավարության ծրագրերի իրականացնան գործիքներից մեկը՝ եթե ոչ ամենակարևորը:

Սարգային համալիր համակարգերի մշակման ու ներդրման ուղղությամբ ձեռնարկված աշխատանքների ծավալը կարելի է որոշել նրա աշխատանքներն ապահովող անհրաժեշտ ծրագրերի քանակի միջոցով, որոնք իրենցից ներկայացնում են նպատակների, խնդիրների և միջոցառումների անբողջականություն:

Համալիր ծրագրերի ներդրումը պետք է ապահովի մարզում կատարվող աշխատանքների հստակեցում՝ հանձնարարությունների կատարման գործում որպի բարձրացնան ուղղությամբ կազմակերպական, տեխնիկատնտեսական միասնական քաղաքականության իրականացնան շնորհիվ:

Դրա համար ԱՈԿՄՀ-ի ծրագրերի ստեղծման հիմնական խնդիրները պետք է համարվեն՝

- տարածքի մակարդակով համակարգի բոլոր նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի կազմը որոշելը,

• նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման, հաստատման և ներդրման ժամանակացույցը կազմելը և կոնկրետ կատարողների ընտրությունը,

- նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ներդրման և զարգացման կազմակերպական, տեխնիկական, սոցիալական ու տնտեսական միջոցառումները կազմելը,

• այլ խնդիրների բացահայտումը և նրանց հիմնարար փաստաթղթերի մշակումը:

Դաշվի առնելով նշանակած խնդիրների ծավալը, կառուցվածքը և բարդությունը համալիր ծրագրերը նպատակահարմար է կազմել 2 ենթածրագրերով:

Առաջինում՝ ընդգրկել ԱՈԿՄՀ-ի հիմնական, ընդհանուր մասնագիտական փաստաթղթերի մշակումը, հաստատումը և ներդրումը:

Երկրորդում՝ ընդգրկել գողափարապահարական, կազմակերպական, սոցիալ-տնտեսական բազմաթիվ միջոցառումները, որոնք ապահովում են համակարգի մշակման և ներդրման գործառույթների կատարումը:

ԱՈԿՄՀ-ի ստեղծման առաջին փուլում պետք է ձևավորել համակարգի աշխատանքները համակարգող խորհրդու և մշակել ու հաստատել նրա գործունեության կանոնադրությունը: Սարգային համալիր համակարգի կառավարման հիմնական օլոկը կարող է հանդես գալ մարզպետարանը, քանի որ նրանք կոչված են իրականացնել տարածքային կառավարման գոլգակցելով այն համայնքային կառավարման հետ:

Համակարգող խորհրդի նախագահը կարող է լինել մարզպետը, իսկ անդամները կարող են լինել վարչության և բաժինների պետերը, համայնք-

ների դեկավարները և ավագանիների անդամները, ինչպես նաև տարածքի բիզնես միջավայրի դեկավարները:

ԱՌԿՄՀՀ-ի ծրագրերի մշակմանը կարող են ընդգրկվել մարզի ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական անձնակազմը, տարածքի պետական և մասնավոր ոլորտի դեկավարները, որակի ուղղությամբ մասնագիտագործական աշխատողները և այլ անձինք:

Այսուհետև, անհրաժեշտ է ստեղծել ԱՌԿՄՀՀ-ի կառուցվածքը՝ իր ենթամակարդակներով՝ սահմաներով նրանց կառավարման գործառույթները, լիազորություններին ու պարտականությունները: Այս դեպքում հնարավոր է օգտագործել, ինչպես աշխատանքի և արդյունքի որակի բարձրացնան ուղղությամբ ինցիդենտ գոյություն ունեցող առաջավոր փորձերը, այնպես էլ արտասահմանյան ձեռքբերումները:

ԱՌԿՄՀՀ-ի կազմակերպական կառուցվածքը պետք է ընդգրկի մարզի պետական և ոչ պետական կառույցները, հասարակական և կուսակցական կազմակերպությունները, կրթության, առողջապահական, մշակույթի, ֆիզկուլտուրայի և սպորտի հիմնարկները և այլն: Դրանք կառավարման կառուցվածքում պետք է ներկայացվեն խմբերի, հանձնաժողովների, բաժինների, օդակների տեսքով:

Նշված կազմակերպությունների աշխատանքները փոխարժակացված կազմակերպելու նպատակով պետք է մշակվեն կարգավորող և համակարգող կանոնակարգեր (ստանդարտներ):

Այսպես, օրինակ, համակարգի կազմակերպամեթոդական գործունեությունն ապահովելու նպատակով կարելի է ստեղծել 11 ընդհանուր և 16 մասնագիտական ստանդարտներ: Դրանցից մեկը կարող է համարվել մարզի համայնքների գործունեության որակի գնահատման մեթոդական, որում կարելի է նշել, որ յուրաքանչյուր եռամսյակ կամ կիսամյակ համայնքները ներկայացնում են հաղորդում արտադրանքի որակի ուղղությամբ կատարված աշխատանքների մասին, որի հիման վրա հանձնաժողովը գնահատում է համայնքի գործունեությունը 5 բալային համակարգով և այլն:

ԱՌԿՄՀՀ մշակման և ներդրման գործընթացը սկսելու ժամանակ անհրաժեշտ է առաջնահերթություն տալ հետևյալ գործառույթերին:

- համակարգի կառավարման քաղաքական ձեռնարկությունը ստեղծելու աշխատանքները,

ցուցանիշների սահմանումը,

- համայնքների խոշորացումների ուղղությամբ տարվող աշխատանքները,

• փոքր և միջին բիզնես միջավայրի գարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծումը՝ մարզի և համայնքների լիազորությունների սահմաններում,

- համայնքների մաքրության, լուսավորության, կոմունալ ծառայությունների աշխատանքի գնահատումը,

- «Որակի տուն» անվանմանը մարզային կառույցի ստեղծումը,

• գիտատեխնիկական, գիտագործական կոնֆերանսների, տոնավաճառների, տարբեր մրցույթներ և տոնակատարությների և այլ միջոցառումների անցկացումը և կանոնակարգումը:

Նշված և նշված գործառույթների անցկացման համար պես է ստեղծվեն ժամանակավոր կամ մշական հանձնաժողովներ:

Որակի կառավարման նպատակով մեր կողմից առաջարկվող տարածքային համային համակարգի ստեղծումը թեև բարդ և դժվարին աշխատանք է, սակայն այն խիստ արդիական պահանջ է ինչպես ներկայի, այնպես էլ ապագայի նկատառումներով մարզի աշխատանքները արդյունավետ դարձնելու համար:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Ա. Սարգսյան, Որակի կառավարման քաղաքական հիմնարարք, Երևան, «Հայաստան», 1986:
2. ՀՀ կենոնմկայի նախարարության տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն, Երևան, ՍԱՄՄՐԿ», ՍՊԸ, 2012:
3. Մենեջմենտ (Յու. Սուվարյանի ընդ. խմբ.) ուսումնական ձեռնարկ, Երևան, Տնտեսագետն, 2002:
4. Է. Յ. Օրյան, Արտադրանքի որակի կառավարման պրոբլեմները, Երևան, «Հայաստան», 1977:
5. Տեղական ինքնակառավարման հիմնահարցերը, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Պետական ծառայություն», 2000:
6. Ս. Սարգսյան, Է. Թորոսյան, Զեռնարկության կառավարման գործառույթների գնահատումը, «Միխար Գոշ» գնուաններովական հանդես, 2007:
7. Է. Յ. Օրյան, Համայնքային ծառայության համակարգը Հայաստանում, Երևան, 2004:
8. Ն. Կիրակոսյան, Յ. Օրյան, Տարածքային գարգացում և կառավարում, Երևան, «Պետական ծառայություն», 2005:
9. Մեսկոն Մ., Ալեքսեյ Մ., Խելօրս Փ., Основы менеджмента М., «Дело», 1992.
10. Մոնդեն Յ. «Տօւեմ», Методы эффективного управления. М., «Экономика», 1989.

#### THE NECESSITY AND AIM OF ESTABLISHMENT OF REGIONAL MALL SYSTEM OF QUALITY MANAGEMENT

**S. A. SARUKHANYAN**  
Candidate of Economics Sciences, docent

#### Summary

In the article it is represented the necessity of regional management quality. It is also given the scientific formulation of its establishment and aim.

**ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ  
ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ\***

**Օյա ԳԱԼԱՏՅԱՆ**

Դայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) մեքենաշինական արդյունաբերության էկոնոմիկայի, կազմակերպման և կառավարման ամբիոնի ասխատեմուտ,

տնտեսական գիտությունների թեկնածու

**Ա**երդրումային գրավչությունը կարելի է բնորոշել որպես ներդրումային արտոնությունների և սահմանափակումների այնպիսի համադրություն, որը պայմանավորում է տվյալ տնտեսական տարածքում ներդրումային ակտիվության մակարդակը: Ներդրումային գրավչությունը նույնպես կարելի է ներկայացնել երկու բաղադրիչի՝ ներդրումային պոտենցիալի և ներդրումային ռիսկերի համատեքստում:

Ներդրումային պոտենցիալն իր հերթին կախված է.

1. տնտեսավարող սուբյեկտների՝ տվյալ տնտեսական տարածքում ներդրումներ կատարելու իրական հնարավորություններից,

2. ազատ դրամական միջոցներ ներգրավելու հնարավորություններից,

3. քանակական բնութագրիչներից, որոնք կախված են տվյալ տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման բնութագրիչների դիմամիկայից<sup>1</sup>:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ ներդրումային ռիսկը ներդրումային պոտենցիալի ոչ լիարժեք օգտագործման հավանականությունն է: Մյուս կողմից, ներդրումային ակտիվությունը կարելի է բնորոշել որպես ներդրումային գործունեության ինտենսիվության մակարդակ, որը բնութագրվում է ներդրումների ծավալային փոփոխության բացարձակ և հարաբերական ցուցանիշներով:

Բարենպաստ ներդրումային միջավայրը բնութագրվում է ներդրումային մեծ պոտենցիալով և ցածր ռիսկայնությամբ, ինչը նպաստավոր պայմաններ է ապահովում ներդրումային գործունեության ակտիվության մակարդակի բարձրացման և ներդրումների ներհոսքի համար:

Այս պարագայում ցանկացած տնտեսական տարածքի ներդրումային միջավայրի բարեն-

պաստ կամ անբարենպաստ լինելու հանգամանքը պարզելու համար անհրաժեշտ է իրականացնել համալիր հետազոտություն՝ մանրամասն վերլուծելով ներդրումային միջավայրի հիմնական բնութագրական հատկանիշները, դրանց զարգացման դիմամիկան, կայունությունը և հնարավոր փոփոխության ուղղությունները:

Վերլուծությունների հիմնական նպատակներից է նաև ներդրումային գրավչության խոչընդոտող գործուների բացահայտումը և դրանց հաղթահանան արդյունավետ ուղիների մշակումը<sup>2</sup>:

Ներդրումային միջավայրի տեսական բնորոշումների կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ, հիմնելով դրանց տրամաբանության վրա, հնարավորություն է ստեղծվում մշակել ներդրումային միջավայրի գնահատման նոր մոտեցումներ:

Ժամանակակից տնտեսագիտության մեջ կան ներդրումային միջավայրի գնահատման տարրեր մեթոդաբանություններ:

Ներդրումային միջավայրի բարենպաստ կամ անբարենպաստ լինելը որոշվելում է դրա երկու բաղադրիչով՝ ներդրումային գրավչությամբ և ակտիվությամբ: Ներդրումային գրավչության և ներդրումային ակտիվության փաստացի մակարդակների հարաբերակցությունը հնարավորություն է տալս որոշել այդ գրավչության դրացման աստիճանը: Այսինքն, կարելի է կանխատեսել ներդրումային ակտիվության մակարդակը՝ ելեկով տնտեսական տարածքի ներդրումային գրավչության աստիճանից: Սակայն, գործնականում կարող են հանդիպել իրավիճակներ, երբ ներդրումային գրավչության բարձր մակարդակը չի ուղեկցվում ներդրումային ակտիվության մակարդակի աճով: Սա վկայում է կառավարման մարմինների կողմից իրականացվող ներդրումային բաղաքանության անարդյունավետության մասին:

\* Ներկայացվել է 10.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

Այդ պատճառով, անհրաժեշտ է ներդրումային միջավայրի գնահատման ժամանակ հաշվի առնել նաև պետության տնտեսական քաղաքականության ակտիվությունն ու համապատասխանությունը տնտեսական իրավիճակին, ինչն անտեսված է գործող մեթոդաբանություններով։ Սա էլ հենց հանդիսանում է դրանց հիմնական բացքումը։

Նշված խնդիրները հաշվի առնելու համար անհրաժեշտ է համարի մոտեցում։

Վերլուծությունները ցույց են տալիս, որ ներդրումային միջավայրի գնահատման համար առավել նպատակահարմար է օգտագործել պետական վիճակագրական ծառայությունների կողմից կիրառվող ցուցանիշների համակարգն ու մեթոդաբանությունը<sup>4</sup>։

Սակայն, որպես կանոն, ազգային վիճակագրական ծառայությունները չեն տրամադրում դետալացված տեղեկատվություն այս կամ այն փոքր քաղաքի կամ գյուղի կտրվածքով, հետևաբար ավելի փոքր տնտեսական տարածքների ներդրումային միջավայրերի համեմատական վերլուծություն իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործել նաև սեփական հետազոտությունների արդյունքում ստացված տվյալները։ Այդ հետազոտությունները պետք է իրականացվեն ազգային վիճակագրական ծառայության մեթոդաբանության հիմնա վրա՝ հաշվարկային նեխանիզմների հետևանքով առաջացող սխալներից խուսափելու համար։ Որպես այդպիսի մեթոդ կարող է օգտագործվել էնվիրոնիկ կամ փորձնական հետազոտությունների մեթոդը, որի հիմքում ընկած է վիճակագրության մեջ շատ հայտնի՝ տարբեր կշռներ ունեցող ցուցանիշների ինդեքսային միավորնան մեթոդը։

Այս մոտեցումը հնարավորություն է տալիս հաշվարկել տնտեսական տարածքի ներդրումային գրավչության և ներդրումային ակտիվության ինտեգրալային ցուցանիշները, որոնք կարող են կիրառվել համեմատական վերլուծությունների ժամանակ։

Մերողը ենթադրում է տնտեսական տարածքի ներդրումային գրավչության և ներդրումային ակտիվության մակարդակները բնութագրող ցուցանիշներից յուրաքանչյուրի բալային գնահատում։ Այդ պատճառով անհրաժեշտ է մշակել գնահատման սանդղակ՝ ենելով փոփոխականի հնարավոր առավելագույն և նվազագույն արժեքներից։ Այնուհետև, այդ միջակայքը բաժանել 10 հավասար մասերի։ Սակայն, պետք է նկատել, որ ոչ բոլոր փոփոխականների բարձր բալային արժեքներն են ուղիղ համեմատական ներդրումային գրավչության գնահատականին (օրինակ, հանցագործությունը տնտեսական մասերում)։

սուբյեկտ չափերը։

Հետազոտության վերջին փուլը ենթադրում է SWOP վերլուծության իրականացում՝ տնտեսական տարածքի ուժեղ և բույլ կողմերը, հնարավորություններն ու նարտահրավերները բացահատելու համար։

Այսպիսի նեթողաբանությանք է մշակվում նաև Համաշխարհային բանկի կողմից ամեն տարի մշակվող և հրապարակվող «Գործարարությամբ գրավելու» (Doing Business) համաթիվը։ Լայն առունելի այն կարելի է համարել տարբեր երկրների ներդրումային միջավայրի բնութագրական ինդեքս, ինչը հնարավորություն է տալիս կատարել համեմատական վերլուծությունների և հիմնվելով ենթակինեքսների արժեքների դինամիկայի վրա՝ բացահայտել տնտեսության ներդրումային միջավայրի կարգավիճակի վրա ևական ազդեցություն ունեցող գործոնների վարագիծը։ «Գործարարությամբ գրավելու» ինդեքսը նոր ձեռնարկության հիմնադրմանն ու լուծարմանն առնչվող առանցքային փոփոխականների քանակական գնահատականների համադրությունն է։ Ինդեքսի մշակման հիմնական տրամաբանությունն այն է, որ բիզնես սկսելու կամ, որ նոյնն է, ներդրում իրականացնելու համար տնտեսական գործոններից բացի առաջնահերթ են նաև օրենսդրական գործոնները։ Ինդեքսի մշակման ժամանակ կիրավող ցուցանիշները կարելի է ներկայացնել երկու խմբով։

Առաջին խմբի ցուցանիշները բնութագրում են գործող օրենսդրությունը, իսկ երկրորդ խմբի ցուցանիշներն անվանվում են «ժամանակի և շարժման» ու բնութագրում են այս կամ այն նպատակին հասնելու արդյունավետությունը (օրինակ, կազմակերպությանը իրավաբանական անձի կարգավիճակ տալու համար անհրաժեշտ ժամանակը)։

Ինդեքսի մշակման համար տեղեկատվական հիմք են հանդիսանում ազգային վիճակագրական ծառայությունների կողմից տրամադրվող պաշտոնական տվյալներն ու էմպիրիկ հետազոտությունները։

«Գործարարությամբ գրավելու» ինդեքսը, հանդիսանալով համալիր մոտեցման դրսւորում, միջավայրային գնահատումն իրականացնում է հետևյալ ցուցանիշների համադրությամբ։ Բիզնես սկսելու բույլատվություն, շինարարություն իրականացնելու բույլատվություն, սեփականության գրանցում, վարչի ստացում, ներդրողների պաշտպանվածություն, հարկերի վճարում, արտաքին ապրանքաշրջանառություն, պայմանագրերի կնքում, ձեռնարկության գործունեության դադարեցում։

Առաջին ցուցանիշի հաշվարկման ժամանակ

հաշվի են առնվում բոլոր գործընթացները, որոնցով պետք է անցնել բիզնես սկսելու թույլատվություն ստանալու համար: Այս բաղկացած է հավասար կշիռներ ունեցող գրանցման տևողություն, գրանցման ժախսեր, գրանցման համար անհրաժեշտ գործողությունների քանակ և կանոնադրական կապիտալի նվազագույն նեծություն չորս փոփոխականից:

Ծինարարության թույլատվության ցուցանիշն իր հերթին բաղկացած է հավասար կշիռներ ունեցող թույլատվության համար անհրաժեշտ աշխատանքին օրերի քանակի, անհրաժեշտ ժախսերի (բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ԴՆԱ-ի նկատմամբ %-ով) և գործողությունների թվի ցուցանիշներից:

Սեփականուրյան գրանցման ցուցանիշը բաղկացած է հավասար կշիռներ ունեցող սեփականուրյան իրավունքի փոխանցման համար անհրաժեշտ օրերի քանակի, գործողությունների թվի և ժախսերի ցուցանիշներից:

Վարկ ստանալու ցուցանիշը բաղկացած է օրենսդրական իրավունքի և վարկավորման տեղեկատվության խորության ինդեքսներից, որոնց կշռները համեմատական են 10:6: Օրենսդրական իրավունքի ցուցանիշը բնութագրում է վարկատուի և վարկառուի իրավական պաշտպանվածությունն ու գրավի օրենսդրական ինդեքսը, իսկ վարկային տեղեկատվության խորության ինդեքսը բնութագրում է վարկատուի և վարկառուի փոխարարելությունը, վարկավորման պայմանների վերաբերյալ տեղեկատվության հասկանալիությունն ու հավաստիությունը:

Ներդրողների պաշտպանվածության ինդեքսը բաղկացած է հավասար կշիռներ ունեցող գործարքի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության, դեկավարների պատասխանատվության և դատական կարգով ներդրողների ու դեկավարության միջև ժագած վեճերի լուծման համար բարենպաստ պայմանների ցուցանիշներից:

Քարկման ինդեքսը բաղկացած է տարվա ընթացքում հարկային հաշվետվությունների մշակման և ներկայացման համար պահանջվող օրերի թվի, ստոացված եկամտի մեջ բոլոր հարկային վճարների տեսակարար կշռի և տարվա ընթացքում հարկային վճարումների թվի ցուցանիշներից:

Արտաքին ապրանքաշրջանառության ինդեքսը բաղկացած է պահանջվող փաստաթղթերի քանակի, արտահանման և ներմուծման համար անհրաժեշտ ժամանակի և ժախսերի /ԱՄ դոլար մեկ կանոնային համար/ ցուցանիշներից:

Պայմանագրերի կնքման ինդեքսը բաղկացած է դատական կարգով տնտեսական վեճերի լուծման համար պահանջվող օրերի քանակի, դատա-

կան կարգով տնտեսական վեճերի լուծման հետ կապված ծախսերի մեծության և դատական կարգով հարցի լուծման համար անհրաժեշտ գործությունների թվի ցուցանիշներից:

Կազմակերպության գործունեության դադարեցման ցուցանիշը բնութագրում է միջոցների հետվերադրձելիության գործակցով:

Պետք է նկատել, որ «գործարարությամբ գրավելու» ինֆեքսը բնութագրում է ներդրումային միջավայրի ինստիտուցիոնալ կողմերը: Այս տեղից կարելի է հանգել այն եզրակացության, որ այդ ինֆեքսի ու տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական և մրցակցային միջավայրի գնահատման ինդեքսների համադրությամբ հնարավոր է մշակել մի բաղադրյալ ինդեքս, որն ավելի լիարժեք պատկերացում կտա ներդրումային միջավայրի վերաբերյալ: Այդ մոտեցումն էլ պետք է փորձել կիրառել ՀՀ տնտեսության ներդրումային միջավայրը գնահատելու, դրա ուժեղ և թույլ կողմերը, մարտահրավերներն ու հնարավորությունները բացահայտելու համար: Նմանատիպ մոտեցման կիրառում հնարավորություն կտա նաև կատարել ՀՀ տնտեսության ներդրումային գրավչության համեմատական վերլուծություն տարածաշրջանային երկրների համեմատությամբ:

Այսպիսով, ներդրումային միջավայրի բազմակողմանի ուսումնասիրությունը հիմք է տալիս եղակացնելու, որ ներդրումային միջավայրի բնույթը պայմանավորող գործոններն ըստ էության արտացոլում են հնարավոր ռիսկերը կամ դրանց դրսևորման պայմանները:

<sup>1</sup> **Լիսենկո Օ. Վ., Կաբանովա Ե. Ռ.,** Инвестиционные риски на региональном уровне// Регион: экономика и социология. 2002, N2, с.17 -24.

<sup>2</sup> Федеральный закон от 2 декабря 1990. №:395-1 “О банках и банковской деятельности”.

<sup>3</sup> **Черненко О. Б.,** Теория, методология и практика формирования структурно-инвестиционной политики в регионе: (на примере Ростов, обл.) / О. Б. Черненко. Ростов н/Д: Росиздат, 2002, с.128-145.

<sup>4</sup> Разработка статистического выбора муниципального образования. М., ФГНУ “Российский научный центр государственного управления”, 2004.

<sup>5</sup> Doing Business 2011: Making a Difference for Entrepreneurs, 2010 The International Bank for Reconstruction and Development / The World Bank Washington, DC 20433 www.worldbank.org

#### ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ

<sup>1</sup> **Լիսենկո Օ. Վ., Կաբանովա Ե. Ռ.,** Инвестиционные риски на региональном уровне// Регион: экономика и социология. 2002, N2, с.17 -24.

<sup>2</sup> Федеральный закон от 2 декабря 1990. №:395-1 “О банках и банковской деятельности”.

3. Черненко О. Б., Теория, методология и практика формирования структурно-инвестиционной политики в регионе: (на примере Ростов, обл.) / О. Б. Черненко. Ростов н/Д: Росшэдам, 2002, 208 с.
4. Разработка статистического выбора муниципального образования. М., ФГНУ "Российский научный центр государственного управления", 2004, 215 с.
5. Doing Business 2011: Making a Difference for Entrepreneurs, 2010 The International Bank for Reconstruction and Development / The World Bank Washington, DC 20433 [www.worldbank.org](http://www.worldbank.org).

---

APPROACHES OF EVALUATION OF ATTRACTIVENESS OF ECONOMIC INVESTMENT ENVIRONMENT OF RA

**O. GALSTYAN**

Candidate of Economics Sciences

Summary

There are peculiarities of investment attractiveness and investment potential. Investment risk is represented as the possibility of incomplete using of investment potential. Explored approaches of point evaluation of each of the indicators, characterizing the levels of investment attractiveness and investment activity of economic territory.

**ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՌՈՒԹՅԱՆ  
ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ\***

**Օյա ԳԱԼԱՏՅԱՆ**

Դայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) մեքենաշինական արդյունաբերության էկոնոմիկայի, կազմակերպման և կառավարման ամրիողի ասխատեմտ, տնտեսական գիտությունների թեկնածու:

**Ս**որամուծությունը տվյալ երկրի գիտա-տեխնիկական զարգացման արդյունքն է և ելակետային նախադրյալը, որն օգտագործվում է արտադրության վերակառուցման և տեխնիկական վերազինման համար: Նորամուծությունը բնութագրվում է այն չափորոշչներով, որոնք արտացոլում են սկզբունքըն նոր արտադրանքի տեխնիկական նակարդակը, մրցունակության աստիճանը, իրացման գուտ դրամական հոսքերը և արտադրության ու սպառման արդյունավետությունը:

Նորամուծությունն իրենից ներկայացնում է գիտատեխնիկական նվաճումների ամբողջություն, որանց տրամարանական շարունակությունը և հաջորդական զարգացումն ու նոր կառուցվածքի ձևավորումը<sup>1</sup>:

Արդի պայմաններում նորամուծական քաղաքականության իրականացման հարցում սկզբունքային նշանակություն է ստանում ամբողջ հասարակության մասնակցությունը, այդ ոլորտում ազգային մշակույթի զարգացումը և ինքնագիտակցության ծևակիրումը: Դժբախտաբար ներկայում հայաստանյան իրականությանը ներհատուկ է տնտեսությունում և հասարակական կյանքում նորամուծությունների նկատմամբ իրազեկվածության ու ոլորտի զարգացման բնագավառում ներդրումների կատարելու պատրաստակամության պակասը:

Այդ տեսակետից կարևորվում է նորամուծական կազմակերպությունների դերը, որոնց շրջանակներում առանձնահատուկ են փոքր նորամուծական ծեռնարկությունները: Դամաշխարհային փորձը ցույց է տալիս, որ փոքր նորամուծական ծեռնարկությունները վիթխարի նշանակություն ունեն արտադրական գրունթացներում նոր տեխնոլոգիաների ներդրման տեսանկյունից: Փոքր նորամուծական ծեռնարկությունները նորամուծությունների նկատմամբ ունեն առավել ընկալունակություն, շուկայի պահանջներին ճկուն

արձագանքելու հնարավորություն, փոքր ծախսատրություն և մասնավոր կապիտալի գրավչություն:

Փոքր նորամուծական ծեռնարկությունները իրականացնում են գիտատեխնիկական մշակումներ, որոր տեխնիկայի ստեղծման նախագծեր, մշակում են ծրագրավորման միջոցներ, կատարում են հետազոտական աշխատանքներ: Դամաշխարհային պրակտիկայում նորամուծական աշխատանքները կազմում են փոքր և միջին ծեռնարկությունների գործունեության մոտ 35%-ը:

Փոքր նորամուծական ծեռնարկությունների նորամուծական գրունթացներին բնորոշ են հետևյալ հատկանշները.

- Նոր արտադրանքների և տեխնոլոգիաների մշակումը և շուկաներում ներկայացնելու լայն հնարավորությունը,

- Մրցակցային նոր արտադրանքի ստեղծումը, աշխատանքների և ծառայությունների մատուցումը,

- Նորամուծության արտադրության և տեխնոլոգիաների մեջ ազդեցությունը ծեռնարկությունների ակտիվների շրջանառության և շահույթի վրա:

Դամաշխարհային պրակտիկայում նորամուծության իրականացման համար գոյություն ունեն մի շարք տարբերակներ: Ամենահեռանկարայինը և մրցակցայինը համարվում է համակարգային ձևը, որը տարբերվում է նախագծի հիմնավոր մշակումով, ոիսկի հավանականության օբյեկտիվ գնահատմամբ, գրունթառեության կազմակերպման մարդաբան ուսումնասիրմանը, ֆինանսական աղյուրներով և դրանական միջոցների երաշխավորմամբ:

Ոլորտի զարգացումը կախված է ներդրումային հոսքերից, ուստի ներդրումային քաղաքականությունը պետք է դիտարկել որպես ինչպես ամբողջ տնտեսական, այնպես էլ նորամուծությունների զարգացման կարևորագույն միջոցներից

\* Ներկայացվել է 10.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

մեկը: Վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանն ունեցել է ներդրումային միջին կատարողական և մեծ հաջողությամբ է մրցակցել ենթակառուցվածքներում և ռեսուրսահնտենսիվ ոլորտներում օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու հարցում: Զնյայած որ Հայաստանում վերջին տասնամյակում մեկ շնչին բաժին ընկնող օտարերկրյա ուղղակի ներդրումների չափն ավելի քան կրկնապատկել է, Հայաստանը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների հետ համեմատած՝ ունեցել է միջին կատարողական ցուցանիշները:

Ուստինասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում փոքր նորանուժական ձեռնարկատիրության զարգացմանն արգելակող հիմնական տնտեսական գործոնը ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունն է: Ֆինանսավորման հիմնական դժվարությունները կապված են վարկերի բարձր տոկոսադրությունների և միջին ու երկարաժամկետ վարկերի բացակայության հետ:

Նորամուծության նախագծերի ֆինանսավորման հարցը միշտ է եղել է տնտեսագետների և ձեռնարկատերերի ուշադրության կենտրոնում: Նորամուծության ցանկացած նախագծի ֆինանսավորումը պետք է հետապնդի երկու փոփոխապահության մերողական խնդիր, որոնցից մեկը՝ նախագծի ֆինանսական գնահատումն է ըստ դրա տարրերակմների, մյուսը՝ նախագծերի համեմատությունը և ընտրությունը: Այդ խնդիրների լուծումը թույլ է տալիս:

- հիմնավորել նորամուծության կազմակերպումը և որոշել ֆինանսական միջոցների պահանջարկը,

- կանխատեսել նորամուծության շուկայական իրացման հավանականությունը, որոշել ներդրումների ֆինանսավորման աղբյուրները,

- որոշել այն ժամանակահատվածը, երբ ներդրումները վերածվում են շահույթի:

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների մեծ մասը միջոցների հայթայրձան հարցում հանդիպում են մի շարք դժվարությունների: Նախ, կառավարման և ֆինանսական կացության վատ վիճակի պատճառով նրանց պակասում է միջոցների ծեռք բերման ունակությունը:

ՀՀ նորամուծության ֆինանսավորման ծանր իրավիճակը ձևավորվել է թողարկվող արտադրանքի դիմամիկայի անկման, սեփական կապիտալի և ներդրումների անբավարար և տեղական բնական ռեսուրսների նվազագույն չափերի օգտագործման պայմաններում: Նետազությունները ցույց են տալիս, որ նորամուծության անկումը պայմանավորվել է հետևյալ պատճառներով.

- նորամուծության ձեռնարկությունների գործունեության դադարեցումը և մասնագետների արտահոսքը,

- արտադրական կարողությունների հիմնական զանգվածի երկարատև սահեցումը, տեխնիկայի մաշվածության բարձր աստիճանը, տեխնոլոգիաների անհամապատասխանությունը միջազգային չափորոշիչներին,

- արտադրանքի տեխնիկական ցածր մակարդակը և արտահանման անկումը,

- օգտագործվող հումքանյութային ռեսուրսների անբավարար ծավալը,

- մասնագետ կադրերի արտահոսքը և կադրերի վերապատրաստման համակարգի բացակայությունը,

- թղթարկվող արտադրանքի նորացման պայմանների բացակայությունը,

- տեղական բնական ռեսուրսների սահմանափակ օգտագործումը:

Միաժամանակ ՀՀ-ում նորամուծության գործունեության վրա ազդում են մի շարք բացասական գործունենքներ, որոնք դանդաղեցնում են դրանց գաղացումը, այսպես, օրինակ.

- տնտեսության անկայունությունը և անընդհատ փոփոխող օրենսդրությունը,

- երկարաժամկետ ներդրումների ներքին աջակցության բացակայությունը,

- սեփականատերերի և մենեքերների մոտ վարչական ունակության բացակայությունը,

- շուկայական ենթակառուցվածքի թերզարգացման բացակայությունը,

- տնտեսության քրեականացվածությունը և այլն:

Անփոփելով, հարկ է նշել, որ փոքր նորամուծական ձեռնարկություններն ունեն կարևոր սոցիալ-տնտեսական նշանակություն, ինչը ենթադրում է այդ ոլորտի պետական աջակցության գործուն համակարգի ներդրում: Ելնելով տնտեսության զարգացման գործում փոքր նորամուծական ձեռնարկատիրության ունեած կարևոր դերից՝ անհրաժեշտություն է առաջանալ մշակել և իրականացնել պետական այնպիսի քաղաքականություն, որը բարենպաստ պայմաններ կստեղծի այդ հատվածի զարգացման համար՝ այդ նապատակով ձևավորելով աջակցության գործուն համակավոր:

Անհրաժեշտ է նաև նշել, որ նորամուծության գործունեությունը միշտ առնչվում է ռիսկի հետ<sup>3</sup>:

Ինստիտուցիոնալ տեսանկյունից Հայաստանում բացակայում է այնպիսի յուրահատուկ ֆինանսական ինստիտուտ, ինչպիսին է նորամուծական ռախագետների ֆինանսավորման ուղղված վենչուրային կապիտալը: Այն կոչված է ֆինանսավորելու արտադրության մեջ նոր արտադրտեսակների, բարձր տեխնոլոգիաների ստեղծման, յուրացման և փոխանցման գործընթացներ իրականացնող իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց հիմնադրած կազմակերպու-

թյուններին: Դայաստանում ֆինանսական համակարգի խիստ վերահսկողությունը, գրավի կոշտ պահանջները և ֆինանսական ռեսուլտմերի շատ բարձր արժեքը առկա ֆինանսական հաստատություններին հնարավորություն չեն տալիս ներդրավկել երկարաժամկետ և ռիսկային նախագծերում: Վենչուրային կապիտալի կամ նպատակային տեխնոլոգիական հիմնադրամների բացակայությունը գյուտարարի համար, որը հիմնվում է հիմնականում սեփական կամ ընտանիքի միջոցների վրա, ծերնարկության հիմնումն ու զարգացումը դարձնում է ռիսկային:

Պետության կողմից այս հարցում աջակցությունը կարող է դրսևորվել պետական երաշխիքների տրամադրմամբ վենչուրային նախագծերում ներդրումներին, այդ թվում նաև հնարավոր կրուստների մասով: Վենչուրային կապիտալի ձևաբորման գործընթացում անգնահատելի է պետության ուղղակի մասնակցությունը: Վենչուրային հիմնադրումներում պետական միջոցների առ-

կայությունը, մասնավոր ներդրողների ռիսկերը նվազեցնելով, օժանդակում է մասնավոր միջոցների ներգրավմանը՝ խթանելով կապիտալաստեղծ գործընթացին:

<sup>1</sup> **Гранатуров В. М.**, Экономический риск, сущность, методы измерения. М., 1999, с. 112.

<sup>2</sup> Դայաստանի Ֆանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգ. [www.mioneconomy.am](http://www.mioneconomy.am)

<sup>3</sup> **Богатин Ю. В.**, Оценка эффективности бизнеса и инвестирования. М., 2002, с. 46.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Гранатуров В. М.**, Экономический риск, сущность, методы измерения. М., 1999, 160 с.

2. Դայաստանի Ֆանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգ. [www.mioneconomy.am](http://www.mioneconomy.am)

3. Богатин Ю.В. Оценка эффективности бизнеса и инвестирования. М., 2002, 286 с.

#### THE MAIN DIRECTIONS OF THE ACTIVATION OF INNOVATION POLITICS OF RA

**O. GALSTYAN**

Candidate of Economics Sciences

#### Summary

?bserved the role of innovation and innovation organizations in the process of economic development of Republic of Armenia. Detected factors preventing the development of innovation in Armenia and based perspectives of stabilization of venture organizations in the development of small innovation business in RA.

### **Լուիզա Համլետի ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**Գորիսի պետական համալսարան, տնտեսագիտության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ,  
տնտեսական գիտությունների թեկնածու**



**Հ**ամաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ներդրումները տնտեսության զարգացման շարժիչ ուժ են համայստնությունում: Ներդրումները, այլ բաղադրիչների հետ միասին, նպատում են ճգնաժամային երևույթների հաղարմանը, երկիր տնտեսության զարգացմանը, որը աշխատատեղերի ստեղծմանը, ծեռնարկությունների տեխնոլոգիական վերագինմանը և վերջապես բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Զարգացած երկրների փորձը (հետպատերազմյան ճապոնիայի, Գերմանիայի և այլն) ցույց է տալիս, որ ստեղծված արտակարգ իրավիճակների պայմաններում հիմնական շեշտադրումը պետք է կատարել օտարերկրյա ներդրումների ներգրավման վրա, և միայն այս միջոցով է հնարավոր ներքին սուլ ռեսուրսների պայմաններում ապահովել տնտեսության վերականգնումը:

ՀՀ-ում անցումը շուկայական հարաբերություններին ուղղվեց տնտեսական ու իրավական ամբողջ համակարգի վերափոխմամբ, և նախադրյալներ ստեղծվեցին գործարարության ազատ ձևերի ընտրության համար: Սակայն, բարեփոխումների իրականացման ընթացքում ծառացած հիմնախնդիրներից մեկը ՀՀ-ում տնտեսական աճի բարձր տեսակերպ ապահովումն էր: Ընդորում արտադրության վերափոխման, նորերի ստեղծման համար անհրաժեշտ են օտարերկրյա ներդրումներ, որոնց ներգրավման համար պահանջվում է ծևավորել բարենպաստ ներդրումային միջավայրը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներդրումները միայն եկամուտ ստանալուն ուղղված գործընթաց են, որոնց ապահովման համար ստեղծվում են համապատասխան ինստիտուցիոնալ ենթակառույցներ<sup>1</sup>: Ինչպես

պարզվում է, «ներդրում» հասկացությունը այս տեղ մեկնաբանվում է մասնավոր շահի տեսանկյունից, իսկ զարգացող երկրների համար ներդրման նպատակը տնտեսության արաջընթաց ապահովելն է: Անցումային շրջան թևակոխելուց հետո ՀՀ-ում համապատասխան նախադրյալներ առաջացան օտարերկրյա ներդրումների ներգրավման համար: Քանի որ անկախացումից հետո ՀՀ-ում անցած երկու տասնամյակում էական փոփոխություններ են կատարվել, ուստի անհրաժեշտություն է առաջանալ քննարկել ներդրումային մակրոտնտեսական միջավայրի կայունության և տնտեսական աճի վրա վերոնշյալների ազդեցության գնահատման հարցերը<sup>2</sup>:

Ներդրումային միջավայրը բազմաբնույթ երևույթների մի ամբողջություն է՝ տնտեսական, սոցիալական, իրավական, քաղաքական, մշակութային և այլն, որը կանխորոշում է ներդրումների կատարման գրավչությունը և նպատակահարմարությունը: Վերոնշյալը իր հետրին հիմք է տալիս եղանակացնելու, որ մասնագետների շրջանում ներդրումային միջավայրի մեկնաբանման միասնական մոտեցում չկա: Մասնավորապես, կան հեղինակներ, ովքեր ներդրումային միջավայրը նոյնացնում են ներդրումային գրավչության հետ<sup>3</sup>: Մեկ այլ մոտեցման համաձայն է՝ ներդրումային միջավայրը ներկայացվում է որպես ներդրումային գրավչության և ներդրումային ակտիվության համամանություն, որը ծևավորում է ներդրումների նկատմամբ վճարունակ պահանջարկ<sup>4</sup>:

Ներդրումային գրավչությունը կարելի է սահմանել որպես ներդրումային ներուժի (ներդրումներին գրավող կամ վաճող գործոնների ամբողջություն) և ներդրումային ռիսկերի փոխկապվածություն:

Օտարերկրյա ներդրումներին ուղղված պետական բաղադրականության գնահատման համար, հաշվի առնելով ՀՀ տնտեսական առանձնահատկությունը, անհրաժեշտ է Յայաստանը հանենատել տարածաշրջանի երկրների հետ: Տարածաշրջանում Յայաստանի բաժինը ՕՌԻՆ-ի

\* Ներկայացվել է 14.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

գումարային ծավալում վերջին տարիներին չի գերազանցել 10%-ը, որը չափազանց փոքր թիվ է և խոսում է երկրի նվազ ներդրումային գրավչության մասին:

ՕՌԻՆ-ի միտումների բացահայտման լավագույն ուղին դրամն արտահայտումն է համախառն ներդրումների համեմատությամբ (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակից պարզ երևում է, որ ՕՌԻՆ ՀՆԱ հարաբերությունը տարեցտարի աճի միտում է ցուցաբերել, սակայն 2010 թ.-ին այդ հարաբերակցությունը, ինչպես նաև համախառն ներդրումների մեջ ՕՌԻՆ-ի կշիռը կտրուկ կրծատվել է, որը հիմնականում պայմանավորված է եղել համաշխարհային ֆինանսական ճգնաժամով:

ՀՀ-ում ներդրումների շարժը կարելի է քննարկել նաև օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկությունների բաշխանակի ուսումնասիրությամբ: Ըստ կապիտալի ծագման երկրների դիտարկելիս պարզվում է, որ դրամց մեծ

#### Աղյուսակ 1

Օտարերկրյա ուղղակի ներդրումները  
2005 – 2010 թթ.<sup>5</sup>

Տարիներ	ՕՌԻՆ/ՀՆԱ	ՕՌԻՆ/համախառն ներդրումներ
2005	0.06	0.54
2006	0.07	0.50
2007	0.07	0.44
2008	0.1	0.525
2009	0.099	0.31
2010	0.06	0.26

#### Աղյուսակ 2

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների բաշխումը ըստ կապիտալի ծագման երկրների առ 01.01.2010 թ.<sup>6</sup>

Ներդրող երկրի անվանումը	ՕՆՉ-ի քանակը	Մասնաբաժնը ընդամենի մեջ (%)
Ռուսաստան	330	28.6
ԱՄՆ	169	14.7
Իրան	148	12.8
Վրաստան	50	4.3
Սիրիա	46	4.0
Ֆրանսիա	45	3.9
Մեծ Բրիտանիա	40	3.5
Լիբանան	31	2.7
Գերմանիա	22	1.9
Կանադա	20	1.7
Վերջինյան կղզիներ (Բրիտանիա)	20	1.7
Այլ երկրներ	232	20.1
Ընդամենը	1153	100

մասը բաժին է ընկնում ռուսական, իրանական և ամերիկյան կապիտալին (տե՛ս աղյուսակ 2):

Վերջին տարիներին ՕՌԻՆ-ների ծավալների աճն արդյունք է տարածաշրջանում ռազմաքաղաքական հարաբերությունների կայունացման, մակրոտնտեսական հարաբերական կայունության և ձևավորման գործընթացի: Սակայն դեռևս կան որոշակի պատճեններ, որոնք խոչընդոտում են ներգրավվող ՕՌԻՆ-ների ծավալների մեծացմանը:

Ներդրումների ներգրավման, ՀՀ-ում գործարարության ծավալման լուրջ արգելք են վարչարարական խչըրնդոտները, որոնց պատճառը հստակ օրենսդրական դաշտի բացակայությունն է: Օտարերկրյա ներդրողների նտահոգության հիմնական պատճառը ոչ այնքան հարաբերականորեն բարձր հարկային բեռն է, որքան այդ համակարգի անկայունությունը, հարկային պայմանների հաճախակի փոփոխությունները:

Ցանկացած երկրի, այդ թվում ՀՀ տնտեսության ազատ և կայուն աճի ապահովման հիմնական գրավականը ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումն է:

«Heritage Foundation» միջազգային կազմակերպության վկայությամբ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսության ազատության ցուցանիշը կազմում է 69,4% (2007 թ. դրությամբ), որով երկիրը աշխարհում գրավում է 32-րդ տեղը, իսկ Եվրոպայի 41 երկրների շարքում՝ 19-րդ տեղը: Դա բավականին լավ ցուցանիշ է դեպի ծով ելք չունեցող աղքատ երկրի համար: Բացի դրանից, ՀՀ-ում խիստ չեն օտարերկրյա ներդրումների նկատմամբ կիրավող սահմանափակումները, բացառությամբ հողի սեփականության<sup>7</sup>:

ՀՀ կառավարությունը ներդրումների նկատմամամբ հայտարարել և իրականացնում է «բաց դրությի» բաղադրականություն, որն ամրագրված է 1994 թ. ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով: Համաձայն նշված օրենքի պահանջների՝ օտարերկրյա և տեղական ներդրումների նկատմամբ հավասար վերաբերնունք է երաշխավորվում<sup>8</sup>:

ՀՀ-ում ուղղակի ներդրումներ կատարող հիմնական երկրներ են ՌԴ և ԱՄՆ, ՕՌԻՆ-ի գծով երրորդ երկիրը Լիբանանն է, ինտո գալիս են Հունաստան, ԳՖԴ-ն, Ֆրանսիան, Կանադան և Արգենտինան: Ի դեպ ՕՌԻՆ-ի հոսքերը հիմնականում պայմանավորված են եղել ապագետականացմանը: Պաշտոնական վիճակագրությունը փաստում է, որ 1991-2007 թթ. օտարերկրյա կապիտալով ստեղծվել են 3347 ընկերություններ, որոնց մեջ մասը՝ վերջին տարիներին<sup>9</sup>:

ՀՀ ներդրումային միջավայրի հիմնական առանձնահատկությունը դրա բարենպաստության կտրուկ տարրերություններն են՝ կախված

ներդրումների իրականացնող ոլորտների չափերից: Այսպես, ՀՀ-ում այն ամենաճարարենպաստն է՝ փոքր ընկերությունների, և ամենաարարենպաստը՝ խոշոր ընկերությունների համար: Խոշոր գործարարության համար գործումներության միջավայրի որակով Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների մեջ զբաղեցնում է 6-րդ տեղը, նիշին չափի ընկերությունների համար՝ 9-րդ տեղը, փոքր ընկերությունների համար՝ 21-րդ տեղը<sup>10</sup>: Սա ենթադրում է, որ հանրապետության կառավարությունը պետք է քայլեր ձեռնարկի փոքր, միջին և խոշոր գործարարության համար ներդրումային միջավայրի համահավասար պայմանների ստեղծման գործում:

ՀՀ-ում ներդրումներ կատարելու առավելություններից կարելի է առանձնացնել ներդրումները կարգավորող գրավիչ օրենսդրությունը, ներդրումային երաշխիքները, դյուրին մուտքը դեպի ԱՊՀ և Միջին Արևելքի շուկաներ, որակյալ աշխատուժի առկայությունը, օտարերկրացիների կողմից 100%-ով սեփականության տիրապետման թույլտվությունը, դրամական փոխանցումների սահմանափակումների բացակայությունը, կայուն բանկային համակարգը, անդամակցությունը ԱՐԿ-ին, առևտորի ազատ ռեժիմը, արտարժությի ազատ փոխանակումը և այլն:

Տեղորումներ կատարելու համար շահավետ ոլորտներ են դիտարկվում տեղեկատվական տեխնոլոգիաները, հանքարդյունաբերությունը և մետալուրգիան, զբոսաշրջությունը, բիզնես ծառայությունները և այլն:


Տնտեսական ճգնաժամի պայմաններում բոլոր երկրները հենվում են բացարձակապես օտարերկրյա ներդրումների վրա: Միայն օտարերկրյա ներդրումների շնորհիվ է ապահովվում երկրի մակրոտնտեսական կայունությունը: Դրա հետ միասին, ինչպես ցույց է տալիս այլ երկրների փորձը, օտարերկրյա կապիտալը կարող է ինչպես դրական դեր խաղալ, այնպես էլ բացասական, երբ տնտեսության ու երկրին պարտքային ճգնաժամի մեջ է զցում: Առավելագույն չափերով դրանց ներգրավումը չպետք է ինքնանպատակ հանարել: Խնդիրը կայանում է դրանց արդյունավետ օգտագործման և դրական բազմարկիշային էֆեկտի ապահովման մեջ, որն էլ հանրավորություն կուր համաշափ տնտեսական զարգացմանը զուգընթաց նոր կապիտալ ներգրավել, որից հետո անցնել ներդրումների ինքնաֆինանսավորմանը<sup>11</sup>:

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը բացասարար է անդրադարձել ԱՊՀ երկրների տնտեսությունների վրա: Սակարանային ապրանքների բարձր համաշխարհային գները նախկինի նման նպաստում են սակարանային ապրանքնե-


րի գուտ արտահանողների առևտորային հաշվեկշիռների ամրապնդմանը, մինչդեռ դրանց գուտ ներկրողները զգալիորեն թուլացրել են իրենց դիրքերը: ՈՂ-Ծ, Ղազախստանը, Աղրբեջանը, Թուրքմենստանը և Ուզբեկստանը զգալի առավելություններ են ստացել առևտորի պայմանների բարելավումից, այն դեպքում, եթե Հայաստանի Հանրապետության, Մոլդովայի և Տաջիկստանի համար առևտորի պայմանները վատթարացել են: Բացի դրանից, վճարային հաշվեկշրի պակասուրդը հասել է վտանգավոր չափերի: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը բացասարար է անդրադարձել նշված երկրների ՀՆԱ աճի վրա<sup>12</sup>:

Միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից տրված գնահատականի համաձայն՝ Հայաստանի ներդրումային քաղաքականությունը ԱՊՀ երկրների շարքում անենազատն է: ՀՀ պաշտոնական վիճակագրության տվյալների համաձայն՝ ընդհանուր ներդրումների տարեկան աճի տեմպերը մոտ են ՀՆԱ-ի աճի տեմպերին: Ի դեպ, այն մեծամասամբ պայմանավորված է ՕՒԻՆ ներհուժերի աճով: Այսպես, ՕՒԻՆ ՀՆԱ հարաբերակցությունը 1995 թվականի 2,0%-ից հասել է 2006 թվականի 7,0%-ի, 2008 թ.-ին՝ 10%-ի մակարդակին, 2009 թ.-ին նվազել է 0,1%-ով և կազմել է 9,9%, իսկ 2010 թ.-ին նորից նվազել է մինչև 6%-ի մակարդակը<sup>13</sup>:

Անկախացումից հետո Հայաստանը մեծ նաև տարի ներդրումների կարիք է ունեցել: Սակայն վերջին մի քանի տարիների ընթացքում ՕՒԻՆ-ների ներհուժը դեպի Հայաստան աշխուժացել է: Ուստինասիրությունները փաստում են, որ մինչև «Արմենտելի» վաճառքը ՕՒԻՆ-ների հոսքերը դեպի Հայաստան 50 մլն ԱՄՆ դոլարից պակաս են եղել<sup>14</sup>: Բացի դրանից, ՕՒԻՆ-ների գերակշիռ մասը բաժին է ընկալում հեռահաղորդակցության



Գծապատկեր 1. ՕՒԻՆ ներհուժերը Հայաստանում ըստ տնտեսության ոլորտների 2010 թ.<sup>15</sup>



Գծապատկեր 2. Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ծավալը՝ ըստ երկրների 2010 թ. (տոկոս) <sup>16</sup>

ոլորտին և ենթակառուցվածքների ոլորտներին:

Գծապատկեր 1-ից երևում է, որ 2010 թվականի վերջի դրությամբ ՕՊԽ ներդրումների գերակշիռ մասը՝ 33%-ում բաժին է ընկնում տրանսպորտի և կապի, էեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտներին, իսկ արտադրական ոլորտին՝ շուրջ 13%, ներառյալ արդյունահանող արդյունաբերությունը և սննդարդյունաբերությունը:

33%-ում օտարերկրյա կապիտալով՝ ընկերությունների «դոնոր» են հիմնականում ոչ ԱՊՀ երկրները: Չնայած ռուսական կապիտալով ընկերությունների տեսակարար կշիռն ամենաբարձրն է՝ 2011թ. սկզբի դրությամբ 28.6%, այնուհանդերձ նրան շատ մոտ մրցակից է իրանական կապիտալը՝ իր 12.8% ցուցանիշով և ԱՄՆ-ը՝ 14.7% (տես աղյուսակ 2): Սակայն ըստ ներդրումների ծավալների գերակշռությունը է ռուսական և ֆրանսիական կապիտալը (տես գծապատկեր 2):

Օտարերկրյա ներդրումների հետ կապված ցանկացած գործունեություն գտնվում է կառավարության հսկողության տակ: Ներդրումային միջավայրում բարեփոխումների, վերահսկման և մոնիթորինգի համար 2000 թ. նախագահի հրամանագրով ստեղծվել է բիզնեսի աջակցման խորհուրդ<sup>17</sup>:

Տնտեսագիտության մեջ առ այսօր համակարգված ձևով վերլուծության չեն ենթարկվել օտարերկրյա ներդրումների ներգրավման և արդյունավետ օգտագործման խնդիրները, չեն մշակվել այդ ոլորտի պետական քաղաքականության սկզբունքները, պետական կարգավորման գործուն մեխանիզմները:

<sup>1</sup>Տես **Ա. Ճոմման, Մ. Ճ. Ճխոնկ.**, Основы инвестирования. М., 1999, с. 18:

<sup>2</sup>Տես «Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումներին խչընդոտող գործոնները»: ՅԲ, ՍԱԿ ԶՏ, ՀՀ արդյունաբերության և աշխատավայրերի նախարարության կողմից կատարված հետազոտություն, Երևան, 2002:

<sup>3</sup>Տես **Մօզօք Ա.**, К теории инвестиционной привлекательности региона. Инвестиции в России, 2003, №3, с. 40-41.

<sup>4</sup>Տես **Տելլուցկու Յ., Կոստյոկовսկի Յ.** Как оценить инвестиционную привлекательность предприятия. Деловая жизнь, 2002, N9, с. 26-31.

<sup>5</sup>Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրը, ՀՀ ԱՎԾ, 2010, էջ 508:

\* Ներկայացվել է 01.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

Ո՞վ է իրականացնում պլանավորումը: Ինչպես գիտեմք, արտաքին առլիդորներն անկախ են, ուստի նրանք են վերահսկում իրենց աշխատանքը՝ վերը թվարկված նպատակներին (խնդիրներին) համապատասխան: Ներքին առլիդորների աշխատանքը վերջիններիս փոխարեն կարող է պլանավորել ռիսկերի կառավարման բաժինը, որպեսզի ուշադրությունը բերի այն ոլորտների վրա, որոնք կարևորվել են խորհրդի կողմից: Սակայն այս դեպքում խախտվում է ներքին առլիդու անկախության սկզբունքը: Դավաստիացման ընդհանուր կանոնի համաձայն առլիդու պետք է հավաքի բավարար փաստեր գեկուցում արված իր դիրքորոշումը պաշտպանելու համար, որն էլ իրենց առաջադրանքի արդյունքն է հանդիսանում: Առլիդու միջազգային ստանդարտներին համապատասխան հավաքում է փաստեր, որոնք ցույց են տալիս սիմառ կամ կեղծ հաշվետվությունների ռիսկային լինելը, ինչպես որ գնահատված է պլանավորման ժամանակ, և հաշվի առնելով փաստերը՝ պացածըվում է, որ դրանք հավաքվել են այդ գործընթացի արդյունքում: Ուստի արտաքին առլիդու միջտ առաջնորդվում է նրանով, եթե որոշում կայացնելիս որ փաստն է նպատակահարմար: Ինչպես տեսնում ենք, ներքին առլիդու կարող է ունենալ տարրեր նպատակներ՝ կախված առաջադրանքի բնույթից: Օրինակ, բնարկենք առլիդու մնտեցումը ոչ ընթացիկ ակտիվներին: Արտաքին առլիդու անհանգուստանում է, թե արդյոյք կեղծ են ոչ ընթացիկ ակտիվների ցուցանիշները: Ուստի նա կարող է ստուգել և համեմատել ձեռք բերման գները ապահովագրելի են: Ստուգման ժամանակ ֆիզիկապես ստուգվում են որոշ ակտիվներ. դրա հիմնան վրա առլիդու կարող է եղահանգաման գալ, որ ոչ ընթացիկ ակտիվների ցուցանիշները ճիշտ են: Ներքին առլիդու կարող է ունենալ առաջադրանք՝ հավաստիանալու, որ ինչ-որ գործարանում արտադրական միջոցների գրանցամատյանն արդիական է, թե ոչ: Քետևաքար, անհրաժեշտ է ստուգել, որ յուրաքանչյուր գրանցված ապահով առկա լինի այնտեղ, ինչպես նաև համոզվել, որ գործարանի արտադրամասերում առկա բոլոր հաստոցները գրանցված լինեն: Առլիդու, առաջադրանքի բնույթից կախված, կարող է նույնագույն կամ էլ չանհանգուստանալ դրանց արժեքների համար: Ներքին առլիդու մերկայացրած հաշվետվությունը պայմանավորված է առաջադրանքի բնույթով: Արտաքին առլիդու գեկույցը ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ պայմանավորված է օրենսդրությամբ և միջազգային ստանդարտներով (ISA 700, 705, 706):<sup>1</sup> Իսկ ներքին առլիդու պետք է փոխանցի այն հաշվետվությունները, որոնք առնչվում էին կառավարմանը վերաբերող մեղադրանքներին: Գնումների մա-

սվ կազմակերպությունը հասնում է գմի և որակի հարաբերակցության ապրանքներ և ծառայություններ գնելիս: Այն վճարում է ճիշտ մարդկանց, ճիշտ գումար, ճիշտ ապրանքի և ծառայության համար: Սա այն ոլորտն է, որտեղ ներքին և արտաքին առլիդու մեջ շատ նման են:

«Չատ կարևոր են ներքին առլիդու, կառավարման և առլիդու կոմիտեի միջև հարաբերությունները (կոտրված եռանկյուն): Ներքին առլիդու, գործադիր կառավարման և ներքին առլիդու կոմիտեի հրարից հեռացնելը նորություն չէ: Չատ կազմակերպություններում տարբեր աստիճանի խստությամբ գոյություն է ունեցել կոտրված եռանկյուն: Բայց գործառույթների խախտումը, որ համարվում էր բույլատրելի 80-ականներին, 90-ականներին և 2000-ականներին, այսօր արդեն անցնողնելի է: Ենկավարները, վերլուծաբանները, բաժնետերերը և նույնիսկ ընդդիմախոսները շահագործված են կորպորատիվ եռակի աշխատանքների բարեւավման համար, քանզի դա էական է լավ կառավարում և արդյունավետ ռիսկերի կառավարում ապահովելու համար, որը կրերի կազմակերպության շահերը համատեղ պաշտպանելուն և առաջ մղելուն:»

Որո՞նք են կոտրված եռանկյան ախտանիշները: 1. յութատեխնիկական թերի ապահովվածություն, 2. ենկավարների անհամաձայնություն ու անհամատեղելիություն, 3. խորհրդի անարդյունք և վիճելի հանդիպումներ, 4. աշխատուժի արտահոսք (կամավոր և ստիպված), 5. եկամուտներ, որոնք կարելի եր վաստակել, 6. ավելորդ վիճաբանություններ, 7. ձախողված համագործակցություններ և միություններ, 8. անրույլատրելի ռիսկեր և այլն: Եթե կազմակերպությունն ունի այս ախտանիշներից որևէ մեկը, ապա նշանակում է, որ պետք է որևէ բոլոր գտնել: Առաջին հերթին լավ կլիներ ստուգել եռանկյան կառուցվածքային ամրողականությունը: Զի կարելի պնդել, թե վերը թվարկված ախտանիշներից որևէ մեկի առկայության դեպքում այն վերագրվում է կոտրված եռանկյանը: Այս խնդիրները կարող են ծագել նաև երեք կողմերի միջև ֆունկցիոնալ լավ հարաբերությունների ժամանակ: Այնուամենայնիվ կարելի է պնդել, որ շատ դեպքերում ոչ ֆունկցիոնալ հարաբերությունն է նպաստում և որոշ դեպքերում էլ առաջանային պատճառ դառնում»<sup>2</sup>:

Ներքին առլիդու դիրքի խախտման դեպքում ցանկացած կառավարման մեթոդի ժամանակ առաջանում են բավականին լուրջ խնդիրներ: Դիրքը կախված է նաև նրա ինֆորմացվածության մակարդակից: Յնարավոր է ընկնել շուկի մեջ՝ համոզելով ներքին առլիդու անկախ առլիդու մարդկան և օբյեկտիվ մարդին չի լինում, ինչպես մենք կարծում ենք:

Որոշ կազմակերպություններում ֆինանսա-

կան տնօրենի կողմից են հրահանգվում ներքին առլիփիտի հաշվետվության տվյալները: Ֆինանսական տնօրենն է վերահսկում բյուջեն, անձնակազմը, ինչպես նաև առլիփի պլանը, որը գործնականում խանգարում է առլիփի ամկախության ու օրյեկտիվությանը:

Իդեալական լինում է այն ժամանակ, երբ ներքին առլիփիտը հանդիսանում է խորհրդի աշքերն ու ականջները կազմակերպությունում, և հանդիսանում է ստուգումների և հաշվեկշիռների համակարգի էական բաղադրիչ: Բայց ինչպես կարող է ներքին առլիփտորը հստակ և հուսային հաշվետվություն ներկայացնել առկա հիմնախնդիրների մասին, եթե նա անհանգստացած է իր աշխատանքը պահպանելու համար:

Դիշենք եպտոն Սինեկերի հայտնի խոսքը. «Շատ դժվար է ստիպել մարդուն հասկանալ մի բան այն դեպքում, երբ նրա աշխատանքը կախված է այդ բանը շխականալուց»:

Ցուրաքանչյուր կազմակերպություն ունի ոչ պաշտոնական հիերարխիա, և քո դիրքը որոշելու կայանում է մեկ հարցի մեջ. «Ո՞վ է քո շեֆը?»

Երբեմն ներքին առլիփտորին հաշվետու կառույցները բացահայտորեն չեն համակերպվում ներքին առլիփի հետ: Շատ կազմակերպություններում աշխատանքային պարտականություններից ելնելով ներքին առլիփտորը հաշվետու է առլիփի կոմիտեին և կառավարման տեսանկյունից՝ գործադիր դեկավարին կամ ֆինանսական տնօրենին: Հետևաքար «Ո՞վ է քո շեֆը» հիմնախնդիրը վերածվում է խառնաշփոր հարցի: Իսկ երկու տերերին ծառայելը կարող է առաջ քաշել հավատարմության, անկախության և արդյունավետության հետ կապված խնդիրներ: Ոչ պաշտոնական հիերարխիայում գործում է հետևյալ կամոնը «Որքան ավելի ստորին օդակին ես հաշվետու, այնքան ավելի դժվար է թիմային աշխատել գործադիր դեկավարության հետ ավելի բարձր մակարդակներում»: Եվ երբ հարցը վերաբերում է ներքին առլիփի արդյունավեն իրականացմանը, ապա դեկավարության հետ համատեղ աշխատանքը դրա գլխավոր պայմանն է: Այսպիսով՝ պատասխանատվությանը գործակեր անհրաժեշտ է մեծացնել ներքին առլիփտորի ազդեցության շրջանակը: Պետք է նրան դարձնել կազմակերպության իրական բարձրաստիճան պաշտոնյա՝ պահովելով այդ դիրքին ու պաշտոնին համապատասխան հարգանքը և տեսանելիություն: Պետք է վերացնել ցանկացած անորոշություն, թե ում է հաշվետու ներքին առլիփտորը: Պետք է համոզվել, որ հաշվետվությունները ստացող դեկավարը տվյալ կառուցում գտնվում է բարձր դիրքում:

Դատավորներին և կառավարիչներին և դիմում են պաշտոնը մատնանշող դիմելածուվ: Դա-

մամիտ ենք, թե ոչ այդ դիմելածկին, միևնույն է. դիմելածը մեծ ազդեցություն է թողնում նարդկանց փոխհարաբերությունների վրա: Եվ գործնականում, և հոգենանորեն անունն ուժեղ գործիք է:

Նոյնը կարող ենք ասել «ներքին առլիփիտի» համար: Եկեք փորձենք «ներքին առլիփտը» վերանվանել «առլիփիտ ծառայություն»: Նոր անվանում ավելի շատ կասցացվի արժեքների և ծառայությունների, քան ներքին գործերի և հսկողության առնչող գործառույթների հետ: «Առլիփիտ ծառայություն» տիտղոսը միանգամայն այլ կերպ է ընկալվում և նոր մոտեցում է տալիս այս գործառույթին: Ներքին առլիփտը վերաբերում է կազմակերպության հսկողության անբողջ համակարգին և ֆինանսական կառավարմանը:

«Ներքին առլիփիտի դերը կարող է փոփոխվել կեղծիքի հետ առնչվելիս, որը ևս կարևոր հիմնախնդիր է: Վերջին տարիների տնտեսական ճգնաժամը ջրի երես հանեց մի շարք կեղծիքներ և դրանով մեծացրեց կեղծիքների ռիսկի հրագեկության անհրաժեշտությունը: Այս հանգամանքը ստիպեց շատ գործադիր դեկավարների ուշադրություն դարձնել այն բանի վրա, թե որքան խոցելի են վերջիններիս բիզնեսները և ունեն բավարար պաշտպանվածություն:

Քանի որ ներքին առլիփիտի դերը և լիազորությունները շարունակում են աճել ու զարգանալ, մենք ճանաչում ենք ավելի ու ավելի է կախվածություն ձեռք բերում ներքին առլիփիտի գործառույթներից՝ կեղծիքները վերահսկելու, հայտնաբերելու և ուսումնասիրելու հարցում:

Կրյո՞ք կառավարում ակնկալիում ակնկալիում է, որ այս ոլորտում ներքին առլիփիտը պետք է ունենա ավելի մեծ դեր և ներքին առլիփտորները համապատասխանորեն զինված են պատասխանելու այս մեծացող ակնկալիուրներին և գնահատելու կասկածով գեղձարարությունների աստիճանը: Ձեղծարարությունները վերահսկելու համար վերջին տարիներին անհրաժեշտություն առաջացավ՝ խորհրդի մակարդակով դրանց ծանրացման և բարելավման քննարկումներ իրականացնել, սակայն վերահսկողությունը, մշտադիտարկման գործունեությունն իրականացնելու համար պետք է ընձեռվի համապատասխան հնարավորություն ընդգծելով ռիսկի ոչ պատշաճ կերպով լուսաբանված լինելու:

Կեղծիքի ազդեցությունը և խոցելիությունը մեծացել է: Դրա գլխավոր պատճառը համարվում է ներքին անարդյունավետ վերահսկողությունը: Առում է անհանգստությունը գեղձարարություններ կատարող դժգոհ աշխատակիցների հանդեպ, և ակնկալվում է, որ այն առանցքային կլինի կեղծիքի հետ առնչվող հարցերում: Շատ կազմակերպություններում տիրող տնտեսական անորոշության արդյունքում աճել է ներքին առլիփիտի դե-

որ կեղծիքի կանխման, հայտնաբերման և ուսումնասիրման հարցում: Եվ այն կազմակերպություններում, որտեղ խորհրդագործ մնջացրել է ուշադրությունը կեղծիքի նկատմամբ, ավելացրել է նաև ներքին առողջության կողմից գեղձարարությունների բացահայտման առաջնայնությունը: Չնայած այս ուշադրության կենտրոնացմանը, ներքին առողջության գործառույթները մնում են կախված ռեսուլսներից: Այն դեպքում, եթե շատերը ունեն անհրաժեշտ հնտուրյուններ կեղծիքները բացահայտելու համար, շատերը չունեն վերապատրաստված մասնագետներով համարված անձնակազմ մեծամասշտաբ ուսումնասիրություններ կատարելու համար: Ավելի մտահոգող է, որ ներքին առողջություններում է կեղծիքների ռիսկերի գնահատումն իրականացնելու պարբերականության անհրաժեշտությունը, բայց գործնականում չի անում, ինչն էլ դժվարեցնում է ամենակարևոր կեղծիքների ռիսկի դեպքում արդյունավետորեն կենտրոնացնել սակավ ռեսուլսները»:<sup>3</sup>

Ներքին առողջության դեր կայանում է կեղծիքների հայտնաբերելու, ուսումնասիրելու և կանխելու մեջ: Կազմակերպություններում կառավարման բարձրագույն մարմինը կեղծիքի կասկածի ժամանակ և դիմում է նրանց, որպեսի կատարվի հայտնաբերում և ուսումնասիրություն: Ներքին առողջության ուշադրության կենտրոնում պետք է լինի այս պահանջմերը բավարարելու համար հմտություն և ռեսուլսներ ունենալը: Տնտեսական անորոշության պատճառով շատ կազմակերպություններում մնջացել է կեղծիքը հայտնաբերելու, ուսումնասիրելու և կանխելու ներքին առողջությունը:

Վերջին տարիներին մնջացել է կազմակերպությունների խոցելիությունը կեղծիքի ռիսկի նկատմամբ, և այդ աճը եղել է և ներքին, և արտաքին առողջության մակարդակով: Գոյություն ունի տարբերություն կառավարման բարձրագույն մարմինների տված հրամանների և իրականացնելու ստորադաշտում մարմինների կողմից կատարվածի միջև: Կառավարման բարձրագույն մարմինները իրենց կազմակերպություններում հաստատում են գեղձարարությունների ռիսկի կառավարման հանդեպ հստակ նոտեցում և վարքագիր կանոններ: Չատերը չունեն փաստաթերթով անրագրված քաղաքականություն: Տնտեսական անորոշությունն է, որը ստիճան խորհրդի մակարդակով քննարկումներ կազմակերպել՝ գեղձարարությունների ռիսկի վերահսկողության վերաբերյալ: Չատերը ստանում են ճիշտ իրահանգներ բարձրագույն օդակներից: Դրան հակառակ կան կազմակերպություններ, որ այս հարցերի շուրջ չունեն քննարկումներ խորհրդի մակարդակով: Տնտեսական անորոշությունը բարձրացրել է ներքին առողջության դեպքությունների ռիսկի վերաբերյալ:

լուսաբանումների մակարդակը: Գործողություններն ավելին են ասում, քան բառերը: Կառավարման բարձրագույն մարմնի և խորհրդի միջև կապն անհրաժեշտ նախապայման է, եթե խոսքը վերաբերում է ներքին առողջության համապատասխան լիազորություններով օժտելուն:

«Մեծ մտահոգության տեղիք է տալիս այն փաստը, որ որոշ կազմակերպություններում ամրագրված չեն գեղձարարությունների ռիսկի վերահսկողությունը և վարքագիր կանոնները», «Խորհրդի գործնական պարտականությունների բացակայությունը նշանակում է, որ բարձր ռիսկերի դեպքում ներքին առողջության չի տրվել իշխանություն այդ խնդիրները բարձրացնելու համար» ասում է գեղձարարությունների որակավորված փորձագետ և «Ղելոյթեն» հայտնի կազմակերպության գործընկեր Նիկ Ջարինգունը:

Չատերն իրենց կազմակերպություններում ֆինանսական գեղձարարությունների ռիսկը բացահայտելու համար չունեն հմուտ անձնակազմ: Չատերին էլ թվում է, թե ունեն վերը նշված անձնակազմը, սակայն եթե գալիս է ուսումնասիրություններ կատարելու պահը, ի հայտ են գալիս հետևյալ թերությունները՝

1. հավաքագրված փաստերի հետ աշխատելու հմտության բացակայություն
2. հարցադրումներ կատարելու տեխնիկայի բացակայություն
3. տվյալների վերլուծության իրականացման ունակության բացակայություն:

Այսինքն՝ չեն վերապատրաստվել գեղձարարությունների սիենաներ բացահայտելու և գնահատելու համար: Կոռուպցիայի դեմ պայքարի վերապատրաստում չեն անցել:

Զեղձարարություններին նպաստում են՝ 1. ֆինանսական գործընթացների անարդյունավետ վերահսկողությունը, 2. աշխատակիցների կողմից կազմակերպված դավադրությունը կազմակերպություններում և դրանից դուրս, 3. դժգոհ աշխատակիցների աշխատանքը և այլ արտաքին ճշշումներ:

Զեղձարարությունների որակավորված փորձագետ և հայտնի «Ղելոյթեն» կազմակերպության գործընկեր Նիկ Ջարինգուն ասում է.

«Չատ կազմակերպություններ հակված են գեղձարարությունների ռիսկը ուսումնասիրել արտաքին առողջությունների միջոցով: Սակայն այս դեպքում հնարավոր է, որ կազմակերպությունը կազմակերպված հանցանորության գործ դաշնա», «Բայց իրականությունն այն է, որ ներքին առողջությունների ռիսկեր է պարունակում: Եթե ակնկալենք, որ դժգոհ աշխատակիցները կստեղծեն մեծ գեղձարարությունների ռիսկ, ապա խորհուրդը է տրվում այս ոլորտում բիզնեսը զգն պահել» ասում է գեղձարարությունների որակավոր-

ված փորձագետ և «Դելոյթ» հայտնի կազմակերպության գործընկեր Նիկ Քարինգտոնը:

Ներքին առդիտի հաջողությունը կախված է գնահատման գործընթացի համընդհանուր ինտեգրումից, կառավարման համակարգի ու նրա ենթակառուցվածքային կոնպոնենտների կատարելագործման աջակցությունից: Կառավարման գործընթացները պետք է ուղղված լինեն կազմակերպության ներսում վարքագծի կանոնների ձևավորմանն ու խթանմանը, դեկավարությունը պետք է վարի որակյալ կաղրային քաղաքականություն համապատասխան պարտականություններով և լիազորություններով: Ներքին առդիտուրը պետք է նպաստի, որ կազմակերպության բոլոր ստորաբաժանումները լինեն հնֆորմացված առևտ օհսկերից և նաևնակցեն դրանց վերահսկման գործընթացին: Յուրաքանչյուր կազմակեր-

պություն ունի խնդիրների լուծման տարրեր մոտեցումներ, բայց յուրաքանչյուր կազմակերպություն կարող է հասնել մարդկանական միայն ներքին առդիտի համակարգի ներդրմանը: Իսկ ներքին առդիտի հիմնախնդիրները կառավարման համակարգում խոսում են այդ համակարգի ոչ ճիշտ ներդրման մասին:

<sup>1</sup> Acca - F8 Audit and Assurance (International), BPP Publishing (January 1, 2012)

<sup>2</sup> The publication of Deloitte. The Broken Triangle? Improving the Relationship between Internal Audit, Management, and the Audit Committee. Publication date: 4/2010

<sup>3</sup> The publication of Deloitte. The Inside Story: The Changing Role of Internal Audit in Dealing with Financial Fraud. Publication date: 11/2010

## PROBLEMS OF INNER AUDIT IN THE SYSTEM OF MANAGEMENT OF ORGANISATION

**ARAM VYACHISLAV SHAKARYAN**

Competitor of the "Mkhitar Gosh" Armenian-Russian International University

### Summary

In the article it is discussed the economical and organizational conditions of their activities are changing in the market, which is bringing the complication of the managing problems resulting in appearing objective factors. A productive managing condition of organizations is considered the provision of managing bodies for accepting informational optimal economical decisions.

ԴՏԴ 336:330

## ՀՀ ԵՎ ԼՂՀ ՀԱՐԿԱՅԻՆ

### ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՎՃԱՐՎՈՂ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՄԵՍՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ\*

#### Սուլեն ՊԱՐՍՅԱՆ

ԴՊՃԴ-ի Միկրոէկոնոմիկայի և ծեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասպիրանտ

**Աստենախոսության թեման՝** Ոչ մետաղական հանքանյութ արդյունահանող և վերամշակող ձեռնարկությունների արտահանման կարողությունների ընդլայնման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)  
**Գիտական դեկան՝** Միքայել ՄԵԼՔՈՒՄՅԱՆ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



«Հ» արկ» հասկացությունը մարդկային հասարակությանը հայտնի է դեռ շատ վաղ ժամանակներից՝ պետության ծագման հետ միասին: Դեռևս ստրկատիրական հասարակարգի պայմաններում պետությունը երկրի կարգությունը այլ ապարատը պահպանելու և այլ խնդիրները լուծելու համար պետք է ունենար կենտրոնացված ռեսուրսներ, որոնք ծևավորվում են հիմնականում բնամթերային տեսքով (ցորեն, այլ սննդամթերքներ, հագուստ, գեմք և այլն): Պարզ է, որ հասարակության զարգացմանը զուգահեռ անընդհատ փոփոխվել ու զարգացել են հարկի ծևերն ու տեսակները, սակայն բոլոր ժամանակներում են նրա միջոցով իրականացվել է հասարակական պահանջնունըների բավարարման համար անհրաժեշտ անհատական եկանությունը մի մասի հանրայնացում:

ՀՀ-ի և ԼՂՀ-ի հարկային օրենսդրության համատական վելուծության համար, նախ առանձնացնենք, թե ինչպիսի հարկային ռեժիմներ կան: Այսպես, ՀՀ հարկային օրենսդրությունը վելուծելիս կարող ենք առանձնացնել հետևյալ հարկային ռեժիմները՝ ընդհանուր համակարգով, հաստատագրված վճարմերով և ԱԱՀ շեմ (ավելացված արժեքի հարկ) հարկման ռեժիմներ, իսկ ԼՂՀ-ում գործում են՝ ընդհանուր համակարգով,

հաստատագրված վճարմերով և առևտորի հարկով հարկման ռեժիմներ:

**ԵԿԱՄՏԱՀԱՐԿԸ**: Եկամտահարկը բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որը գանձվում է ֆիզիկական անձանցից հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամտից: ՀՀ ներգործությունը բնակչության կենսամակարդակի վրա ունի որոշիչ նշանակություն, և կարևորվում է վերջինիս սոցիալական բնույթը:

ՀՀ-ում և ԼՂՀ-ում եկամտահարկ են վճարում ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները: Ռեզիդենտ են համարվում այն անձինք, որոնք տասներկուամյա ժամկետի ցանկացած ժամանակահատվածում գտնվել են ՀՀ-ում (ԼՂՀ-ում) 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում (ԼՂՀ-ում), ինչպես նաև ՀՀ պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ (ԼՂՀ) տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը<sup>2</sup>:

Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԼՂՀ-ում ֆիզիկական անձի համախառն եկամտից օրենքով սահմանված են նվազեցումներ, դրանք են՝ նվազեցվող եկամտուներ, անձնական նվազեցումներ և ծախսեր: Տարբերությունը կայանում է նրանում, որ ՀՀ-ում ֆիզիկական անձանց համար սահմանված է անձնական նվազեցման միասնական գումար՝ յուրաքանչյուր ամսվա համար 32 500 դրամի չափով, իսկ ԼՂՀ-ում անձնական նվազեցումներ են սահմանված:

• 20000 դրամի չափով, եթե այն ստանում են Արցախի, նախկին Խորհրդային միության հերոսները, շքանշաններով պարզեցված մարդիկ, մարտական գործողությունների մասնակիցները,

\* Ներկայացվել է 18.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.:

հաշմանդամները և այլն,

- 8000 դրամ չափով, եթե այն ստանում են ազատամարտիկների ծնողներն ու ամուսինը,
- ծնողներից և խնամակալներից 1000 դրամի չափով յուրաքանչյուր երեխայի (մինչև 18 տարեկան, իսկ ցերեկային ուսուցման ուսանողների և սովորողների՝ մինչև 24 տարեկան դաշնալը) համար<sup>3</sup>:

Կարևոր առանձնահատկություն է նաև ՀՅ-ի և ԼՂՀ-ի եկամտահարկի դրույքաչափերի տարերությունը. եթե ԼՂՀ-ում ֆիզիկական աճից եկամտահարկը գանձնվում կայուն 5% աճնախ եկամուտի չափից, ապա ՀՅ-ում եկամտահարկը պրոգրեսիվ է մինչև 80000 դրամ եկամտի դեպքում 10%, 80000 դրամից ավելի դեպքում՝ 8000 դրամ գումարում 80000-ի գերազանցող գումարի 20%-ը, 2 մլն դրամից ավելի դեպքում՝ 392000 դրամ գումարում 2 մլն-ը գերազանցող գումարի 25%-ը: Մեկ այլ առանձնահատկություն է այն, որ ՀՅ-ում անհատ ձեռնարկատերը (ԱԶ) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից վճարում է եկամտահարկ մինչև 960000 դրամը հարկվող եկամուտի 10%, 960000 դրամից ավելի դեպքում 96000 դրամ գումար 960000-ը գերազացող գումարի 20%: (Գծապատկեր 1.):

**ՇՈՒԺՈՒԹԱՐԱԿԻ:** Ուղղակի հարկերի համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի շահութահարկը, որը, մի կողմից, հանգեցնում է հարկային եկամուտների ավելացմանը, մյուս կողմից՝ պայմաններ ստեղծում արտադրական ներուժի ավելացման համար:

Շահութահարկը՝ հարկ վճարողների կողմից «Շահութահարկի մասին» ՀՅ (ԼՂՀ) օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է և որոշիչ դեր է կատարում բնողայնված վերարտադրության իրականացման գործում:

ՀՅ և ԼՂՀ «Շահութահարկի մասին» օրենքներում համընկնում են շահութահարկի հարկվող օրենքի, հարկվող բազայի և հարկման ժամկետների հասկացությունները:

Հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ եթե ՀՅ-ում շահութահարկի տարեկան դրույքաչափը սահմանված է 20%, ապա ԼՂՀ-ում՝ 5%, իսկ վարկային կազմակերպությունների, բանկերի, ապահովագրական ընկերություններ, գրավատների և արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն իրականացնողների ստացած եկամուտների դիմաց՝ 20%:

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքում նախատեսված է ներդրությունների համար իսթաններ, մասնավորապես. եթե ռեզիդենտի (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների) պետական գրանցման պահին և հաջորդող


3 տարիների ընթացքում կանոնադրական կապիտալում հիմնադիրի (մասնակցի) փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը կազմում է առնվազն 100 մլն դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝ ներդրման պահին հաջորդող առաջին 3 տարիներին 100%-ի չափով, հետագա 2 տարիներին՝ 50% տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան ներդրման արժեքի 10%-ը<sup>5</sup>: (Գծապատկեր 2.):

**ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ԴԱՐ:** ԱԱՀ-ն անուղղակի հարկ է, որը վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապահների ներմուծման, ՀՅ-ի (ԼՂՀ-ի) տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: Երկու երկրներում ԱԱՀ-ի միևնույն 20% դրույքաչափն է սահմանված. Եթե հարկի գումարը ներառված է ապրանքի կամ ծառայության գնի մեջ, ապա ԱԱՀ-ն հաշվարկվում է ապահների և ծառայությունների ամրող արժեքի նկատմամբ 16.67% կիրառելով:

Ըստ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՅ օրենքի 3-րդ հոդվածի՝ այն աճինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58.35 մլն դրամը, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58.35 մլն (ԱԱՀ-ի շեմը) դրամը գերազանցելու պահից՝ 58.35 մլն դրամը գերազանցող մասի համար: Իսկ ԼՂՀ-ում ԱԶ-ներ չհանդիսացող ֆիզիկական աճինքը ընթացիկ տարում համարվում են ԱԱՀ վճարող, եթե նրանց գործարքների հասույթների գումարը գերազանցում է 4 մլն դրամը և ԱԱՀ հաշվարկվում-վճարվում է 4 մլն դրամը գերազանցող մասի համար: (Գծապատկեր 3.):


**ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ:** Հաստատագրված վճարը (ԴՎ) ԱԱՀ-ին կկամ շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող բյուջե վճարվող պարտադիր և անհատույց վճար է: ԼՂՀ-ում ՀՎ-ով հարկվող օբյեկտներ են համարվում գործունեության հետևյալ տեսակները՝ առևտորի իրականացման վայրերում և դրանցից դուրս իրականացվող 10մ<sup>2</sup> տարածքը չգերազանցող կրավակները կամ այլ վաճառատեղերը, հանրային սննդի ոլորտում իրականացվող, պատուրանապրոտային, վարսավիրական ծառայությունների մատուցման, ավտոտեխնապարկման կայանների, ավտոկանգագուների, արդյունագործական ձկնորսության, խաղատների գործունեության կազմակերպումը, շահումով խաղային ավտոմատների շահագործումը, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպումը, համակարգչային խաղերի կազմակերպումը, վիճականական կազմակերպումը, ավտո-տրանսպորտային միջոցների գազալցման, բիլիարդի խաղերի կազմակերպումը, բաղնիքների և ցնցուղների կազմակերպումը և ատամնարուժական

**2007-2010թթ. ՀՀ և ԼՂՀ հարկային եկամուտներում եկամտահարկի տեսակարար կշիռը և դինամիկան(%)**




Գծապատկեր 1.

**2007-2010թթ. ՀՀ և ԼՂՀ հարկային եկամուտներում շահութահարկի տեսակարար կշիռը և դինամիկան(%)**




Գծապատկեր 2.

**2007-2010թթ. ՀՀ և ԼՂՀ հարկային եկամուտներում ԱԱՀ-ի տեսակարար կշիռը և դինամիկան(%)**



Գծապատկեր 3.

**2007-2010թթ. ՀՀ և ԼՂՀ հարկային եկամուտներում հաստատագրված վճարների տեսակարար կշիռը և դինամիկան(%)**




Գծապատկեր 4.

**2007-2010թթ. ՀՀ և ԼՂՀ հարկային եկամուտներում ակցիզային հարկի տեսակարար կշիռը և դինամիկան(%)**



Գծապատկեր 5.

**2007-2010թթ. ԼՂՀ հարկային եկամուտներում առևտրի հարկի տեսակարար կշիռը և դինամիկան(%)**



Գծապատկեր 6.

ծառայությունների մատուցման գործունեությունները<sup>6</sup> (Գծապատկեր 4.):

ՀՅ-ում 2012 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտան «Արտոնագրային վճարների մասին» ՀՅ օրենքում կատարված փոփոխությունները, որոնց արդյունքում փոփոխվեց արտոնագրային վճարների հաշվարկման ու վճարման կարգը<sup>7</sup>:

**ՀՎ = Ելակետային տվյալ\*ուղղիչ  
գործակիցներ(ներ)\*լրացուցիչ ուղղիչ  
գործակիցներ(ներ)\*բազմապատճիկ մեծություն**

**ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ:** Ակցիզային հարկը ենթակացիային ապրանքների ներմուծման կամ ՀՅ (ԼՂՀ) տարածքում այդ ապրանքներն արտադրողների կողմից դրանց օտարման համար օրենքով սահմանված կարգով և չափով բյուջե վճարվող անուղղակի հարկ է: ՀՅ-ում և ԼՂՀ-ում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները նույն են, դրույքաչափերում է միայն տարբերությունը: (Գծապատկեր 5.):

**ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐԿ:** ԼՂՀ-ում 2002 թ. հուլիսի 1-ից գործող առևտորի հարկով հարկման և մինչև 2009 թ. հունվարի 1-ը ՀՅ-ում գործող պարզեցված հարկային ռեժիմներն ուժեն ընդհանություններ: Առևտորի հարկը առևտորական գործունեության համար պետական բյուջե վճարվող ԱԱՀ կ(կամ) շահութահարկին (Եկամտահարկին) փոխարինող հարկ է: Առևտորի հարկի վճարողներ են համարվում խանութների, կրապակների (տաղավարների), պահեստների միջոցով վճառք իրականացնող առևտորային կազմակերպությունները և ԱԶ-ները: Առևտորի հարկը հարկվող օրենսդիր նկատմամբ հաշվարկվում է 2.5% դրույքաչափով: Առևտորի հարկով հարկման ռեժիմում չեն կարող գործել՝ հաստատագրված վճար վճարողները, այն անձինք, որոնք նախորդ տարում ԼՂՀ «ազտ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծել են ապրանքներ, որոնց համար նախատեսված չէ ԱԱՀ գանձում ներմուծման պահի, ապա

այդ ապրանքների չիրացված մնացորդը տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ չպետք է գերազանցի 1 մլն դրամը և այլն<sup>8</sup> (Գծապատկեր 6.):

#### **ՊԱՐՏԱԴՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՐՀՈՎՈՒԹՅԱՆ**

**ՎԵՐԱԲԵՐ:** Սոցիալական վճարները ապահովադիրների կողմից պարտադիր կարգով ՀՅ (ԼՂՀ) պետական բյուջե վճարվող միջոց է: ԼՂՀ-ում գործառուն վարձու աշխատողի համար 15% չափով սոցիալական վճար է կատարում<sup>9</sup>, իսկ ՀՅ-ում մինչև 20000 դրամը՝ 7000 դրամ, 20000-100000 դրամը՝ 7000 դրամ գումարած 20000-ը գերազանցող գումարի 15%-ը, 100000 դրամից ավելի՝ 19000 դրամ գումարած 100000-ը գերազանցող գումարի 5%-ը: ԼՂՀ-ում աշխատավարձից պահվում է 3% չափով սոցիալական վճար, իսկ ՀՅ-ում մինչև 2 մլն դրամը 3%, 2 մլն դրամից ավելի դեպքում՝ 60000 դրամ գումարած 2 մլն գերազանցող գումարի 8%-ը<sup>10</sup>:

ՀՅ-ում ԱԱՀ վճարող չհամարվող և հաստատագրված վճար մնարող հանդիսացող ԱԶ-ները հաշվարկման օբյեկտի տարեկան չափի մկանմանը՝ 3% դրույքաչափով սոցիալական վճարումները են կատարում, իսկ ԼՂՀ-ում՝ 10% դրույքաչափով (բայց ոչ պակաս 60,0 հազ. դրամը):

- 1 Վ. Հարությունյան, Դ. Հարությունյան և Տ. Հարությունյան, Հարկեր և Հարկագանձում, Եր., «Գիտություն» հրատ., 2010:
- 2 «Եկամտահարկի մասին» ՀՅ օրենք:
- 3 «Եկամտահարկի մասին» ԼՂՀ օրենք:
- 4 «Շահութահարկի մասին» ՀՅ օրենք:
- 5 «Շահութահարկի» ԼՂՀ օրենք:
- 6 «Քաստագործական վճարների մասին» ԼՂՀ օրենք:
- 7 «Արտոնագրային վճարների մասին» ՀՅ օրենք:
- 8 «Առևտորային հարկ մասին» ԼՂՀ օրենք:
- 9 «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ԼՂՀ օրենք:
- 10 «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՅ օրենք:

COMPARATIVE ANALYSIS OF THE TAX LAWS AND TAXES PAID TO THE STATE BUDGETS OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE NAGORNO - KARABAKH REPUBLIC

**SUREN PARSYAN**

Summary

Countries passing through the processes of transition to market relations are facing qualitatively new problems. One of the most important issues is to have an effective and efficient tax law. It is crucial to have a workable tax law for the economic integration of the Republic of Armenia and the Nagorno – Karabakh Republic. This is, in its turn, has an imperative role in formation of both countries' business environment.

ԴՏԴ 621.4/6:620:330 «ՀԱՅՈՒՄԱԳԱԶՄԱՆ» ՓԲԸ-Ի «ՀՐԱԶԴԱՆ-5»  
**ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ\***

### **Անահիմ ԱՆՏՈՆՅԱՆ**

ԴՊՏԴ-ի Միկրոէկոնոմիկայի և ծեռնարկաստիրական գործունեության կազմակերպման ամբիոնի հայցորդ

Ասեմախոսության թեման՝ Ներդրումների խթանման հիմնախնդիրները այլընտրանքային էներգետիկայի ոլորտում (ՀՀ նյութերով)

Գիտական դեկավար՝ Միքայել ՄԵԼՔՈՒՄՅԱՆ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Բ**ոլոր ծեռնարկությունները այս կամ այն չափով առնչվում են ներդրումային գործունեությանը, որը պայմանավորված է վերարտադրության գործընթացի անընդհատության ապահովման, արտադրության ընդլայնման և վերակառուցման անհրաժեշտությամբ։ Ներդրումային նախագծերի իրականացումը թույլ է տալիս կատարելագործել արտադրությունը, բարձրացնել թողարկվող ապրանքների որակը, ավելացնել աշխատատեղերի քանակը, բարձրացնել բնակչության գրանցածության մակարդակը և, ի վերջո, բարձրացնել բնակչության կենսամակարդակը։ Ներդրումային նախագծերը կարելի է բնորոշել որպես միջոցառումների ամբողջություն, որն ուղղված է արդյունավետ կապիտալ ներդրումների իրականացման միջոցով շահույթի ստացմանը։

Այսօր ՀՀ-ի համար, որը տարածաշրջանի այլ երկիրներ էլեկտրական էներգիա արտահանող երկիր է, ռազմավարական նշանակություն ունի ներգիա արտադրող նոր հզորությունների շինարարությունը։

Վերլուծությունն իրականացվել է Հրազդան Ձեւկ-ի 5-րդ էներգաբլոկում։ Նշենք, որ Հրազդանի Ձեւկ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարությունը սկսվել է 1980 թ.։ ԽՍՀՄ վկուգումից հետո Հայաստանի էներգահամակարգում կտրուկ նվազեց առկա հզորությունների բեռնվածությունը, ինչի հետևանքով բլոկի շինարարության աշխատանքները մնացին անավարտ։ 1986 թ. կայանն ընդլայնելու որոշումը կայացվեց, և 1987 թ. սկսված աշխատանքները կատարվեցին ընդամենը 40%-ով։ 1993 թ. ՀՀ կառավարության կողմից Հրազդանի Ձեւկ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարությունը շարունակելու որոշումը կայացվեց։ 1993-ի ապրիլին ՀՀ կառավարությունը եվրոպական բանկի հետ պայմանագիր կնքեց, ըստ որի՝ տրամադրվեց 57

մլն 400 հազար դոլար վարկ՝ 5-րդ էներգաբլոկի շինարարությունն ավարտին հասցնելու համար։ Սակայն հետագայում աշխատանքները կրկին մնացին անավարտ։

2002 թվականին Հայաստանը Ռուսաստանին ունեցած 93 մլն դոլար պարտքի դիմաց վերջինիս հանձնեց «Մարս» ՓԲԸ-ն (գնահատված 56.29 մլն դոլար), «Երևանի մաթեմատիկական մեթենամեռի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն (2.75 մլն դոլար), «Երևանի դեկավարման ավտոմատացված համակարգերի ԳՐԻ» ՓԲԸ-ն (3.37 մլն դոլար), «Երևանի նյութագիտության ԳՐԻ-ն ՓԲԸ (0.35 մլն) և Հրազդանի Ձեւկ-ի գույքահամալիրը (31 մլն)։ Հանձննան պահին այս 5 ընկերություններից աշխատում էր միայն Հրազդանի Ձեւկ-ը, որը շարունակում է աշխատել նաև այսօր։ Մյուս 4 ընկերությունները չեն աշխատում։

2006 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության և «Գազպրոյն» ՓԲԸ-ի միջև կնքված Համաձայնագրի շրջանակում «Հայնուսագարդ» ՓԲԸ-ն բաժնետոմսերի լրացուցիչ բողոքման միջոցով ձեռք է բերում «Հրազդան»-ի Ձեւկ-ի 5-րդ էներգաբլոկի ակտիվները՝ բլոկի շինարարությունն ավարտելու և այն արդիականացնելու պարտավորությամբ։

2006 թվականին «Հայնուսագարդ» ՓԲԸ-ն սկսել է նախագծի ներդրումային փուլի իրականացումը, որով նախատեսվում է ավարտին հասցնել շինարարությունը, և ժամանակակից գազատուրիբներ տեղադրելով հզորությունը հասցնել 440 ՄՎտ-ի։ Նախատեսվում է կիրառել շոգետուրինային և գազատուրիբնային տեխնոլոգիաների համակցում, ինչը նախագիծը դարձնում է եզակի և աննախադեպ ԱՊՀ երկրներում։ «Հրազդանի Ձեւկ»-ի 5-րդ էներգաբլոկի անավարտ շինարարության 248,8 միլիոն դոլար ակտիվների ձեռքբերումով «Հայնուսագարդ» ՓԲԸ-ն ծրագրում է

\* Ներկայացվել է 10.12.2012 թ., ընդունվել է տպագրության 20.12.2012 թ.։

կատարել 150-180 միլիոն դոլարի ընդհանուր ծավալով ներդրումներ:

«Հրազդան-5»-ի ծրագրի իրականացումը անմիջականորեն կապված է կարևորագույն նշանակություն ունեցող Իրան-Հայաստան գազատարի շահագործման հետ: Սասանավորապես, ըստ կողմերի միջև ձեռք բերված համաձայնության՝ «Հրազդան-5»-ում արտադրված էլեկտրաէներգիան կուղղվի Իրանի եներգահամակարգ՝ հանդիսանալով Հայաստան ներկայած իրանական բնական գազի դիմաց վճարման միջոց:


Հրազդան ՁԵԿ-ի 5-րդ եներգաբլոկի շինարարության հիմնական նպատակը բարձր արդյունավետությամբ և տնտեսապես հզոր բլոկի ստեղծումն էր: Առանց նոր, ավելի լիակատար տեխնիկատեսական ցուցանիշներով Հրազդանի ՁԵԿ-ը մոտ ապագայում չէր կարող ապահովել էլեկտրաէներգիայի արտադրման մակարդակը, և նոր արտադրմանի մրցունակությունը շուկայում կայսեր նվազել:

Մրցունակության նվազման, ֆիզիկական և բարոյական նաշվածության խնդրի ավելի արդյունավետ լուծումը հանդիսացավ տեխնիկապես ժամանակակից 5-րդ եներգաբլոկի շինարարությունը: Էլեկտրաէներգիայի արտադրության ժամանակ վառելիքի ծախսը նվազեցնելու նպատակով որոշում կայացվեց Հրազդան ՁԵԿ-ի 5-րդ եներգաբլոկի հզորությունը նեծացնել երկու շոգետուրինին և երկու գազատուրինին բլոկների համակցման ճանապարհով, որոնցից յուրաքանչյուրի հզորությունը 70 ՄՎտ էր: Էլեկտրաէներգիայի արտադրման նպատակով գոլորշու և գազի ցիկլերի համատեղ օգտագործումը նվազեցնում է պայմանական վառելիքի ծախսը նոտավորապես 18%-ով (տես գրաֆիկը):

«Գազպրոն» ԲԲԸ-ին ներկայացվող պահանջների համապատասխան եկամտաբերության ներքին նորման (IRR) սեփական կապիտալի նկատմամբ կազմում է 12%: Նախագծի ֆինանսատնտեսական ցուցանիշները հաշվարկված են տվյալ չափանիշներին համապատասխան: Ժամանակակից ֆինանսատնտեսական հաշվետվությունների սահմաններում անցկացվում է ներդրումային նախագծերի առավել զգայուն ֆինանսական ցուցանիշների վերլուծություն կախված եկամտաբերության ներքին նորմերի դիմունակուրուման դրույթաչերի փոփոխման մակարդակից:

Ներդրումային նախագիծը հանդիսանում է միջնաժամկետ ծրագիր, քանի որ իրականացվե-

«Գազպրոն» ԲԲԸ-ի ներդրումները «Հրազդան-5» նախագծում (մլն դր.)



լու է 3 տարվա ընթացքում, իսկ հաշվարկային ժամանակաշրջանը կազմում է 23 տարի, որը ներառում է 3 տարի տևողությամբ ներդրումային փուլը և 20 տարի տևողությամբ շահագործման փուլը: Նախագծի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվում է ներգրավել սեփական միջոցների հաշվին, քանի որ գործարքի իրականացումը վարկային ռեսուրսների ներգրավմաբ կառաջացներ լրացնուցիչ շուրջ 100 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսական բեռ (10 տարվա մարման և տարեկան 7% պայմաններով), և բյուջեն չէր համարվի վաճառքի գումարով:

ՀՀ կառավարության և «Գազպրոն» ԲԲԸ-ի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ «Հրազդան-5»-ի գույքային համալիրի ձեռքբերման համար ներդրումների ծավալը կազմում էր 248.8 մլն \$:

Հետազոտվող էլեկտրակայաններում կապիտալ ծախսերը տատանվում են 1կՎտ հզորության համար 400-800 \$, այն դեպքում, եթե «Գազպրոն» ԲԲԸ-ի ներդրումային նախագծում «Հրազդան-5»-ի համար կազմելու է մոտ 884 \$/կՎտ պայմանական հզորություն: Միայն հտալիայի 1 ՁԵԿ-ում է (ITA-GI), որ կապիտալ ծախսերը 1կՎտ հզորության համար 400\$-ից պակաս են կազմում: Նշենք, որ դիտարկված դեպքերում իրագործվում է ոչ թե նոր ՁԵԿ-երի շինարարություն, այլ գոյություն ունեցողների վերակառուցում: «Հրազդան-5» էլեկտրակայանի կապիտալ շինարարությունը տևել է 3 տարի: «Հայնուսագազարդ» ՓԲԸ-ից ստացված տեղեկությունների համաձայն 5-րդ եներգաբլոկի շինարարությունը նախապատրաստման պահին կատարված էր 76%-ով:

«Հրազդան» ՁԵԿ-ի 5-րդ եներգաբլոկի շահագործման ժամանակ 7000Ժամ/տարի աշխատանքային ռեժիմի դեպքում, համապատասխան տվյալների համաձայն տարեկան ծախսերը կազմելու են 8831.0 հազ. դոլար: Դրանց հետևում է, որ շահագործման ծախսերը նեծանասամբ կախված են հիմնական սարքավորման մատակարարի ընտրությունից:

«Հրազդան-5»-ում էլեկտրաէներգիայի արտադրության ժամանակ այլ ՁԵԿ-երի հետ շահագործման ծախսերի համեմատման արդյունքներից կարելի է եզրակացնել, որ շահագործման ծախսերի չափերը «Հրազդան-5»-ում համեմատաբար ավելի ցածր են, քան նմանօրինակ այլ ՁԵԿ-ում:

ՀՀ ներքին շուկայում էլեկտրաէներգիայի իրացման ժամանակ եկամտաբերության ներքին՝ 12% մակարդակը ապահովելու համար միադրույթ տարիին պետք է հավասար լինի 58.1 ՄՎտ/Ժամ: Արժե նշել, որ տվյալների համաձայն ՀՀ-ում ՁԵԿ-երի միադրույթ սակագները վերջին տարիներին փոփոխվել են 25-30%/- ՄՎտ/Ժամի սահմաններում:

Հրազդան ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի հիմնական  
տեխնիկատնտեսական  
ցուցանիշները

Ցուցանիշներ	Չափի միավոր	Քանակ
Տեղադրված հզորություն	ՄՎտ	480
Աշխատանքային հզորություն	ՄՎտ	396
Աշխատանքային ռեժիմ	Ժամ/տարի	7000
Էլ.էներգիայի տարեկան արտադրություն	ԳՎտ/ժ	2772
Արտադրության համար ծախսված էլ.էներգիան	%	4.0
Ծինաներից էլ.էներգիայի բացառողում	ԳՎտ/ժ	2661
Էլ.էներգիայի արտադրության համար պահանջվող զագի ծախսը	ՄԼ.Խոր.մ.	622
1ԿՎտ/ժ էլ.էներգիայի համար վառելիքի ծախսը	Գ.պ.վ.	274

**Ներդրումային նախագիծի արդյունավետու -  
թյան գնահատումը:** Քննարկվող ներդրումային  
նախագիծը գնահատելու համար հաշվարկենք  
հետևյալ ցուցանիշները՝

Ցուցանիշներ	Ելակետային տվյալներ
Ներդրումների ծավալը (մլն դրլար)	180
Ներդրումային նախագծի տևողությունը (տարի)	3
Դրամական հոսքերի գումարը (մլն դրլար), այդ թվում՝ առաջին տարում	231
Երկրորդ տարում	77
Երրորդ տարում	77
Դիմոնտի դրույքը %	10
Ինֆլյացիայի միջին տարեկան տեմպը %	0

Այսպիսով, ելակետային տվյալների հիման  
վրա հաշվարկված ցուցանիշների վերլուծությու-  
նը ցույց տվեց, որ «Հայ՛՛ՌուսԳազարդ» ՓԲԸ-ի  
«Հրազդան-5» ներդրումային ծրագիրը արդյու-  
նավետ է և ենթակա է իրագործման:

«Հրազդան-5»-ի վերակառուցման համար օգ-  
տագործվող նորագույն, տեխնոլոգիաների բարդ  
սարքավորումները, ներդրվող ժամանակակից  
տեխնոլոգիաները, աննախադեպ տեխնիկական  
լուծումները կառույցը դարձնում են եզակի ոչ մի-  
այն մեր տարածաշրջանում, այլ նաև աշխարհում:

<sup>1</sup> Е. Р. Орлова, Инвестсмисси, с. 25.

#### THE "HRAZDAN- 5" INVESTMENT PROJECT EVALUATION ANALYSIS OF "HAYRUSGAZARD" JSC

**ANAHIT ANTONYAN**

#### Summary

During the period of independence the energetic industry has recorded unprecedented stable growth which was conditioned by the flow of capital investment and best traditions. In the Republic of Armenia one of the best projects of the capital investment is the "HRAZDAN 5" of "ARMRUSGASPROM" CJSC which made our energetic industry less vulnerable and promoted the increase of the attractiveness of investment atmosphere in our energetic industry.

---

## ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

### ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<b>ՀԱՅԿ ԴԵՐՁՅԱՆ, ԳՈՈ ԴԵՐՁՅԱՆ.</b> Պետական ապարատի կազմակերպման և գործունեության հիմնարար սկզբունքները .....	4
<b>ԳՈՈ ԴԵՐՁՅԱՆ.</b> Պետական ապարատի գործառույթները և իրացման մեխանիզմները .....	9
<b>ԱԼԵՔՍԱՆԴՐԱ ՄԻХԱԼՈՎՆԱ ԴՐՈՅԴՈՎԱ.</b> Размышления о проблемах современного российского федерализма .....	16
<b>САМВЕЛ ԳԱЙКОՎԻЧ ԱՄԲԱՐՑՅԱՆ.</b> О проблеме стабильности или устойчивости уголовного закона РФ .....	21
<b>САМВЕԼ ԳԱЙԿՈՎԻЧ ԱՄԲԱՐՑՅԱՆ.</b> Уголовный закон как объект адаптивного управления. Алгоритм работы блока – Субъект системы адаптации уголовного закона РФ .....	25
<b>ԱՐԵՍ ԿՈՐԱԼՅԱՆ.</b> Իրավապահ մարմիններում ընդգրկված պետական ծառայողների անձնական պատասխանատվությունը .....	29
<b>ԱՐԵՍ ԿՈՐԱԼՅԱՆ.</b> Իրավապահպան մարմինների պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների ու ազատությունների խախումների պայմաններն ու պատճառները .....	33
<b>MOSTAFA YOUSOFVAND.</b> Action of Wining Government to force Losing Party for enforcement of award .....	38
<b>MOSTAFA YOUSOFVAND.</b> Past, Present and Future perspectives of Iran-United States Claims Tribunal (IUSCT) .....	43

### ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

<b>ՎԱԶԻԿ ԲՐՈՒՏՅԱՆ.</b> Իրավաբանական մանկավարժությունը ՀՀ իրավապահպան համակարգում.....	47
<b>ՎԱԶԻԿ ԲՐՈՒՏՅԱՆ.</b> Իրավաբանական կրթության մանկավարժական համակարգը .....	52
<b>ԻԳՐԻ ԿԱՐՄՈՒԵԼԻ ԿԱՐՄՈՒԵԼՅԱՆ, ԱՍԿԻՔ ՖՅՈՐԴՐԻ ԱՐՄԱՐԱՍՅԱՆ.</b> Օտարալեզու բառապաշտիքի ընտրության մոտեցումները դասագրքաստեղծման գործընթացում .....	56
<b>ANAHIT LALABEKYAN, TATEVIK ZARGARYAN.</b> The use of Podcasting in English Language teaching .....	61
<b>ԹԱՍՄԱՐՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.</b> Կուրսուեկի դաստիարակչական, գիտատեսական և կազմակերպչական աշխատանքի հիմքերը բուհում .....	64
<b>ԳԱՅԱՆԵ ՎԱԶԳԵՆԻ ՂԱՂՈՒՄՅԱՅՅԱՆ.</b> Սովորողների ազգային-քաղաքացիական դաստիարա- կության հիմնախնդիրը ժամանակակից բարձրագույն կրթության համակարգում .....	67
<b>Ա. Լ. ՊՈԳՈԾՅԻՆ.</b> Некоторые аспекты инклюзивного обучения детеу с отклонениями в развитии .....	70
<b>ՍԱԹԻԿ ԽԱՎԱՏՐՅԱՆ, ՄԱՐԻՆԵ ԹՎԱԹՈՅԱՆ.</b> Դպրոցի և ծնողական համայնքի համագործակցության էլեմենտները .....	73
<b>ԱՐՄԵՆՈՒՅԻ ՂԱԶԱՐՅԱՆ.</b> Բնագրային տեքստերի ընտրության հիմնախնդիրը անգլերենի նաևնագիտական կողմնորոշման հեռահաղորդակցական դասընթացում .....	76
<b>ՐԱՍՍԻԿ ՇՈՎՍԵՓՅԱՆ.</b> Դասարանի դեկավարի տեղը ու դերը դպրոցի ուսումնադաստիարակ- չական գործընթացի կառավարման հարցում .....	80
<b>ՐԱՍՍԻԿ ՇՈՎՍԵՓՅԱՆ.</b> Դանդարձական դպրոցի տնօրենի դեկավարման ոճի ազդեցությունը նրա կառավարչական կարողությունների վրա .....	85
<b>ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.</b> Ընտանիքի անդամների առողջ, ազնիվ ու անկաշկանդ փոխհարաբերու- թյունների ամրապնդումը որպես դաստիարակության արդյունավետության պայման .....	90

<b>ԼԻԱՆԱ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՍ.</b> Ընտանիքում ծնողների կողմից երեխաների վրա սխալ ներգործությունների հետևանքով առաջացած դաստիարակչական սխալներ	94
<b>ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ.</b> Օտար լեզվի վաղ ուսուցման դերը եսակենտրոն խոսքի հաղթահարման գործընթացում	100
<b>ԱՐՄԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ.</b> Որոշ մեթոդաձևերի և հնարքների կիրառումը կենսաբանության դասավանդման գործընթացում՝ հիմնական դպրոցի 7-րդ դասարանում	104
<b>ՆՈՆԱ ՎԱԼՅԱՅԻ ՊՈՂՈՍՅԱՆ.</b> Առաջին դասարանցիների հարմարման դժվարությունները և դրանց հաղթահարումը	108
<b>ԳԱՐԵԳԻՆ ԳԱՎԻԿԻ ՔԱՐՃԱՅԱՆ.</b> Ընդհանրացնող կրկնությունների կազմակերպման որոշ մանկավարժամեթոդական հարցեր	112
<b>ԿԱՐԻՆԵ ՄԱՅԻԼՅԱՆ.</b> Ուսուցչի նոր գործառույթները և սովորողը	115
<b>ԹԱՍՄԱՐԱ ՄԵԼԻՔԵՍՅՈՅՅԱՆ.</b> Ուսուցման մանկավարժական տեխնոլոգիաների ու մեթոդների օգտագործումը ուսուցչի կողմից	118
<b>ՄԱՐԻՆԵ ՄՈՐԻԿՅԱՆ.</b> «Հեքիաթ» թեմայի ամփոփումը 5-րդ դասարանում	122
<b>ԱՐԵԳԱՎԱԶԱՐ ՍԱՐԱԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ.</b> Մ. Մանուրյանի ֆիզիկական դաստիարակության համակարգի ժամանակակից արժևորումը	125
<b>ՆԱԻՐԱ ԲԱՐՄԵՂՅԱՆ.</b> «Բնական ցուցիչով աստիճան: Միանդամներ» թեմայի ուսուցման հարցեր	128
<b>ԼԵՅԼԻ ՋՈՎՐԱՆՆԻՍՅԱՆ.</b> Օրգանիզմի ֆիզիկական կոփումը որպես առողջ ապրելակերպին նպաստող գործոն	130
<b>Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ.</b> Հայեցի դաստիարակության ելակետային դրույթները և ուսուցման գործընթացը	133

### ՏՏՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<b>ԺԻՐԱՅՐ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԵՂԳԱԿ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Ներդրումային ռիսկերի կառավարման խնդիրները</b>	136
<b>ՄԵՐՅՈՒԺ ԱՐԵՎԱԿԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ.</b> Որակի կառավարման մարզային համակարգի ստեղծման անհրաժեշտությունը և նպատակը	139
<b>ՕԼՅԱ ԳԱՎԱԼՅԱՆ.</b> ՀՀ տնտեսության ներդրումային միջավայրի գրավչության գնահատման նույնացումներ	142
<b>ՕԼՅԱ ԳԱՎԱԼՅԱՆ.</b> Նորամուծական քաղաքականության ակտիվացման հիմնական ուղղությունները ՀՀ-ում	146
<b>ԼՈՒԻԶԱ ՋԱՄԱԼԵՏԻ ՋՈՎԱՄԵՓՅԱՆ.</b> Ներդրումային միջավայրի ընդիհանուր բնութագիրը	149
<b>ԴԱՅԿԱԶ ՄՈՎԱՆԻՍՅԱՆ.</b> Որակյալ պատրաստվածքների ներդրման ժամանակ ծախսերի և հաշվառման խնդիրները	154
<b>ԴԱՅԿԱԶ ՄՈՎԱՆԻՍՅԱՆ.</b> Նոր որակյալ պատրաստվածքի ստեղծմանը ներկայացվող պահանջները	158
<b>ՄԱՐԳԱՐԻՏ ԱՌՈՒՏԱՄՅԱՆ.</b> Գորիսի պետական համալսարանի կառավարման արդյունավետության մակարդակը և դրա բարելավման միտումները	160
<b>ԱՐԱՄ ՇԱՔԱՐՅԱՆ.</b> Ներքին առողջության հիմնախնդիրները կազմակերպությունների կառավարման համակարգում	166
<b>ՍՈՒՐԵՆ ՊԱՐՍՅԱՆ.</b> ՀՀ և ԼՂՀ հարկային օրենսդրությունների և պետական բյուջեներ վճարվող հարկերի համեմատական վերլուծություն	171
<b>ԱՆԱՐԻՏ ՎԵՐՈՆԵՅԱՆ.</b> «Հայ՛՛ ուսգագարդ» ՓԲԸ-ի «Հրազդան-5» ներդրումային նախագծի գնահատման վերլուծությունը	175

Արտասպելիս հղումը «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» հանդեսին պարտադիր է:  
При перепечатывании отсылка на журнал “МХИТАР ГОШ” обязательна.

Տպագրվել է «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ-ում:

Ծավալը՝ 11.25 տպագրական մամուլ Տպաքանակը՝ 110  
Объем - 11.25 печатных листов Тираж - 110

Խմբագրության հասցեն՝ 2001, ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 30ա  
Հեռ.՝ (0322) 4-03-11, 4-07-11  
Էլ. փոստ՝ [mghandes@mail.ru](mailto:mghandes@mail.ru), [lsg57@mail.ru](mailto:lsg57@mail.ru)